Արտատպված է՝ Ջեյմս Օլիվեր Քերվուդ, Հյուսիսի շրջմոլիկները; Հյուսիսային թավուտներում, Ե., «Արևիկ», 1991:

ՋԵՅՄՍ ՕԼԻՎԵՐ ՔԵՐՎՈՒԴ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԹԱՎՈՒՏՆԵՐՈՒՄ

Ռուսերենից թարգմանեց

ՇԱՎԱՐՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Գլուխ առաջին

Վերին լճի հյուսիսային ափերից ոչ հեռու, որտեղ մշտապես մոլեգնում էին քամիները, Կամինիստիկանիից դեպի հարավ, թեև Ռեյն-Ռիվերից ոչ ավելի հարավ, խուլ անտառների մեջ թաքնված էր դրախտային մի անկյուն, որը «իսկական դժոխք» էր:

Համենայն դեպս այդպես անվանեց նրան մեր պատմության հերոսուհին, երբ մի անգամ չդիմանալով, լաց լինելով, ինքն իրեն բողոքում էր իր ծանր ճակատագրից: Ճիշտ է, այն ժամանակ Պիտերը դեռևս նրա մոտ չէր, բայց թե Պիտերի հայտնվելուց հետո էլ, միևնույն է, դժոխքը մնաց դժոխք:

Սակայն կողմնակի դիտողը, եթե նա մայիսի երեսունի գարնանային այդ հրաշալի օրը բարձրանալու լիներ Կրեգի լերկ գագաթը, ոչ մի կերպ գլխի չէր ընկնի, որ իր առջև փռված դրախտում դժոխքն է թաքնված: Ձմռանը նա կտեսներ հարյուրավոր մղոններով տարածված ձյունապատ անտառներ, ճահիճներ ու գետահովիտներ, որտեղ եղևնիների, մայրիների ու սոճիների սև շրջանակի մեջ այսուայնտեղ փայլփլում էին սառույցով կաշկանդված լճերը. նա իր առջև կտեսներ բուքուբորանների ու խոր ձնակույտերի աշխարհը, մարդկանց աշխարհը, մարդիկ, որոնք տաքարյուն էին, կրակոտ՝ վայրի բնության դեմ մղած մշտական պայքարից և նրա դեմ տարած հաղթանակի պատճառած անսպառ ուրախությունից:

Բայց հիմա գարուն էր, և այնպիսի գարուն, որպիսին կանադական հյուսիսը չէր տեսել արդեն շատ տարիներ: Դեռ երեք օր առաջ հորդ անձրև տեղաց, իսկ հետո երկիր իջան արևի ոսկեղեն, ամառվա նման տաք ճառագայթները: Ձմռան սառը շնչից հետք էլ չմնաց, տաքացան նույնիսկ ամենախոր ու սև մորուտների հատակները: Հյուսիսում, հարավում, արևելքում և արևմուտքում անտառային թավուտները եռում էին նոր կյանքով, և արդեն

գարնանը փոխարինելու էր շտապում ամառը: Նարնջագույն, կանաչ ու սև լեռնաշղթաները փախչում էին դեպի անհայտ հեռաստանները, ճիշտ ինչպես հսկա, անեզր ծովի ալիքներ, իսկ նրանց արանքում ընկած էին հովիտներ ու ճահիճներ, լճեր ու գետակներ, և ամենուրեք զգացվում էր առաջին ծաղիկների զգլխիչ բուրմունքը, ամենուրեք լսվում էին թռչունների ու անտառային կենդանիների ուրախ ձայները:

Վերոհիշյալ դրախտը տարածված էր Կրեգի լեռան ստորոտում, հյութալի մարգագետինները ձգվում էին ընդհուպ մինչև Պարզ լիճը, և փարթամ կանաչի այդ օվկիանոսի վրա կղզյակների նման բարձրանում էին կաղամախիների կեչիների անտառակները, որոնց արանքներում մեջ-մեջ հանդիպում էին սև եղևնուտներ: Ծաղիկները սահմանված ժամկետից երկու շաբաթ շուտ էին բացվել, մարգագետիններն անուշ բուրմունք էին արձակում, մի բան, որ ավելի բնորոշ էր հունիսի վերջի, քան մայիսի համար, և ծառի ճյուղերի թավիշ կանաչի մեջ արդեն հայտնվել էին առաջին բները:

Եղևնուտի եզրին, փռված, պառկել էր Պիտերը: Նրա սրտում ապրում էր կիրքը արկածների հանդեպ, և այդ օրը նա մի հանդուգն էքսկուրսիա ձեռնարկեց, որպիսին երբեք սիրտ չէր արել անելու իր ողջ կարճատև կյանքի ընթացքում: Առաջին անգամ մեն-մենակ նա ուղևորվեց դեպի Պարզ լիճ, որը տնից ընդամենը կես մղոն էր հեռու, քաջաբար հետախուզեց լողափի դեղին շերտը, որը դեռ պահպանում էր իր տիրուհու ոտնահետքերը, և համարձակ հաչաց կայծկլտացող լճի անեզր լայնարձակության ու սպիտակ ճայերի վրա, որոնք պտտվում էին նրա գլխավերևում և լարված նայում էին ափ նետված ձկներին: Լրանում էր Պիտերի երեք ամիսը: Դեռ երեկ նա մի երկչոտ շնիկ էր, և ողջ շրջակայքը վիթխարի, անըմբռնելի ու սարսափելի էր թվում նրան, իսկ այսօր նա հանդգնեց մեն-մենակ արահետով իջնել դեպի լիճը: Նա հաչաց, բայց ոչ ոք չհամարձակվեց հետը կռվի բռնվել, և նրա սիրտը լցվեց մեծ ուրախությամբ ու նույնքան մեծ հետաքրքրասիրությամբ:

Ահա թե ինչու հետդարձի ճանապարհին նա կանգ առավ բալասանատու եղևնիների խիտ անտառակի եզրին ու կպավ գետնին, պսպղացող աչքերի ագահ հայացքը հառելով անտառային թանձր ստվերներին, ջանալով կռահել, թե ինչ գաղտնիքներ են թաքնված այդ անհայտ ու մռայլ խորքերում: Այդ անտառակն ընկած էր մի ոչ մեծ կլոր ցածուտում, և հրացանի գնդակը կարող էր անցնել մի ծայրից մյուսը, բայց Պիտերին թվում էր, թե անսահման է, ինչպես ինքը կյանքը: Եվ ինչ-որ մի բան նրան հրապուրում-կանչում էր այնտեղ:

Նրա հոգում պայքարում էին հետաքրքրասիրությունն ու անվճռականությունը, բայց նա չէր կասկածում, որ այս կամ այն հաղթանակից, քաջությունից կամ վախկոտությունից է կախված ոչ միայն իր սեփական շնային ապագան, այլև ուրիշ ավելի կարևոր ճակատագրեր. մարդկային ճակատագրերը, կանանց ու տղամարդկանց, նույնիսկ դեռ չծնված երեխաների ճակատագրերը: Ժամանակին մի բաժակ գինին ամբողջ թագավորություն է կործանել, մեխը դաժան ճակատամարտի ելքն է վճռել, իսկ կնոջ մի ժպիտի համար հազարավոր մարդկանց տներ են քանդվել: Ահա այսպիսի անպետք, դատարկ իրերն ու իրադարձությունները երբեմն ներգործում են մարդկային կյանքի

ընթացքի վրա, բայց Պիտերը ոչինչ չգիտեր այդ մասին և գլխի չէր ընկնում, որ եկել է իր ժամանակը:

Ի վերջո նա վեր կացավ և ամուր կանգնեց չորս թաթերի վրա: Բնավ էլ չէր կարելի գեղեցիկ համարել այդ Պիտեր Pied-Bot-ին՝ Կաղ Պիտերին, ինչպես նրան անվանեց Ուրախ Ռոջեր Մաք-Քեյը (որը ապրում էր մայրու անտառի ճահիճներում), երբ Պիտերին նվիրեց աղջկան: Պիտերը բակապահ շուն էր, դրա հետ էլ խիստ անհրապույր: Նրա հայրը, որ մարտական ամենաազնիվ ցեղի էրդելտերիեր էր, սիրահարվելով խոշորաթաթ ու բարեհոգի կանադական քերծեին, մի անգամ փախավ շնանոցից: Այդպես աշխարհ եկավ Պիտերը: Երեք ամսականում նրա դնչին արդեն ցցվել էին ահեղ այտամորուսները, որ ժառանգել էր էրդել հորից. նրա ականջները լոշտակ էին ու կախ ընկած, պոչը ոլործուն էր, իսկ երկար ու անճոռնի թաթերը այնքան ծանր էին ու անհամաչափ, որ քայլելիս դրանք շարունակ խճճվում, փաթ էին ընկնում, և նա քիթը հա զարկում էր գետնին: Պիտերի վրա գցած առաջին իսկ հայացքից մարդ խղճահարություն էր զգում նրա նկատմամբ, բայց շուտով այդ խղճահարությունը փոխվում էր ջերմ համակրանքի: Ինչ անենք, որ Պիտերը գեղեցիկ չէր, փոխարենը նրա երակներում խառնված էր շնային երկու հրաշալի ցեղերի արյունը: Ի դեպ, որոշ տեսակետներով այդ խառնուրդը հիշեցնում էր նիտրոգլիցերինի և ձիթապտղի յուղի, կամ դինամիտի ու բորակի հետ կաթի ու մեղրի խառնուրդին:

Երբ Պիտերը ոտք դրեց սև ստվերի մեջ, նրա սրտիկը կատաղորեն թպրտաց, և նա դժվարությամբ կուլ տվեց թուքը, կարծես գունդ էր դեմ առել կոկորդին: Բայց նրա վճիռը անդառնալի էր: Ինչ-որ անկասելի մի բան նրան առաջ էր քաշում, և նա հնազանդվեց այդ անլսելի կանչին: Անթափանց աղջամուղջը իր տակ առավ նրան, և կատակասեր ճակատագիրը դարձյալ ընտրեց ամենապարզունակ զենքը, որպեսզի հետագայում նրա օգնությամբ ուրախություն արարի մարդկային կյանքում:

Երբ խավարը կլանեց Պիտերին, նրա ականջները ցցվեցին և վզակոթի կոշտ բուրդը բիզ-բիզ կանգնեց: Բայց նա հաչաց, ինչպես հաչում էր այսօր լճափին ու կանաչ մարգագետիններում: Երկու անգամ նա շրջվեց և ուսի վրայով նայեց հետևում նշմարվող արևի լույսին, որը նրա յուրաքանչյուր քայլի հետ ավելի էր աղոտանում: Սակայն հենց այդ աղոտ բիծն էլ, որը վկայում էր այն մասին, թե նահանջի ճանապարհը բաց է, ամրապնդեց Պիտերի արիությունը, որը խավարի խորանալու հետ արագորեն նվազում էր: Բայց երբ նա երրորդ անգամ հետ նայեց, հետևում միայն խավար տեսավ: Մի ակնթարթում կոշտ գունդը դեմ առավ նրա կոկորդին, շնչահեղձ անելով, իսկ աչքերը վերածվեցին երկու հրե օղակների, այնքան որ սաստիկ լարվածությամբ էին նայում խավարին: Նույնիսկ նրա տիրուհին, որ աշխարհում ոչ մի բանից չէր վախենում, թերևս նա էլ կանգ առներ այստեղ անհասկանալի, բնազդային վախից: Իսկ Պիտերին թվաց, թե արևը հանկարծակի բոլորովին հանգավ: Փշատերև ծառերի թավ սաղարթները հոծ, անթափանց վարագույր էին հյուսել նրա գլխավերևում: Ձմռանն այստեղ ձյունը չէր թափանցում, իսկ ամռանը նույնիսկ արևի ամենապայծառ շողերը վերածվում էին կաթնավուն մշուշի:

Պիտերը հիմա մտածում էր միայն մի բանի մասին, ինչպե՞ս դուրս գա այստեղից, ինչպե՞ս տուն հասնի, բայց այդտեղ համատարած անդորրի մեջ անծանոթ ու անհասկանալի

ձայներ որսաց: Ամենից անհասկանալին ու ամենից սահմռկեցուցիչը ֆշշոցն էր, որ լսվում էր մեկ հեռվից, մեկ շատ մոտիկից և ուղեկցվում էր տարօրինակ չրթչրթոցով, որից արյունը սառեց նրա երակներում: Դրանից հետո երկու անգամ նրա գլխավերևում հայտնվեց վիթխարի բվի ստվերը, և նա կպավ գետնին, զգալով, որ կոկորդին դեմ առած գունդը մեծանում է ու ավելի կոշտանում: Հետո Պիտերը իր գլխավերևում, իրար հյուսված ճյուղերի արանքից թևավոր մարմինների շարժվելու մեղմ շրշյուն լսեց, այդ ժամանակ նա դանդաղ ու զգուշորեն շրջվեց փորի վրա, վճռելով ինչքան հնարավոր է շուտ դուրս գալ մարգագետին, որտեղ առաջվա պես դեռ ցերեկ էր: Եվ այդ պահին նրա սիրտը ճմլվեց անասելի սարսափից. առջևում, դեպի լուսավոր տարածքները տանող ճանապարհին վառվում էին երկու ծակող կանաչ կրակներ:

Ոչ բանականությունը, ոչ էլ փորձը, այլ բնազդը Պիտերին հուշեց, որ մթության մեջ փայլող այդ երկու կանաչ օղակները ոչ մի լավ բան չեն գուշակում: Ճիշտ է, նա չգիտեր, որ իր սեփական չռված աչքերը ավելի պակաս սարսափելի չէին թվում այդ մութ թունելում, և գլխավորը, նա չգիտեր, որ իր շուրջը տարածում է մահացու սարսափ առաջացնող ինչ-որ բան՝ շան հոտ: Կանաչ աչքերը շարունակում էին նայել նրան, և նրա անճոռնի թաթերը ծալվեցին, մեջքը ասես ջարդվեց, երկու կես եղավ, և նա փռվեց փափուկ խոիվի վրա, սպասելով մահվան: Բայց այդտեղ կանաչ կրակները հանգան: Հետո նորից վառվեցին, բայց արդեն հեռվում: Կրկին հանգան: Իսկ երբ վառվեցին երրորդ անգամ, դրանք նման էին արդեն ոչ թե օղակների, այլ փայլուն կետերի, Պիտերը չտեսնված ցնծություն զգաց: Բնազդը, որ ժառանգել էր էրդել նախնիներից, հուշեց նրան, որ անծանոթ թշնամին շուռ եկավ ու ծլկեց: Եվ Պիտերը հաղթականորեն հաչաց:

Թաքնված արարածներով լի մռայլ անտառը այդ ձայնին արձագանքեց խճճված ճյուղերի սոսկալի խշշոցով, շշնջացող ձայների անհասկանալի քրթմնջյունով, կտուցների չարագույժ կափկափոցով, որոնք կարող էին պատառոտել, ծվեն-ծվեն անել Պիտերի նիհար մարմինը: Անտառի խորքում հնչեց մի ուժգին ճայթյուն և փշախոզի ծաղրական քրթմնջոցը, ապա մի հարցական վայնասուն՝ «Ու-ուու-ո՞ւխ»: Պիտերին սկզբում թվաց նույնիսկ, թե դա մարդն է գոռում: Եվ նա նորից, դողդողալով, կպավ փշատերևի հաստ գորգին. նրա սիրտը կատաղորեն թպրտաց, պատեպատ զարկվեց, մահացու երկյուղից այտամորուսները բիզ-բիզ կանգնեցին: Հետո տագնապալի, սարսափ ծնող մի լռություն իջավ և այդ սառցե լռության մեջ Պիտերը ապարդյուն շուռումուռ տվեց գլուխը, ջանալով գոնե անհետացող արևոտ օրվա ցոլքերը տեսներ: Եվ հանկարծ, իր հետ հույս բերելով, նրան հասավ մի նոր շշուկ, մեղմ ու անպարզ, որը բնավ նման չէր նախկին ձայներին: Ինչ-որ տեղ հազիվ լսելի քչքչում էր ջուրը: Պիտերին ծանոթ էր այդ ախորժալի քչքչոցը: Նա շատ անգամ էր խաղացել խճի, ավազի ու քարերի վրա, այնտեղ, ուր ծնվեց այդ ձայնը: Նա սրտապնդվեց, ելավ տեղից ու գնաց այն կողմը, որտեղից լսվեց այդ ձայնը: Ինչ-որ բան նրան հուշեց, որ հարկավոր է շատ զգույշ քայլել, բայց նրա հաստ, անճոռնի թաթերը համառորեն փախչում էին իրարից, և նա մի քանի անգամ սայթաքեց ու քթով զարկվեց խոիվին: Վերջապես հասավ առվակին, որը ճղփում էր ու խաղում մերկացած ծառարմատների հետ: Առուն այնքան նեղ էր, որ բարձրահասակ մարդը հեշտությամբ կարող էր լոք տալ անցնել վրայով: Եվ այստեղ Պիտերը առջևում լույս նկատեց: Նա անցավ

վազքի և շուտով դուրս եկավ մարգագետին, որտեղ, արևով ողողված կապույտ երկնքի տակ, առաջվա նման անուշ բուրում էին ծաղիկները, կանաչին էին տալիս խոտերը, ուրախ երգում էին թռչունները:

Պիտերը մոռացավ կրած սարսափը: Կոկորդին դեմ առած գունդը անհետացավ, սիրտը տեղն ընկավ, և շնիկը արդեն աներեր ու անզուսպ կերպով հավատաց, որ աշխարհում բոլորին հաղթել է: Նա շրջվեց, նայեց եղևնիների տակ ընկած մութ թունելին, որտեղից դուրս էր փախչում ծիծաղկոտ առվակը, և անշտապ, լնգլնգալով ու հանդգնորեն գոմռալով գնաց առաջ: Հասնելով անվտանգ տարածություն, նա կանգ առավ ու շուրջը նայեց: Ոչ ոք իրեն չէր հետապնդում, և դա մի անգամ ևս հաստատեց, որ ինքը մեծ սխրանք է կատարել: Պիտերը փքվեց հպարտությունից. առջևի թաթերը մարտականորեն հենելով գետնին՝ ուռցրեց մեջքը ու հաչաց իր ամենաահեղ հաչոցով: Հաչաց, թաթերով չանգռեց գետինը, սուր ատամներով պոճոկեց խոտերը, բայց այնուամենայնիվ, ի պատասխան նրա մարտահրավերի, ոչ ոք սիրտ չարեց մութ թավուտից դուրս գալ:

Գլուխը տնկելով ու ականջները ցցելով՝ Պիտերը դանդաղ սնգսնգոցով մագլցեց լանջնիվեր, իր ողջ երեքամսյա կյանքի ընթացքում առաջին անգամ վառվելով մեկնումեկին դնքսելու ցանկությամբ, միևնույն է, թե ում: Նա ուրիշ էր դարձել, և հիմա փայտ կամ քար կրծելը, ճագարի մորթին զզզզելը նրան քիչ էր թվում: Երբ Պիտերը դուրս եկավ ցածուտից, կանգ առավ և, ներքև նայելով, բարձր հաչաց. նա հիմա գրեթե ուզում էր վերադառնալ այդ մութ մացառուտները և դուրս վռնդել նրա բոլոր բնակիչներին: Հետո շրջվեց Կրեգի կողմը, և նրա մարտական ավյունը հանկարծակի մարեց, իսկ պոչը կախ ընկավ, այնպես որ ոլորված ծայրը կպավ գետնին:

Նրանից չորս հարյուր յարդ հեռու, դրախտային ձորակից, որը, Կրեգը երկու ճյուղի բաժանելով, վերածվում էր կիրճի, սպիտակ ծուխ էր բարձրանում: Ծուխը տեսնելով՝ Պիտերը գրեթե նույն պահին էլ լսեց կացնի թխկոցը: Դողը բռնեց նրան, բայց, այնուամենայնիվ, գնաց դեպի թխկոցը: Նա դեռ շատ փոքր էր և իսկականից ատել չէր կարող, բացի դրանից ժառանգել էր իր մոր հեզ բարեսրտությունը, բայց և այնպես ամեն անգամ, երբ Պիտերը լսում էր այդ կացնի թխկոցը, նրա փոքրիկ, խելացի գլխում տագնապալի մտքեր էին ծնվում, և նա զգում էր վերահաս վտանգը: Չէ որ այդ թխկոցը նրա համար անխզելիորեն կապված էր կատվի նմանվող մի սրադեմ նիհար մարդու հետ, որի վերին շրթունքին ձգվում էր շեկ, կոշտ մազերի բարակ շերտը, իսկ մի աչքը բոլորովին չէր բացվում: Եվ Պիտերը անհամեմատ ավելի շատ վախենում էր միաչքանուց, քան վախեցավ աներևույթ հրեշներից, որոնք թաքնված էին անտառի սև խորխորատում, ուր խիզախորեն մտել էր նա այսօր:

Սակայն բվերը, փշախոզը և վառվող աչքերով աղվեսը Պիտերին սովորեցրին որոշ բաներ, ինչը որ դեռ չգիտեր նախօրյակին, և, մոտենալով ձորապոնկին, նա չպառկեց, այլ կանգնած մնաց ծուռ թաթերի վրա և անվախորեն հայացքը հառեց իր դիմաց: Ձորակի մյուս կողմում, արևմտյան թևին, բարձրուղեշ մայրիների, վառ կանաչ կաղամախիների և ճերմակաբուն կեչիների արանքում գերանակապ մի խրճիթ երևաց: Դա մի սքանչելի անկյուն էր: Պիտերի և խրճիթի արանքում փռված էր թավշյա կանաչ գորգը, ծածկված

ծաղիկներով, բուրումնալից մանուշակներով ու վայրի ցախկեռասներով, իսկ նրա վերևում զնգում էր թռչունների երգը: Մարգագետնի միջով փախչում էր առվակը ու անհետանում ժայռոտ կիրճում, իսկ նրա ափին կանգնած էր խրճիթը՝ վայրի խաղողի որթերով պարուրված: Բայց Պիտերի լարված աչքերը չտեսան այդ գեղեցկությունը, նրա ականջները չլսեցին ոչ թռչունների դայլայլը, ոչ էլ կարմրաշեկ սկյուռի շաղակրատանքը, որ նստած էր հարևան կոճղի վրա: Նա նայում էր այնտեղ, ուր խրճիթի հետևի բացատում բարձրանում էր մի սպիտակ ժայռ, որ հսկա սունկի էր նման, բայց լսում էր միայն կացնի հարվածները, թեև լարել էր լսողությունը, ջանալով որսալ՝ չի՞ լսվում արդյոք այն ձայնը, որը ամեն բանից առավել էր սիրում աշխարհում:

Այդ ձայնը չլսելով՝ նա իր մեջ ճնշեց վնգստալու ցանկությունը, իջավ դեպի առվակ, անցավ ծանծաղուտը և կամացուկ, գաղտագողի մոտեցավ խրճիթին, շուրջը նայելով ու ականջ դնելով, պատրաստ առաջին իսկ վտանգի դեպքում պուկ տալ: Նա ուզում էր աղջկան կանչել սովորական ճղճղան հաչոցով, բայց կացնի թխկոցների մեջ թաքնված սպառնալիքը ստիպեց հրաժարվել այդ մտքից: Խրճիթի հետևի պատի մոտ, ուր հատկապես վայրի խաղողը շատ խիտ էր աճել, Պիտերը վաղուց իր համար թաքստոց էր փորել և այժմ սողոսկեց այնտեղ, ճիշտ ինչպես վախեցած առնետն է ծլկում իր բույնը: Հետո զգուշությամբ դունչը դուրս հանեց կանաչ վարագույրի միջով ու շուրջը նայեց, ստուգելով, թե արդյո՞ք անվտանգ կարող է տուն վերադառնալ և արդյո՞ք բավականաչափ հույս ունի ընթրիք ստանալու:

Բայց այդտեղ նրա սիրտը ուրախ տրոփեց. այսօր կացնով թխկացնողը աղջիկ էր, ոչ թե տղամարդ:

Վառելափայտի մեծ դարսակից մի քանի քայլ այն կողմ արևի տակ շողշողում էին նրա շագանակագույն մազերը, և երբ նա շրջվեց դեպի խրճիթը, Պիտերը հասցրեց տեսնել աղջկա դալուկ դեմքը: Նա հիացմունքից խենթացած, արդեն ուզում էր նետվել դեպի աղջիկը, երբ նրան կանգնեցրեց մի սարսափելի ձայն, որը միշտ էլ անասելի վախ էր ներշնչել իրեն:

Խրճիթից դուրս եկավ մի տղամարդ, կնոջ ուղեկցությամբ: Տղամարդը լողլող էր ու նիհար, իսկ միակ աչքը նիհար դեմքի վրա բոլորովին փոս էր ընկել: Հենց որ տղամարդը երևաց, Պիտերը հասկացավ, որ նա այդ օրը նույնիսկ սովորականից էլ չար է: Ով այդ պահին մոտենար նրան, անպայման կնկատեր, որ նրանից վիսկու հոտ է փչում: Շուրթերի անկյունները դեղնել էին ծխախոտից, որ նա ծամում էր շարունակ, իսկ երբ գլխով արեց շողշողուն խոպոպներով աղջկա կողմը, նրա միակ աչքի մեջ փայլեց դաժան ցնծությունը:

— Մունին յոթ հարյուր հիսուն դոլար խոստացավ նրա համար, երբ որ ղեկավարությունը իրեն կվճարի փայտակոճերի դիմաց, իսկ ինձ էլ հիսուն դոլար կանխավճար տվեց,— հայտարարեց նա

— Տասը տարի հո զուր չեմ կերակրել նրան, էդ անբանին: Իսկ հարսանիքի օրը որ մոտեցավ, նրանից հազար էլ կպոկեմ:

Կինը ոչինչ չպատասխանեց: Նա վաղուց մոռացել էր առարկել, առավել ևս իր խոսքը պնդել: Այդ միաչքանու տգեղ դեմքը, նիհար, ոսկրոտ կերպարանքի յուրաքանչյուր գիծը խոսում էին նրա անողոք դաժանության մասին: Կինը վաղուց կոտրվել էր, դարձել անկամ ստրուկ: Նրա դեմքը կարծես անկենդան էր, անկյանք: Աչքերը խամրած էին, սիրտը քարացել էր մշտական ցավերից, ձեռքերը կոշտացել ու այլանդակվել էին ծանր աշխատանքից, որով անվերջ տանջում էր նրան անգութ սրիկան: Նույնիսկ Պիտերը, որ մկան պես թաքնվում էր տան տակ, հասկանում էր, որ այդ երկուսը բնավ նման չեն իրար: Նա շատ անգամ էր տեսել, թե աղջիկն ու կինը ինչպես են լաց լինում միմյանց գրկած: Իսկ երբ Պիտերը կամացուկ մոտենում էր կնոջը, սա քնքշորեն շոյում էր իրեն և ուտելիք տալիս: Բայց Պիտերը երբեք նրա ձայնը չէր լսում, երբ տղամարդը մոտերքում էր լինում:

Տղամարդը մի կտոր ծամելու ծխախոտ կծեց:

— Իսկ աղջիկը քանի՞ տարեկան է, Լիզ,— հանկարծ հարցրեց նա:

— Տասներկուսին տասնյոթը լրացավ:

Տղամարդը թքեց:

— Մունին ստիպված կլինի հազար դնել: Ախր տասը տարի մենք կերակրել ենք նրան, իսկ Մունիի խելքը նրա համար գնում է: Ոչինչ, թող քսակը բաց անի:

— Ջեդ...— Կնոջ ձայնը գրեթե զրնգաց:— Ջեդ, լավ չէ Էդպես...

Տղամարդը հռհռաց: Նա բերանը լայն բացեց, և դեղնած ժանիքները փայլեցին արևի տակ: Աղջիկը կացինը ցած իջեցրեց և, գլուխը շրջելով, նայեց դռան շեմին կանգնած զույգին:

— Լավ չէ՞,— քոքոաց տղամարդը: Լավ չէ՞: Դու էս է տասը տարի է էդ նույն բանն ասում ես ինձ թաքուն վիսկի ծախելու հաշվով, բայց ես էլի ծախում եմ: Ճի՞շտ է: Եվ էս քո խոսքն էլ չի խանգարի ինձ, որ հարսանիքի հաշվով պայմանավորվեմ Մունիի հետ... եթե, իհարկե, Մունին կլոր հազար հանի քսակից: Այդտեղ նա շրջվեց կնոջ կողմը և ձեռքը բարձրացրեց, կարծես ուզում էր խփել: Իսկ թե դու բան ես ասել, եթե թեկուզ մի խոսքով ինձ մատնել ես, բոլոր ոսկորներդ ջարդուփշուր կանեմ: Գետինը մտնեմ, թե չանեմ: Հասկացա՞ր: Ոչ մի բան չես ասի նրան:

Կնոջ կորացած մեջքը էլ ավելի կռացավ:

— Ես չեմ ասի, Ջեդ... ազնիվ խոսք:

Տղամարդը խռպոտ ձայնով քրթմնջաց ու բարձրացրած ձեռքը իջեցրեց:

— Դե տես, հա՛, թե չէ շանսատակ կանեմ,— սպառնաց նա:

Աղջիկը կացինը գետին գցեց ու գնաց նրանց կողմը: Նա նիհար էր ու գեղիրան, իսկ հպարտորեն հետ գցած գլուխը և համառ ծնոտը վկայում էին այն մասին, որ միաչքանուն դեռ չի հաջողվել իր կնոջ նման բութ ու հնազանդ դարձնել նրան: Նրա հագին չթից շոր էր՝ գունաթափված, կարերը քանդված, թևքերը կտրած, այնպես որ նրա նուրբ սպիտակ թևերը

արմունկներից վերև բաց էին: Գուլպաների վրա աչքի էին զարնում լցրած տեղերն ու կարկատանները, իսկ հին մաշիկները բոլորովին քրքրված էին:

Սակայն Պիտերին, որը իր թաքստոցից անհուն սիրով նայում էր նրան, աղջիկը աշխարհի ամենագեղեցիկ արարածն էր թվում: Ուրախ Ռոջերն էլ նույն բանն էր ասում, ասենք տղամարդկանց մեծ մասը (ինչպես, ի դեպ, և կանանց) համաձայն կլիներ, որ այդ նիհար աղջնակը գեղեցիկներից գեղեցիկ է, ընդունակ երկար դիմանալու վշտերին ու ֆիզիկական տառապանքներին: Նրա աչքերը կապույտ էին, ինչպես մանուշակները, որոնց մեջ վերջերս քիթը խոթել էր Պիտերը: Իսկ նրա սքանչելի մազերը, մինչ նա փայտ էր ջարդում, ազատվել էին գերությունից, որի մեջ դրանց պահում էր խունացած ժապավենը, և թափվել էին ուսերին: Մինչև գոտկատեղ հասնող այդ խիտ, շագանակագույն խոպոպները տեսնելիս նույնիսկ Ջեդ Հոկինսի միակ աչքը վառվում էր հիացմունքից: Բայց այդ ժամանակ էլ նա շարունակում էր ատել աղջկան, և նրա չոր, ոսկրոտ մատները շատ անգամ էին չարությամբ կառչում այդ շողշողուն գանգուրներից, բայց շատ քիչ էր հաջողվում ցավի ճիչ պոկել Նեյդայից: Հիմա էլ, երբ աղջիկը կատաղի չարություն տեսավ միաչքանու դեմքին, նրա հպարտ սիրտը չդողաց, թեև մարմնով սարսուռ անցավ:

Այնուամենայնիվ, մշտական տանջանքներն արդեն սկսել էին իրենց ազդեցությունը թողնել: Կապույտ աչքերում սառել էր տագնապը, դեմքը կորցրել էր կարմրությունը, դալկացել էր ու նիհարել, իսկ ալ կարմիր շուրթերը ոչ թե առողջ ու բախտավոր լինելն էին վկայում, այլ միայն ավելի էին ընդգծում այտերի գունատությունը, հիշեցնելով, որ դրանք մի ժամանակ կարմիր են եղել:

Նա կանգ առավ Ջեդ Հոկինսի դիմաց, այնպիսի հեռավորությամբ, որ նրա ձեռքը իրեն չհասնի:

— Ես քեզ չե՞մ ասել, որ չհամարձակվես ձեռք բարձրացնել նրա վրա,— բղավեց Նեյդան՝ դժվարությամբ զսպելով կատաղությունը, իսկ նրա կապույտ աչքերը ատելության ու արհամարհանքի շանթեր արձակեցին միաչքանու վրա։— Եթե թեկուզ մի անգամ էլ խփես նրան, ապա... ապա բանդ բուրդ կլինի: Թե որ ծեծել ես ուզում, ինձ ծեծիր: Ես կդիմանամ: Իսկ նա... մի լավ նայիր: Դու ջարդել ես նրա ուսերը, դու հաշմանդամ ես դարձրել նրան: Զարմանում եմ, թե էս հողը մինչև հիմա ոնց է քեզ դիմանում:

Տղամարդը կատաղած մի քայլ առաջ եկավ, Պիտերը հոգու խորքում ինչ-որ նոր ու անծանոթ բան զգաց: Առանց հետ նայելու այդ մարդուց փախչելու ցանկությունը հանկարծ կորավ: Նիհար, փոքրիկ կուրծքը ձգվեց, կոկորդը լարվեց, և շնիկը գոռոաց, ճիշտ է, այնքան կամացուկ, որ մարդկային ականջը չէր կարող որսալ:

Իր թաքստոցում Պիտերը չարությամբ կրճտացրեց ատամները: Սակայն տղամարդը չխփեց, ոչ էլ ձեռքը երկարեց՝ Նեյդայի մետաքսյա գանգուրները քաշելու: Նա ծիծաղեց խեղդված ծիծաղով և, ուսերը թոթվելով, շուռ եկավ:

— Ախր ես նրան չխփեցի, ճի՞շտ է, Նեյդա,— ասաց նա ու ծածկվեց խրճիթի անկյունում:

Աղջիկը բռնեց կնոջ ձեռքը: Չարությունն անհետացավ նրա աչքերից, բայց նա ամբողջ մարմնով դողում էր:

— Ես նրան նախազգուշացրել եմ, թե ինչ կլինի: Նա հիմա էլ չի համարձակվի մատով կպչել քեզ,— մեղմորեն ասաց Նեյդան:— Թե չէ նրա համար շատ վատ կլինի: Ես էդ մասին կհոգամ: Կհայտնեմ ոստիկանությանը: Նրանց ցույց կտամ բոլոր թաքստոցները, որտեղ նա պահում է վիսկին: Ես նրան բանտ կնստեցնեմ, հետո ինչ ուզում է թող լինի:

Կնոջ մաշված, նիհար մատները սեղմեցին Նեյդայի ձեռքը:

— Ոչ, ոչ, էդպես բան չանես,— ասաց նա աղերսանքով:— Մի ժամանակ նա բարի էր իմ նկատմամբ, վաղուց, շատ վաղուց էր դա, Նեյդա: Էն ժամանակ Ջեդը էսքան չար չէր, էդ բոլորի մեղավորը վիսկին է: Մի՛ մատնի նրան, Նեյդա: Լսո՞ւմ ես, մի՛ մատնի:

— Ես քեզ խոստացա, չէ՞, որ չեմ մատնի, եթե նա քեզ էլ չծեծի: Թող իմ մազերը քաշի, թե որ իրեն դուր է գալիս: Բայց եթե քեզ խփի...

Նեյդան խոր հոգոց հանեց և նույնպես ծածկվեց խրճիթի անկյունում:

Պիտերը սպասեց, ականջ դրեց: Հետո վայրի խաղողի տակ եղած գաղտնի անցքով դուրս սողոսկեց ու տեսավ, որ Նեյդան արագ-արագ գնում է դեպի Կրեգը հատող կիրճը: Պիտերը գնաց նրա հետևից այնքան սուսուփուս, որ Նեյդան նրան նկատեց միայն այն ժամանակ, երբ ժայռերի արանքներում թափված քարակուտակների միջով արդեն անցել էր լեռնաճյուղի մյուս կողմը: Աղջիկը ուրախ ճչալով գրկեց շնիկին ու սեղմեց կրծքին:

— Պիտեր, Պիտեր, էս ո՞ւր ես կորել,— հարցրեց նա:— Ես ամեն տեղ քեզ էի փնտրում, Ռոջերը նույնպես... այսինքն՝ միստր Ուրախ Ռոջերը:

Պիտերն զգաց,որ իրեն ավելի պինդ գրկեցին և, կակղած, թուլացած, կախվեց տիրուհու ձեռքերից, որը այդ ժամանակ հասել էր ժայռերի մեջ թաքնված գաճաճ բալասանատու եղևնիների խմբին: Դա իրենց «անկյունն էր», և Պիտերը վաղուց էր հասկացել, որ սրբորեն պետք է պահպանի նրա գաղտնիքը: Այստեղ Նեյդան իր համար գաղտնի թաքստոց էր սարքել, և հիմա նա նստեց եղևնու ճյուղերի կույտի վրա ու իր դիմաց նստեցրեց Պիտերին, առջևի թաթերից բռնած: Հանկարծ մի նոր լույս վառվեց Նեյդայի աչքերում, և դրանք շողշողացին աստղերի պես: Այտերը շառագունեցին, ալ շուրթերը թեթևակի բացվեցին, բայց Պիտերը, որը վերջիվերջո միայն շուն էր, չէր կարող հասու լինել, թե որքան գեղեցկացավ նա: Սակայն գլխի ընկավ, որ մի բան կատարվեց, և ամեն կերպ ջանաց հասկանալ, թե հատկապես ինչ:

— Պիտեր, նա այսօր էլի եկավ այստեղ, միստր Ռոջերը, միստր Ուրախ Ռոջերը,— շշնջաց աղջիկը, և նրա այտերը էլ ավելի վարդագունեցին:— Նա ինձ ասաց, որ ես շատ լավիկն եմ:

Նեյդան խոր հոգոց հանեց և ժայռի վրայով նայեց այնտեղ, ուր հովտում սևին էր տալիս անտառը: Նրա մատները այնպես պինդ սեղմեցին Պիտերի բրդոտ թաթերը, որ սա կամացուկ գոռոաց:

— Եվ ինձ հարցրեց, թե կարելի՞ է, որ ինքը ձեռք տա իմ մազերին... մի մտածիր, է, Պիտեր, նա ինձ հարցրեց: Իսկ երբ ասացի «այո», նա շատ կամաց ձեռքը հպեց մազերիս, կարծես վախենում էր ինչ-որ բանից, ու ասաց, որ դրանք ուղղակի սքանչելի են, և որ ես լավ պետք է խնամեմ դրանք...

Պիտերը նկատեց, որ նրա կոկորդի երակը ցնցվեց:

— Պիտեր... նա ասաց, որ ինչ էլ ուզում է լինի, կյանքում ինձ չի նեղացնի, որ ավելի շուտ իր ձեռքը կկտրի, քան ինձ կվիրավորի: Այ թե ինչ ասաց նա: Հետո էլ ասաց, որ, եթե ես թույլ տամ, ինքը կուզենար ինձ համբուրել...

Նեյդան նորից գրկեց Պիտերին:

— Իսկ... իսկ ես ասացի նրան, որ, երևի, էդ բանը կարելի է, որովհետև ինքը ինձ դուր է գալիս, և ուրիշ ոչ ոք երբեք ինձ չի համբուրել , և... և, Պիտեր, նա ինձ չհամբուրեց: Իսկ երբ գնաց, կարծես քեֆը տեղը չէր, դեմքը սպիտա՛կ- սպիտակ էր... Եվ այդ րոպեից սկսած մի բան շարունակ երգում է ներսումս: Ես չգիտեմ, թե դա ինչ է, Պիտեր, բայց նա էստեղ է, իմ սրտում:

Մի քիչ լռելուց հետո նորից շշնջաց.

— Գիտես ինչ, Պիտեր, լավ կլիներ, միստր Ռոջերը ինձ ու քեզ տաներ էստեղից հեռու-հեռու:

Այստեղ նա շրթունքները սեղմեց, հոնքերը կիտեց և, Պիտերին նստեցնելով կողքին, նորից աչքը գցեց սև անտառի կողմը, որի խորքում թաքնված էր Ուրախ Ռոջերի խրճիթը:

— Ինչու չի ուզում մարդիկ իմանան, որ ինքը էնտեղ է ապրում, հը՞, Պիտեր,— խոսեց նա մտքերով տարված։— Նա ապրում է էն խարխուլ խրճիթում, որտեղ անցած ձմռանը հնդկացի Թոմը հոգին տվեց, այսինքն՝ մեռավ,— ուղղեց նա։— Ու ես խոստացել եմ, որ ոչ ոքի չեմ հայտնի: Նա ասում է, որ դա գաղտնիք է, և որ այդ մասին գիտենք միայն դու, ես, մեկ էլ Արագահոս գետակի քարոզիչը: Ո՞նց եմ ուզում գոնե մի անգամ ընկնել էդ խրճիթը։

Պիտերն այդ ժամանակ սկսեց հոտոտել քարերի ճեղքերը և չնկատեց, թե նրա կապույտ աչքերը ինչպես հանկարծ զայրույթից փայլատակեցին: Աղջիկը նայեց իր քրքրված մաշիկներին, կարկատած գուլպաներին, խղճուկ գունաթափված շրջազգեստին, և մատները ջղաձգորեն սեղմվեցին ու բռունցք դարձան:

— Ես այդպես էլ կանեի... Ես կգնայի այստեղից ուր աչքս կտրեր, ու էլ երբեք չէի վերադառնա, եթե էդ կինը չլիներ... Հիմա նա վհուկից էլ վատ է վարվում ինձ հետ, միայն թե էդ բոլորի մեղավորը Ջեդ Հոկինսն է: Ես ախր հիշում եմ...

Հանկարծ Նեյդան վեր թռավ տեղից և մարտական տեսքով գլուխն այնպես թափ տվեց, որ մազերը արևի ամպի նման վեր սլացան քամու պոռթկումից:

— Ես մի օր կսպանեմ նրան,— գոչեց նա՝ դիմելով հովտից այն կողմ ընկած մութ անտառին։— Այո՛, կսպանեմ։

Գլուխ երկրորդ

Նեյդան գնում էր Պիտերի հետևից։ Նրա տառապած հոգում վաղուց արդեն հասունացել էր փոթորիկը, թեև մինչ այդ օրը միայն Պիտերն էր վկա եղել ահեղ պայթյունին։ Բայց այդ օրը նա չկարողացավ լռել և կամացուկ, անտարբեր ձայնով Ուրախ Ռոջերին (օտարականին, որը բնակվում էր անտառի թավուտում) պատմեց այն մասին, թե ինչպես ավելի քան տասը տարի առաջ իր ծնողները մահացել են ինչ-որ վարակիչ հիվանդությունից, և այն մասին, ինչպես Ջեդ Հոկինսը և նրա կինը խոստացել են հոգ տանել իրեն երեք սևագորշ մորթիների դիմաց, որ իր հայրը ձեռք էր բերել համաճարակից քիչ առաջ։ Այդ բոլորը նա լսել էր կնոջից. չէ որ այդ ժամանակ ինքն ընդամենը վեց տարեկան էր։ Ուրախ Ռոջերին պատմելով այն մասին, թե ինչ էր եղել հետագայում, Նեյդան սիրտ չարեց նայել նրա երեսին, դրա համար էլ չտեսավ, որ նրա դեմքը ավելի մթնեց։ Բայց Ռոջերը բարձր փնչացրեց։ Նա այդպիսի սովորություն ուներ, սակայն Նեյդան միայն վերջին ժամանակներն էր ծանոթացել նրա հետ և չգիտեր դա ինչ է նշանակում։ Ահա հենց այդ ժամանակ էլ Ռոջերը խնդրեց, որ թույլ տա շոյել իր մազերը, և նրա խոշոր ափը մի ակնթարթում քնքշությամբ հպվեց Նեյդայի գլխին։

Այդ հիշողությունը դեռևս ջերմացնում էր Նեյդայի սիրտը։ Դա նոր արիություն ու նախկինում անծանոթ ուրախություն էր հաղորդել նրան, նույնպիսի ուրախություն, ինչպիսին պարգևել էր Պիտերին վերջերս նրա տարած հաղթանակը աներևույթ հրեշի դեմ։ Հիմա Պիտերը ոչ մի բանից չէր վախենում, Նեյդան՝ նույնպես։ Նրանք մտան նեղ կիրճը, որ լիքն էր իրար վրա դիզված ժայռերով։ Այստեղ Պիտերը հանկարծ քարացավ տեղում ու հոտոտեց գետինը, հետո նրա ոտքերը լարվեցին, և աղջիկը առաջին անգամ լսեց, թե ինչպես է նա գոռոում։ Նեյդան կանգ առավ, ականջ դրեց, և շուտով մի թույլ ձայն հասավ նրան, ասես ինչ-որ մեկը քարը քարին էր քսում։ Նա շունչ առավ, ուղղվեց, և Պիտերը, վերև նայելով, տեսավ, որ նրա շուրթերը կիսաբաց էին, իսկ աչքերը փայլում էին։ Հետո Նեյդան կռացավ ու մի մեծ ճյուղ վերցրեց գետնից։

— Գնանք այնտեղ, Պիտեր,— շշնջաց նա։— Դա նրա գաղտնարաներից մեկն է։

Այն գիտակցությունը, որ ինքը այլևս չի վախենում, արբեցրեց Նեյդային, ինչպես արբեցրեց նաև Պիտերին, որի սրտիկը զարկում էր արագ, երբ նա գնում էր տիրուհու հետևից։ Նրանք գնում էին մեծ զգուշությամբ. աղջիկը քայլում էր մատների ծայրերին, իսկ Պիտերի թաթերը փափուկ բարձիկներ ունեին։ Երբ դուրս եկան երկու հսկայական ժայռերի արանքն ընկած ավազոտ հրապարակը, Ջեդ Հոկինսը, որը ծնկի եկած, թիկունքով դեպի իրենց, փորփրում էր ավազը, գլուխը չշրջեց։ Դեռ նախօրյակին և Պիտերը, և Նեյդան եթե ահա այսպես հանդիպեին նրան, կշտապեին աննկատ ծլկել, որովհետև Ջեդը զբաղված էր իր սև գործով, և վայ նրան, ով կխանգարեր իրեն։ Ջեդը չանգռելով մի կույտ ավազ դուրս ածեց ժայռի տակից, փոսի միջից մի մեծ շիշ հանեց և պարունակությունը սկսեց

դատարկել վեց կեղտոտ կաշվե տոպրակների մեջ: Հետո դադարեցրեց այդ աշխատանքը և վրա ընկավ շշին: Շնիկն ու աղջիկը լսեցին, թե վիսկին ինչպես է կլկլում նրա կոկորդում:

Նեյդան մահակով թխկացրեց ժայռին, և Ջեդը թափով շրջվեց: Երբ նա տեսավ, թե ով է իր դիմաց, կատաղությունից դեմքը քաթանի պես սպիտակեց: Ոտքի ելնելով՝ նա սեղմեց խոշոր բռունցքները, դեղնած ատամները բացվեցին:

— Ա՜խ դու սատանի լրտես,— խռպոտ ձայնով գոչեց նա։— Թե որ տղամարդ լինեիր, էստեղից կենդանի չէիր պրծնի:

Աղջիկը նույնիսկ չցնցվեց, չգունատվեց: Ընդհակառակը, այտերը շառագունեցին, և Հոկինսը նրա աչքերում հաղթական ցնծություն տեսավ: Արհամարհանքով շրթունքները ծռմռելով՝ Նեյդան ծաղրանքով ասաց.

— Ես որ տղամարդ լինեի, Ջեդ Հոկինս, դու իսկույն կծիկը կդնեիր:

Հոկինսը քայլ արավ դեպի աղջիկը:

— Դու կծիկը կդնեիր,— կրկնեց Նեյդան՝ ուղիղ նրա երեսին նայելով ու մահակը պինդ սեղմելով։— Դու ախր միայն կանանց ես ծեծում, փոքրիկ երեխաներին ու մեկ էլ շնիկներին, որոնք դեռ կծել չեն կարողանում: Դու վախկոտ ես, Ջեդ Հոկինս, ստոր, անազնիվ վախկոտ ու զողացված վիսկու առևտրական: Էս հողը ո՞նց է քեզ դիմանում:

Նույնիսկ Պիտերը զգաց, որ մի գերբնական բան կատարվեց. ինքը օդը անշարժացավ ժայռերի արանքում, թվաց, ուր որ է պիտի պայթի հսկայական դինամիտի լիցքը կամ աշխարհը փուլ պիտի գա: Պիտերը, աշխարհում ամեն ինչ մոռացած, նայեց իր տիրուհուն, որը, այնքան նուրբ, այնքան փխրուն ու փոքրիկ, առաջին անգամ պատրաստ էր աներկյուղ դեմ գնալ ապագային, և նրա նվիրված շնային սիրտը կռահեց կատարվածի իմաստը. խոշոր թաթերը լայն չռելով՝ նա կանգնեց Ջեդ Հոկինսի առջև ու գոմռաց:

Բուտլեգերը[1] մի պահ շփոթվեց: Վերջին ամիսներին նա աշխատում էր Նեյդայի խաթրին չկպչել, որպեսզի աղջիկն իրեն հնազանդ պահի ու ոչինչ չկասկածի, մինչև որ Մունին կվճարեր խոստացած գումարը: Իսկ հետո, հետո Նեյդային կտանի Մունիի մոտ, և թող Մունին ինքը քոթակի նրան, մտածում էր Ջեդը: Եվ ահա թե հիմա Նեյդան ինչպես է հատուցում իր բարության դիմաց: Նա քոռ կոպեկի տեղ էլ չի դնում իրեն, թաքուն հետևում է, հայհոյում է երեսին, էն էլ ո՞վ, էդ ձրիակերը, որին տասը տարի հաց ու ջուր է տվել:

Ջեդը այլևս չէր մտածում նրա գեղեցկության մասին: Հարկավոր էր մի լավ խրատել նրան, մազերը պոկել, այնպիսի քոթակ տալ, որ մարմնի վրա ողջ տեղ չմնա: Էն ժամանակ լեզուն իրեն կքաշի: Հոկինսը նետվեց դեպի աղջիկը, և Պիտերը, տեսնելով, որ Նեյդան բարձրացրեց մահակը, կատաղորեն հաչաց: Բայց Նեյդան մի պահ հապաղեց: Հոկինսը խփեց, աղջկա մատների միջից ցած գցեց մահակը և աջ ձեռքով ճանկեց նրա փարթամ, փափուկ խոպոպները:

---

[1] Բուտլեգեր — մարդ, որ զբաղվում է ոգելից խմիչքների գաղտնի վաճառքով:

Այստեղ կարծես Պիտերի սրտում շղթան կտրվեց: Նա զգաց, որ ինքը աշխարհ է եկել այդ օրվա, հենց այդ ժամի, այդ րոպեի համար: Հիմա նրա համար ամբողջ աշխարհը կենտրոնացավ մի նեղ շերտի, բուտլեգերի ոտքի՝ տաբատի ու կոշկի միջև եղած մաշկի նեղ շերտի վրա: Նա ցատկեց, և նրա ասեղի պես սուր ատամները խրվեցին նշան բռնած տեղը: Եվ Ջեդ Հոկինսը վայրի ոռնոցով բաց թողեց Նեյդայի մազերը: Պիտերը լսեց այդ ոռնոցը և ատամներն ավելի ամուր սեղմեց կոճի մեջ այն միակ արարածի, որին ինքը ատում էր: Ողջ սարսափը այն բանի, ինչ հաջորդեց դրան, հասկացավ ոչ այնքան Պիտերը, որքան Նեյդան: Հոկինսը կռացավ, նրա ուժեղ մատները սեղմեցին Պիտերի բարալիկ վիզը, և շնիկը, հանկարծ կորցնելով շնչելու ընդունակությունը, ծնոտները բացեց: Հետո Հոկինսը շնիկին բռնած ձեռքը այնպես հետ տարավ, ասես քար էր շպրտում:

Այն պահին, երբ նրա ձեռքը ուղղվեց և Պիտերի մարմինը օդ թռավ, Նեյդան ճչալով նետվեց բուտլեգերի վրա: Մահակը իջավ Հոկինսի դեմքին, և նույն ակնթարթին էլ խուլ ու մի տեսակ ճրթճրթացող թրմփոց լսվեց: Դա խեղճ Պիտերն էր զարկվեց ժայռին: Երբ Նեյդան շրջվեց, տեսավ, որ Պիտերը գալարվում է ավազների մեջ, ըստ երևույթին նրա մեջքն ու հետևի թաթերը ջարդվել էին, բայց նա չէր կաղկանձում, չէր վնգստում, այլ, պսպղուն աչքերը չհեռացնելով Նեյդայից, ջանում էր սողալ նրա մոտ: Միայն Ուրախ Ռոջերը գիտեր, որ Պիտերի մայրը զոհվել էր կնոջ կյանքը փրկելիս, և, հավանաբար, այդ պահին Պիտերի սրտում արթնացել էր նրա ոգին, որովհետև, տանջալից ցավերն անտեսելով, նա մտածում էր միայն մի բանի մասին. քարշ գալով մեռնել՝ թշնամուց պաշտպանելով հասնել աղջկա ոտքերի մոտ ու նրան: Նա չէր հասկանում, որ իր ջարդված, խեղված մարմինը յուրաքանչյուր հուսահատ ճիգի հետ առաջ էր շարժվում մեկ դյույմից ոչ ավելի: Բայց Նեյդան հասկացավ այդ դաժան ճշմարտությունը և, խոր հոգոց հանելով, որպիսին ոչ մի ծեծով Հոկինսը չէր կարող դուրս կորզել նրանից, նետվեց դեպի շնիկը, ծունկ չոքեց ու զգուշությամբ գիրկն առավ նրան: Հետո, ոտքի ելնելով, կայծակնային արագությամբ շրջվեց Ջեդ Հոկինսի կողմը:

— Քեզ կսպանեմ սրա համար,— շնչակտուր լինելով գոչեց նա:— Կսպանեմ: Լավ հիշիր իմ խոսքը: Նեյդայի հարվածից բուտլեգերի միակ աչքը մի քանի վայրկյան կուրացավ. բայց նա նորից հարձակվեց աղջկա վրա: Նեյդան փախավ ինչքան ուժ ուներ: Հետևից լսվեցին հետապնդողի ծանր ոտնաձայները, խշրտաց ավազը, դեսուդեն թռան մանր քարերը, և մի տանջալից երկյուղ համակեց աղջկան, բայց նա վախեցավ ոչ թե իր, այլ Պիտերի համար: Հոկինսը քիչ-քիչ հետ մնաց, հայհոյելով ու անիծելով իր բախտը, որը զրկել էր իրեն մի աչքից: Նեյդան սրընթաց անցավ կիրճը և դուրս եկավ ընդարձակ մարգագետինը. նրա մազերը ծածանվում էին, գրկում ամուր սեղմել էր Պիտերին: Շնիկը վնգստում էր կամացուկ ու աղիողորմ: Նեյդան հանկարծ հիշեց, որ ճիշտ այդպես էր լաց լինում նաև այն երեխան՝ մեռնող հինգամսական մանկիկը: Մի տանջալից ճիչ դուրս թռավ նրա կրծքից, քանի որ մտածեց, թե Պիտերն էլ է մեռնում: Սայթաքելով նա շարունակեց վազել դեպի սև անտառի պարիսպը, այտը Պիտերի դնչին սեղմած և արցունքների միջից շարունակ նրա անունը տալով.

— Պիտե՛ր... Պիտե՛ր... Պիտե՛ր...

Իսկ Պիտերը, որը նույնիսկ այդ պահին անչափ երջանիկ էր, որովհետև զգում էր նրա սերը և լսում էր նրա ձայնը, լեզուն հանեց ու լիզեց նրա այտը: Նեյդան բարձր ձայնով հեծկլտաց:

— Մի՛ վախենա, Պիտեր...— մրմնջաց նա։— Մի՛ վախենա, փոքրիկս...— Նա քեզ էլ ձեռք չի տա, մենք գետակը կանցնենք, կգնանք միստր Ռոջերի խրճիթը: Քեզ համար էլ էնտեղ լավ կլինի: Քեզ համար էնտեղ շատ լավ կլինի...

Նեյդան ջղաձգորեն հեկեկաց, և նրա սիրտը, որ լի էր մայրական քնքշությամբ, կտրատվեց կրծքի տակ: Իսկ շնիկը, բնազդաբար զգալով իրենց սիրո ու մտերմության ողջ ուժը, փշփշոտ դնչով պինդ սեղմվեց նրա այտին ու կամացուկ վնգստաց: Նա չէր վախենում մեռնելուց, քանի դեռ ինքը այդ տաք ու քնքուշ ձեռքերում էր:

— Մի՛ լա, փոքրիկս,— համոզում էր Նեյդան։— Մի՛ լա, Պիտեր: Շուտով ամեն ինչ լավ կլինի... հա՛, լավ կլինի...

Նա նորից փղձկաց, հեծկլտոցից շնչահեղձ եղավ և այլևս ոչ մի խոսք չասաց, մինչև հասան անանցանելի անտառի եզրը:

Այստեղ Նեյդան նայեց Պիտերին ու տեսավ, որ նա աչքերը փակել է: Եվ հանկարծ նրան թվաց, թե ինչ-որ նմանություն կա Պիտերի փշփշոտ դնչի ու մեռնող երեխայի փոքրիկ գունատ դեմքի միջև:

— Ես քեզ ոտքի կկանգնեցնեմ, Պիտեր: Միստր Ռոջերը կբուժի քեզ,— շշնջաց նա։

Բայց նա գիտեր, որ ճիշտ չի ասում. ոչ ոք այլևս չէր կարող Պիտերին օգնել: Նա զննեց շնիկի անշարժ դունչը, և սիրտը կծկվեց անխուսափելի կորստի ծանր նախազգացումից. չէ՞ որ Պիտերի ողնաշարն է ջարդված, և նա կմեռնի, կմեռնի իր ձեռքերի մեջ: Բայց Նեյդան շարունակում էր ամբողջ թափով վազել անտառի մութ արահետով. նա ուզում էր հասնել Ուրախ Ռոջերի խրճիթը, որ ընկած էր գետակից այն կողմ, ճահճի մոտ, քանի դեռ Պիտերի սիրտը չէր կանգնել: Նա հույս չուներ, թե Ռոջերը կփրկեր Պիտերին, բայց նրան թվում էր, որ և՛ շնիկի, և՛ իր վիճակը մի քիչ կթեթևանա, եթե Ուրախ Ռոջերը իրենց կողքին լինի: Չէ՞ որ այդ գարունը առաջին ուրախաբեր գարունն էր նրա կյանքում, քանզի ծանոթությունը այն մարդու հետ, որը թաքուն բնակվում էր անտառի խրճիթում, զարդարել էր նրա անուրախ գոյությունը, հույս էր արթնացրել նրա մեջ, և Նեյդան ու Պիտերը գտնում էին, որ նրանից լավ մարդ չկա աշխարհում:

Երբ Նեյդան հասավ Արագահոս գետակի ծանծաղուտը, որտեղից մինչև խրճիթ մնում էր մի ամբողջ կես մղոն, արդեն բոլորովին շնչակտուր էր եղել ու հալից ընկել: Գետակի ջուրը փախչում էր սրընթաց, գրեթե ափերին հավասար. Նեյդան հիշեց, որ Ուրախ Ռոջերն իրեն նախազգուշացրել էր. սկսվել է վարարումը, և աչքերը չռվեցին սարսափից: Նա նայեց Պիտերին, որը անօգնական ու անշարժ կախվել էր իր ձեռքերից, խոր շունչ քաշեց ու սրտապնդվեց: Գիտեր, որ նույնիսկ վարարումների ժամանակ այստեղ ամենախոր տեղը հասնում է մինչև գոտկատեղ: Բայց ախր հոսանքը շատ կատաղի էր:

Նա շուրթերը հպեց Պիտերի փրչոտ դնչին, համբուրեց նրան ու շշնջաց.

— Մենք կանցնենք մյուս կողմը, Պիտեր: Չէ՞ որ չենք վախենում, փոքրիկս: Մենք կանցնենք, անպայման կանցնենք...

Նեյդան համարձակ առաջ գնաց. ջուրը պտույտ տվեց նրա կոճերի շուրջը, հասավ ծնկներին, ազդրերին: Հետո հասավ մինչև գոտկատեղը, և ասես ինչ-որ անհայտ ձեռքեր կտրեցին նրան հատակից, վեր բարձրացրին, բռնեցին ու քաշեցին տարան իրենց հետևից. Նեյդան հուսահատ ճիգերի գնով ոտքի վրա մնաց, բայց հոսանքը համառորեն շարունակեց քշել նրան: Եվ ահա, երբ աղջիկը գրեթե արդեն հասել էր փրկարար ափին, պատահեց այն, ինչից որ վախենում էր: Նա զգաց, որ կորցնում է հավասարակշռությունը, և հազիվ էր հասցրել ինչ-որ խրախուսական խոսքեր մրմնջալ Պիտերին, երբ վերջնականապես կորցրեց ոտքի տակի հենարանը: Ինչ-որ բան ուժգին զարկվեց նրա կողին: Նեյդան, մի ձեռքով Պիտերին գրկած, մյուսը անզոր ու անօգնական վեր բարձրացրեց, և նրա մատները կառչեցին մի ոստից, որ ցցված էր սև լպրծուն գերանի վրա. հոսանքը հենց այդ գերանն էլ շպրտել էր իր վրա:

— Ամեն ինչ լավ է, Պիտեր,— գոչեց Նեյդան, թեև գիտեր, որ ահա-ահա իրենք կսուզվեն:— Ամեն ինչ լա...

Հանկարծ նա սուզվեց ջրի տակ, նրա հետ էլ Պիտերը, որին շարունակում էր ջղաձգորեն սեղմել կրծքին:

Նեյդան իր մասին չէր մտածում, մտածում էր միայն Պիտերի մասին: Չգիտես ինչու նա չվախեցավ, թեև սովորաբար գարնանային բուռն վարարումների տեսարանը երկյուղ էր ներշնչում նրան: Ջուրը դղրդում էր նրա վերևում, նրա տակ և շուրջը ամենուրեք. նրա ականջներում մի խլացուցիչ ոռնոց էր կանգնած, և, այնուամենայնիվ, նա սովորական սարսափը չճաշակեց:

Մինչ այդ սև քառսը խեղդում էր Նեյդային, նրա ուղեղում առաջվա պես քաջալերական խոսքեր ծնվեցին Պիտերի համար, որոնք արդեն բարձրաձայն ասել չէր կարող, մի ձեռքով նա գրկել էր շնիկին, իսկ մյուսով կառչել էր ոստից, ուժ գործադրելով ջրի երես բարձրանալ: Պիտերն այլևս նրա համար սովորական շուն չէր. չէ՞ որ նա նետվեց պաշտպանելու իրեն և կյանքը չխնայեց իր համար:

Անսպասելիորեն ինչ-որ ուժ վերև շպրտեց նրան. մեծ գերանը շուռ եկավ, հաստատուն դիրք ընդունելով, և իր հետևից մի պահ դուրս հանեց Նեյդային: Գետախորշի ծայրին, որտեղ եռում ու փրփրում էր ջուրը, բայց այլևս անզուսպ կերպով առաջ չէր սլանում, ջրի երեսին հայտնվեցին Նեյդայի շագանակագույն մազերը, ապա սպիտակած դեմքը, և վերջին ջղաձիգ ճիգերով աղջիկը Պիտերի թաց մարմինը դրեց գերանին: Նեյդան հեկեկաց ու փորձեց խոր շունչ քաշել: Թաց խոպոպները փակել էին աչքերը, և նա ոչինչ չէր տեսնում: Ուժերը բոլորովին լքել էին նրան, ոչ մի կերպ չէր կարողանում բարձրանալ գերանի վրա, Պիտերի կողքին, իսկ հետո, երբ մի քիչ բարձրացել էր, ջրի վրա կռացած ծառի ճյուղը զորեղ ձեռքի նման գերանից պոկեց նրան:

Նեյդան, ճչալով, փորձեց բռնել Պիտերին, բայց նա անհետացավ, անհետացավ և գերանը, իսկ ճյուղը բռնել էր նրա մազերից, ինչպես շատ հաճախ Հոկինսն էր կառչում դրանցից, և մի քանի վայրկյան հոսանքը տարուբերում էր նրա մարմինը, այնպես, որ ամբողջ ծառը ցնցվում էր: Բայց Նեյդան ցավ չէր զգում, աչքերից ջուրը սրբելով՝ նա ներքևում տեսավ հոսանքի երկարությամբ ձգված լայն, խաղաղ գետախորշը, որտեղ հիմա տարուբերվում էր գերանը: Սակայն Պիտերը գերանի վրա չէր: Հանկարծ նրա սիրտը մարեց, աչքերը լայն չռվեցին, և, տեղի ունեցած անհավանական հրաշքից զարմացած, նա մոռացավ, որ կախված է եռացող հոսանքի մեջ, ու հոսանքի լպրծուն ձեռքերը զարկվում են իրեն, բռնում են ու աշխատում քաշել հատակը: Նա տեսավ Պիտերին: Պիտերը գետախորշի հեռավոր ծայրին էր և լողում էր դեպի ափ: Մի պահ մտածեց, որ տեսողությունը խաբում է իրեն: Հավանաբար, հոսանքը նրա դիակն էր քշում: Չէ՞ որ Պիտերը չէր կարող լողալ: Բայց... բայց նրա գլուխը ջրի երեսին էր... Նա շարժվում էր դեպի ափ... Նա թափահարում էր թաթերը...

Նեյդան հուսահատ թափ տվեց իրեն ու պոկվեց ճյուղից: Ինչ-որ բան ընկրկեց: Գլուխն ասես այրվեց, և հոսանքը նրան քաշեց տարավ հեռու: Գետախորշում, հաղթահարելով թուլությունը, նա լող տվեց, և շուտով ոտքերը կպան հատակին: Նա տրորեց աչքերն ու գրեթե հեկեկաց անասելի վախից և նույնքան անասելի հույսից: Պիտերն արդեն ջրից դուրս էր եկել: Նա մի կերպ սողալով հասել էր ափ ու կուչ եկել թաց կծիկի պես, բայց նայում էր Նեյդային: Նրա պսպղացող աչքերը փնտրում էին տիրուհուն: Նեյդան դժվարությամբ քարշ եկավ դեպի Պիտերը: Հիմա, երբ ամեն ինչ մնացել էր հետևում, նոր միայն հասկացավ, թե որքան է ուժասպառ եղել: Գլուխն անվերջ պտտվում էր, սիրտը խառնում էր, ամեն ինչ լողում էր աչքերի առաջ, և նրան այլևս չզարմացրեց այն, որ Պիտերը ողջ է: Մինչև ափ մնացել էր ընդամենը մի քանի ֆուտ, բայց ուժերը բոլորովին լքել էին Նեյդային: Նա նստեց ջրի մեջ, սողեսող հասավ Պիտերին, նորից գրկեց նրան ու սեղմեց թաց, ջղաձգորեն վեր ու վար անող կրծքին:

Արևը իր շողերն էր թափում նրանց վրա, առանց մի ստվեր գցելու, ջուրը, որ քիչ առաջ մահվան երգ էր երգում, հիմա նորից կարկաչում էր ուրախ ու մտերմիկ, չորս կողմը ծլվլում էին թռչունները, շատ մոտիկ, արոսենու բնի վրա ուրախ խաղում էին երկու շեկ սկյուռներ: Նեյդայի ջրից մգացած վարսերը նորից փայլեցին արևի տակ, և նա ոլորեց դրանք ու մեծ հանգույց արեց: Պիտերի կոշտ այտամորուսներն էլ չորացան: Կես ժամ անց աղջկա աչքերը փայլեցին հույսի շողերով և այտերը շառագունեցին:

— Մենք համարյա արդեն չորացել ենք, Պիտեր, և կարող ենք գնալ միստր Ուրախ Ռոջերի մոտ,— ուրախ շշնջաց նա:

Նեյդան ելավ տեղից, թափ տվեց դեռ թաց մազերը, գրկեց Պիտերին... և ցնցվեց, որովհետև Պիտերը աղիողորմ վնգստաց:

— Նա քեզ կբուժի, Պիտեր,— ասաց Նեյդան, որպեսզի մխիթարի շնիկին։— Եվ նրա մոտ մեզ համար լավ կլինի:

Նեյդայի հայացքը սևեռված էր իր դիմաց, արևով ողողված անտառի կանաչին: Թռչունների երգը և շրջապատի ողջ գեղեցկությունը նրա էությունը համակեցին անբացատրելի ուրախությամբ, իսկ բոբիկ ոտքերի հպումը փափուկ հողին, կարծես, հրաշալի, մինչ այդ անծանոթ ազատություն խոստացավ նրան:

— Ծաղիկներ,— ցածրաձայն բացականչեց նա:— Ծաղիկներ, և՛ թռչուններ, և՛ արև: Պիտե՛ր...— նա լռեց մի պահ, կարծես ականջ դնելով իր շուրջը փռված լույսի ու կյանքի շնչառությանը:— Դե, միստր Ուրախ Ռոջերի մոտ գնալու ժամանակն է,— ասաց նա:

Նեյդան մի անգամ էլ թափ տվեց մազերը, որոնք լուսապսակի նման շողշողացին նրա դեմքի շուրջը: Աչքերը էլ ավելի կապույտ դարձան, իսկ այտերը ավելի կարմրեցին, երբ նա թեքվեց հազիվ նկատելի արահետը, որը տանում էր դեպի այն խրճիթը, ուր մարդկային աչքից թաքնվում էր Ուրախ Ռոջերը:

Գլուխ երրորդ

Հնդկացի Թոմի հին խրճիթից, որ գտնվում էր Արագահոս գետակի մոտ, խոտառատ բացատում, տղամարդու ուրախ ծիծաղ լսվեց: Իրիկնամուտի այդ ժամին արևի վերջին ոսկին ներս էր թափվում կաղամախու գերաններից կառուցված խրճիթի բաց դռնից: Եվ ինչպես արևի շողերը, այդ ծիծաղն էլ ասես լուսավորեց ողջ շրջակայքը՝ դեպի հյուսիս և դեպի արևմուտք տարածվող հսկայական ճահճի եզերքը: Դա յուրահատուկ ծիծաղ էր, ոչ խելահեղ կամ հեգնական, բայց զրնգուն ու դյութիչ իր անկեղծությամբ: Դա շատ վարակիչ ծիծաղ էր, որ ամենամռայլ գիշերվա խավարը կարող էր ցրել: Նա ցրում էր վախը, և եթե ծեր հնդկացի Թոմի ճահճում իսկապես սատանաներ էին բնակվում, ապա, այդ ծիծաղը լսելով, կփախչեին լեղաճաք եղած: Ինչպես կարող էին վկայել այդտեղից բավական հեռու ապրող տիպիների ու խրճիթների բնակիչները, մահը շատ անգամ էր նահանջել այդ ծիծաղի առաջ:

Մայիսյան այդ վերջին երեկոյին մարդը, որ ընդունակ էր այդպես ծիծաղելու, արմունկներով հենվել էր կոպիտ տախտակներից սարքած սեղանին: Դա Ռոջեր Մաք-Քեյն էր, որ ավելի շատ հայտնի էր Ուրախ Ռոջեր անունով, մի ավազակ, որին փնտրում էին թագավորական հյուսիսարևմտյան հեծյալ ոստիկանության բոլոր պարեկները Ջրբաժանքից[2] դեպի հյուսիս ընկած տարածքում:

Բայց նա, ով այդ պահին տեսներ նրան արևի շողերի ոսկյա լուսապսակի մեջ, չէր հավատա, որ իր առջև կանգնած է հանցագործը, առավել ևս մի հանցագործ, որը, ըստ լուրերի, չտեսնված սանձարձակություններ էր կատարել հյուսիսում: Նա այնքան էլ բարձրահասակ չէր, բայց պինդ էր, ինչպես հասած խնձորը, և խնձորի պես էլ կարմիր էր: Ինչ-որ մանկական բան կար նրա կլորիկ վարդագույն դեմքի, ջինջ մոխրագույն աչքերի, կարճ խուզած վուշանման մազերի և մինչև արմունկները բաց թմբլիկ ձեռքերի մեջ:

---

[2] Ջրբաժանք — Մեծ լճերի ավազանը Հուդսոնի ծոցից բաժանող լեռնաշղթաների ընդհանուր անվանումը:

Ուրախ Ռոջերը կուշտ ու բարեհոգի տեսք ուներ: Նրա կերպարանքը իր բոլոր գծերով կլորավուն էր, սակայն նրան հաստլիկ անվանելը սխալ կլիներ: Շատ սխալ կլիներ, ինչպես կարող էին վկայել շատերը, ովքեր հանդիպել էին նրան անտառային արահետներում: Նրա դեմքին արատավորության, դատապարտելու արժանի ոչ մի հետք չկար, և նա ոչնչով նման չէր հետապնդվող հանցագործի: Գուցե կողմնակի դիտողը ուշադրություն դարձներ միայն ատրճանակի վրա, որ կախված էր նրա ոչ այնքան վայելչակազմ մեջքին փաթաթած գոտուց: Եթե այդ ատրճանակը չլիներ, Ուրախ Ռոջերը կթողներ պարզապես անվնաս մարդու տպավորություն, բայց այնպիսի մարդու, որին ճակատագիրն ինքը սահմանել է ամենուրեք ուրախություն ու բարություն տանելու: Ինչ վերաբերում է նրա տարիքին, ապա նա քսանհինգ տարեկան էր, որի մասին, ի դեպ, աշխատում էր հիշել:

Առաջին հայացքից խրճիթում ոչ մի այնպիսի բան չկար, որը կարողանար ծիծաղեցնել նույնիսկ ամենազվարճասեր մարդուն, չխոսելով արդեն ավազակի մասին, որի գլխի համար պարգև էր նշանակված. գուցե դա պատրաստվող ընթրիքի ախորժալի բուրմունքն էր: Հեռավոր անկյունում, փոքրիկ սալօջախի վրա երկու կաքավ էր տապակվում, իսկ քիթը ջարդված սրճամանից բարձրանում էին բուրումնալից գոլորշու քուլաները: Բաց ջեռոցի մեջ իրենց հերթին էին սպասում ոսկեդարչնավուն կեղևով վեց խորոված տաք-տաք կարտոֆիլները:

Ուրախ Ռոջերը, ծիծաղելով ու ձեռքերը շփելով, հեռացավ սեղանից, երրորդ անգամ մոտեցավ անկյունում դրված ցածլիկ դարակին և զգուշությամբ բարձրացրեց հին թերթերի կույտը. բացված արկղի մեջ ինչ-որ բան խշխշաց, լսվեց մի բողոքող ծվծվոց, և արկղի եզրին հայտնվեց թխաթույր մկնիկի փոքրիկ դունչը, որը իր պսպղուն հուլունք-աչուկների հարցական հայացքը հառեց Ռոջերին:

— Այ քեզ խորամանկ,— ուրախացավ Ռոջերը։— Ի՜նչ քաջ է ու խորամանկ:

Նա թերթերն ավելի վեր բարձրացրեց և սկսեց զննել այդ արտասովոր տեսարանը, որը պատահաբար հայտնաբերել էր կես ժամ առաջ: Փափուկ բնի մեջ պառկած էին չորս պստալի՜կ-պստլիկ մկնիկներ, դեռ բոլորովին անմազ ու կույր: Նոր էր նա թերթերն իրենց տեղը դրել, երբ մայրը խշխշացնելով հետ եկավ նրանց մոտ, և լսվեց, թե ինչպես է ծվծվում՝ հանգստացնելով պստիկներին, կարծես ասում էր, որ այդ մարդուց կարելի է չվախենալ, ինքը նրան լավ է ճանաչում, և որ նա ոչ մի դեպքում իրենց չարիք չի պատճառի: Իսկ Ուրախ Ռոջերը, վերադառնալով սեղանի մոտ, նորից բարձրաձայն քրքջաց, և նրա ծիծաղը տարածվեց վերջալույսի ոսկով հանդերձված գետահովտի վրա այնպես, որ բարձր եղևնու կատարից գրգռիչ կչկչոցով նրան արձագանքեց երկնագույն ճայը:

Սակայն իրականում թերթի ծվեններից պատրաստված քնի մեջ գտնվող չորս անմազ մկնիկները չէին ծիծաղի պատճառը: Այդ օրը ուրախ ու անհոգ արկածախնդրին անսպասելիորեն այցելել էր երջանկությունը. բավական է ձեռքերը պարզեր, և այդ երջանկությունն ընդմիշտ իրենը կլիներ: Բայց նա ձեռքերը չէր պարզում.. . որովհետև ինքը ավազակ էր, նաև այն պատճառով, որ ամեն ինչում խստագույն կերպով հետևում էր պատվի ու ազնվության իր սեփական օրենքին: Ռոջեր Մաք-Քեյը աստծուն չէր

հավատում, բայց խոնարհվում էր բնության առաջ. բնության երևույթները, կյանքը, ինքը օդը, որ շնչում էր նա, այն էջերն էին, որոնցից կազմվում էր նրա հավատի գիրքը: Եվ երբ արեգակն սկսեց իջնել բարձրաբերձ ծառերի կատարների հետևը, նա այդ էջերում կարդաց, որ ինքը հիմարություն արեց, հրաժարվելով ամենալավագույն նվերից, որը կարող էր կյանք պարգևել իրեն. հրաժարվեց զուտ այն պատճառով, որ ճակատագրի քմահաճույքով ինքը խախտել էր մարդկային օրենքները և դարձել թափառական: Ահա թե ինչու հիմա նրա հոգին ցնծում էր ու ծիծաղում:

Նա հաստատ համոզված էր, որ կես ժամ առաջ ինքը անսասան վճիռ կայացրեց: Նա հարկադրեց իրեն՝ մոռանալ օրենքը խախտելու և այդ օրենքի կարմրազգեստ սպասավորների մասին, որոնք կրնկակոխ հետապնդում էին իրեն: Բայց նրանց մտքով էլ չէր անցնի՝ իրեն փնտրել այստեղ, հենց քաղաքակրթության սահմանի վրա, իսկ ժամանակը, մտածեց նա, մոռացության հուսալի վարագույրով կծածկի իրեն: Վաղը ինքը նորից կգնա Կրեգ և. . .

Նրա մտքի հայացքի առջև հառնեց աղջկա թախծոտ, սիրունիկ դեմքը, խոշոր կապուտակ աչքերը, արևի աղոտ ճառագայթների տակ նորից փայլեցին նրա շագանակագույն խոպոպները, և ալ շրթունքները, կմկմալով, արտաբերեցին. «Դուք ինձ չեք վիրավորի ձեր համբույրով, միստր Ուրախ Ռոջեր... Թե որ դուք ուզում եք»:

Նա այդ մասին մանրամասն պատմեց պլստան աչքերով մայր մկնիկին, որը շարունակ դունչը դուրս էր հանում իր տուփից:

— Իսկ դու չափազանց հետաքրքրասերն ես, հա՛, խորամանկ,— ասաց նա մկնիկին։— Համ էլ իսկական ծովահեն ես, ոնց որ նավապետ Քիդը. դու կերել ես իմ պանիրը, կրծել ես իմ դահուկների փոկերը և թռցրել ես իմ գուլպան՝ բույնդ կարգի բերելու համար: Տեղն էր, որ քեզ բռնեի թակարդով կամ գլուխդ թռցնեի: Բայց ես էդ բանը չեմ անի: Ես թույլ կտամ, որ դու հանգիստ ապրես... ու ձագերիդ մեծացնես: Եվ, միսիս Քիդ, ես քեզ պարտական եմ մի հրաշալի գաղափարի համար: Այո՛, այո՛: Դու ինձ ասացիր, որ ես իրավունք ունեմ իմ սեփական բույնը հյուսելու, և ես կհյուսեմ: Իսկ դրա տիրուհին կլինի աշխարհի ամենաքնքուշ, ամենագեղեցիկ աղջիկը, որը միայն սխալմամբ է, որ ծաղիկ չի ծնվել: Ահա այսպես, միսիս Քիդ: Իսկ եթե հայտնվեն ոստիկանական խուզարկուները...

Բայց այստեղ հանկարծ ծիածանագույն հեռաստանները մշուշապատվեցին, և Ուրախ Ռոջերի դեմքին հայտնվեց մի այնպիսի արտահայտություն, որպիսին լինում է այն պահերին, երբ մարդ չի վախենում նայել ճշմարտության աչքերին, և գիտե, որ իրեն պատին են սեղմել, ու ինքը պետք է պաշտպանվի:

Արևը մայր մտավ, ընթրիքը սառեց սեղանին, իսկ փոքրիկ թուխպը, որ մշուշել էր լուսավոր պատկերը, էլ ավելի մթնեց՝ վերածվելով սև ամպի, որից սարսռաց նրա սիրտը: Նա մոտեցավ բաց դռանը: Մատները դանդաղ սեղմվեցին ու բռունցք դարձան, և նա հանգիստ ու անշտապ սկսեց զննել իր աշխարհը: Նրա առջև փռված էր անտառային խուլ թավուտը, որ տեղ-տեղ դեռ լուսավորված էր մայրամուտի հանգչող շողերով: Ահա հենց դա էլ նրա աշխարհն էր, նրա ամբողջ աշխարհը: Այստեղ է նա ծնվել, այստեղ էլ կմեռնի մի

օր: Նա սիրում էր այդ աշխարհը և հասկանում էր նրան, որի հզոր ոգին միշտ խոսում էր իր հետ՝ գիշեր ու ցերեկ, արև օրերին ու փոթորիկներին: Բայց հիմա նա լուռ էր: Եվ Ուրախ Ռոջերը, մտքերի մեջ խորասուզված, չլսեց այն ծաղրական կշտամբանքները, որ բարձր, մուգ եղևնու բոցավառվող կատարից իր վրա էր թափում երկնագույն ճայը:

Այստեղ նրա ներսում գլուխ բարձրացրեց մի ինչ-որ ավելի ուժեղ բան, քան երջանկության եսասիրական ցանկությունն էր, և մռայլորեն սեղմված նրա շուրթերը կամացուկ, բայց կատաղի մարտահրավերով շշնջացին.

— Նա դեռ բոլորովին փոքրիկ աղջիկ է: Իսկ ես... ես ավազակ եմ, և ինձ բանտ է սպասվում... Չէ՞ որ վաղ թե ուշ ինձ կբռնեն, ես գիտեմ:

Նա կտրվեց մայրամուտի երկնքից ու գնաց դեպի իր խրճիթի մթնշաղը: Մայր մուկը խշխշացրեց թերթերը, և Ուրախ Ռոջերի շուրթերը մի պահ ծռմռվեցին տխուր ժպիտից:

— Չի կարելի,— ասաց նա:— Չի կարելի, և վերջ, միսիս Քիդ: Առանց այդ էլ նրա կյանքը բանի նման չի, իսկ ինձ հետ ավելի վատ կլինի: Դրանից հո չես փախչի: Ոչ մի կերպ չես փախչի, միսիս Քիդ: Բայց ես ուրախ եմ, անչափ ուրախ եմ, որ նա ինձ թույլ տվեց համբուրել իրեն, թե որ ուզում եմ: Մի մտածիր, է՛, միսիս Քիդ: Թե որ ուզում եմ... Օ, տեր աստված:

Եվ, նույնիսկ իր ողբերգության մեջ ծիծաղելի բան հայտնաբերելով, Ուրախ Ռոջերը քմծիծաղ տվեց ու կռացավ թավայի վրա:

— Թե որ ուզում եմ,— կրկնեց նա:— Ախր ես կյանքս էլ չեմ խնայի, մենակ թե թեկուզ մի անգամ համբուրեմ նրան: Բայց գործն այնպես է դասավորվել, միսիս Քիդ, որ...

Ուրախ Ռոջերը հանկարծ լռեց ու ամբողջովին լարվեց: Կյանքի փորձը մի բան էր սովորեցրել նրան. ապրում է նա, ով ամենից շատ է հարմարվում, բայց հարմարվում է այնքան ժամանակ, քանի դեռ ապրում է: Եվ նա միշտ զգոն էր: Նա կարողանում էր արագ մտածել, լսողությունը սուր էր, իսկ մկանները իրենց յուրաքանչյուր բջիջում զգուշավորություն էին պահպանում: Եվ հիմա, առանց գլուխը շրջելու, նա գիտեր, որ մեկը կանգնած է դռան մոտ, իր թիկունքում: Այդ մասին նրան ասացին թեթև շրշյունը, վերջալույսից դեռ փոքր-ինչ ոսկեգույն պատին հայտնված ստվերը, իր վրա հառված ինչ-որ մեկի հայացքը, մեկի անձայն ու անշարժ ներկայությունը: Այդպիսի նախազգուշացումը բավական էր: Ռոջերը պատառաքաղով վերցրեց կաքավը, շուռումուռ տվեց, բարձր ձայնով ծիծաղեց... և հանկարծ կայծակնային արագությամբ շրջվեց դեպի դուռը, քառասունչորս տրամաչափի կոլտը անկոչ հյուրի կրծքին ուղղած:

Եվ անմիջապես էլ ձեռքը ատրճանակի հետ միասին ցած կախվեց:

— Ա՛խ, սատանա...

Նա շփոթված նայեց այն աչքերի մեջ, որոնք նույնպիսի շփոթված հայացքով պատասխանեցին:

— Նեյդա,— դժվարությամբ խոսեց նա։— Ես էլ կարծում էի...— նա շրթունքներով մի ջղաձիգ շարժում արեց՝ ճշմարտանման բացատրություն փնտրելով։— Ես կարծում էի, թե արջ է։

Առաջին րոպեին նա չնկատեց, որ Ջեդ Հոկինսի բարալիկ, նիհար որդեգրուհու չթե շրջազգեստը լրիվ թրջված է։ Աղջկա կապուտակ աչքերը փայլում էին վախից։ Այտերը վառվում էին։ Ինչ-որ չասված բառեր էին սառել նրա կիսաբաց շուրթերին, իսկ մազերը զզզզված ալիքներով թափվել էին ուսերին։ Սակայն Ուրախ Ռոջերը ոչինչ չնկատեց. քիչ առաջվա երջանիկ անուրջները, աղջկա անսպասելի հայտնվելն ու նրա գեղեցկությունը Ռոջերի աչքից ծածկեցին մնացած ամեն ինչը։ Բայց այստեղ նա հանկարծ ուրիշ բան էլ տեսավ։ Մայրամուտի վերջին շողերը փայլփլում էին նրա մազերի մեջ, որովհետև դրանք թաց էին, շորը կպել էր մարմնին, իսկ քրքրված մաշիկների շուրջը փոքրիկ լճակներ էին գոյացել։ Դա ինքնըստինքյան առանձնապես չէր զարմացնի նրան, քանի որ այստեղ հասնելու համար Նեյդան պետք է անցներ գետախորշը։ Բայց նրան ապշեցրին Նեյդայի դեմքի արտահայտությունը և ձեռքերը, որոնք կրծքին էին սեղմել Պիտերին, այն շնիկին, որ ինքն էր նվիրել նրան։

— Նեյդա, ի՞նչ է պատահել,— հարցրեց նա, ատրճանակը սեղանին դնելով։— Հո գետը չե՞ս ընկել։

— Ո՛չ։ Պիտերը լավ չէ,— ասաց Նեյդան կերկերուն ձայնով։— Մենք պատահեցինք Ջեդ Հոկինսին, երբ իր վիսկին էր հանում թաքցրած տեղից... Նա կատաղեց, բռնեց իմ մազերից, Պիտերն էլ կծեց նրան... իսկ... իսկ նա էլ վերցրեց Պիտերին ու զարկեց քարերին... Պիտերը լրիվ ջարդուխուրդ է եղել։ Միստր Ուրախ Ռոջեր...

Աղջիկը շնիկին տվեց նրան։ Ուրախ Ռոջերը շնիկի ծակծկող դնչիկն առավ ափերի մեջ, հետո զգուշությամբ գրկեց նրա փոքրիկ ջարդված մարմինը, և Պիտերը կամացուկ վնգստաց։ Աղջիկը ջղաձգորեն հեծկլտաց, բայց երբ մի պահ հայացքը կտրեց շնիկից ու նայեց ատրճանակին, աչքերը չոր էին։

— Թե որ ատրճանակ ունենայի, կսպանեի նրան,— գոչեց Նեյդան։

Ուրախ Ռոջերը ծունկ չոքեց ու խոնարհվեց Պիտերի վրա։ Նրա դեմքը դարձավ սառն ու մռայլ։

— Նա քաշե՞ց քո մազերը։ Ես... ես միամտորեն ասացի,— շշնջաց նա՝ խոնարհվելով Ռոջերի ուսին։— Ես չէի ուզում։ Եվ ոչ մի տեղս էլ չի ցավում։ Մենակ թե ա՛յ Պիտերը...

Ռոջերն զգաց նրա թաց խոպոպների հպումը իր պարանոցին։

— Ասացեք, միստր Ուրախ Ռոջեր, նա շա՞տ է վնասվել։

Ուրախ Ռոջերը կանացի հոգատարությամբ խնամքով շոշափեց Պիտերի նիհար մարմինը։ Եվ Պիտերը հազիվ լսելի ձայնով վնգստաց, անասելի թեթևություն զգալով այն բանից, որ Ռոջերի մատները հպվեցին իրեն։ Պիտերն այլևս չէր վախենում ոչ Ջեդ Հոկինսից, ոչ ցավերից, ոչ մահից։ Շները շատ միամիտ պատկերացում ունեն երջանկության մասին։ Եվ

Պիտերի համար անասելի երանություն էր ահա այդպես պառկել, մոռացած իրեն ծվատող ցավերը, որովհետև նրա վրա խոնարհված էր սիրելի տիրուհու դեմքը, իսկ Ուրախ Ռոջերի քնքուշ մատները հպվում էին նրան՝ ապաքինում բերելով: Նա վնգստաց, երբ Ուրախ Ռոջերը շոշափեց կոտրված տեղերը, և ճչաց փոքրիկ երեխայի նման, երբ հանկարծ ինչ-որ բան ճրթճրթաց ու ոսկորը տեղն ընկավ, բայց նույնիսկ այդ պահին նա շրջվեց այնպես, որպեսզի իր տաք լեզվով լիզի բարեկամական ձեռքը: Իսկ Ուրախ Ռոջերը այդ միջոցին պատվերներ տվեց Նեյդային, որը անմիջապես մի հարմար լաթի կտոր գտավ, նեղ շերտերով կտրատեց, և տասը րոպե անց Պիտերի հետևի աջ ոտքը այնպես պինդ վիրակապեցին, որ դարձավ անշարժ, ասես փայտից լիներ:

— Կոնքն է դուրս ընկել ու սրունքն էլ ջարդվել է,— վիրակապումն ավարտելով՝ բացատրեց Ուրախ Ռոջերը:— Հիմա ամեն ինչ լավ կլինի, և երեք շաբաթ հետո նա առաջվա պես կվազվզի:

Նա զգուշությամբ վերցրեց Պիտերին, իր վերմակը փռեց թախտի վրա և անկողին պատրաստեց: Հետո նույն գորշ, մթնած դեմքով շրջվեց Նեյդայի կողմը:

Նեյդան կանգնած էր կողքանց, դեպի դուռը, և նայում էր ուղիղ նրա աչքերի մեջ: Եվ Ուրախ Ռոջերը նրա աչքերում տեսավ այն նույն հրաշքը, որը առավոտյան երջանկություն խոստացավ հողմերից տառապած իր հոգուն: Նեյդայի աչքերը կապույտ էին նույնիսկ ամենակապույտ մանուշակից, որպիսին նրան վիճակվել էր տեսնել, և Ռոջերը գիտեր, որ նրա պարզ, անխարդախ սիրտը չի թաքցնի այն գաղտնիքը, որի մասին խոսում էին այդ աչքերը: Նա ամեն ինչ կտար, միայն թե գրկեր աղջկան, և գիտեր, որ դրա համար բավական էր ձեռքերը մեկնի: Բայց մեկ ուրիշ, ավելի ուժեղ զգացմունք կաշկանդում էր նրան: Նեյդայի այտերը շառագունել էին, իսկ Ռոջերին թվում էր, թե աշխարհում ոչ մի տեղ չի գտնվի մի գեղեցկուհի, որ համեմատվի հնամաշ շորով ու քրքրված մաշիկներով այդ նիհար աղջկա հետ. աղջկա դեմքը, որ երիզված էր մեռնող օրվա լույսի տակ թեթևակի փայլփլող խոպոպների թաց ալիքներով, երկնային ուրախություն էր ճառագում:

— Ես գիտեի, միստր... Ռոջեր, որ դուք կբուժեք նրան,— ասաց Նեյդան, և նրա ձայնի մեջ հնչեց հպարտություն, հավատ ու պաշտամունք Ռոջերի հանդեպ:— Ես դա գիտեի:

Ինչ-որ գունդ դեմ առավ Ռոջերի կոկորդին, և նա, շրջվելով օջախի կողմը, պատառաքաղով սկսեց ծակծկել խորոված կարտոֆիլի խշխշան կեղևը: Ու առանց հետ նայելու, Նեյդային ասաց.

— Դու ճիշտ ընթրիքի ժամին ես եկել, Նեյդա: Կընթրենք միասին, հետո էլ քեզ կուղեկցեմ մինչև Կրեգ:

Պիտերն աչքը չէր կտրում Ռոջերից ու Նեյդայից: Ոտքը արդեն չէր ցավում, ուրախ Ռոջերի վերմակի վրա պառկելը տաք էր ու հարմար, և, փշոտ դունչը առջևի թաթերին դրած, նա ուշադիր նայում էր այդ երկու մարդկանց յուրաքանչյուր շարժումին, մարդիկ, առանց որոնց ինքը չէր կարող ապրել: Նա ցածր ու հնչեղ ծիծաղ լսեց, որպիսին շատ հազվադեպ էր լսում. չէ որ Նեյդան այդպես ծիծաղում էր միայն այն ժամանակ, երբ երջանիկ էր լինում:

Նա նայեց, թե ինչպես է Նեյդան մազերը թափահարում ու ցրիվ տալիս լամպի լույսի տակ, որ վառեց Ուրախ Ռոջերը, և հասցրեց նկատել, ինչպես այդ պահին Ռոջերը, որ կանգնած էր օջախի մոտ, խորունկ սիրով լի մի հայացք գցեց նրա վրա, բայց անմիջապես էլ փախցրեց հայացքը, երբ Նեյդան շրջվեց: Ինչքան էլ որ Պիտերը խելացի էր, նա ոչինչ չհասկացավ, բայց այդ ամենի մեջ զգաց այն ուրախությունը, որ զգացել էր միշտ, երբ հանդիպել էին Ուրախ Ռոջերին, միևնույն է, արև էր դրսում, թե մռայլ ու ամպամած եղանակ: Իր կարճատև կյանքի ընթացքում Պիտերը շատ անգամ էր տեսել Նեյդայի վիշտն ու արցունքները, տեսել էր, ինչպես էր կուլ գալիս նա ու աշխատում էր թաքնվելու տեղ գտնել, երբ այն մյուս խրճիթում լսվում էր տղամարդու զզվելի հայհոյանքը և կնոջ խռպոտ ձայնը: Բայց Ուրախ Ռոջերի հետ երբեք այդպիսի բան չէր պատահել: Ռոջերը երկու աչք ուներ, նա չէր հայհոյում ու չէր քաշքշում Նեյդայի մազերը, դրա համար էլ Պիտերը ամբողջ սրտով սիրում էր նրան: Եվ գիտեր, որ իր տիրուհին էլ է սիրում Ուրախ Ռոջերին. չէ որ այդ մասին նա ինքն էր ասել իրեն: Երբ Նեյդան նայում էր Ուրախ Ռոջերին, նրա աչքերի մեջ թախիծ չէր լինում, և միայն Ռոջերի հետ էր ծիծաղում այդպես մեղմ ու զրնգուն, ինչպես հիմա, այս պահին:

Ուրախ Ռոջերը նստեց սեղանի մոտ, իսկ Նեյդան կանգնեց նրա թիկունքում, հիացմունքից կաս-կարմիր կտրած. նրան թույլ էր տրված սուրճ լցնել Ռոջերի համար: Հետո ինքն էլ նստեց, և Ուրախ Ռոջերը կաքավի ամենալավ կտորները դրեց նրա առաջ ու աշխատեց հանգիստ ու անխռով մնալ, երբ նայեց իր դիմաց նստած աղջկա հմայիչ ու սիրունիկ դեմքին: Այն մի քանի պայծառ ժամերի համար, որ վիճակվել էր նրան կյանքում, Նեյդան պարտական էր Ուրախ Ռոջերին, եկվորին, որ երեք ամիս առաջ բնակություն էր հաստատել հնդկացի Թոմի խրճիթում: Նեյդան սիրում էր նրան նույնքան պարզասրտորեն, ինչպես Պիտերը: Եվ չէր էլ մտածում թաքցնել:

— Նեդա,— ասաց Ռոջերը,— դու ախր տասնյոթ տարեկան ես...

— Ես տասնութի մեջ եմ մտել,— իսկույն ուղղեց Նեյդան: Տասնյոթս կես ամիս առաջ լրացավ:

Դա ասաց այնպիսի աշխուժությամբ, որ Ռոջերի սիրտը թպրտաց: Նա գլխով արեց Նեյդային ու ժպտաց:

— Այո, դու արդեն տասնութի մեջ ես,— կրկնեց նա:— Եվ շուտով կհայտնվի մի երիտասարդ, քեզ կտեսնի ու կամուսնանա քեզ հետ...

Նեյդայի շուրթերից կամացուկ հառաչանքի նման ինչ-որ բան պոկվեց: Ուրախ Ռոջերը տեսավ, թե ինչպես դողացին նրա շրթունքները, աչքերը դարձան երկչոտ, և մի պահ գրեթե կորցրեց համարձակությունը:

— Դուք ո՞ւր եք գնալու, միստր Ուրախ Ռոջեր:

— Ե՞ս: Դե չէ, ես գնալու միտք չունեմ, գոնե առայժմ: Իսկ այ... մի գեղեցիկ օր, երբ ամուսնանաս... Կգնաս էստեղից:

— Ես չեմ ամուսնանա,— տաք-տաք առարկեց աղջիկը։— Ես ատում եմ բոլոր տղամարդկանց։ Բոլորին, բացի ձեզանից, միստր Ուրախ Ռոջեր։ Իսկ եթե դուք գնաք...

— Ի՞նչ կլինի, եթե գնամ։

— Ես կսպանեմ Ջեդ Հոկինսին։

Եվ Նեյդան ակամա շարժումով փոքրիկ ձեռքը մեկնեց մեծ ատրճանակին, որ Ռոջերը մոռացել էր սեղանի վրա։

— Եթե դուք գնաք, ես կսպանեմ նրան,— կրկնեց Նեյդան սպառնալից ձայնով։— Նա իր կնոջ կյանքը կերել է, կիսամեռ է դարձրել, քիթը բռնես՝ շունչը կփչի... Թե որ կինը չլիներ, ես հիմա վաղուց էի փախել։ Բայց խոսք եմ տվել նրան, որ կմնամ, քանի դեռ ոչինչ չի փոխվել։ Իսկ եթե դուք գնաք... հիմա...

Նա հեկեկաց, շուրթերի անկյունները կախվեցին, և Ուրախ Ռոջերը, տեղից վեր կենալով, գնաց սրճամանը բերելու, չնայած իր բաժակը կիսով չափ լիքն էր։

— Ես չեմ գնա, Նեյդա,— ասաց նա կեղծ ծիծաղելով։— Խոսք եմ տալիս... ազնիվ խոսք, մեռնեմ, թէ սուտ եմ ասում։ Ես չեմ գնա, մինչև դու թույլ չտաս։

Եվ այստեղ Պիտերը, ինչ-որ վատ բան զգալով, հաչաց իր մահճից, իսկ երբ Ուրախ Ռոջերը վերադարձավ սրճամանը ձեռքին, Նեյդայի աչքերը ուրախությամբ լի հայացքով շնորհակալություն հայտնեցին նրան տված խոսքի համար։ Աղջկա թիկունքում կանգնած՝ Ռոջերը ձևացրեց, թե սուրճ է լցնում նրան, չնայած Նեյդան նույսիսկ ձեռք էլ չէր տվել իր բաժակին, և այդտեղ նորից նկատեց, որ նրա մազերը թաց են։

— Բայց դու չասացիր, Նեյդա, ի՞նչ պատահեց, երբ գետակն անցար,— հարցրեց նա։

Նեյդան սկսեց պատմել, և, իր անունը լսելով, Պիտերը տագնապահար բարձրացրեց փշոտ դունչը։ Նա տեսավ Ռոջերի դեմքը, որի վրա տարակուսանքին փոխարինեց երկյուղը, ապա՝ թռուցիկ ժպիտը։ Իսկ երբ Նեյդան լռեց, Ռոջերը լամպի արձակած լույսի շրջանակի մեջ խոնարհվեց նրա վրա և ասաց.

— Ես ուզում եմ, որ դու ինձ մի բան խոստանաս, Նեյդա։ Եթե Ջեդ Հոկինսը մի անգամ էլ ձեռք բարձրացնի քեզ վրա, կամ մազերդ քաշի, կամ թեկուզ սպառնա, անպայման ինձ ասա, լա՞վ։

Նեյդան անվճռականորեն լռեց։

— Թե չէ, ես իմ խոսքը հետ կվերցնեմ ու կգնամ էստիղից,— ավելացրեց նա։

— Դե որ էդպես է... խոստանում եմ,— ասաց աղջիկը։— Եթե նա ինձ խփի, ես ձեզ կասեմ։ Բայց վախենամ... այսինքն՝ վախենում եմ... ոչ թե ինձ համար, այլ միայն Պիտերի։ Թե որ Պիտերին տուն տանեմ, Ջեդ Հոկինսը հաստատ կսպանի նրան, միստր Ռոջեր։ Թող նա մնա ձեզ մոտ, հա՞։ Եվ... ա՜խ, ինչ լավ կլիներ, որ ես էլ մնայի...

Վերջին խոսքերը նա հազիվ լսելի ձայնով մրմնջաց, և անմիջապես էլ այտերը կարմրեցին:

Սակայն Ուրախ Ռոջերը նորից քաշվեց սալօջախի մոտ, այնպես, կարծես թե չտեսավ նրա կարմրելը և չլսեց վերջին խոսքերը, դրա համար էլ Նեյդայի շփոթմունքը շուտ անցավ:

— Իհարկե, Պիտերը թող մնա էստեղ,— պատասխանեց նա, բայց սրտի խորքում մյուս, Նեյդային անլսելի ձայնը խոսեց. «Ես ամեն ինչ կտայի աշխարհում, մենակ թե դու էլ կարողանայիր էստեղ մնալ»:

Կես ժամ անց, իր բաժին կաքավն ուտելուց հետո, Պիտերը աչքի պոչով նայեց Ուրախ Ռոջերին ու Նեյդային, որը պատրաստվում էր գնալու: Արդեն մութ էր, և Ռոջերը իջեցրեց մոծակների համար կախած ցանցը, իսկ դուռը բաց թողեց. Պիտերը լսեց, թե ինչպես նրանց քայլերի ձայնը հետզհետե մարեց անտառի թանձր խավարում: Լուսինը դեռ դուրս չէր եկել, և սոճիների ու եղևնիների կամարի տակ մութ-մութ էր, ինչպես դժոխքում: Չորս կողմը մեռելային լռություն էր տիրում, և գիշերվա այդ առաջին ժամի անդորրը խախտում էին միայն նրանց սեփական քայլերի ձայնը, մեկ էլ գետակի խշշոցը: Ուրախ Ռոջերի հոգին ցնծում էր. Նեյդայի փոքրիկ տաք ձեռքը իր ձեռքի մեջ էր, նրա նուրբ մատները պինդ բռնել էին իր բութ մատը, և այդպես նա տանում էր աղջկան անտեսանելի արահետով: Երբ նա կանգ առավ ճանապարհը գտնելու, Նեյդան հայտնվեց կիպ Ռոջերի կողքին, այնքան մոտիկ, որ այտը սեղմվեց նրա ուսին, և Ռոջերը, մի քիչ կռանալով, շուրթերով թեթևակի հպվեց նրա մազերին: Բայց մթության մեջ նրա երեսը չէր տեսնում: Մինչև գետախորշ ամբողջ ճանապարհին Ռոջերի սիրտը կատաղորեն թպրտում էր:

Հետո նա ծիծաղեց տարօրինակ ցածր ծիծաղով, որ բոլորովին նման չէր Ուրախ Ռոջերի սովորական ծիծաղին:

— Ես թույլ չեմ տա, որ դու երկրորդ անգամ թրջվես, Նեյդա,— ասաց նա:

Աղջկա մատներն առաջվա պես պինդ բռնել էին Ռոջերի բութ մատը, ասես նա վախենում էր կորչել սև խավարի մեջ, որը չորս կողմից պարուրել էր իրենց: Նեյդան նորից հպվեց նրան, և Ուրախ Ռոջերը ստիպված էր լարել ողջ կամքը, որպեսզի տեղնուտեղը նրան չսեղմի կրծքին ու չխոստովանի իր սերը:

— Ես վախլուկ չեմ... այսինքն՝ թրջվելուց չեմ վախենում,— լսեց նա Նեյդայի շշնջոցը:— Դուք շատ մեծ եք ու շատ ուժեղ, միստր Ռոջեր...

Ռոջերը զգուշությամբ ազատեց իր մատը և գրկեց Նեյդային այնպես, որ նույնիսկ ամենախոր տեղում ջուրը չհասնի նրան: Սկզբում Նեյդայի ձեռքերը հազիվ հպվեցին նրա ուսին, բայց երբ Ռոջերը հասավ ամենախոր տեղը, և Նեյդան զգաց, թե նա ինչպես է պայքարում հոսանքի դեմ, ձեռքերն ավելի ամուր սեղմեց, և դրանք տաք ու հաճելի օղակով գրկեցին Ռոջերի պարանոցը: Վերջապես Ռոջերը բարեհաջող նրան հասցրեց մյուս ափ ու իջեցրեց գետին, և Նեյդան,

թեթևացած, խոր հոգոց հանեց: Հետո մթության մեջ շոշափելով գտավ Ռոջերի ձեռքը ու նորից բռնեց նրա բութ մատը, և Ուրախ Ռոջերը, ոտքից գլուխ թրջված, նրան տարավ մինչև Կրեգը հատող նեղ կիրճը, և արևելյան անտառի կատարների հետևից հայտնվեց լուսինը:

Գլուխ չորրորդ

Դատարկ խրճիթում մնացած Պիտերի համար ժամանակը թվաց շատ երկար, անվերջանալի: Ուրախ Ռոջերը գնալիս լամպը հանգցրեց, իսկ երբ լուսինը դուրս եկավ, նրա լույսը մութ սենյակ չթափանցեց, քանի որ դուռը դեպի արևմուտք էր բացվում, իսկ պատուհաններն էլ պինդ փակված էին վարագույրներով: Սակայն բաց դռնից շնիկը տեսավ, թե ինչպես գիշերային խավարը նախ գունատվեց, հետո ամենուրեք տարածվեցին նուրբ ճաճանչները՝ ցրելով խավարը և չորս կողմը խորհրդավոր ստվերներ փռելով, որոնք, թվում էր, կենդանի արարածներ էին, թեև անձայն ու անշշուկ: Այդ գիշեր երկնքում փայլում էր հրաշագեղ լիալուսինը, իսկ Պիտերը սիրում էր այդպիսի լուսին, թեև իր եռամսյա կյանքի ընթացքում ընդամենը մի քանի անգամ էր տեսել: Լուսինը ավելի շատ էր դյութում նրան, քան արևը, որովհետև արևը միշտ ծագում է լույսի հետ, իսկ Պիտերին երբեք չէր վիճակվել տեսնելու, որ արևը կլաներ խավարը, ինչպես դա անում էր լուսինը: Այդ գաղտնիքը երանությամբ լցրեց նրա հոգին, բայց բնավ չվախեցրեց: Ճիշտ է, նրա համար այնքան էլ հասկանալի չէր տարօրինակ լռությունը ստվերների, որոնք անհետացան, հենց որ ինքը սկսեց հոտոտել դրանք: Նրան շփոթեցնում էր նաև մի ուրիշ բան. չգիտես ինչու թռչունները լուսնի լույսի տակ ոչ թռչում էին, ոչ երգում, այն դեպքում, երբ ցերեկվա լույսով և՛ երգում էին, և՛ թռչում: Բայց հենց որ խավարը կլանող այդ անիմանալի արարածը հայտնվեց երկնքում, նրա էության խորքերում ինչ-որ հինավուրց մի բան արթնացավ, որ ժառանգություն էր ստացել նախնիներից, և արյունը եռաց նրա երակներում ու վազեց արագ, իսկ երերուն, գունատ շողերը հրապուրեցին, կանչեցին՝ կամացուկ ու աննկատ, գաղտագողի գնալ առաջ ու առաջ, լարելով տեսողությունն ու լսողությունը, որպեսզի տեսնի ու լսի այն, ինչը դեռ երբեք չէր տեսել ու չէր լսել:

Այժմ Պիտերին շրջապատել էր խրճիթի խավարը, բայց նրա հայացքը մեխված էր բաց դռանը, և երկար ժամանակ նա ականջ էր դնում՝ չի՞ լսվում արդյոք վերադարձող Ռոջերի ու Նեյդայի քայլերի ձայնը: Նա երկու անգամ փորձեց սողալ դեպի թախտի եզրը, բայց յուրաքանչյուր շարժումից այնպիսի մի սուր ցավ էր շամփրում նրա մարմինը, որ երկրորդ փորձից հետո հրաժարվեց իր մտադրությունից: Շուտով նա լսեց, թե ինչպես խրճիթի պատերից այն կողմ արթնացավ Գիշերային ամբոխը: Նրանք, այդ գիշերային արարածները շատ զգույշ էին, ոչ այն ուրախ էակների նման, որոնք ողջունում էին արշալույսը աշխույժ երգերով. չէ՞ որ նրանցից շատերը օժտված էին սուր ժանիքներով ու երկար ճիրաններով. դրանք անտառային թավուտի ավազակներն էին, որոնք միշտ պատրաստ էին հարձակվելու որսի վրա: Պիտերը դա էլ գիտեր, որովհետև նրա մեջ ապրում էր փորձը հյուսիսային շների բազում սերունդների, որոնցից սերում էր ինքը: Հեռվում ոռնաց գայլը, և ինչ-որ բան Պիտերին հուշեց, որ դա շան ոռնոց չէ: Հետո

մոտակայքում շեփորեց որմզդեղնը, և նույն բնազդը նրան ասաց, որ լսում է հսկա արջի ձայնը, թեև կյանքում նա երբեք ոչ մի արջ չէր տեսել: Պիտերը դեռ ոչ մի անգամ չէր հանդիպել ոչ անձայն, անաղմուկ քայլող, նույնիսկ գիշերները լավ տեսնող գիշատիչների՝ աղվեսի, լուսանի, կզաքիսի, ջրաքիսի ու կնգումի, ոչ էլ կլորաշք թևավոր արյունարբուների, որոնք պտտվում էին ճյուղերի արանքներում, սակայն նույն նախնիների փորձը նախազգուշացրեց նրան, որ հիմա նրանք թափառում են այնտեղ, դռան հետևում, ստվերների արանքում, աղոտ արծաթյա շողերի մեջ: Եվ հանկարծ կենդանի օրինակը ապացուցեց նրան, որ այդ բոլորը ճշմարտություն է. խրճիթի դռան առաջ բացատ դուրս եկավ ճագարի ձագը, դեռ շատ-շատ փոքրիկ, և սկսեց խոտ պոճոկել, բայց այդտեղ վերևից ցած սլացավ մագիլավոր, կեռկտուց սրընթաց մի արկ, և Պիտերը լսեց փոքրիկ ճագարի նախամահյան ողբ ու կականը, որին բուն թռցրեց տարավ բարձր եղևնիների կատարը: Բայց միևնույն է, լուսնի լույսը անզուսպ կերպով դուրս էր կանչում Պիտերին. նա ոչ մի բանից չէր վախենում:

Սակայն նրա սպասումների վերջը եկավ: Նա քայլերի ձայն լսեց, և շուտով լուսնի դեղնավուն մշուշի միջից դուրս եկավ Ուրախ Ռոջերը: Նա կանգ առավ շեմքին և լուռ նայեց արևմուտք, այնտեղ, ուր ծառերի կատարների վերևում շողշողում էր աստղազարդ երկինքը: Պիտերն արդեն պատրաստ էր ուրախությունից հաչալ, բայց չհաչաց: Ուրախ Ռոջերը տարօրինակ կերպով լռում էր, Նեյդայի ոտնաձայները չէին լսվում: Պիտերը հոտոտեց, կուլ տվեց կոկորդին դեմ առած գունդը և օդի մեջ ինչ-որ թաց բանի նախանշան զգաց: Հետո Ուրախ Ռոջերը խրճիթ մտավ, նստեց սեղանի մոտ, առանց լամպը վառելու, և Պիտերը երկա՛ր-երկար նայեց մթության մեջ նստած աղոտ կետին, ականջ դնելով շնչառության ձայնին, իսկ հետո չդիմացավ և վնգստաց:

Ուրախ Ռոջերը սթափվեց իր խոհերից: Նա վեր կացավ, լուցկին չխկացրեց, բայց իսկույն էլ փչեց հանգցրեց կրակը, մոտեցավ Պիտերին, նստեց կողքին և սկսեց մեղմորեն շոյել նրան:

— Պիտեր,— ասաց նա կիսաձայն,— ես ու դու մի գործ ենք անելու: Դու այսօր սկսեցիր, իսկ ես պետք է հասցնեմ ավարտին: Մենք պետք է սպանենք Ջեդ Հոկինսին:

Պիտերը սեղմվեց իրեն փաղաքշող ձեռքին:

— Գուցե ես իսկապես հանցագործ եմ, գուցե իմ տեղը բանտում է,— մթության մեջ շարունակեց խոսել Ուրախ Ռոջերը,— միայն թե մինչև այս երեկո ես ոչ ոքի չեմ սպանել և սպանելու ցանկություն էլ չեմ ունեցել: Իսկ հիմա ուզում եմ: Եթե Ջեդ Հոկինսը թեկուզ մատով կպչի Նեյդային, մենք նրան կսպանենք: Հասկանո՞ւմ ես, Կաղլիկ:

Ռոջերը ելավ տեղից, և Պիտերը լսեց, որ նա հանվում է: Հետո Ռոջերը Պիտերին պառկեցրեց հատակին գցած վերմակի վրա, իսկ ինքը մեկնվեց թախտին, և երկար ժամանակ խրճիթում ինչ-որ ավելի ծանր ու ճնշող մի բան կար, քան գիշերային խավարն էր. գոնե այդպես էր թվում շնիկին, որը սպասում էր, ականջ դնելով, յուրովի, շնավարի երազելով Նեյդայի վերադարձը, և չէր կարողանում հասկանալ, թե ինչու հանկարծ նա մոռացավ իրեն: Իսկ լուսնի դեղին շողերի տակ վայրագություն էր անում Գիշերային

ամբոխը, և պղտոր աղջամուղջը լի էր սրընթաց վազվռտուքով, մահվան սարսափով, իսկ Ուրախ Ռոջերը քնել էր, իսկ շատ մոտիկ ոռնում էր գայլը, իսկ գետակը անլռելի կարկաչում էր իր հավերժական երգը: Ի վերջո Պիտերի կոպերը փակվեցին, և լուռ, համր խրճիթի շեմքից, որտեղից մարդու և շան հոտ էր փչում, ներս նայեց կարմրաչք կնգումը:

Այդ առաջին գիշերից հետո շատ օրեր անցան, մինչև որ Պիտերը նորից տեսավ Նեյդային: Հորդ անձրևներ տեղացին, գետերը վարարեցին, և ամեն անգամ, երբ Ուրախ Ռոջերը անցնում էր մոլեգնած գետակը, որպեսզի հասներ մինչև Կրեգ, նա վտանգի էր ենթարկում կյանքը: Այդ ամբողջ ժամանակ Պիտերը Ռոջերից բացի ուրիշ ոչ ոքի չէր տեսնում: Երկրորդ շաբաթվա վերջում ոսկորը կպավ, և շնիկը սկսեց վազվզել, բայց կաղությունը մնաց, ու նրա հետքը միշտ կարելի էր ճանաչել հետևի աջ ոտքի յուրահատուկ դրոշմվածքից:

Հիվանդության այդ երկու շաբաթվա ընթացքում Պիտերը շատ էր հասունացել: Հիմա նա սովորել էր հասկանալ Ուրախ Ռոջերին ոչ միայն աչքերի ու ականջների, այլև հատուկ բնազդի օգնությամբ, որի զարգացմանը նպաստել էր նրա խելամտությունը: Երկու շաբաթվա հարկադրական անշարժության օրերին այդ բնազդը արտակարգ սրություն ձեռք բերեց, և վերջապես Պիտերը արդեն կարողանում էր կռահել Ուրախ Ռոջերի տրամադրությունը նրա քայլերի ձայնից: Այդ ամբողջ ժամանակ շնիկը ամեն կերպ աշխատում էր ըմբռնել իր ճակատագրում կատարված խորհրդավոր փոփոխության իմաստը: Նա գիտեր, որ Նեյդան անհետացել է, և զգում էր, որ յուրաքանչյուր նոր օրը ավելի ու ավելի էր հեռացնում Նեյդային իրենից, բայց զգում էր նաև, որ Ուրախ Ռոջերը հանդիպում էր նրան, և երբ Ռոջերը վերադառնում էր խրճիթ, Պիտերի հոգում ամեն անգամ մի տխուր հույս էր արթնանում, թե նրա հետ վերադառնում է և Նեյդան:

Սակայն Պիտերի մտորումները Նեյդայից աստիճանաբար անցան Ուրախ Ռոջերին, և շուտով այդ մարդը նրա համար դարձավ ամենագլխավորն ու ամենասիրելին աշխարհում: Իսկ Ուրախ Ռոջերը այդ ընթացքում սովորեց Պիտերի ընկերակցության և իրենց օրեցօր աճող փոխադարձ կապվածության մեջ մխիթարություն գտնել ու կտրվել ծանր խոհերից: Պիտերը վկան էր և այն ժամերի, երբ խրճիթը լուսավորվում էր Ուրախ Ռոջերի ձայնից ու ծիծաղից, և այն ժամերի, երբ նրա դեմքը դառնում էր մռայլ, իսկ աչքերում հայտնվում էր դաժան, անտարբեր հայացքը, որի իմաստը Պիտերը այդպես էլ չէր հասկանում: Եվ ահա հենց այդ ժամերին, երբ շնիկի սիրտը կտոր-կտոր էր լինում Ուրախ Ռոջերի հանդեպ ունեցած մեծ սիրուց, նա Պիտերին պատմում էր այն, ինչը դեռ ոչ մի մարդու մոտ չէր բացել:

Մի անգամ մթնշաղին, գետակն անցնելիս, ոտքից գլուխ թրջված վերադառնալով, նա Պիտերին ասաց.

— Մենք պետք է հեռանանք այստեղից, Պիտեր: Հենց այսօր պետք է կապկպենք մեր իրերն ու գիշերով հեռանանք: Գիտես ինչ... երբեմն ինքս ինձնից վախենում եմ, Կաղլիկ: Հանուն նրա ես կարող եմ և մարդ սպանել: Հանուն նրա ես պատրաստ եմ մեռնել: Ես աշխարհում ամեն ինչ կթողնեի ու բանտ կգնայի, եթե Նեյդան ինձ հետ լիներ: Իսկ դա վտանգավոր ցանկություն է, Պիտեր, որովհետև նրան չի կարելի մեզ հետ լինել: Բոլորովին չի կարելի,

բարեկամս: Ախր նա չգիտի, թե ինչի համար եմ ես էստեղ թաքնվում: Ախր նա չգիտի, որ ոստիկանությունը վաղուց արդեն փնտրում է ինձ: Իհարկե, ոստիկանության մտքով էլ չի անցնի, որ Ուրախ Ռոջեր Մաք-Քեյը թաքնվում էր բնակավայրերին այսքան մոտիկ: Իսկ եթե ես նրան խոստովանեմ, նա կմտածի, երևի, որ ես Ջեդ Հոկինսից էլ վատ մարդ եմ, և, անշուշտ, չի հավատա, որ ես գործել եմ հնարամտությամբ, ոչ թե ատրճանակով, և որ կյանքում չեմ սպանել ու չեմ վիրավորել ոչ մի մարդու: Ոչ, նա ինձ չի հավատա, Պիտեր: Իսկ ամենից վատն այն է, Կաղլիկ, որ նա… նա սիրում է ինձ: Ամեն ինչում հույս է դնում ինձ վրա, և թեկուզ հենց վաղն էլ ինձ հետ կգա հայր Ջոնի մոտ: Ես դա գիտեմ: Տեսնում եմ, զգում եմ, և ես...

Նրա մատները սեղմեցին շնիկի վզակոթը:

— Պիտեր,— շշնջաց նա թանձրացող խավարի մեջ,— ես չեմ հավատում այն աստծուն, որին հավատում են շատ մարդիկ, ինձ համար ծաղիկները, թռչունները, ծառերն ու երկինքն էլ բավական են, այն բոլորը, ինչ որ կա շուրջս, և երդվում եմ այդ ամենով, որ ես նրան չեմ դժբախտացնի, Պիտեր: Երդվում եմ, հասկանո՞ւմ ես:

Եվ ամբողջ գիշեր Պիտերը լսեց, որ Ռոջերը քնած չէ և անհանգիստ շուռումուռ է գալիս թախտի վրա:

Բայց առավոտյան, նախաճաշ պատրաստելիս, նա սկսեց երգել, և նրա ձայնը նույնքան ուրախ էր ու կայտառ, ինչքան արևի շողերը, որ ողողել էին անտառը: Պիտերի համար տրամադրության այդ փոփոխությունը անլուծելի առեղծված էր: Քանի՛-քանի անգամ նա տեսել էր, թե ինչպես մռայլ ու ընկճված Ռոջերը վեր էր թռել տեղից ու սկսել էր շվշվացնել կամ երգել, իսկ մի անգամ նա բացատրեց Պիտերին.

— Ես օրինակ եմ վերցնում արևից, Կաղլիկ: Չէ՞ որ նա լուսավորում է նույնիսկ այն ժամանակ, երբ ամպերը ծածկում են նրա երեսը, և մենք նրան չենք տեսնում: Իսկ ծիծաղը դեռ երբեք մարդուն վնաս չի տվել:

Այդ օրը Ուրախ Ռոջերը գետակ չգնաց:

Գլուխ հինգերորդ

Միայն երրորդ շաբաթվա մեջ Պիտերին վերջապես հաջողվեց տեսնել Նեյդային: Այդ ժամանակ նա արդեն Ռոջերին ուղեկցում էր մինչև ծանծաղուտ և սպասում էր այնտեղ, երբեմն մի քանի ժամ, մինչև իր ընկերը և տիրուհին վերադառնում էին Կրեգից: Բայց հաճախ Ուրախ Ռոջերը Պիտերի հետ մնում էր ծանծաղուտի մոտ և, մեկնվելով բացատի եզրին, որ իրենք էին հայտնաբերել, կարդում էր իր հին, կարմիր կազմով գրքերից որևէ մեկը. ինչպես Պիտերին հայտնի էր, Ռոջերը շատ էր սիրում այդ գրքերը: Շնիկը հաճախ էր փորձում հասկանալ, թե ի՞նչ հետաքրքիր բան կարող էր թաքնված լինել այդ կազմի խունացած կողերի արանքում, և եթե նա կարդալ իմանար, ապա կկարդար հետևյալ

խորագրերը. «Մարգարիտ Անժուացի»[3], «Պատմություն Նապոլեոնի», «Պատմություն Պետրոս Մեծի», «Կեսար», «Մեծ ճանապարհորդ Կոլումբոսը» և այլն, ընդամենը քսան փոքրիկ հատորներ, որոնք Ուրախ Ռոջերը ձեռք էր գցել նկարագրվող դեպքերից երկու տարի առաջ փոստը թալանելիս, և որոնք իր կյանքի չափ թանկ էր գնահատում:

Այդ օրը, երբ նրանք պառկած էին բացատում, հունիսյան նիրհուն անդորրի մեջ, Ուրախ Ռոջերը վերջապես վճռեց բավարարել այն հետաքրքրասիրությունը, որ գրված էր Պիտերի դնչին և պսպղում էր նրա աչքերի մեջ:

— Գիտես ինչ, Կաղլիկ,— սկսեց նա մեղավոր տոնով,— շատ-շատ էի ուզում որևէ բան կարդալ, և մտածեցի, որ փոստատարի մոտ մի բան կգտնվի, օրինակ՝ թերթեր: Դե ես էլ փոստը կանգնեցրի, փոստատարի ձեռ ու ոտը կապեցի ու տեսա ահա այս գրքերը: Եվ, ազնիվ խոսք, ուրիշ ոչինչ չվերցրի, համենայն դեպս, այդ անգամ ոչինչ չվերցրի: Դրանք քսան հատ են և բոլորը միասին կշռում են ինը ֆունտ, ու վերջին երկու տարվա ընթացքում ես սրանց հետ ոչ պակաս հինգ հազար մղոն ճանապարհ եմ անցել: Բայց միևնույն է, ես սրանք չէի տա, եթե նույնիսկ որևէ մեկը իմ քաշով մեկ ոսկի առաջարկեր, իսկ դա, պատկերացրու, այնքան էլ քիչ չէ: Ես քո անունը Պիտեր դրեցի, որովհետև պատանության տարիներին այդպես էին կանչում Պետրոս Մեծին: Ճիշտն ասած, քիչ էր մնում քեզ Քրիստափոր Կոլումբոս անունով կնքեի: Հետո, Պիտեր, մի օր մենք այս գրքերը կտանենք այն մարդուն, որին հասցեագրված էին: Ես խոսք եմ տվել ու կանեմ: Ախր գիրք գողանալը նույնն է, թե մարդու հոգին գողանաս: Ես սրանք վերցրել եմ միայն կարդալու համար: Սրանց տիրոջ հասցեն գրել եմ, նա ապրում է Լերկ Հողերի ծայրին: Ոնց ուզում է լինի, մի օր էս գրքերը կվերցնենք ու կհասցնենք իրենց տիրոջը:

Մեկ էլ հանկարծ Պիտերը դադարեց հետաքրքրվել Ռոջերի պատմությամբ: Եվ Ուրախ Ռոջերը, հետևելով նրա հայացքին, տեսավ, որ գետակի մյուս ափին կանգնած է Նեյդան ու նայում է իրենց: Պիտերը անմիջապես ճանաչեց նրան ու ամբողջ մարմնով ցնցվեց, բայց այդտեղ Ուրախ Ռոջերը, բարձր քրքջալով, բռնեց Պիտերի թևատակերից ու նրա հետ միասին նետվեց ջուրը: Հետո մի կողմ քաշվեց և ամբողջ հինգ րոպե դիտում էր Նեյդայի ու Պիտերի հանդիպումը. Ռոջերը լսեց Պիտերի խանդավառ վնգստոցը, տեսավ, ինչպես էր լիզում աղջկա երեսն ու ձեռքերը, արցունքի հետքեր տեսավ Նեյդայի այտերին, և իր սեփական աչքերն էլ կասկածելիորեն փայլեցին: Պիտերի համար երեք շաբաթը անսահման երկար ժամանակ էր, բայց իր պաշտելի փոքրիկ տիրուհու մոտ նա ոչ մի փոփոխություն չկարողացավ նկատել: Ամեն ինչ առաջվանն էր մնացել. և՛ փարթամ խոպոպները, որոնց մեջ կարող էր խցկել իր քիթը, և՛ փաղաքուշ ձեռքերը, և՛ քնքուշ, նուրբ ձայնը, և՛ մարմնի արբեցնող տաքությունը, երբ նա կրծքին սեղմեց իրեն: Նա չհասկացավ, որ Նեյդան նոր մաշիկներ ու նոր շրջազգեստ է հագել, որ նրա ալ շուրթերը կարծես սպիտակել էին, դեմքը գունատվել էր, իսկ թախծոտ արտահայտությունը ասես երբեք չէր անհետանում նրա աչքերից:

---

[3] Մարգարիտ Անժուացի (1429—1482) — Անգլիայի թագուհի, Հենրիխ VI-ի կինը, ծագումով ֆրանսուհի, Սպիտակ և Կարմիր վարդերի պատերազմի ժամանակ գլխավորում էր թագավորի կողմնակիցների կուսակցությունը:

Բայց Ուրախ Ռոջերը տեսել էր և՛ այդ հայացքը, և՛ դալկությունը. երկու շաբաթից ավելի էր նա զննում էր դրանք: Եվ երեկոյան, երբ Նեյդան անցավ Կրեգի մյուս կողմը, իսկ ինքը, Պիտերին գրկած, նորից լողալով անցավ գետակը, նրա դեմքին քարացել էր մի դաժան ու մռայլ արտահայտություն, մի բան, որ Պիտերը սկսել էր ավելի հաճախ նկատել: Եվ երբ նրանք աղջամուղջի մեջ նստեցին խրճիթի շեմին, Ուրախ Ռոջերն ասաց.

— Շուտով ամեն ինչ պարզ կլինի, Պիտեր: Ես սպասում եմ, որ ահա-ահա ինչ-որ բան է լինելու: Նա ինչ-որ բան թաքցնում է մեզնից: Եվ վախենում է ինձ համար: Էդ մեկը ինձ հասկանալի է: Բայց ես կիմանամ ինչն ինչոց է, և շուտով: Իսկ հետո, Կաղլիկ, մենք թերևս կսպանենք Ջեդ Հոկինսին ու կմեկնենք Հյուսիս:

Մռայլ նախազգացումները, որ հնչում էին Ռոջերի ձայնի ու խոսքերի մեջ, ասես երկար օրեր պարուրել էին խրճիթը, և Պիտերը ավելի սրությամբ էր զգում ինչ-որ խորհրդավորի ու անդառնալիի ահաբեկող մերձեցումը: Նա արագ էր մեծանում, դառնում էր ուժեղ ու խելացի, և նրա մեջ արդեն սկսել էին զարգանալ այն խոհեմությունն ու հնարամտությունը, որոնք հետագայում այնքան կարևոր դեր խաղացին նրա կյանքում: Բնազդը, որ պակաս զորավոր չէ, քան բանականությունը (իսկ գուցեև դա ինքը բանականությունն է), հուշեց նրան, որ իր տերը միշտ և ապարդյուն ինչ-որ բանի է սպասում: Նույն բնազդը նրան հուշեց նաև, որ այդ անծանոթից ու անհայտից հարկավոր է վախենալ: Հիմա նա արդեն գլխապատառ դեսուդեն չէր նետվում՝ առեղծվածներ ու գաղտնիքներ հետազոտելու: Նա զարտուղի ճանապարհ էր ընտրում և անակնկալի էր բերում այդ խորհրդավորին: Շնիկի հետաքրքրությանն ու անխոհեմությանը հաջորդելու եկան խելամտությունն ու խորամանկությունը: Նա հեշտությամբ էր ընկալում նորը, իսկ Ուրախ Ռոջերի խոսքը նրա համար դարձել էր օրենք. բավական էր մեկ-երկու անգամ կարգադրություն լսեր, և դա դառնում էր նրա կենսափորձի մի մասնիկը: Բայց եթե Պիտերի ուղեղում զարգանում էր իր էրդել հոր դիտողականությունը և ուշիմությունը, ապա նրա մարմինը ձևավորվում էր հզոր, արագավազ ու հեզ քերծե մոր պատկերով ու նմանությամբ: Նրա ոտքերն առաջվա նման անճոռնի ու այլանդակ չէին: Պոչի հանգույցները ծածկվել էին մկանների հաստ շերտով: Խոշոր գլուխը, մազոտ, ահազդու այտամորուսներով, կարծես առայժմ դադարել էր մեծանալուց, որպեսզի ծուռտիկ, նիհար մարմնին ժամանակ տար հասնելու նրան: Ու թեև ընդամենը մի քանի շաբաթ առաջ նրա խոշոր թաթերը փաթ էին ընկնում ու մի գլուխ սայթաքում էր, հիմա դրանք սովորել էին վստահ ու անաղմուկ քայլել:

Եվ վերջերս Պիտերը, քայլերի ձայն լսելով, այլևս ընդառաջ չէր նետվում ուրախ հաչոցով, մինչև չէր համոզվում, որ եկողը իսկապես Ուրախ Ռոջերն է: Այդ վարմունքը կարող էր տարօրինակ թվալ, եթե ուշադրության առնենք, որ այն երեկոյից հետո, երբ Նեյդան Կրեգից բերեց Պիտերին, հինգ շաբաթվա ընթացքում Ռոջերից ու Նեյդայից բացի ուրիշ ոչ մի մարդ չէր երևացել խրճիթի շրջակայքում: Բայց շնիկի հոգում օրեցօր աճում ու ամրապնդվում էր բնածին զգուշավորությունը: Հետո մի անգամ իրիկնադեմին Պիտերը անսպասելի հայտնագործություն կատարեց: Նա և Ուրախ Ռոջերը վերադառնում էին ձկնորսությունից, և նոր էր Պիտերն անտառից դուրս եկել բացատ, երբ ինչ-որ անծանոթ հոտ առավ: Նա փութով սկսեց հետախուզել և խրճիթի շուրջը ամենուրեք հայտնաբերեց նույն հոտը, որը առանձնապես ուժեղ էր դռան մոտ: Պիտերի համար ամեն ինչ պարզ էր:

Ինչ-որ անծանոթ մարդ էր եղել այդտեղ, մի քանի անգամ պտտվել էր խրճիթի շուրջը, բացել էր դուռը և նույնիսկ ներս էր մտել: Պիտերը այդ հոտն առավ նաև հատակի տախտակներից: Նա փորձեց պատահածի մասին տեղեկացնել Ուրախ Ռոջերին. մազերը բիզ-բիզ եղան, վնգստաց և սկսեց ուշադիր նայել մութ թավուտին: Ուրախ Ռոջերն էլ նրա հետ միասին նայեց բացատի կողմը, բայց ոչ մի հետք չնկատեց և, ընթրիքի համար ձուկ մաքրելով, ասաց.

— Կա-չկա, կուղխն է այցելել մեզ, Կաղլիկ: Անպիտանը մտածել է մի բան թռցնի, քանի դեռ տանը մարդ չկա:

Բայց Պիտերը անհանգիստ էր: Գիշերը մի աչքը բաց քնեց: Ծանոթ հնչյունները հանկարծ նոր իմաստ ստացան: Ամբողջ հաջորդ օրը նրան տանջում էին անհասկանալի նախազգացումները: Պիտերի աշխարհը ներխուժած անծանոթ հոտը և՛ վախեցրեց, և՛ զայրացրեց նրան: Շնային տրամաբանությունը հուշեց, որ ոտնձգություն է կատարվել իր տիրոջ իրավունքների նկատմամբ, իսկ ինքը, ինչպես դա պահանջում էր իր ցեղի օրենքը, այդ իրավունքների պաշտպանն էր:

Այդ անծանոթ հոտը հայտնվելու չորրորդ օրը Ուրախ Ռոջերը սովորականից ավելի երկար մնաց Կրեգում: Պիտերը, որ այդ օրը մենակ էր որս արել, տուն վերադարձավ մայրամուտից առաջ: Վերջին ժամանակները նա մի նոր սովորություն էր ձեռք բերել. բաց տարածություն դուրս գալուց առաջ նախ մի քանի վայրկյան հոտոտում էր ու ականջ դնում: Հիմա էլ, երբ զգուշորեն քիթը դուրս հանեց խրճիթից քսան յարդի վրա գտնվող եղևնու հետևից, սաստիկ հուզմունքից սիրտը հանկարծ թպրտաց: Խրճիթի դուռը բաց էր: Իսկ դռան մոտ, ուշադիր չորս կողմը նայելով, մի անծանոթ մարդ էր կանգնած: Ինչպես անհապաղ վճռեց Պիտերը, նա բնավ էլ նման չէր Ջեդ Հոկինսին: Բարձրահասակ էր, լայնեզր գլխարկով, զոլավոր տաբատով՝ փողքերը սապոգների մեջ խրած, և բաճկոնով, վրան մետաղյա ինչ-որ բաներ, որոնք փայլում էին արևի վերջին շողերի մեջ: Պիտերը ոչ մի պատկերացում չուներ թագավորական հյուսիսարևմտյան հեծյալ ոստիկանության մասին: Բայց նա, այնուամենայնիվ, զգաց վտանգը և քարացավ տեղում: Ամբողջ ժամանակ, մինչև անծանոթը շուրջն էր զննում, ձեռքը ատրճանակի բաց պատյանին դրած, Պիտերը բոլորովին անշարժ էր: Միայն այն բանից հետո, երբ անծանոթը մտավ խրճիթ ու ծածկեց դուռը, Պիտերը կամացուկ հետ-հետ գնաց դեպի անտառի ստվերները: Հետո, աղվեսի նման անաղմուկ, գաղտագողի, թփուտների միջով դուրս եկավ արահետ ու վազեց դեպի գետախորշը, որտեղից անպայման պետք է անցներ Ուրախ Ռոջերը Կրեգից վերադառնալիս:

Երբ Ուրախ Ռոջերը ափ դուրս եկավ, դեռ կես ժամ կար մինչև մութն ընկնելը: Սովորությանը հակառակ, Պիտերը նրան չդիմավորեց հենց ջրի ափին: Նա շարունակեց նստած մնալ, ականջները սեղմած և կարծես բոլորովին չուրախանալով տիրոջ համար: Մշտապես զգոն լինելու անհրաժեշտությունը Ուրախ Ռոջերին սովորեցրել էր նկատել նույնիսկ ամենաչնչին մանրուքները: Նա խոսեց Պիտերի հետ, շոյեց նրան և արահետով գնաց դեպի խրճիթի կողմը: Պիտերը տխուր քարշ եկավ նրա հետևից, բայց մի քանի վայրկյան անց կանգ առավ ու նորից պպզեց: Ուրախ Ռոջերը զարմացավ:

— Ի՞նչ է պատահել, Պիտեր,— հարցրեց նա։— Էլի՞ կուղխը վախեցրել է քեզ։

Պիտերը կամացուկ վնգստաց, բայց ականջները առաջվա պես սեղմված էին գլխին, իսկ աչքերում, որ հառված էին տիրոջ հետևում ընկած արահետին, կարմիր կրակներ էին վառվում։ Ռոջերը շուռ եկավ ու գնաց առաջ, մինչև ծածկվեց ոլորանի հետևում։ Այստեղ նա կանգ առավ ու հետ նայեց։ Պիտերը չէր գնում նրա հետևից, այլ շարունակում էր նստած մնալ առաջվա տեղում։ Ուրախ Ռոջերը մի փոքր շունչ առավ ու վերադարձավ Պիտերի մոտ։ Ամբողջ մի րոպե նա մնաց կանգնած՝ զննելով Պիտերին ու ականջ դնելով, և այդ ամբողջ ժամանակ կրակները չմարեցին Պիտերի աչքերում, որոնք հառված էին խրճիթի կողմը։ Ռոջերի աչքերը նույնպես բռնկվեցին, և, հանկարծ, Պիտերի կողքին չոքելով, կամացուկ շշնջաց նրա ականջին.

— Ասում ես, որ դա կուղխը չէ՞, Պիտեր։ Դա հաստա՞տ է։

Պիտերի ատամները կրճտացին, և նա վնգստաց, առաջվա պես նայելով իր դիմաց։

Ուրախ Ռոջերի աչքերը շողացին սառը փայլով, նա ելավ տեղից, արագ ու անձայն սողոսկեց ծառերի տակ, որտեղ արդեն խտացել էր աղջամուղջը, և մատները սեղմեցին մեծ ատրճանակը։ Այժմ Պիտերը գնաց նրա հետևից, և Ռոջերը, մի աղեղ գծելով, մոտեցավ խրճիթին այն պատի կողմից, որը պատուհան չուներ։ Այստեղ Ուրախ Ռոջերը նորից չոքեց Պիտերի կողքին ու շշնջաց.

— Սպասիր այստեղ, Կաղլիկ։ Հասկացա՞ր։ Սպասիր այստեղ։

Նա քնքշորեն ձեռքը դրեց շան մեջքին, և Պիտերը հասկացավ։ Հետո, կռանալով, Ռոջերը կատվի թեթևությամբ վազեց դեպի խրճիթի խուլ պատը։ Պպզելով՝ նա զգուշությամբ գլուխը դուրս հանեց անկյունի հետևից ու նայեց դռանը։ Դուռը փակ էր։ Հետո աչքը գցեց պատուհաններին։ Արևմտյան պատուհանի վարագույրները ինչպես ինքը բարձրացրել էր, այդպես էլ մնում էին, բայց արևելյան պատուհանը...

Խորամանկ ժպիտից բերանի անկյունները հետ գնացին։ Այդ վարագույրները ինքը միշտ էլ պինդ ծածկում էր։ Դրանցից մեկը հիմա էլ իջեցված էր, բայց մյուսը փոքր-ինչ բարձրացված էր, այնպես որ խրճիթում թաքնված մարդը կարող էր հետևել արահետին։

Ռոջերը մի փոքր հետ քաշվեց անկյունից և անձայն քմծիծաղեց։ Ծուղակը պատրաստված էր համարձակ ու խելացի, իսկ դա շատ բան էր ասում նրան։ Ինչ-որ մեկը թաքնված էր խրճիթում, և նա պատրաստ էր գլխով երդվելու, որ այնտեղ թաքնված է Քասիդին՝ «Մ» ջոկատի համառ իռլանդացին։ Ռոջերը առաջներում էլ շատ անգամ էր մտածել, որ այստեղ, հենց քաղաքակրթության սահմանի վրա, իրեն կարող էր հետապնդել միայն Քասիդին, ուրիշ ոչ ոք։ Եվ ահա Քասիդին հասել էր այստեղ, Քասիդին, որը գայլի համառությամբ երեք տարի քայլել էր իր հետքերով, քշել էր իրեն ամբողջ Լերկ Հողերի միջով, իր հետևից նավարկել էր մինչև Մաքենզիի վերին հոսանքը և նորից հետ դարձել, կռվել էր իր հետ, քաղցած մնացել ու մրսել, ինչպես և ինքը, բայց այդպես էլ չէր ձերբակալել իրեն։ Ուրախ Ռոջերը հոգու խորքում նույնիսկ համակրում էր Քասիդիին։ Երկար ժամանակ նրանք հետաքրքիր, հրապուրիչ խաղ էին խաղացել և շարունակում էին

խաղալ. հաղթանակը այդ խաղում երկուսի համար էլ դարձել էր կյանքի նպատակ: Եվ ահա հիմա Քասիդին իրեն է սպասում խրճիթում, չկասկածելով, որ որսը արդեն իր ձեռքում է և ուր որ է կընկնի ծուղակը:

Ուրախ Ռոջերը գիտեր, որ բանը կարող է ողբերգությամբ վերջանալ, բայց, այնուամենայնիվ, նրա համար ծիծաղելի էր: Վերջին մեկուկես տարվա ընթացքում նա երեք անգամ հիմար դրության մեջ էր զցել Քասիդիին, և այդ մարդորսը մեծ դժվարությամբ էր դուրս պրծել այն ոստայնից, որ ինքն էր խորամանկորեն հյուսել իր զոհի համար: Ու ահա նույնը կատարվում էր չորրորդ անգամ: Դա շատ տհաճ բան կլիներ Քասիդիի համար:

Հոգու խորքում աղաչելով, որպեսզի Պիտերը հնազանդ մնա ու տեղից չշարժվի, Ուրախ Ռոջերը հանեց մաշիկները և անձայն, աքիսի նման, գաղտագողի մոտեցավ դռանը: Հետո դանդաղ, դյույմ առ դյույմ, բարձրացավ ու սեղմվեց պատին, հենց դռան անցքի մոտ: Շունչն իրեն պահած՝ նա ականջ դրեց: Նրան թվաց, թե անչափ երկար ժամանակ անցավ, բայց ներսից ոչ մի ձայն չլսվեց: Նա գլխի ընկավ, թե հիմա ինչ է անում Քասիդին. վարագույրի ու լուսամուտագոգի արանքում եղած նեղ անցքից դուրս է նայում: Բայց գլխի ընկնելը դեռ գիտենալ չի նշանակում, իսկ ամեն մի սխալը կարող էր ճակատագրական լինել. չէ՞ որ խրճիթում Քասիդին էր սպասում՝ ատրճանակը ձեռքին:

Հանկարծ նա թեթև ճռճռոց լսեց. տղամարդու քայլերի ձայն էր, խուլ, բայց, միևնույն է, պարզորոշ... Մարդը քայլեց պատուհանից դեպի դուռը: Կես ճանապարհին քայլերը մարեցին, իսկ հետո լսվեցին պատուհանի մոտից, որը նայում էր դեպի արևմուտք: Սակայն դիտորդը, ըստ երևույթին, չէր ենթադրում, որ իր զոհը կարող է հայտնվել մյուս կողմից, քանի որ վայրկենական դադարից հետո նա վերադարձավ այնտեղ, որտեղից երևում էր արահետը: Այս անգամ Ուրախ Ռոջերը հաստատ գիտեր, որ Քասիդին կանգնած է պատուհանին կպած, թիկունքով դեպի դուռը, և անտառային շրջմոլիկի մարմնի բոլոր մկանները լարվեցին կայծակնային ցատկի համար: Եվս մի ակնթարթ, դուռը լայն բացվեց, և դիտորդը, պատուհանից հետ ցատկելով, ուղիղ իր դիմաց տեսավ Ուրախ Ռոջերի ատրճանակի սև փողը:

Այն բանից հետո, երբ տերը թափով բացեց դուռը, Պիտերը էլի մի քանի վայրկյան նստած մնաց այնտեղ, ուր հրամայված էր պառկել: Աչքերն այնպես էր չռել, որ քիչ էր մնում ճակատը թռնեին: Նա ձայներ լսեց, ապա զրնգուն, որոտալից ծիծաղ, դա Ուրախ Ռոջերն էր ծիծաղում, և այլևս չկարողացավ դիմանալ, զգույշ ու դանդաղ շորորալով մոտեցավ խրճիթի բաց դռանը: Այնտեղ աթոռին նստած էր մի անծանոթ մարդ՝ լայնեզր գլխարկով ու սապոգներով, ձեռքերը պինդ կապված էին մեջքին: Իսկ Ուրախ Ռոջերը օրվա վերջին ցոլքերի մեջ հետուառաջ էր անում խրճիթում, դասավորելով ուսապարկը:

— Ես պետք է սպանեի քեզ, Քասիդի,— ասաց նա հաղթական ծիծաղով:— Ոչ մի րոպե դու ինձ հանգիստ չես տալիս: Ուր էլ որ գնում եմ, վաղ թե ուշ հայտնվում ես այնտեղ, չնայած, որքան հիշում եմ, ես ոչ մի անգամ քեզ չեմ հրավիրել: Եվ հիմա, երբ բանն այսպես է եղել, ճիշտ կլինի, որ քեզ վերացնեմ իմ ճանապարհից և վրադ ծաղիկներ ցանեմ: Բայց թե խիղճս չի տանում, բացի դրանից, դու ինձ դուր ես գալիս: Երբ վերջապես դու հրաժարվես ինձ

հետապնդելուց, գուցե թե քեզանից հրաշալի խուզարկու դուրս գա: Բայց առայժմ, Քասիդի, քեզ պակասում է խորաթափանցությունը: Խորաթափանցությունն է քեզ պակասում:— Եվ Ռոջերը նորից հռհռաց:

— Ուղղակի շան բախտ ունես,— փնթփնթաց Քասիդին:

— Դե եթե այդպես է, ապա հուսանք, որ սրանից հետո էլ բախտս կբերի,— պատասխանեց Ուրախ Ռոջերը:— Իսկ հիմա լսիր, ինչ որ կասեմ, Քասիդի: Արի գրազ գանք տղամարդու պես. եթե հաջորդ անգամ էլ դու ինձ ճանկդ չգցես, ու ես հաղթող դուրս գամ, վերջ կտա՞ս ինձ հետապնդելուն:

Քասիդիի աչքերը փայլեցին կիսախավարում:

— Եթե դու մյուս անգամ էլ իմ ձեռքից դուրս պրծնես, ես հրաժարական կտամ:

Ուրախ Ռոջերի ձայնը լրջացավ:

— Ես հավատում եմ քեզ, Քասիդի: Դու միշտ էլ ազնիվ խաղ ես խաղացել: Իսկ հիմա, եթե քո ձեռքերն արձակեմ, դու երկու ժամ ժամանակ կտա՞ս ինձ:

— Լավ,— պատասխանեց Քասիդին:

Մթության մեջ արդեն դժվար էր նրա նիհար դեմքը զանազանել:

Ուրախ Ռոջերը անցավ նրա թիկունքը: Չխկաց բացված դանակը: Հետո Ռոջերը վերցրեց պարկն ու գնաց դեպի դուռը: Շեմքին կանգ առավ:

— Նայիր ժամացույցիդ, Քասիդի, որպեսզի չսխալվես, դուրս կգաս ուղիղ երկու ժամ հետո:

— Ես քեզ տալիս եմ երկու ժամ և հինգ րոպե,— ասաց Քասիդին:— Մտադիր ես Հյուսի՞ս գնալ, Ուրախ Ռոջեր:

— Մտադիր եմ անտառ գնալ,— պատասխանեց ավազակը:— Ես գնում եմ այնտեղ, ուր ճանապարհորդելն այնքան էլ հեշտ չէ, Քասիդի: Դե, մնաս բարով...

Նա դուրս եկավ և ուղիղ գնաց դեպի հյուսիս, նեղություն չքաշելով խլացնել քայլերի ձայնը: Բայց, խորանալով թավուտում, նա շրջվեց դեպի հարավ և, Պիտերին թևի տակ առած, լողալով անցավ գետակը: Նրանք համարյա մեկ մղոն անցել էին հարթավայրով, երբ Ուրախ Ռոջերը վերջապես խոսեց՝ դիմելով Պիտերին.

— Քասիդին մտածում է, որ այս անգամ արդեն ես կգնամ Հյուսիս, Կաղլիկ: Բայց մենք նրա աչքերին թոզ կփչենք: Ես այդպես էլ մտածել եմ, որ այս գործում որևէ բան բաց չթողնենք, և հիմա մենք կգնանք Կրեգի հեռավոր թևը, որտեղ ժայռերն այնպես են դիզված իրար վրա, որ սատանան ինքն էլ կմոլորվի: Չէ՞ որ մենք ուրիշ ելք չունենք, բարեկամս: Նրան հո չե՞նք կարող թողնել: Բոլորովին չենք կարող:

Ուրախ Ռոջերի ձայնը ընդհատվեց: Փոքր-ինչ լռելուց հետո ավազակը կռացավ ու շոյեց Պիտերին:

— Եթե դու չլինեիր, Պիտեր, Քասիդին այս անգամ կճանկեր ինձ... Մի բան է անհասկանալի, Պիտեր, ինչո՞ւ տեր աստվածը շանը խոսելու շնորհք չի տվել:

Ի պատասխան Պիտերը հաչաց, և նրանք լուծվեցին գիշերային խավարի մեջ:

Գլուխ վեցերորդ

Սառը մշուշը ասես ուր որ է մարելու էր աստղերի փայլը, բայց մինչ Ուրախ Ռոջերն ու Պիտերը կանցնեին գետակի ու Կրեգի միջև ընկած հարթավայրը, մշուշը աստիճանաբար ցրվեց:

Նրանք չէին շտապում, քանի որ Մաք-Քեյը հավատում էր Քասիդիի խոսքին: Նա գիտեր, որ շիկամազ մարդորսը իր խոստումը չի դրժի. կնստի հնդկացի Թոմի խրճիթում լրիվ երկու ժամ ու էլի հինգ րոպե: Յուրաքանչյուր անցնող վայրկյանի հետ Ուրախ Ռոջերի հոգում մարում էր հաղթական ցնծությունը և դրան փոխարինում էին մենակության սովորական թախիծն ու չարությունը ճակատագրի հանդեպ, որը Քասիդիին թշնամի էր դարձրել բարեկամի փոխարեն: Բայց թե ի՜նչ թշնամի:

Ռոջերը կռացավ ու շոյեց Պիտերի փոչոտ գլուխը:

— Թե ինչո՞ւ իշխանությունները մեկ ուրիշին չեն հանձնարարել մեզ բռնելու,— փնթփնթաց նա:— Այնպիսի մեկին, որը ատեր մեզ, և որին մենք կարողանայինք ատել: Տեսնես ինչո՞ւ են Քասիդիին հանձնարարել, որը թեև ոստիկանական համազգեստ է կրում, բայց աշխարհի ամենաազնիվ մարդն է: Ախր մենք չենք կարող նրան թիկունքից հարվածել, Կաղլիկ, չենք կարող նրա հաշիվը մաքրել, նույնիսկ եթե նեղն ընկնենք: Իսկ եթե մի օր նա մեզ բանտ կոխի ու տեսնի, որ նստած ենք ճաղերի հետևում, դա նրա համար էլ դժվար կլինի, ես գիտեմ: Եվ, այնուամենայնիվ, նա այդ բանը կանի, Պիտեր, եթե կարողանա: Դա ախր նրա պարտքն է: Իսկ Քասիդին ազնիվ մարդ է, չես կարող ժխտել:

Հարթավայրի հետևից նրանց առջև հառնեց Կրեգի մութ ստվերը, և Ուրախ Ռոջերը լռեց, հայացքը հառած դեպի արևելք: Այնտեղ, իրենցից մեկ մղոն հեռու, խոր ակոսի նման Կրեգը հատող կիրճից այն կողմ, աստղերի թույլ լույսի տակ լուռ ու մռայլ կանգնած էր Ջեդ Հոկինսի խրճիթը: Իսկ խրճիթում Նեյդան էր: Ռոջերը պատկերացրեց, որ Նեյդան, նստած իր պատուհանի առաջ, նայում է գիշերային խավարին ու մտածում է իր մասին, և մի անհաղթահարելի ցանկություն նրան ձգեց այնտեղ: Բայց նա շուռ եկավ դեպի արևմուտք:

— Մենք ախր չենք կարող նրան պատմել, թե ինչ է պատահել, բարեկամս,— ասաց նա՝ հնազանդվելով բանականության ձայնին:— Առայժմ թող մտածի, թե հեռացել ենք այստեղից: Եթե Քասիդիի մտքով անցնի խոսել Նեյդայի հետ, աղջկա կապույտ աչքերը ակամա կարող են մեզ մատնել, դրա համար էլ լավ կլինի չիմանա, որ մենք թաքնված ենք Հնոցի ժայռերի մեջ: Բայց գուցեև նա Քասիդիի աչքին չընկնի, ով իմանա: Եվ, հավանաբար, այդպես էլ կլինի, Կաղլիկ. որովհետև, ինձ թվում է, ճակատագիրը ցանկանում է, որ մենք հեռանալուց առաջ Ջեդ Հոկինսին մի լավ հուպ տանք:

Մենակության տարիները նրան սովորեցրել էին բարձրաձայն խոսել այն էակների հետ, որոնք չէին կարող պատասխան տալ: Բայց նույնիսկ մթության մեջ Ռոջերն զգաց, որ Պիտերը յուրովի հասկանում է իրեն: Քանի գնում, քարերը ճամփորդների ոտքերի տակ ավելի խոշոր, ավելի մեծ էին դառնում, դրա համար էլ նրանք դանդաղ էին քայլում, բայց, միևնույն է, էլի երբեմն-երբեմն սայթաքում էին: Սակայն, չնայած մթությանը, նրանք հեշտությամբ գտան ճանապարհը: Առաջներում Պիտերը մի անգամ չէ, որ զարմացել էր, թե ինչու իր տերը այնպես մանրամասնորեն է ուսումնասիրում Կրեգի հեռավոր ծայրին իրար վրա դիզված խոժոռ ժայռերը: Այդ անպտուղ քարքարոտ լաբիրինթոսում նրանք ոչ մի կենդանի արարածի չհանդիպեցին, ոչ մի հատիկ խոտի ցողուն չտեսան: Ամեն ինչ այնտեղ անբարեհամբույր էր, մռայլ, մեռած ու թշնամական, ասես վերջին կատաղի ջղակծկումի մեջ քարացած: Հիմա խավարի մեջ այդ զգացումն ավելի ուժեղացավ, և Պիտերը ջանում էր մոտիկ մնալ տիրոջը: Նրանք շարունակ վեր էին բարձրանում, դժվարությամբ անցնելով խառնիխուռն իրար վրա կուտակված քարերի միջով, զառիկողերում պտույտներ գործելով, ճիշտ ճանապարհը ավելի շուտ բախտաբերի գտնելով, բայց, այնուամենայնիվ, անշեղորեն բարձրանում էին վեր, դեպի աստղերը: Ուրախ Ռոջեր Մաք-Քեյը այլևս չէր խոսում Պիտերի հետ: Ամեն անգամ, երբ քարափները չէին ծածկում երկնքի երեսը, Ռոջերը բարձունքում, նրա մուգ հենքի վրա փնտրում էր մենավոր գագաթը, որը աստղերի թարթող լույսի տակ նմանվում էր հսկա գերեզմանաքարի. դա նրանց ճանապարհային նշաձողն էր: Նրանք երկար ժամանակ այդպես մագլցում էին ժայռերի արանքով, և Ուրախ Ռոջերին թվում էր, թե կոշկատակերի մեխերի գլուխները, քարերին շփվելով, մի տեսակ բարձր ու չարագույժ էին ճռնչում: Վերջապես մոտեցան գագաթին:

Նրանք կանգ առան նեղլիկ ավազոտ մի հարթակում, որը բոլոր կողմերից ծածկված էր ժայռակուտակներով, և Ռոջերը այնտեղ փռեց իր վերմակը: Հետո դուրս եկավ սև ստվերի միջից՝ այնքան խիտ, այնքան թանձր, որ նրանց գլխավերևում փայլփլող բյուրավոր աստղերը շատ մոտիկ էին թվում: Նա նստեց մի քարի ու սկսեց ծխել, խորհելով այն մասին, թե ինչ է բերելու իրեն գալիք օրը և նրան հաջորդող մյուս բոլոր օրերը: Աշխարհում նա ոչ մի տեղ իսկական հանգիստ գտնել չէր կարող, թերևս գտներ միայն այն բանից հետո, երբ նրա ձեռքերը կշոշափեին բանտախցի սառը երկաթաձողերը, և ճակատագրական խաղը կհասցվեր մինչև վերջ:

Չարության ու վրիժառության կրծող դառնությունները տեղ չունեին Ուրախ Ռոջերի սրտում: Դրա համար էլ նույնիսկ նրա երդվյալ թշնամիները՝ ոստիկանները, Մաք-Քեյին սկսեցին մականունով կանչել, որ տվել էին նրան անտառային թավուտի բնակիչները: Նա ատելություն չէր տածում հեծյալ ոստիկանների հանդեպ: Որքան էլ տարօրինակ էր, օրենքի այդ պահապանները նույնիսկ դուր էին գալիս նրան իրենց անվիճելի քաջությամբ ու կոփվածությամբ: Եվ օրենքի հանդեպ էլ ատելություն չէր տածում: Ավելի շուտ, ծիծաղում էր նրա վրա, քանի որ օրենքը խորագույն լրջությամբ մեծ կարևորություն էր տալիս ամեն տեսակ դատարկ բաների, օրինակ՝ հենց իրեն: Այդ օրենքի սպասավորները կարծես ոչ քուն ունեին, ոչ դադար, քանի դեռ չէին կախել մարդուն կամ բանտ չէին գցել, և նրանց բնավ չէր հետաքրքրում, թե այդ մարդը ինչպիսի ջերմությամբ է սիրում մարդկանց

ու կյանքը: Իսկ Ուրախ Ռոջերը և՛ մարդկանց էր սիրում, և՛ կյանքը: Հոգու խորքում նա համոզված էր, որ ինքը ոչ մի հանցանք չի գործել արդարությունը վերականգնելիս, երբ ուրիշ ոչ մի միջոցով հնարավոր չի եղել այն վերականգնել: Բայց չէր էլ ժխտում, որ այդ ընթացքում ինքը խախտել է օրենքը: Եվ նա սիրում էր կյանքը: Սիրում էր աստղերը, որ այդ գիշեր լուռ փայլում էին իր գլխավերևում: Նրան դուր էին գալիս նույնիսկ շուրջը դիզված անշունչ ժայռերը, որովհետև դրանք Ռոջերին հիշեցնում էին մեր մոլորակի դյութիչ ու բուռն կյանքի մասին, որ եղել էր իր պատանության օրերին: Նրան դուր էր գալիս և բարձունքում հառնող ու սահմռկեցուցիչ վեհությամբ լի մահվան գագաթը: Բայց ամենից շատ նա սիրում էր մարդկանց:

Սակայն նույնիսկ դրանցից էլ շատ, իր սեփական կյանքից ու այն ամենից էլ շատ, ինչ խոստանում էր նրան այդ կյանքը, նա սիրում էր կապտաչ աղջկան, որը գալիս էր նրա մոտ Ջեդ Հոկինսի մռայլ խրճիթից:

Մոռանալով իրեն հետապնդողներին, աշխարհում ամեն ինչ մոռանալով, բացի Նեյդայից, նա վերջապես վերադարձավ ժայռերի տակ եղած իր ապաստարանի բանտային խավարը, և, այն բանից հետո, երբ Պիտերը իր համար մի հարմար փոս փորեց ավազե գորգի մեջ, երկուսն էլ խոր քուն մտան:

Արթնացան լուսադեմին: Բայց և՛ այդ օրը, և՛ հաջորդ երկու օրերը նրանք իրենց ապաստանը լքում էին միայն գիշերը, ասենք այդ դեպքում էլ դուրս չէին գալիս շրջակա ժայռերի սահմաններից: Ռոջերն այդ տեղն անվանեց Հնոց: Այդ անունը լիովին արդարացնում էր իրեն և՛ կեսօրվա ժամերին, և՛ օրվա երկրորդ կեսին:

Այնտեղ շոգ էր, այնքան շոգ, որ հեռվից թվում էր, թե սպիտակ ժայռերի կույտը հալվում է ու լուծվում հուլիսյան արևի շիկացած տաք մշուշի մեջ: Ուրախ Ռոջերը հավատացրեց Պիտերին, որ ոչ մարդը քիթը կխոթի այդտեղ, ոչ էլ գազանը, բացի խելագարներից ու բոլորովին անխելք արարածներից: Կրեգի և անտառի միջև ընկած կանաչ հարթավայրում գտնվող նրանց ժամանակավոր թաքստոցը դժվար թե առանձնապես հրապուրիչ թվար նրան, ով կնայեր այդ թաքստոցին: Անհիշելի ժամանակներում հողը ուժգին զայրույթի պահին իր ընդերքից էր ժայթքել այդ քարե քառսը, և Ուրախ Ռոջերը տեղեկացրեց Պիտերին, որ, իր կարծիքով, նախախնամությունը, անկասկած, հենց իրենց մասին է հոգ տարել, թեև այդ ժայթքումը մտադրվել ու իրականացրել է իրենց աշխարհ գալուց հարյուր հազարավոր տարիներ առաջ: Երրորդ օրվա իրիկնադեմին Ուրախ Ռոջերը վճռեց, որ հասել է գործելու ժամը:

Ամբողջ օրը անամպ երկնքից արևը կրակ էր թափել Հնոցի ժայռերի վրա: Եվ նույնիսկ հիմա, արևմուտքում, նրանց գլխավերևում դեռ լողում ու մշուշվում էր անտանելի տոթը: Վիթխարի քարե զանգվածները շիկացել էին ու մաշկը այրում էին պատահական հպումից, իսկ օդը դրանց մոխրասպիտակավուն պատերի արանքում ծխի նման թանձր էր ու տաք:

Թեև հարթավայրից Հնոցը դաժան ու անհրապույր տեսք ուներ, նա, ով չվախենալով արևի այրոցքից, հանդգներ մագլցել նրա վրա իշխող քարափը, որը հարյուր ֆուտ բարձրությամբ վեր էր հառնում Կրեգի գագաթին, իր չարչարանքի համար լիովին կվարձատրվեր:

Ներքևում, ձգվելով դեպի անանցանելի անտառը, տարածվում էին կանաչ ու ոսկեզօծ մարգագետինները, ծածկված փայլփլուն լճերով, որոնք մեծ մասամբ երիզված էին սոճիների, մայրիների ու եղևնիների մուգ թավշյա կանաչով: Հնոցի ստորոտի և քարափի մեջտեղում թաքնված էր անտեսանելի գաղտնարանը, որ իրենց համար գտել էին Ուրախ Ռոջերն ու Պիտերը:

Որքան էլ որ շիկանում էին շրջակա ժայռերը, այնտեղ միշտ ստորգետնյա անձավի զովություն էր փչում: Նրա վերևում ուս ուսի էին տվել երկու վիթխարի քարափներ, ճիշտ ինչպես երկու հեքիաթային հսկաներ, մարդու հասակի բարձրությամբ նեղ կամարաձև անցում ստեղծելով, որտեղ արևի ճառագայթները չէին թափանցում:

Երբ Պիտերը ընտելացավ շրջապատող ամայությանը, վճռեց, որ իրենց համար այդտեղ ապրելն ավելի լավ է, քան հնդկացի Թոմի խրճիթում: Ցերեկները նա հաճույքով թավալվում էր փափուկ ավազի վրա, իսկ երեկոները վայելում էր իրենց անառիկ ամրոցի խաղաղ առանձնությունը: Նա, անշուշտ, չէր հասկանում, թե ինչու իրենք փախան Քասիդիից, բայց, ղեկավարվելով բնազդով, անփոփոխ զգոնությամբ պահպանում էր իրենց ապաստարանը: Պահպանում էր աշխարհի բոլոր արարածներից:

Բոլորից, բացի Նեյդայից: Պիտերը շատ անգամ էր կամացուկ թնկթնկացել, կարոտելով նրան, գրեթե ինչպես Ռոջերը: Եվ այս երրորդ օրվա երեկոյան, երբ հուլիսյան տաք արևը գրեթե առել էր արևմտյան անտառի ատամնավոր եզրին, Պիտերն ու նրա տերը միատեսակ ագահությամբ նայում էին դեպի արևելք. այնտեղ, Կրեգի պատվարի հետևում, թաքնված էր Ջեդ Հոկինսի կացարանը:

— Մենք այսօր ամեն ինչ կասենք նրան,— վերջապես հայտարարեց Ռոջեր Մաք-Քեյը մտախոհ վճռականությամբ:— Մենք կսրտապնդվենք ու ամեն բան կպատմենք նրան:

Պիտերի կոշտ այտամորուսները, որ փոքրիկ ավելների պես ցցված էին դնչի երկու կողմերում, սիրալիր ցնցվեցին, և նա պոչը տփտփացրեց գետնին՝ ավազ շաղ տալով: Պիտերը, անտարակույս, մեծ երկերեսանի էր, որովհետև մշտապես ձևացնում էր, թե իբր, ինչ որ իրեն ասում են, բոլորը հասկանում է, նույնիսկ այն դեպքերում, երբ ոչինչ չէր հասկանում: Եվ Ուրախ Ռոջերը, հայացքը չկտրելով ապաստարանի ելքի մոտ բարձրացող գորշ պատից, շարունակեց.

— Մենք նրա հետ պետք է անկեղծ լինենք, Կաղլիկ: Ճշմարտությունը նրանից թաքցնելը սպանությունից էլ ծանր հանցանք է: Ուրիշ բան, եթե նա այդքան երեխա չլիներ, Պիտեր: Բայց ախր նա դեռ փոքրիկ աղջնակ է, շատ քնքուշ, շատ ազնիվ հոգի, և ինչքան էլ որ մենք սիրենք նրան, Պիտեր, այլևս չի կարելի խաբել: Իսկ մենք, Պիտեր, աշխարհում ամենից շատ նրան ենք սիրում:

Պիտերը պառկել էր անշարժ և նայում էր Ուրախ Ռոջերի անսովոր մռայլ դեմքին:

— Այսօր նրան կասեմ, որ ես մեծ ճանապարհի ավազակ եմ,— կարճ լռությունից հետո ավելացրեց Ռոջերը:— Իսկ նա չի հասկանա, Պիտեր: Չի կարող հասկանալ: Բայց միևնույն

է, ես նրան կասեմ: Եվ հենց այսօր: Իսկ հետո... Կարծում եմ, մենք շատ շուտով ճամփա կընկնենք դեպի Հյուսիս, Կաղլիկ: Թե որ Ջեդ Հոկինսը չլիներ...

Նա վեր կացավ տեղից ու սեղմեց բռունցքները:

— Համենայն դեպս գնալուց առաջ հարկ կլինի սպանել Ջեդ Հոկինսին: Այդպես մեզ համար ապահով կլինի,— ավարտեց նա իր խոսքը:

Մոռանալով Պիտերին՝ Ռոջերը դուրս եկավ թաքստոցից և սկսեց մագլցել քարքարոտ փլվածքով, մինչև որ բարձրացավ հսկա ժայռերի գագաթը: Այնտեղ նա կանգ առավ և հայացքը հառեց Հյուսիսի անծայրածիր խուլ թավուտին: Առջևում հարյուր... հինգ հարյուր... հազար մղոնի վրա փռված էր նրա աշխարհը: Այո, այնտեղ նրա տունն էր. Հուդսոնի ծոցից մինչև Ժայռոտ լեռները, Ջրբաժանքից մինչև արկտիկական տունդրան, և այնտեղ նա ապրել էր լիարժեք կյանքով, հետևելով միայն իր սեփական կանոններին: Նա գիտեր, որ ինքը սիրում է կյանքը այնպես, որպիսին քչերին էր տրված: Նա երկրպագում էր արևին, լուսնին ու աստղերին՝ ամբողջ այն աշխարհին, որտեղ այնքան լավ էր ապրելը, այնքան հաճելի, չնայած նրան շարունակ մահ էր սպառնում:

Բայց հիմա, երբ նա կանգնած էր մայր մտնող արևի շողերով լուսավորված, նրա սիրտը լցվեց անծայր թախիծով: Մի ակնթարթ երջանկությունը ժպտացել էր նրան, դրա համար էլ նա ստել էր, ստել էր այնքանով, որ լուռ էր մնացել: Նա Ջեդ Հոկինսի հոգեդստերը չէր ասել, որ ինքը ավազակ է և եկել է այդ կողմերում ապրելու, հույս ունենալով, որ թագավորական հեծյալ ոստիկանության մտքով չի անցնի այստեղ փնտրել իրեն: Եվ այս իրիկուն, հավանաբար, վերջին անգամ կտեսնի նրան: Եվ կասի ճշմարտությունը: Կասի, որ իրեն փնտրում է կանադական Հյուսիսի ամբողջ ոստիկանությունը: Եվ հենց այս գիշեր էլ Պիտերի հետ ճանապարհ կընկնի դեպի Լերկ Հողեր, որ այստեղից հազար մղոն հեռու էր: Նա գիտեր, որ իր վճռից հետ չի կանգնի, նույնիսկ հակառակ նրան, որ անտառի մուգ շերտը հալվում էր, փոխարենը հայտնվում էր երկնագույն աչքերով ու արևի շողերով լի շագանակագույն խոպոպներով աղջկա դալուկ դեմքը, որը Ռոջերի համար թանկ էր ամեն բանից: Այո, որքան էլ այդ պատկերը գայթակղում էր, էլի նա վստահ էր իր վրա: Ինքը ավազակ է, իրեն հետապնդում է ոստիկանությունը, բայց...

Պիտերին շարունակում էր անհանգստացնել տիրոջ մռայլ տեսքը: Երբ մութն ընկավ, և հովտում թանձրացավ մշուշը, Մաք-Քեյը դուրս եկավ ժայռեղեն լաբիրինթոսից: Մեկ ժամ անց նրանք արդեն դանդաղ քայլում էին Կրեգը հատող մութ կիրճի միջով: Խրճիթում լույս էր վառվում, բայց Նեյդայի պատուհանը մութ էր: Պիտերը, հնազանդվելով իր մեջքին իջած Ռոջերի ձեռքին, որը նախազգուշացնում էր նրան, կպավ գետնին:

— Ես մենակ կգնամ: Այստեղ սպասիր ինձ:

Պիտերին թվաց, թե շատ երկար սպասեց մթության մեջ: Նա չլսեց մեղմ «թակ-թակ-թակը», երբ իր տիրոջ մատները կամացուկ թակեցին մութ պատուհանի ապակին: Ասենք Ռոջերն ինքն էլ իր ազդանշանի պատասխանը չլսեց, միայն կողքի սենյակում ինչ-որ մեկը խոսում էր խուլ, միալար ձայնով: Ռոջերը կես ժամ կանգնեց Նեյդայի պատուհանի տակ,

ժամանակ առ ժամանակ նորից թակելով ապակին: Վերջապես ներսի սենյակի դուռը բացվեց, և լուսավորված ուղղանկյան մեջ հայտնվեց Նեյդայի կերպարանքը:

Մաք-Քեյը նորից կամացուկ թակեց, և աղջիկը արագորեն շրխկացրեց դուռը: Մեկ վայրկյան չանցած նա արդեն կիսաբաց պատուհանի մոտ էր:

— Միստր... Ռոջեր,— շշնջաց նա,— դո՞ւք եք:

— Այո,— պատասխանեց Ռոջերը՝ մթության մեջ շոշափելով նրա ձեռքը:— Ես եմ:

Աղջկա ձեռքը սառն էր: Նեյդայի մատները այնպես սեղմեցին Ռոջերի ձեռքը, ասես ինչ-որ բանից վախեցած էր: Պիտերը, սպասելուց հոգնած, կամացուկ ու թաքուն մոտեցավ նրանց և լսեց Նեյդայի գրեթե անձայն, կցկտուր շշնջոցը: Նեյդայի տոնի և Ուրախ Ռոջերի զուսպ պատասխանի մեջ ինչ-որ անսովոր բան կար, որը Պիտերին զամեց տեղում, ու նա լարեց լսողությունը և ուշադիր ականջ դրեց: Այդպես կանգնեց մի քանի րոպե, հետո պատուհանի մոտ շշուկները դադարեցին, և նա լսեց, որ իր տերը դանդաղ հեռացավ: Երբ նրանք հասան կիրճին, Ուրախ Ռոջերը սկսեց խոսել, չկասկածելով, որ Պիտերը հենց պատուհանի մոտ է եղել: Նա շրջվեց, նայեց պատուհանի աղոտ լույսին, և, դիմելով ոչ այնքան Պիտերին, որքան ինքն իրեն, ասաց.

— Երևում է, ինչ-որ բան է եղել էնտեղ: Նա չուզեց պատասխանել իմ հարցին, թե հատկապես ինչ է եղել: Բայց միևնույն է, սիրտս վատ բան է գուշակում: Ափսոս, որ մթության մեջ նրա դեմքը չտեսա:

Ռոջերը գնաց մարգագետնի միջով և, ասես գլխի ընկնելով, որ ոչինչ չի բացատրել Պիտերին, նորից խոսեց.

— Այսօր նա չկարողացավ գալ, Կաղլիկ, բայց վաղը իրիկնադեմին կգա մեզ մոտ, եղևնուտ, անպայման կգա: Ճար չկա, պետք է սպասենք:

Ռոջերն աշխատում էր խոսել առույգ տոնով, բայց քանի որ վճռել էր ամեն ինչ խոստովանել Նեյդային ու հեռանալ այդ վայրերից, դրա համար էլ ժամանակը անտանելի երկար էր թվում: Գրեթե ամբողջ գիշերը անցուդարձ արեց ցուրտ մարգագետնում, իսկ հետո երկար նստեց խիտ, բուրավետ եղևնուտի խորքում, որտեղ Նեյդան թաքստոց ուներ: Շուտով Պիտերը թանձր ստվերի մեջ, Ռոջերի աչքից հեռու, մի փոքրիկ կապոց գտավ, որը ամբողջապես ներծծված էր Նեյդայի տաք ու հաճելի բուրմունքով: Կապոցը թաքցրած էր թփի տակ և խնամքով ծածկված էր եղևնու ճյուղերով ու խոտերով: Եղևնուտից հեռանալիս Մաք-Քեյը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչու Պիտերը իր հետևից գնում էր միայն իր համառ կանչերին հնազանդվելով:

Նրանք Հնոց վերադարձան, երբ արդեն սկսել էր լուսանալ, և մինչև կեսօր Ուրախ Ռոջերը քնեց իր ապաստարանում: Իրիկնադեմին նրանք վերջին անգամ ընթրեցին այնտեղ: Հետո Մաք-Քեյը բարձրացավ գրեթե մինչև գագաթը և վառեց ծխամորճը, սպասելով այն պահին, երբ իրիկնային երկարող ստվերները վերջապես իմաց կտային, որ հասել է հանդիպման վայրը գնալու ժամանակը:

Նա հայացքը թաքստոցից փոխադրեց քարափների կողմը, որպեսզի տեսնի, թե ինչ է անում Պիտերը: Բայց ավազի մեջ բացված փոսը դատարկ էր, իսկ Պիտերը ոչ մի տեղ չէր երևում:

Գլուխ յոթերորդ

Պիտերը գնաց բացելու եղևնիների տակ գտած կապոցի գաղտնիքը:

Բլրաշարքի ստորոտում, որտեղ հարթավայրի կանաչը անհավասար կռվի էր բռնվել Հնոցի շիկացած կողերի հետ, նա կանգ առավ և երկար մլուլ տվեց: Շնիկի պսպղուն աչքերը կոշտ գանգուրների տակից ուշադիր զննեցին երկինքն ու երկիրը, հետո, թեթևակի կաղալով,— այդ կաղությունը ընդմիշտ մնաց որպես հիշատակ Ջեդ Հոկինսի դաժանության,— նա շորորալով գնաց դեպի բուտլիգերի խրճիթի կողմը:

Մոտենալով քարքարոտ կիրճին, որտեղ նա այնպես քաջությամբ պաշտպանել էր Նեյդային, և որտեղ Ջեդ Հոկինսը ջարդել էր նրա կողերը, Պիտերը մտածեց բուտլեգերի մասին և չարացած սեղմեց ականջները: Եվ հանկարծ հենց այն պահին, երբ նա բնազդորեն անշարժացավ ու ականջ դրեց, կիրճից դուրս եկավ Ջեդ Հոկինսը՝ մի ձեռքում մուգ շիշը, մյուսում՝ ծանր մահակը: Նրա միակ աչքը փայլում էր հանգչող արևի կարմրավուն ցոլքերի տակ: Հասնելով այն քարին, որի հետևում թաքնված էր Պիտերը, բուտլեգերը դանդաղեցրեց քայլերը, և նրա նիհար, չսափրված քիթմռութը ճապաղվեց չարախինդ քմծիծաղից: Պիտերը բացեց ատամները և ամբողջ մարմնով լարվեց: Հոկինսը շարունակեց ճանապարհը, բայց Պիտերը պառկած մնաց, սպասելով, մինչև շիշը, մահակը և տղամարդը ծածկվեցին տեսողությունից:

Նա խուլ գոմռաց ու շարունակեց ճանապարհը: Նրա սրտում վառվեց ատելության այրող կրակը: Ապա թեքվեց ու անհետացավ եղևնուտում, որը սեպի նման խրվել էր մարգագետնի մեջ: Մի քանի վայրկյան անց Պիտերը դուրս եկավ բացատ, որտեղ մի փոքրիկ թռչնակ իր իրիկնային երգն էր երգում:

Պիտերը գնաց բացատի երկայնքով, մինչև փորը թաղվելով հրանունկների ու հրածաղիկների մեջ, իսկ նրա թաթերը ճզմում էին մորու հասած հատապտուղները, որ կարմրին էին տալիս ամենուրեք: Ապա մեղավոր տեսքով սողոսկեց անցավ մատղաշ եղևնիների քողի միջով ու տեսավ Նեյդային, որը մորու հյութից կարմրած մատներն էր մաքրում: Նրա ալ շուրթերին նույնպես հյութ էր քսված, իսկ երբ Նեյդան ուրախ ճիչով մոտ կանչեց Պիտերին, սա տեսավ, որ աղջկա կարմրատակած այտին հատապտուղ է կպած: Բայց Նեյդան այլևս Պիտերին ուշադրություն չդարձրեց, և նրա ամբողջ նուրբ կերպարանքը թրթռաց շնիկին անհասկանալի հուզմունքից. աղջիկը շուրջը նայեց, սպասելով, թե ուր որ է կհայտնվի Ուրախ Ռոջերը:

Պիտերը մոտեցավ նրան, գլուխը դրեց ծնկներին ու, վերև նայելով, խիտ հոնքերի միջից Նեյդայի շագանակագույն խոպոպների ալիքների տակ մի կապտուկ տեսավ այնտեղ, ուր նախորդ օրը վնասվածքի ոչ մի հետք չկար: Նեյդան շնիկին մոտ քաշեց, ծնոտը դրեց

Պիտերի գլխին, և նրա թանձր փայլուն մազերը չորս կողմից ծածկեցին շանը: Նեյդայի մազերը Պիտերին գրեթե նույնքան դուր էին գալիս, որքան Ուրախ Ռոջերին. նա աչքերը փակեց և գոհունակությամբ փնչացրեց, դրանց անուշահոտ ստվերի մեջ անձնատուր լինելով զգվանքին:

— Պիտեր,— շշնջաց Նեյդան,— գիտես, վախենում եմ այսօր նրան հանդիպել: Ես ախր խոստացել եմ նրան... հիշո՞ւմ ես, խոստացել եմ, որ եթե Ջեդ Հոկինսը մի անգամ էլ ինձ խփի, ասեմ իրեն: Իսկ նա խփեց ինձ: Էս կապտուկը տեսնո՞ւմ ես: Եթե Ուրախ Ռոջերն իմանա, կսպանի նրան: Ես մի բան պիտի հորինեմ... սուտ ասեմ...

Պիտերը շուռումուռ եկավ նրա ծնկների մոտ, ցույց տալով, որ դա դուր է գալիս իրեն, և հզոր պոչը տփտփացրեց գետնին: Նեյդան լռեց, և Պիտերը լսեց ու զգաց, թե իր կողքին ինչպես է թպրտում նրա սիրտը: Հետո Նեյդան գլուխը բարձրացրեց ու նայեց այնտեղ, ուր, իր հաշվով, եղևնիների արանքից պետք է հայտնվեր Ուրախ Ռոջերը: Պիտերը, հաճույքից աչքերը կկոցած, չնկատեց ու չզգաց այն փոփոխությունը, որ կատարվել էր նրա հետ այդ օրվա ընթացքում. Նեյդայի կապույտ աչքերում մի նոր փայլ էր հայտնվել, այտերը վառվում էին, և նա ամբողջ մարմնով դողում էր տագնապալի հուզմունքից: Նույնիսկ Պիտերին չբացեց իր գաղտնիքը և շարունակեց սպասել, ականջ դնելով՝ չի՞ գալիս արդյոք Ռոջերը: Իսկ երբ վերջապես լսվեց Ռոջերի քայլերի ձայնը, և նա դուրս եկավ եղևնիների հետևից, Նեյդան այնպես շիկնեց, որ նրա այտերի կարմրությունը կարող էր մրցել մատների ծայրերին մնացած մորու ալ հյութի հետ: Ուրախ Ռոջերը մի հայացքից տեսավ այն, ինչ չէր տեսել Պիտերը, և մեխվեց տեղում, իսկ սիրտը զարկեց արագ, ինչպես մուրճը: Դեռ երբեք, նույնիսկ երազում, նա այդքան գեղեցիկ չէր տեսել Նեյդային, դեռ երբեք Նեյդան այդպիսի հայացքով չէր նայել նրան, դեռ երբեք նրա ալ շուրթերը այդքան բան չէին ասել Ռոջերին, առանց մի խոսքի: Եվ այստեղ Ռոջերը տեսավ կապտուկը, որ կիսով չափ ծածկված էր շագանակագույն մազափնջով, ապա տեսավ մասրենու թփի տակ դրած փոքրիկ կապոցը: Բայց նա կրկին հայացքը գցեց կապտուկին:

— Ջեդ Հոկինսը էստեղ մեղք չունի,— ասաց Նեյդան՝ կռահելով նրա մտքերը:— Սա նրա կինն է արել: Իսկ դուք նրան սպանել չեք կարող,— ավելացրեց նա մի տեսակ գրգռիչ տոնով:

Ռոջերը տեսավ, թե ինչպես կծկվեց Նեյդայի կոկորդը, և հասկացավ, որ նա ստում է: Բայց այդտեղ Նեյդան իր ծնկներից հեռացրեց Պիտերի գլուխն ու արագ ոտքի ելավ: Նա կանգնած էր Ուրախ Ռոջերի առջև, անտառային բացատում, որտեղ թավշյա խոտը զարդարված էր մանուշակներով, հրանունկներով ու կարմիր մորիով, և Ռոջերը մտածեց, որ հիմա նա ոչ թե փոքրիկ աղջնակի է նման, այլ հասուն աղջկա: Գլխավերևում երգեց թռչնակը, բայց Նեյդան չլսեց նրա զրնգուն երգը: Նրա դեմքի տաք շառագույնին փոխարինեց նախկին դալկությունը, սեղմված ձեռքերը դողդողացին, բայց երբ նայեց Ուրախ Ռոջերին, աչքերի կապույտը նույնքան ջինջ էր ու վճիտ, ինչպես երկնքի լազուրը:

— Ես էլ Ջեդ Հոկինսի մոտ չեմ վերադառնա, միստր Ռոջեր,— ասաց նա:

Զով զեփյուռը բարձրացրեց նրա ճակատին թափված մազափունջը, լրիվ բացելով դաժան հարվածի հետքը, և Նեյդան Ուրախ Ռոջերի աչքերում տեսավ այն սառը, պողպատե փայլը, որից միշտ վախեցել էր: Ռոջերը սեղմեց բռունցքները, և բռնելով նրա թևը, Նեյդան շորի տակից զգաց կեչու նման պինդ մկանների ուռած, ձիգ ելունդները: Ու, չնայած երկյուղին, նա հպարտություն զգաց այն մտքից, որ բավական է մի խոսք ասի, և Ռոջերը կսպանի նրան, ով խփել է իրեն: Նա կամացուկ ձեռքը սահեցրեց Ռոջերի արմունկն ի վեր, աչքերը մշուշվեցին, շրթունքների անկյունները խղճալիորեն ցնցվեցին, և, ուղիղ նայելով Ռոջերի դեմքին, կրկնեց.

— Ես էլ էնտեղ չեմ գնա:

Ուրախ Ռոջերը հասկացավ, թե ինչ է նշանակում մասրենու տակ դրված կապոցը: Նա հանդիպեց Նեյդայի վճռական հայացքին, և նրան թվաց, որ հիմա սիրտը կպայթի: Նա փորձեց թուլացնել լարված մկանները: Փորձեց ժպտալ: Փորձեց սրտապնդվել, որպեսզի ամեն ինչ ասի նրան: Իսկ Պիտերը, խիտ մանուշակների մեջ նստած, աչքերը չորս արած նայում էր նրանց ու աշխատում էր հասկանալ, թե ինչ է կատարվում:

— Իսկ ո՞ւր պիտի գնաս,— հարցրեց Ուրախ Ռոջերը:

Նեյդայի մատները գրեթե հասել էին նրա ուսին: Նա նյարդայնացած ճմռթեց Ռոջերի բումազիեի վերնաշապիկը, բայց ոչ մի ակնթարթ հայացքը չխոնարհեց, և Ռոջերը մինչև նրա խոսելը այնտեղ կարդաց պատասխանը:

— Ես ձեզ հետ կգամ:

Ռոջերը հետ քաշվեց նրանից մի խեղդված ճիչ արձակելով, որ հեծկլտոցի էր նման: Նա հայացքը շրջեց և փորձեց նայել Պիտերին, բայց Նեյդայի դալուկ դեմքը, դողդոջուն շուրթերը, լայն բացված հրաշալի աչքերն ու մազերը, որոնց հետ խաղում էր զեփյուռը, ամեն ինչ ծածկեցին նրա հայացքից: Դա արդեն փոքրիկ աղջիկ չէր, որ «մտել էր տասնութի մեջ»: Ռոջեր Մաք-Քեյի համար դա միակ կինն էր ամբողջ աշխարհում:

— Դու չես կարող մեզ հետ գալ,— հուսահատ բացականչեց Ռոջերը:— Ես եկել եմ, որպեսզի ամեն բան ասեմ քեզ: Ես արժանի չեմ քո վստահությանը: Ես ախր իսկի էլ այն մարդը չեմ, որի տեղը դնում ես ինձ: Ես խաբել եմ...

Նա անվճռականորեն լռեց, բայց իրեն հարկադրեց շարունակել.

— Երբ ճշմարտությունն իմանաս, դու կատես ինձ, Նեյդա: Դու Ջեդ Հոկինսին վատ մարդ ես համարում: Բայց օրենքի առաջ ես ավելի վատն եմ: Ինձ փնտրում է ոստիկանությունը: Ես արդեն մի քանի տարի է թաքնվում եմ նրանից: Ահա թե ինչու եկել եմ այստեղ ու ապրում եմ հնդկացի Թոմի խրճիթում… որի մոտերքում էլ հանդիպեցի քեզ: Կարծում էի, թե էստեղ ինձ չեն գտնի, բայց նրանք գտել են իմ հետքը: Դրա համար էլ ես ու Պիտերը թաքնվել ենք Կրեգի հեռավոր ծայրում, ժայռերի մեջ: Ես... ես ավազակ եմ: Ես շատ այնպիսի բաներ եմ արել, որոնք հանցագործություն են համարվում օրենքի աչքում, և, ավելի շուտ, կամ գնդակից կմեռնեմ, կամ բանտում: Ես կուզենայի, որ ամեն ինչ այլ կերպ

լիներ, բայց ինչ օգուտ ափսոսալուց: Ես կյանքս կտայի, որպեսզի քեզ ասեի իմ սրտում եղածը: Բայց չեմ կարող: Դա ազնիվ չի լինի:

Ռոջերը շվարեց, թե ինչու Նեյդայի հայացքը բոլորովին չփոխվեց, երբ ինքը ասաց ճշմարտությունը: Նեյդայի այտերը նորից վարդագունեցին, շուրթերն էլ ավելի կարմրեցին. Ռոջերի խոսքերը կարծես բնավ չզարմացրին ու չվախեցրին նրան:

— Մի՞թե դու չհասկացար, Նեյդա,— բացականչեց Ռոջերը:— Ես վատ մարդ եմ: Ինձ փնտրում է ոստիկանությունը: Ես փախստական եմ, ես թաքնվում եմ ոստիկանությունից…

Նեյդան գլխով արեց:

— Ես գիտեմ, միստր Ռոջեր,— պատասխանեց նա հանգիստ:— Ես շատ վաղուց լսել եմ, երբ դուք այդ մասին պատմում էիք Պիտերին: Եվ այն բանից հետո, երբ ես ուՊիտերը փախանք հնդկացի Թոմի խրճիթից, հաջորդ օրը մեզ մոտ եկավ միստր Քասիդին: Ես նրան տարա հայր Ջոնի մոտ, և նա ինձ շատ-շատ բաներ պատմեց ձեր մասին, էլ ավելի շատ՝ հայր Ջոնին... Եվ ես ավելի սկսեցի հարգել ձեզ, միստր Ռոջեր, և ուզում եմ ձեզ հետ միասին հեռանալ այստեղից:

— Հարգե՞լ,— հոգոց հանեց Ռոջերը:— Ի՞նձ:

Նեյդան նորից գլխով արեց:

— Միստր Քասիդին, դե՛, էդ ոստիկանը, նույն բանն ասաց, ինչ որ հիմա դուք ասացիք: Նա ասաց, որ դուք միշտ էլ ազնվորեն եք վարվում, նույնիսկ թալանելիս: Նա ասաց, որ կբանտարկի ձեզ, եթե կարողանա, միայն թե դա շատ ցավալի կլինի իր համար: Նա ասաց, որ շատ կուզենար ձեզ նման ընկեր ունենալ: Պիտերն էլ ձեզ շատ է սիրում: Ես էլ…— Նրա այտերը վառվեցին:— Ես կգամ ձեզ ու Պիտերի հետ,— վճռականորեն ավարտեց նա:

Այստեղ մի փոքրիկ դեպք օգնության եկավ բոլորովին շվարած Ռոջերին. Պիտերը, որ վազվզում էր փարթամ խոտերի մեջ, փախցրեց մի խոշոր ճագարի, և նրանք, ինչպես լեռան կատարից ցած գլորվող հուսին, պտտվում էին եղևնուտի շուրջը, Պիտերի բարձր հաչոցի տակ, որը շարունակ ընդհատվում էր վնգստոցով: Ուրախ Ռոջերը շրջվեց ու նայեց նրանց հետևից, բայց ոչինչ չտեսավ: Նա գիտեր, որ հասել է ամենավճռական պահը իր կյանքում: Հանդուգն արկածների ու թափառումների տարիներին նա շատ անգամ էր երես առ երես հանդիպել մահին: Նա քաղցած էր մնացել: Նա ցրտահարվել էր ձյունապատ տափաստաններում: Տարերքի, գազանների ու մարդկանց հետ ունեցած գոտեմարտերից միշտ հաղթող էր դուրս եկել: Բայց դեռ ոչ մի անգամ չէր ճաշակել այնպիսի մի բան, որ հավասար լիներ այդ պայքարին, ինչ հիմա կատարվում էր նրա հոգում: Նրա սիրտը զարկում էր արագ, մտքերը հաջորդում էին միմյանց, անկարգ, խառնաշփոթ մրրկի արագությամբ, նա զուր տեղը ջանում էր տիրապետել ինքն իրեն, և այդ ամբողջ ժամանակ, մինչ նրա աչքերը հետևում էին ճագարին ու Պիտերին, որոնք վաղուց չքացել էին տեսողությունից, թիկունքում Նեյդայի ձայնը շարունակ կրկնում էր, որ կգնա Ռոջերի ու Պիտերի հետ: Այդ վայրկյանների ընթացքում Ռոջերը հասկացավ, որ չի դիմանա, և

նախապես կազմած գործողության ծրագիրը հօդս կցնդի: Ինքը ամեն ինչ խոստովանեց, բայց նա, որին պաշտում էր ինքը, քնքուշ ու անբիծ, ինչպես անտառի ծաղիկ, համառորեն ուզում էր կիսել իր ճակատագիրը: Եվ Ռոջերի ներսում ամեն ինչ գոչում էր. «Շրջվիր, ձեռք մեկնիր նրան, մի՛ բաժանվիր նրանից, քանի կապրես ու ազատ կլինես»:

Եվ, այնուամենայնիվ, նա դիմադրում էր այդ տիրական կանչին, կաթիլ առ կաթիլ կուտակելով բանականությունն ու պարտքի զգացումը, իսկ Նեյդան նայում էր նրան չռված, մանկորեն զեղեցիկ աչքերով և առաջին անգամ գլխի ընկավ այն տառապանքների մասին, որոնք ծվատում էին այդ մարդու սիրտը, մարդ, որը ավազակ էր եղել, բայց իր համար ամենալավն էր բոլոր մարդկանցից: Երբ Ուրախ Ռոջերը շրջվեց Նեյդայի կողմը, վերջինս տեսավ, որ նրա դեմքը ծերացել է, դարձել է գորշ, ինչպես քարը, աչքերը մշուշվել են և ձայնի մեջ մի խուլ անհուսություն կար:

— Դու մեզ հետ չե՛ս գա,— ասաց Ռոջերը:— Չի՛ կարելի: Դրանից ոչ մի լավ բան դուրս չի գա: Ես որ բանտ ընկա, չեմ կարող քո մասին հոգալ: Իսկ բանտից ինձ ազատում չկա:

Շատ անգամ, երբ Նեյդան խոսել էր Ջեդ Հոկինսի մասին, Ռոջերը կապույտ բոց էր տեսել նրա աչքերում: Հիմա այդ բոցը նորից բռնկվեց, և Նեյդայի ձեռքերը բռունցքվեցին:

— Ո՞չ,— գոչեց նա:— Էդ բանը չի լինի: Ես չեմ թողնի, որ դուք բանտ ընկնեք: Միայն թե թույլ տվեք գամ ձեզ հետ:— Նա մի քայլ արեց դեպի Ռոջերը:— Իսկ որ մնամ էստեղ, Ջեդ Հոկինսը կծախի ինձ, կնության կտա մի մարդու, որը երկաթգծին փայտակոճեր է մատակարարում: Այո՛, կծախի: Ես առաջ էդ մասին ձեզ չէի ասում, որովհետև վախենում էի, թե չլինի դուք որևէ անուղղելի բան անեք: Բայց, եթե ինձ ձեզ հետ չտանեք, էդպես էլ կլինի, միստր Ռոջեր, ահա, իմացած եղեք:

Նեյդայի մատները նորից սողոսկեցին դեպի Ռոջերի ուսը: Կապույտ աչքերը, որոնցում արտացոլված էին նրա ողջ խիզախությունն ու ազնվական հոգին, շատ մոտիկ էին Ռոջերի աչքերին, բայց դրանք իսկույն մշուշվեցին. դրանցում արցունքներ շողացին:

— Ես կգամ ձեր հետևից, ուր էլ որ գնաք,— շշնջաց նա:— Մենք կթաքնվենք, և մեզ երբեք էլ չեն գտնի: Ես անպայման երջանիկ կլինեմ, միստր Ռոջեր... Իսկ եթե ինձ չտանեք, ավելի լավ է մեռնեմ...

Նեյդան, գլուխը դնելով Ռոջերի կրծքին ու նիհար ձեռքերով նրա պարանոցին փաթաթվելով, մեղմ արտասվեց, իսկ Ուրախ Ռոջերը ագահությամբ որսում էր նրա յուրաքանչյուր խոսքը, որ հեկեկոցների արանքում պոկվում էր նրա շուրթերից: Եվ հանկարծ Ռոջերի սրտում բռնկված փոթորիկը հանդարտվեց, նա լցվեց վճռականությամբ, վարանումին փոխարինելու եկան ուրախությունն ու երջանկությունը, նոր պատասխանատվության հպարտ գիտակցումը: Նա գրկեց Նեյդային, դեմքը շրջեց իր կողմը և առաջին անգամ համբուրեց նրա նուրբ, ալ շուրթերը, որոնք ինչ-որ անհասկանալի պատճառով այդ օրվանից ճակատագիրը վստահեց իրեն:

Նրան բաց չթողնելով իր գրկից, իր պարանոցին դեռևս զգալով նրա ձեռքերի ներկայությունը՝ Ռոջերը ցածրաձայն ասաց.

— Դու կգաս մեզ հետ, աղջիկս: Կգաս և մեզ հետ էլ կմնաս ընդմիշտ: Իսկ մենք ճանապարհ կընկնենք հենց այսօր երեկոյան:

Երբ Պիտերը վերադարձավ բացատ, նրա տերը կանգնած էր այնտեղ մեն-մենակ, իսկ Նեյդան վերջալույսի ցոլքերից ոսկեզօծված մեծ մարգագետնով արդեն գնում էր ուղիղ Կրեգի կիրճը, որը տանում էր դեպի Ջեդ Հոկինսի խրճիթը: Սակայն Պիտերը բացատում գտավ բոլորովին էլ ոչ այն Ուրախ Ռոջերին, որին թողել էր ընդամենը կես ժամ առաջ, այն Ռոջերին, որի հետ թաքնվել էր ժայռերի մեջ: Ռոջեր Մաք-Քեյը, որ կանգնած էր իր առջև, նարնջագույն երկնքի տակ, այլևս օրինազանց ու փախստական չէր: Նա լուռ էր, բայց նրա ողջ էությունը երգում էր երջանկությունից, որը շատ էր ներդաշնակում այդ ամառային իրիկվա անծայր թովչանքին: Ամբողջ աշխարհում չէր գտնվի մի մարդ, որի հետ նա ուզենար փոխել տեղերը. նա իր երջանկությունը չէր փոխի աշխարհի մնացած բոլոր մարդկանց երջանկության հետ: Նա սկսեց խոսել, իսկ Պիտերը, կարմիր լեզուն դուրս գցած, կծկվեց նրա ոտքերի մոտ ու սկսեց ականջ դնել:

— Նա սիրում է ինձ, սիրում է, սիրում է,— կրկնեց Ռոջերն այնքան, որ վերջապես Պիտերը ականջները ցցեց, ջանալով հասկանալ, թե ինչ կարող են նշանակել այդ խոսքերը:

Այդտեղ Ուրախ Ռոջերը նկատեց Պիտերին, ծիծաղեց ու կռացավ, իսկ դեմքին երանության արտահայտությունը պայքարի մեջ էր տարակուսանքի հետ:

— Նա կգա ինձ հետ... մեզ հետ,— բացականչեց Ռոջերը տղայական խանդավառությամբ:— Ճակատագիրն օգնեց, Կաղլիկ, և նա կգա մեզ հետ: Մենք կգնանք այսօր երեկոյան, հենց որ լուսինը դուրս գա: Եվ... Պիտե՛ր, Պիտե՛ր: Մենք էստեղից ուղիղ կգնանք քարոզիչի մոտ, և նա մեզ կպսակի, իսկ հետո կգնանք մի այնպիսի տեղ, որտեղ ոչ ոքի մտքով չի անցնի մեզ փնտրել: Ճիշտ է, ոստիկանությունը մեզ հետապնդում է, բայց մեզ սիրում են, Կաղլիկ: Եվ մենք կաշխատենք արժանի լինել դրան: Լսո՞ւմ ես, Պիտեր:

Նա շտկեց ուսերը և դարձավ դեպի արևմուտք: Հետո վերցրեց Նեյդայի կապոցը և սուզվեց եղևնուտը, իսկ Պիտերը շորորալով գնաց նրա հետևից: Նրանք արագ կտրեցին անցան արդեն մթնող մարգագետինը և, հասնելով Հնոցին, շուտով հայտնվեցին երկու հեքիաթային հսկաների ուսերի տակ գտնվող իրենց ապաստարանում: Այնտեղ դեռ քիչ-քիչ լույս էր նշմարվում, և, դրանից օգտվելով, Ռոջեր Մաք-Քեյը արագ-արագ հավաքեց ունեցած-չունեցածը, հետո երկյուղածությամբ բացեց Նեյդայի կապոցը և նրա իրերը խնամքով դասավորեց իր ուսապարկի մեջ: Այդ ամբողջ ժամանակ նա խոսում էր ինքն իրեն, և Պիտերին թվում էր, թե իր տերը ինչ-որ երգ է երգում:

Երբ բոլորովին մթնեց, նրանք ժայռերի հետևից դուրս եկան մարգագետին և կես ժամ հետո արդեն անցան կիրճը ու թաքնվեցին Ջեդ Հոկինսի խրճիթից մի քանի տասնյակ քայլի վրա գտնվող մեծ ժայռի սեփ-սև ստվերում: Լուսինը դուրս գալուց հետո այստեղ նրանց պետք է միանար Նեյդան:

Շուրջը խոր լռություն էր տիրում, և Պիտերը, հասկանալով, որ չի կարելի խախտել այդ լռությունը, պառկեց գետնին, նայելով մերթ խրճիթի լուսավորված պատուհանին, մերթ՝ իր տիրոջ աղոտ կերպարանքին:

Ռոջերն զգաց, որ հեռվում ինչ-որ տեղ ամպրոպ է սկսվում: Օդում արդեն զգացվում էր նրա շունչը, թեև երկնքում դեռ ոչ մի ամպի կտոր չկար, միայն հազիվ նշմարվող կապույտ մշուշից աստղերը խամրեցին: Ուրախ Ռոջերը մտքում ռոպեներն էր հաշվում, սպասելով լուսնի դուրս գալուն: Նրան թվում էր, թե ժամեր են անցել, բայց ահա վերջապես արևելքում երևաց լուսնի ոսկեզօծ եղջյուրը: Շուտով ողջ շրջակայքը լցվեց ստվերներով: Առարկաները տարօրինակ, արտասովոր ձևեր առան: Իբրև հեռավոր ազդանշանային կրակներ՝ շողշողացին ժայռերի կատարները: Սև սոճիները, եղևնիներն ու մայրիները այժմ փայլփլում էին արծաթի փայլով: Իսկ լուսինը բարձրանում էր վեր ու վեր, նրա գունատ շողերը թափվում էին հովիտների ու մարգագետինների վրա, պարում էին ծառերի կատարներին՝ կերպարանափոխելով վաղուց ծանոթ բնապատկերը, ստեղծելով մի հեքիաթային աշխարհ:

Ուրախ Ռոջերը աչքը չէր կտրում խրճիթում վառվող լույսից և լարել էր լսողությունը, սպասելով, որ ահա, ուր որ է կլսի հուշիկ քայլերի ձայնը: Բայց առաջվա պես չորս կողմը լուռ էր ու խաղաղ: Լամպը շարունակում էր հանգիստ վառվել: Դուռը էլի փակ էր: Ռոջերը լսում էր միայն քամու շրշյունը, գիշերահավքերի ճիչերը, մեկ էլ ծեր գայլի կաղկանձը, որը միշտ ոռնում էր լուսնի վրա՝ հնդկացի Թոմի խրճիթի հետևում ընկած ճահճոտ թավուտից:

Տագնապը համակեց Ուրախ Ռոջերին: Լուսինը վաղուց էր դուրս եկել, իսկ նա դեռ սպասում էր, կես ժամ, երեք քառորդ ժամ, մեկ ժամ... Նեյդան դեռ չկար: Տագնապը գնալով մեծացավ, և նա կամաց-կամաց, անձայն սկսեց մոտենալ խրճիթին, թաքնվելով լեռան ստվերների մեջ, մինչև հայտնվեց հետնամուտքի մոտ գտնվող մայրուտում: Պիտերը կրնկակոխ գնաց նրա հետևից, ուշադիր նայելով իր առջև, որպեսզի չլինի թե պատահաբար ոտքը չոր ճյուղի վրա դնի: Նրանք մոտեցան խրճիթին, և այստեղ Ռոջեր Մաք-Քեյը հստակորեն խուլ, երկարաձիգ հառաչանքներ լսեց:

Նա գողեգող մոտեցավ պատուհանին ու ներս նայեց:

Գետնին, կուչ եկած, նստած էր Ջեդ Հոկինսի կինը: Նա տնքում, օրորվում էր, ոսկրոտ ձեռքերը նիհար կրծքին սեղմած, ու նայում էր բաց դռանը: Եվ հանկարծ Ուրախ Ռոջերը հասկացավ, որ սգացող պառավից բացի խրճիթում ուրիշ ոչ ոք չկա: Սարսափը պատեց նրան, և ավելի շուտ, քան այդ սարսափը որոշակի կերպարանք կստանար, Ռոջերը ներս ընկավ խրճիթ: Կինը արցունքից կարմրած խելահեղ աչքերը հառեց նրա վրա, բայց դադարեց հառաչել ու ձեռքերը դանդաղ ցած իջեցրեց: Ուրախ Ռոջերը կռացավ նրա վրա և, տեսնելով պառավի կնճռապատ դեմքին դաջված ահավոր սարսափը, ակամա ցնցվեց:

— Որտե՞ղ է Նեյդան,— հարցրեց նա չարացած։— Ասա ինձ, որտե՞ղ է նա:

— Նա չկա, չկա, չկա...— փնթփնթաց պառավը, նորից ձեռքերը խաչելով կրծքին: Ջեդը տարավ նրան... երկաթգծի հետևը... Մունիի մոտ: Տեր աստված... Ես ուզեցի խանգարել նրան, բայց թե որտեղի՞ց... Քարշ տալով տարավ նրան ու էսօր կծախի Մունիին, փայտակոճերի մատակարարին... Կծախի էդ չար դևին, էդ գազանին...

Պառավը շնչահեղձ եղավ հեկեկոցից, տնքաց ու նորից սկսեց օրորվել: Մաք-Քեյը բռնեց նրա ուսը:

— Որտե՞ղ է ապրում Մունին,— գոռաց նա:— Շուտ ասա:

— Հազար... հազար դոլլար է խոստացել նա, թե որ կին առնի Նեյդային,— խեղդված ծորուն ձայնով ասաց պառավը:— Այ, էն կածանը ուղիղ տանում է նրա տունը: Երկաթգծի հետևը: Էստեղից մի մղոն կլինի: Գուցեև երկու: Ես համոզեցի նրան, իսկ նա ականջ չդրեց...

Ուրախ Ռոջերն այլևս չլսեց նրա ձայնը: Նա սրընթաց վազեց բացատով, Պիտերը սլացավ նրա հետևից: Նրանք դուրս եկան կածան, և Ուրախ Ռոջերն ավելի արագացրեց վազքը: Նա լարեց միտքը՝ աշխատելով հիշել, թե հատկապես ինչ ասաց Նեյդան Ջեդ Հոկինսի և փայտակոճերի մատակարարի մասին: Երկու ժամ առաջ եղևնիների բացատում ինքը ուշադրություն չդարձրեց Նեյդայի խոսքերին, մտածեց, որ Ջեդ Հոկինսից ունեցած մշտական վախն է նրան ներշնչել այն միտքը, թե իբր Հոկինսը մտադիր է իրեն զոռով մարդու տալ: Դա արդեն շատ հրեշավոր բան էր... Մի խուլ ճիչ դուրս թռավ նրա շուրթերից: Հոկինսն ու Նեյդան վաղուց պետք է հասած լինեին Մունիի կացարանը. Նեյդան այդ երկու սրիկաների տրամադրության տակ է, աչքից հեռու մենավոր խրճիթում, որտեղ ոչ ոք նրան օգնության չի հասնի...

Պիտերը, որ վազում էր Ռոջերի հետևից, լսելով նրա խռպոտ տնքոցը, վնգստաց: Իսկ երկնքում առաջվա պես փայլում էր լուսինը, բայց հիմա նրա դալուկ սկավառակի վրայով ավելի հաճախ էին սլանում մութ ամպերը և ժամանակ առ ժամանակ լսվում էր հեռավոր որոտի խուլ դղրդյունը: Հանկարծ սև ամպերը ծածկեցին լուսնի դեմքը, և Ռոջերն ու Պիտերը շարունակեցին վազել լիակատար խավարի մեջ: Հետո նույնքան անսպասելիորեն խավարը ցրվեց, լուսինը նորից դուրս լողաց ամպերի տակից, լուսավորելով ճանապարհը... Ռոջերը հանկարծ կանգ առավ մեխվածի նման, և նրա սիրտը քիչ մնաց դուրս թռչեր կրծքից:

Օրորվելով ու հեկեկալով՝ նրան ընդառաջ էր գալիս Նեյդան: Նրա մազերը զզզված էին, ուսերին ու կրծքին թափված, շորը պատռված էր, և լուսնի պայծառ լույսի տակ պատռված թևքի տակից սպիտակին էր տալիս մերկացած ուսը: Նա տեսավ Ռոջերին, որը ձեռքերը պարզել էր իրեն, և ճչալով,— Պիտերը երբեք այդպիսի ճիչ չէր լսել Նեյդայի շուրթերից,— նետվեց դեպի նա: Նրա աչքերում՝ չոր, այրվող, խոշոր աչքերում Ռոջերը ողբերգական սարսափ տեսավ, բայց դա այն չէր, ինչի որ սպասում էր ինքը: Նա Նեյդային սեղմեց կրծքին, զգաց նրա տաք շուրթերի հպումը:

— Նա... Նա քեզ տարավ Մունիի մո՞տ:

Ռոջերն զգաց, թե ինչպես աղջիկը դողաց ամբողջ մարմնով:

— Ոչ,— շնչակտուր լինելով ասաց նա։— Ես դիմադրեցի... ամբողջ ճանապարհին: Նա քարշ տվեց ինձ, ծեծեց, շորս պատռեց, բայց ես էլի դիմադրեցի: Էդպես շարունակվեց... ճամփին նա մտածեց, որ ես ուժասպառ եմ եղել, ու շուռ եկավ... ես էլ քարով խփեցի նրան: Նա ընկավ, ու հիմա պառկած է էնտեղ... մեջքի վրա...

Նա խոսքը չվերջացրեց: Ուրախ Ռոջերը Նեյդային հետ մղեց իրենից: Ամպերը նորից ծածկեցին լուսինը, և Նեյդան չտեսավ նրա դեմքը: Ռոջերը խոսեց խուլ ու կատաղի ձայնով.

— Նեյդա, շուտ գնա քարոզիչի մոտ։— Նա ճնշում գործադրեց իր վրա, ջանալով հանգիստ խոսել: Վերցրու Պիտերին ու գնա: Դու կհասնես էնտեղ մինչև ամպրոպը կսկսվի: Իսկ ես կգնամ Ջեդ Հոկինսի հետ խոսելու, երես առ երես: Հետո կգամ քո հետևից, և քարոզիչը մեզ կպսակի:

Լուսինը դուրս սահեց ամպերի տակից, և Ռոջերը երջանիկ ժպիտ տեսավ Նեյդայի դեմքին: Վախը չքացավ, աչքերում ոսկեգույն կրակներ խաղացին: Նա նորից մոտ քաշեց Նեյդային ու համբուրեց, իսկ Նեյդայի մատները շոյեցին Ռոջերի դեմքը, և աղջիկը ծիծաղեց մեղմ ու երջանիկ ծիծաղով:

Բայց Ռոջերը համառորեն պնդեց, որ նա պետք է գնա:

— Շտապիր, աղջիկս,— ասաց նա։— Շտապիր, թե չէ հեղեղի տակ կմնաս:

Կամացուկ ձայն տալով Պիտերին՝ Նեյդան գնաց, իսկ Մաք-Քեյը խոշոր քայլերով շարունակեց ճանապարհը՝ ոչ մի անգամ հետ չնայելով և մտածելով միայն այն մասին, թե այդ գիշեր երկու ստոր սրիկաների հաշիվները ինչպես մաքրի: Նա սպանելու ցանկություն ունեցավ, մի բան, որ մինչև այդ օտար էր իրեն: Մի քիչ էլ, և նա Հոկինսի ու Մունիի հախից կգար, այնպես, ինչպես Հոկինսն էր եկել Պիտերի հախից: Ո՛չ, ինքը նրանց չի սպանի, բայց լավ ջարդ կտա, ոսկորները կփշրի, որպեսզի երկար ժամանակ նրանց խրատ լինի:

Եվ այստեղ կրկին վրա հասած խավարի մեջ Ռոջերի ոտքը ինչ-որ բանի կպավ: Նա կանգ առավ և, երբ ամպը քաշվեց, գետնին, իր ոտքերի մոտ տեսավ Ջեդ Հոկինսի դեմքը: Դեմքը սոսկալի այլանդակված էր, միակ աչքը փակ էր: Հոկինսը չէր շարժվում, իսկ ծոծրակի մոտ ընկած էր Նեյդայի շպրտած քարը:

Ուրախ Ռոջերը քթի տակ դառն ծիծաղեց. ճակատագրի կամքով իր աշխատանքի առաջին կեսը բավական թեթևացել էր: Բայց ծեծել մի մարդու, որն ընկած էր անգիտակից, նա չէր կարող: Ռոջերը քացով խփեց անշարժ մարմնին:

— Վեր կաց, սրիկա,— ասաց նա։— Ես կջարդեմ քո ոսկորները, ինչպես դու ջարդեցիր Պիտերի ու էն խեղճ պառավի ոսկորները: Վեր կաց...

Ջեդ Հոկինսը չշարժվեց: Նրա մարմինը կակղել էր: Ռոջերը կանգնել ու նայում էր նրան, և վայրկյան առ վայրկյան նրա աչքերը չռվում էին, իսկ հայացքը գնալով ավելի էր շփոթվում:

Նորից մթնեց: Բայց այս անգամ դա սև, անթափանց խավար էր, ասես դժոխքի դռները փակվեցին աշխարհի վրա: Արևմուտքից ամպրոպի ուժգին ճայթյուն լսվեց: Ծառերի կատարները վախեցած փսփսացին իրար հետ: Բայց Ուրախ Ռոջերը միայն իր սեփական սրտի զարկերն էր լսում: Նա ծնկի իջավ ու սկսեց շոշափել Ջեդ Հոկինսի մարմինը: Այդ պահին Պիտերն էլ չէր կարող որսալ նրա շնչառությունը: Նա ոտքի ելավ, և այդ պահին լռության մեջ քարացած գիշերային խավարը լսեց այն միակ խռպոտ բառը, որ պոկվեց նրա շուրթերից.

— Մեռած է:

Նրա հոգում թունդ կատաղությանը փոխարինեց սարսռեցնող վախը, սիրտը կապարի պես ծանրացավ, շունչը բռնվեց: Ջեդ Հոկինսը մեռած է: Նրա մարմինը սառել է մութ արահետի վրա: Նա վերածվել է անշունչ դիակի, և քամին, փոթորկի նախագուշակը, ողբում ու հեծում է նրա վրա, իսկ միայնակ գայլը ճահճուտում ոռնում է առավել թախծոտ, կարծես զգում է մեռելի հոտը:

Ռոջեր Մաք-Քեյի եղունգները խրվեցին ափերի մեջ: Եթե ինքը սպաներ մարդու կերպարանքով այդ սողունին, եթե վրիժառուն լիներ ինքը, չէր ունենա այն սահմռկեցնող վախի զգացումը, որը հիմա նրան գամել էր խավարի մեջ: Բայց նա ուշացել էր: Ջեդ Հոկինսին սպանել էր Նեյդան: Նեյդան, որի սիրտը այդ օրը ծաղկի պես բացվել էր երջանկության շնչից, կյանքից զրկել էր իր հոգևոր հորը: Իսկ Կանադայի օրենքը չի ընդունում ոչ մի մեղմացուցիչ դեպք հանցանաց, երբ բանը վերաբերում է սպանությանը:

Սառը դող անցավ Ռոջերի մարմնով, մատները փայտացան, և նա, ատամները սեղմած, անգիտակցորեն հեկեկաց երեխայի նման: Ամպրոպի դղրդյունը գնալով ուժգնանում էր ու մոտենում, դրա մեջ սպառնալիք կար, անդառնալի ու ծանր հատուցման անողոք խոստում: Ռոջերն զգաց քամու հարվածը, նույն պահին էլ ինչ-որ փափուկ բան կպավ նրա ոտքերին և վնգստոց լսվեց՝ լի զարմանքով ու տարակուսանքով: Դա Պիտերն էր. Պիտերը վերադարձել էր նրա մոտ այն պահին, երբ նա ամենից շատ կարիք ուներ քաջալերանքի: Հոգոց հանելով՝ Մաք-Քեյը նորից ծնկի իջավ և մոտ քաշեց Պիտերին:

— Տե՛ր աստված,— մրմնջաց նա խռպոտ ձայնով։— Պիտեր, Նեյդան սպանել է սրան: Բայց պետք չէ, որ նա իմանա այդ մասին: Մենք բոլորից պետք է թաքցնենք սա...

Նա լռեց, և Պիտերն զգաց, որ նրա մարմինը փայտացավ: Երկար ժամանակ Ուրախ Ռոջերը նույնքան անկենդան էր թվում, որքան արահետի վրա, իր կողքին, մեջքի վրա պառկած մարդը: Հետո նա, գրպանները փորփրելով, մատիտ ու մի հին ծրար գտավ: Մթության մեջ, այնքան թանձր, որ նա իր սեփական ձեռքերը չէր տեսնում, ծրարի վրա գրեց. «Ջեդ Հոկինսին ես եմ սպանել», ապա դրեց լրիվ ստորագրությունը՝ «Ուրախ Ռոջեր Մաք-Քեյ»:

Հետո ծրարը խոթեց Ջեդ Հոկինսի ծոցը, այնպես, որ անձրևից չթրջվի, և, որպեսզի հանցանշանների պակասություն չլինի, իր բաճկոնով ծածկեց մեռածի դեմքը:

— Մենք պետք է անենք դա, Պիտեր,— ասաց նա մի նոր, անծանոթ ձայնով ու ոտքի ելավ։— Մենք դա պետք է անենք ի սեր նրա։ Մենք նրան կասենք, որ հասանք Ջեդ Հոկինսին ու վերջ տվինք։

Վերադարձավ Ռոջերի սովորական գիտակցությունը, խորամանկությունն ու զգուշավորությունը։ Նա բուտլեգերի դին քարշ տվեց ուրիշ տեղ, շրջեց երեսնիվայր, մի կողմ շպրտեց ճակատագրական քարը, ոտքերով փորփրեց հողը, որպեսզի տուրուդմփոցի տպավորություն ստեղծի։

Երբ նա վերջացրեց ու վերադարձավ Պիտերի մոտ, որքան էլ սիրտը տխուր էր ու մռայլ, նրա ձայնի մեջ հաղթական ցնծություն կար։

— Գուցե, միշտ չէ, որ ճիշտ ենք վարվել, Կաղլիկ,— ասաց նա,— բայց այսօր մենք, թերևս, որոշ մեղքեր քավեցինք։ Եվ եթե մեզ կախեն, որ վաղ թե ուշ կարող է պատահել, կարծում եմ, մենք մեզ լավ կզգանք, գիտակցելով, որ դա արել ենք հանուն նրա։ Հը՞, Կաղլիկ։

Մի քանի ակնթարթով լուսինը դուրս եկավ ամպերի հետևից և լուսավորեց Ուրախ Ռոջերի մեռելային դեմքը։— Նրա շուրթերին մի տարօրինակ, սառը ժպիտ խաղաց, իսկ աչքերը նայում էին ուղիղ դիմացը, աչքերը այն մարդու, որն իրեն զոհաբերում էր հանուն Նեյդայի, որը աշխարհում ամեն ինչից թանկ էր նրա համար։ Երբ Ռոջերը երեք մղոն անցնելուց հետո դուրս եկավ բացատ, որի ծայրին, հենց անտառի մոտ կանգնած էր քարոզչի խրճիթը, առաջվա պես լուսինը հազվադեպ էր դուրս նայում սև ամպերի տակից։ Ամպրոպը դեռ չէր պայթել և կարծես ուժ էր հավաքում, որպեսզի մոլեգնությամբ թափվի աշխարհի վրա։ Ամպրոպը խուլ մռնչում էր, և կայծակի հատուկենտ բռնկումները վկայում էին այն մասին, որ երկնային տարերքները դարան են մտել։

Բացատը ծածկված էր անթափանց խավարով, որի մեջ փայլում էր միակ դեղին կետը՝ քարոզչի խրճիթի պատուհանը։ Արձանի նման քարանալով տեղում՝ Ուրախ Ռոջերը մի քանի րոպե լուռ նայեց այդ լուսավորված քառակուսուն։ Նրա սիրտը մեռած էր, հոգին՝ կոտրված, երազները հողմացրիվ էին եղել մշուշի պես։ Հիմա նրան մնացել էր միայն բանականությունը, մտադրությունն իրագործելու հաստատ վճռականությունը և սերը, որը երջանկության աղբյուրից դարձել էր մահացու տառապանքների աղբյուր։ Նա նայում էր ուղիղ իր դիմաց, գիտակցելով, որ ուրիշ ելք չունի։ Ո՛չ մի։ Եվ ոչ մի հույս։ Ոչ մի բան չէր կարող փոխել այն, ինչ կատարվել էր։ Նրա առջև միայն մի ճանապարհ կար։

Երբ մարդը զոհում է իր կյանքը ի սեր հայրենիքի կամ հանուն մեծ սիրո, դրանում մեծ ուժ ու վեհություն կա։ Ահա թե ինչու Ուրախ Ռոջերը իր մեջ ուժ գտավ, կտրեց անցավ խավար բացուտը, թակեց դուռը և մտավ լուսավոր սենյակը, ուր նրան էին սպասում Նեյդան և ճերմակահեր ծերունի քարոզիչը։

Նեյդայի դեմքին եղած տագնապին ու երկյուղին փոխարինեց երջանիկ ժպիտը, և, չնկատելով իր սիրեցյալի մոտ կատարված տարօրինակ փոփոխությունը, նա նետվեց դեպի Ռոջերը, ինչպես այն ժամանակ արահետում։ Ուրախ Ռոջերը գրկեց նրան, բայց այս անգամ քնքշորեն ու զգույշ, ինչպես երեխայի, որին վախենում էր ցավ պատճառել։

Շրթունքները, որ հպվեցին աղջկա այտերին, սառցի պես պաղ էին, և Նեյդան վախեցած նայեց Ռոջերի աչքերին: Ու նորից, ինչպես արահետում, Ուրախ Ռոջերը հետ հրեց նրան ու դարձավ քարոզչին: Սառնությամբ ու դաժան անողոքությամբ նա պատմեց այն մասին, ինչ կատարվել էր Նեյդայի հետ այդ երեկո. այն մասին, թե ինչպես Ջեդ Հոկինսը փորձել էր իրագործել իր դաժան մտադրությունը և նրան վաճառել Մունիին: Հետո ծոցագրպանից հանեց մի փոքրիկ կավե դրամապանակ ու մեկնեց ծերունուն:

— Էստեղ համարյա հազար դոլլար կա,— ասաց նա:— Սա իմ փողն է: Ես սա տալիս եմ ձեզ, Նեյդայի համար: Պահեք ձեզ մոտ, հոգ կտանեք նրա մասին և, գուցե, հետո...

Նեյդան երկու ձեռքով կախվեց Ռոջերի արմունկից: Աչքերը խոշորացան, դեմքը ծածկվեց դալկությամբ, և նա կցկտուր ձայնով ասաց.

— Ես ձեզ հետ կգամ... Ես կգամ ձեզ հետ...

— Ո՛չ,— ասաց Ռոջերը:— Հիմա դա անհնար է: Ես մենակ կգնամ, Նեյդա: Ես հասա Ջեդ Հոկինսի հետևից... և սպանեցի նրան:

Խրճիթի վերևում դղրդաց ամպրոպի խլացուցիչ ճայթյունը... և հատակը ցնցվեց նրանց ոտքերի տակ: Ուրախ Ռոջերը մատնացույց արեց միջնապատի վրա բացվող դուռը և խնդրեց...

— Հայր Ջոն, մեզ մենակ թողեք... մի րոպեով…

Ծերունի քարոզիչը, դրամապանակը բռի մեջ սեղմած, գլխով արեց ու անցավ հարևան սենյակը: Իր հետևից դուռը ծածկելով՝ նա տեսավ, որ Ռոջեր Մաք-Քեյը ձեռքերն առաջ մեկնեց, և Նեյդան ընկավ նրա գիրկը: Եվ այստեղ պայթեց փոթորիկը: Անձրևի հեղեղ թափվեց տանիքին: Տարերքը կտրել էր սանձերը, երկինքը անդադար որոտում էր, և կայծակի սպիտակավուն բռնկումներից գիշերն ավելի սև էր թվում: Քարոզիչը, մթության մեջ կանգնած, ունկնդրում էր փոթորկի մռնչյունին. նա փոքրիկ, ալեհեր մի ծերունի էր, որը մարդկային շատ ողբերգություններ էր տեսել իր կյանքում, որը գիտեր միայն գթալ ու կարեկցել: Եվ հիմա նա աղաչում էր աստծուն՝ լուսավորել իր միտքը: Րոպեներն անցնում էին: Հինգ... Տասը... Հանկարծ փոթորիկը մի ակնթարթ ավելի խլացուցիչ դղրդաց, բայց իսկույն էլ դարձավ առաջվանը, և ծերունին գլխի ընկավ, որ դրսի դուռը բացվեց ու փակվեց:

Նա հարևան դռնից ներս նայեց: Նեյդան, կուչ եկած, պառկած էր հատակին, շաղ եկած շագանակագույն մազերը ծածկել էին նրա դեմքն ու ձեռքերը: Պիտերը կանգնած էր դռան մոտ: Քարոզիչը մոտեցավ աղջկան, կռացավ նրա վրա և, քնքշորեն գրկելով նրա ուսերը, փորձեց մխիթարել: Նա Նեյդային ասում էր, որ հարկավոր է հույսը դնել աստծո գթասրտության վրա, իսկ խրճիթի շուրջը ամպրոպն էր որոտում...

Ուրախ Ռոջեր Մաք-Քեյը, կռացած, գլուխը փոթորկի հարվածներին դեմ արած, ավելի ու ավելի էր հեռանում խրճիթից, որտեղ թողել էր իր սիրտը: Նա գնում էր դեպի Հյուսիս:

Գլուխ ութերորդ

Դուռը, որի հետևում անհետացավ տերը, շրխկոցով փակվեց Պիտերի քթի տակ, և նա զուր տեղն սպասում էր, թե դրսից չի՞ լսվի արդյոք ծանոթ քայլերի ձայնը: Բայց նրա ականջին հասնում էին միայն անձրևի խշշոցը և ամպրոպի դղրդոցը: Անծանոթ մի զգացում փոթոթում էր նրան, ստիպում էր դողալ, երակներում տարածվում էր կրակը: Ասում են, շները երբեմն զգում են, ինչպես է անձայն ու թաքուն մոտենում մահը, և նույն բնազդը Պիտերին հուշեց, որ այդ գիշեր կատարվել է ինչ-որ սարսափելի բան, որը հիմա թաքնվել է գիշերային փոթորկի մեջ և տանջում է նրան: Պիտերը վնգստաց ու շրջվեց Նեյդայի կողմը:

Գլուխը ձեռքերի մեջ առած, երեխայի նման անզուսպ հեկեկալով, Նեյդան պառկած էր այնտեղ, ուր ընկել էր, երբ Ուրախ Ռոջերը վերջին անգամ համբուրեց նրան ու դուրս գնաց: Նրա կողքին ծնկի էր իջել ծերունի քարոզիչը, չորուկ ձեռքերով շոյում էր նրա մազերը, քաջալերանքի ու մխիթարության խոսքեր էր շշնջում, իսկ դրսում մոլեգնում էին անձրևն ու քամին, պատուհանների շրջանակները ցնցվում էին, արձագանքելով այն սահմռկեցնող ձայներին, որոնք ոռնում ու հեծեծում էին ծառերի կատարներին:

Նեյդայի հեկեկոցը ծվատում էր Պիտերին, և այնուամենայնիվ, նա մի ցանկություն ուներ միայն՝ հասնել Ռոջերի հետևից:

Նա մտածել չգիտեր, և նրան թվում էր, թե Ջեդ Հոկինսն է ցնցում պատուհանը անտեսանելի ձեռքերով, որ այդ նա է դուռը թակում քամու պոռթկումներով և գիշերային խավարը լցնում սարսափներով ու սպառնալիքներով: Պիտերն ատում էր այն մարդուն, որ պառկած էր մնացել արահետում՝ անկենդան դեմքը հորդ անձրևի տակ: Պիտերը ոչ միայն ատում էր նրան, այլև վախենում էր, դրա համար էլ նրան թվում էր, որ Նեյդան, հատակին ընկած, հենց այդ նույն վախից է լաց լինում: Հայր Ջոնը շոյում էր Նեյդայի ուսերը և ինչ-որ անհասկանալի խոսքեր ասում նրան: Պիտերն ուզում էր մոտենալ Նեյդային: Ուզում էր, որպեսզի Նեյդան նորից պինդ գրկի իրեն, ինչպես այն օրերին, երբ նա իր սիրտն էր բացում Պիտերի մոտ: Բայց ամենից շատ Պիտերն ուզում էր հասնել իր տիրոջը:

Պիտերը մոտեցավ դռանը և քիթը խոթեց շեմքի վերևի անցքը: Նա զգաց, որ փոթորիկը մոլեգնորեն ներս խուժեց անցքից, իր ռունգերը լցրեց խոնավ մշուշով: Բայց քամին իր հետ չէր բերում Ուրախ Ռոջեր Մաք-Քեյի հոտը: Պիտերն սկսեց չանգռել դուռը, հետո շուռ եկավ և տրոփող սրտով հարցականորեն նայեց Նեյդային ու քարոզչին:

Պիտերը չորսուկես ամսական էր, բայց նա այդ ամիսներն անցկացրել էր անտառի խուլ թավուտներում, իսկ վերջին շաբաթները մշտապես եղել էր Ուրախ Ռոջերի կողքին, ապրել նրա ընկերակցությամբ, ահա թե ինչու նրա ուղեղը զարգացել էր ոչ իր տարիքին համապատասխան: Իհարկե, նա ի զորու չէր հասկանալու, որ իր տերը օրենքի աչքում հանցագործ է, բայց ամենօրյա զգուշավորությունը, թաքնվելու և միշտ զգոն լինելու անհրաժեշտությունը շատ բան էին սովորեցրել նրան: Նա բնազդով զգում էր, որ այսօր երեկոյան ինչ-որ վտանգավոր բան կատարվեց: Օդն ինքը հագեցած էր այդ վտանգով: Ինքը շնչեց նրա հոտը: Դրանով էին բռնված ամպրոպի ճայթյունները, երկնային հրի բռնկումները, քամու հզոր պոռթկումները, որոնցից ցնցվում էր խրճիթն ու զնգզնգում էին

պատուհանները: Եվ Պիտերը աղոտ կերպով հասկացավ, որ ամեն ինչում մեղավորը հանգուցյալն էր, նա, որ մնացել էր այնտեղ, ճանապարհին, որ այդ մարդու պատճառով է լալիս իր տիրուհին, որ նրա պատճառով իր տերը գնաց ու էլ չի գալիս: Նա զգաց, որ ինքը պետք է գնար Ուրախ Ռոջերի հետ և խորհրդավոր ու խավար փոթորկի մեջ նրա հետ միասին կռվեր այն միակ մարդու դեմ, որին ատում էր ամբողջ սրտով, հանգուցյալի, որ ընկած էր թանձր խավարի մեջ, անտառի սև պարսպի տակ:

Քարոզիչը սփոփում էր Նեյդային, բայց երկար տարիներ ուրիշների վշտերը դարմանելուց նրա ձայնը զրկվել էր համոզելու ուժից:

— Աստված կների նրան, զավակս: Աստված իր անսահման գթասրտությամբ կների Ռոջեր Մաք-Քեյին, քանզի նա Ջեդ Հոկինսին սպանել է հանուն քո փրկության: Բայց մարդիկ չեն ների նրան: Օրենքի սպասավորները նրան փնտրում են կատարած հանցանքների համար, իսկ նա դրանց ավելացրեց և այն, ինչը օրենքը մարդասպանություն է համարում: Սակայն աստված այլ կերպ է մտածում, զավակս: Աստված կթափանցի նրա սիրտը, սիրտը այն մարդու, որը զոհաբերել է իրեն...

Նեյդան չարությամբ իրենից հեռացրեց քարոզչի փաղաքշող ձեռքը, և Պիտերը լամպի լույսի տակ տեսավ, որ նրա դեմքը քաթանի պես գունատվել էր:

— Ինձ համար միևնույն է, թե ինչ է մտածում աստված,— զայրույթով բացականչեց Նեյդան։— Աստված այսօր անարդար էր: Միստր Ռոջերն ինձ ամեն ինչ պատմեց, ասաց, որ ինքը ավազակ է, և պետք չէ, որ ես ամուսնանամ իր հետ: Իսկ ես ասացի՝ ոչ: Ես սիրում եմ նրան և նրա հետ կթաքնվեմ: Եվ մենք պայմանավորվեցինք այսօր երեկոյան գալ ձեզ մոտ, որ դուք մեզ պսակեք: Բայց էստեղ ձեր աստվածը թույլ տվեց, որ Ջեդ Հոկինսը ինձ զոռով քաշ տա տնից, տանի, որովհետև նա ինձ ծախել էր մի մարդու, որը ապրում է երկաթգծի հետևում... Եվ աստված թույլ տվեց, որ միստր Ռոջերը հասնի Ջեդի հետևից ու սպանի նրան: Նա անարդար է, ձեր էդ աստվածը: Այո՛, այո՛, այո՛: Չէ՞ որ միստր Ռոջերն ինձ սովորեցրել է, թե ինչ բան է երջանկությունը, և ես սիրում եմ նրան, նա էլ ինձ է սիրում... Աստված դաժան է, քանի որ նրան թույլ տվեց Ջեդ Հոկինսին...

Հուզմունքից ու տառապանքից նրա ձայնը խզվեց: Պիտերը, տեսնելով, որ քարոզիչը օգնեց Նեյդային վեր կենալ, նրան տարավ ննջարան ու վառեց լույսը, վնգստաց ու կամացուկ, թաքուն գնաց նրանց հետևից: Եվ երբ քարոզիչը դուրս գնաց, նրանց մենակ թողնելով իրենց վշտի հետ, Նեյդան ասես նոր միայն նկատեց շնիկին ու ձեռքերը մեկնեց նրան:

— Պիտեր,— շշնջաց նա,— Պիտե՛ր...

Ռոպեներն անցնում էին, իսկ Պիտերը լսում էր, թե ինչպես էր զարկում Նեյդայի սիրտը: Նեյդան նրան սեղմել էր կրծքին, և Պիտերը նայում էր նրա սիրունիկ, դալուկ դեմքին, դողդողացող շուրթերին, կապույտ աչքերին՝ հառված պատուհանի քառակուսուն, որի մյուս կողմում սևին էր տալիս գիշերը: Փոթորիկը կարճ ժամանակով հանդարտվեց: Լռություն իջավ: Բայց դա չարագույժ լռություն էր, իսկ այդ լռությունը խախտում էր միայն պատի ժամացույցի տկտկոցը, որը նույնքան հին էր ու հոգնած, որքան ինքը քարոզիչը: Եվ

Նեյդան, տեղավորվելով հայր Ջոնի մահճակալի եզրին, արդեն նման չէր նախկին դեռատի աղջկան, որ «մտել էր տասնութի մեջ»: Այդ օրը եղևնուտի բացատում, որտեղ անուշ բուրում էր եղրևանին, իսկ խոտերի մեջ թաքնված էին մանուշակն ու կարմիր մորին, նա հասունացավ: Այդ պահին առաջին անգամ կյանքում Նեյդան իրեն երջանիկ էր զգում: Նա լսում էր Ուրախ Ռոջերին, որը նրան պատմում էր այն մասին, ինչը վաղուց արդեն գիտեր ինքը. որ Ռոջերն ավազակ է և այստեղ թաքնվել է ոստիկանությունից, որը այդ ամբողջ ժամանակ նրան փնտրում է Հյուսիսում: Ռոջերն հավատացնում էր Նեյդային, որ ինքը արժանի չէ նրա սիրուն և վերջին սրիկան կլինի ինքը, եթե չհրաժարվի Նեյդայից: Իսկ Նեյդայի հոգում աճեց հրճվանքի ուժը: Նա մեկընդմիշտ, առանց տատանվելու և առանց երկյուղի, կատարեց իր ընտրությունը: Եվ ահա այժմ, երբ նա չտեսնող հայացքով ապակու միջով նայում էր անձրևաջրի շիթերին, նրա մեջ արթնացավ նույն ուժը, բայց էլ ավելի հզոր, քան երջանկության ժամերին, արթնացավ թախիծը սիրած մարդու համար և ճակատագրական ծուղակից ելք գտնելու կատաղի ցանկությունը:

Նրա հիշողության միջով սրընթաց անցավ իր ապրած ամբողջ կյանքը. ծանր տառապանքով լի տարիներ, որ անցկացրել էր Ջեդ Հոկինսի ու նրա ծեծկված, հնազանդ կնոջ խրճիթում. ձմռան ու ամռան ամիսները, որոնք անլույս վշտի ու մենության դարեր էին թվացել, որովհետև աշխարհում նրա միակ բարեկամը եղել էր անտառը: Փոթորիկը նորից զարկվեց պատուհանին, իսկ Նեյդան հիշեց այն օրը, երբ մի քանի ամիս առաջ պատահականորեն գտել էր Ռոջեր Մաք-Քեյի թաքստոցը: Այդ օրվանից Ռոջերը նրա համար դարձել էր ամեն ինչ, և Նեյդան ապրում էր ինչպես դրախտում: Ռոջերը նրա համար դարձավ հայր, մայր, եղբայր, իսկ հիմա,— և դա ամենից կարևորն էր,— սիրելին: Բայց հենց այդ նույն օրը, երբ Ռոջերն առաջին անգամ գրկեց իրեն, երբ իրենք այնպես երջանիկ էին, Ջեդ Հոկինսը որոշեց իրագործել իր սև մտադրությունը, և Ուրախ Ռոջերը սպանեց նրան: Նեյդան, ճչալով, այնպես արագ ոտքի ելավ, որ Պիտերը շրմփաց հատակին: Նա շփոթված, երախը բացած, աչքերը հառեց Նեյդային: Աղջիկը հևում էր: Նրա վտիտ մարմինը ցնցվում էր: Հանկարծ Պիտերը տեսավ, որ նրա աչքերը բոցավառվեցին, իսկ այտերը ողողվեցին թունդ շառագույնով: Նեյդան կռացավ Պիտերի կողմը և շշնջաց, ջանալով, որ քարոզիչը լսի իր խոսքերը:

— Պիտեր, այս բոլորը ճիշտ չէ: Ջեդ Հոկինսին պետք էր սպանել: Տեղն էր նրան... Պիտեր, ոստիկանությունը թող փնտրի նրան: Միևնույն է, մենք կգնանք նրա հետևից: Կգնանք, լսո՞ւմ ես:

Նեյդան նետվեց դեպի պատուհանը: Պիտերը նայում էր, թե նա ինչպես սկսեց բացել փեղկը՝ շնչակտուր լինելով ու ջղաձիգ շշնջալով.

— Մենք կգնանք նրա հետ, Պիտեր: Կգնանք... ինչ էլ ուզում է լինի..., թեկուզ մեզ մահ սպառնա...

Զգուշությամբ, դյույմ առ դյույմ, նա բացեց փեղկը: Փոթորիկը ներխուժեց սենյակ: Քամին հանգցրեց լամպը, բայց հենց այդ ակնթարթին Նեյդան տեսավ, որ պատից կախված է էսկիմոսի դանակը:

Նա շոշափելով գտավ դանակը, սեղմեց ձեռքի մեջ և պատուհանից դուրս սողոսկեց: Պիտերը մի ոստյունով հասավ նրան: Խավարը թանձրացավ նրանց շուրջը, բայց նրանք գտան արահետը, որ տանում էր դեպի Հյուսիս, այդպիսի գիշերին Ուրախ Ռոջերը չէր կարող կարճ ճանապարհով գնալ անտառի միջով: Նրանց հասավ քարոզչի ձայնը, որ կանչում էր պատուհանից: Բայց այդ միջոցին ամպրոպն այնպես դղրդաց, որ գետինը ցնցվեց նրանց ոտքերի տակ, և փոթորիկը մռնչաց եռապատկված ուժով: Կայծակի կուրացուցիչ բռնկումները ճեղքեցին երկինքը: Ծառերը տնքացին ու ճռթճռթացին, հորդ անձրև տեղաց, բայց Նեյդան շարունակեց վազել արահետով, ձեռքով ամուր սեղմած դանակը, իր միակ պաշտպանը խավարի մեջ թաքնված սարսափներից, իսկ կողքից, առանց մի քայլ առաջ անցնելու, վազում էր Պիտերը:

Բայց նա Նեյդային տեսնում էր այն ժամանակ միայն, երբ փայլատակում էր կայծակը. Նեյդայի թաց մազերը զզզված էին, շորը կպել էր մարմնին, լայն բացված աչքերը հառված էին առաջ: Իսկ երբ կայծակի լույսին փոխարինում էր թանձր խավարը, Պիտերը լսում էր նրա սայթաքող ոտնաձայները, ծանր շնչառությունը, երբեմն էլ սուլող շրշյուններ. այդ ճյուղերն էին զարկվում Նեյդայի դեմքին կամ կրծքին: Անձրևը լվացել էր տիրոջ հոտը, սակայն Պիտերը գիտեր, որ իրենք վազում են, որպեսզի հասնեն Ուրախ Ռոջերին: Նա ուզում էր շտապել, ամբողջ թափով առաջ նետվել, բայց հաղթահարեց այդ ցանկությունը, որովհետև Նեյդան սայթաքում էր, ծանր շնչում, իսկ նրա դեմքը երկնքի բռնկումների մեջ շատ սպիտակ էր ու տարօրինակ: Բնազդը Պիտերին հուշում էր, որ Նեյդան, ինչ գնով ուզում է լինի, պետք է հասնի Ուրախ Ռոջերին: Եվ վախենում էր, թե չլինի հանկարծ կանգ առնի կես ճանապարհին: Պիտերը փորձեց հաչալ, ոգևորել նրան, ինչպես հաչում էր այն ժամանակ, երբ նրանք առաջկտրուկի վազում էին Կրեգից այն կողմ ընկած կանաչ մարգագետիններում: Բայց անձրևը խանգարեց: Անձրևը ծեծում էր նրա մեջքը, ջրափոսերի ջուրը շփում էր նրա աչքերի մեջ, լցնում կոկորդը, հենց որ բերանը բաց էր անում: Միևնույն է, նա ջանում էր մնալ Նեյդայի կողքին, և Նեյդան երբեմն-երբեմն զգում էր նրա բրդոտ կողերի հպումը:

Այդ առաջին րոպեներին, երբ Նեյդան սլանում էր իր սիրեցյալի հետևից, նա միայն մի ձայն էր լսում՝ սեփական սրտի ձայնը, իր ողջ էությամբ, ձայն, որը, խլացնելով ամպրոպի դղիրդն ու քամու ոռնոցը, առաջ էր քշում նրան, անգթորեն ստիպելով հաղթահարել հոգնածությունն ու թուլությունը: Ուրախ Ռոջերն ընդամենը նրանցից կես ժամ առաջ էր դուրս եկել: Եվ Նեյդան պետք է հասներ նրան, հասներ հնարավորին չափ շուտ, քանի դեռ անտառը չէր կլանել Ռոջերին, քանի դեռ նա ընդմիշտ չէր հեռացել Նեյդայի կյանքից:

Խավարի պատնեշը չէր վախեցնում Նեյդային: Երբ ճյուղերը զարկվում էին նրա դեմքին, կառչում էին մազերից, նա մի կողմ էր տանում դրանք և, սայթաքելով, վազում առաջ: Երկու անգամ նա ընկավ տապալված ծառերի վրա, դժվարությամբ դուրս եկավ ոստերի միջից, ամբողջովին չանգռոտված, և տնքալով մոտ կանչեց Պիտերին, ծանր դանակը ձեռքի մեջ սեղմած: Թվում էր, տարերքը իր վայրագ սանձարձակությամբ հենց Նեյդայի դեմ էր ելել, ծաղրելով իր անօգնական զոհին, դաժանորեն հրճվելով այն կենդանի խաղալիքով, որը հանդգնել էր մարտահրավեր նետել իրեն: Պիտերը դեռ երբեք այդպիսի որոտ չէր լսել: Նրա ոտքերի տակ գետինը դողում-ցնցվում էր ամպրոպից, որի

ճայթյունները ոչ մի ակնթարթ չէին դադարում, անվերջ փայլատակում էին կայծակները, ճիշտ ինչպես արագաձիգ հրանոթի համազարկեր, և վերջիվերջո, այլևս չդիմանալով անձրևի ու քամու կատաղությանը, Նեյդան անզոր ընկավ գետնին ու ափլփելով փնտրեց Պիտերին:

Պիտերը սեղմվեց նրան, թաց ու դողդոջուն: Նրա տաք լեզուն գտավ Նեյդայի ափը, իսկ Նեյդան, պինդ գրկելով Պիտերին, խոնարհվեց վրան, և նրա գանգուրները խառնվեցին ցեխին ու թաց խաշամին: Պիտերը լսեց նրա ծանր շնչառությունը... Եվ այստեղ ամեն ինչ շուռ եկավ: Ամպրոպը քաշվեց դեպի արևելք, նրա հետ էլ կայծակները: Ծառերի կատարներին քամին կամաց-կամաց նվազեց և շուտով բոլորովին հանդարտվեց, իսկ տեղատարափը փոխվեց տաք մանրամաղ անձրևի: Հուլիսյան ամպրոպը անհետացավ նույնքան անսպասելի, ինչպես անսպասելի վրա էր հասել: Նեյդան դժվարությամբ ելավ տեղից ու դանդաղ, ոտքերը քարշ տալով, առաջ գնաց:

Փոթորկի հետ միասին հանդարտվեցին նաև Նեյդայի խռովահույզ մտքերը, նրա ուղեղն ազատվեց վախի ու շփոթմունքի ճնշող ծանրությունից: Նա սկսեց ավելի հանգիստ մտածել, և հանգստության հետ եկան նաև հույսը, վստահությունն ու նոր ուժերը: Նեյդան գիտեր, որ Ուրախ Ռոջերը գնում է այդ արահետով. անանցանելի անտառի միջով դեպի Հյուսիս տանող ուրիշ արահետ չկար: Կես ժամում նա չէր կարող շատ հեռանալ: Իսկ գուցե մոլեգնած փոթորկից թաքնվե՞լ է որևէ մեծ ծառի տակ: Նեյդայի սիրտը լցվեց ուրախությամբ: Չէ՞ որ եթե այդպես է, նշանակում է, նա մոտերքում է: Նեյդան կանգ առավ, խոր շունչ քաշեց ու ձայն տվեց նրան: Նա երեք անգամ կրկնեց իր կանչը, բայց ի պատասխան լսվեց միայն Պիտերի վնգստոցը: Մի քանի րոպե անց նորից կանչեց Ռոջերին: Եվ նորից խավարի միջից արձագանք չեղավ:

Արահետը իջնում էր դեպի ձորակ, և Նեյդայի ոտքերի տակ ճլմփում էր ճահճացեխը: Աղջիկը մինչև կոճերը խրվում էր ցեխի մեջ, սայթաքում էր խոր ջրափոսերում, որտեղ ջուրը հասնում էր մինչև Պիտերի փորատակը: Միայն քառորդ ժամ անց վերջապես նրանք իրենց ոտքի տակ ամուր գետին զգացին: Այդ ընթացքում արդեն չքացավ վերջին ամպը: Անձրևը դադարեց: Ամպրոպը խուլ ճայթեց հեռու-հեռվում: Հանգան փայլակների վերջին բռնկումները, և ծառերը մեղմ խշշացին, ասես ուրախանալով այն բանից, որ փոթորիկն անցավ: Նեյդան ու Պիտերը իրենց գլխավերևում և շուրջը լսում էին ջրերի քչքչոցն ու թափվող կաթիլների շրշյունը. լալիս էին թրջված ճյուղերը, բլթբլթում էին ջրափոսերը, կարկաչում էին առվակները՝ ցայտեր շաղ տալով նրանց ոտքերի տակ: Ամպերի արանքից դուրս նայեց լուսինը:

— Մենք կհասնենք նրան, Պիտեր,— աղեկտուր ձայնով ասաց Նեյդան:— Հիմա մենք կհասնենք նրան: Չէ՞ որ նա, հավանաբար, այստեղ է, մոտերքում...

Եվ Պիտերը անշարժացավ, ականջ դնելով, թե Ռոջեր Մաք-Քեյը չի՞ արձագանքի արդյոք նրա կանչին:

Նրանց գլխավերևում լողում էր հուլիսյան գիշերվա լիալուսինը, և փոթորկի մոլեգնությունն արդեն մոռացվել էր: Փոթորիկը ջարդել ու ողողել էր անտառը, բայց հիմա

բոլոր ծառերը մաքրվել էին փոշուց ու փտռակից, լվացվել էին յուրաքանչյուր ծաղիկ ու յուրաքանչյուր ցողուն: Հողից բարձրանում էր մատղաշ կանաչի անուշ բուրմունքը, մամուռի և նեխած փշատերևի թմրեցնող շունչը, և ջինջ օդում զգացվում էր խեժի բույրն ու խավոտ ճյուղերի անորսալի սուր հոտը, ճյուղեր, որոնք միահյուսվել, անվերջանալի վարագույրներ ու շողշողուն ծածկույթներ էին կազմել: Թվում էր, զորավոր անտառը լի էր անտեսանելի ու խորհրդավոր կյանքի թրթիռով, անաղմուկ, բայց բաբախող, շնչող, թարմացած օդի բուժիչ բալասանն ըմբոշխնող հանդարտությամբ, որը եկել էր փոխարինելու կայծակին ու որոտին, քամու մռնչոցին ու տեղատարափին: Լուսինը, ինչպես տիրակալ, որի կամքով կատարվել էր այդ ամենը, նայում էր ներքև հաղթական ցնծությամբ: Ոչ փոշին, ոչ մշուշը, ոչ անտառային հրդեհների ծուխը չէին նսեմացնում նրա փայլը, և անտառում լույս էր, ինչպես լինում է լուսաբացին: Լուսնի շողերը ոսկե ու արծաթե շերտերով փռվել էին ծառերի վրա, թանձր ստվերներ գցելով այնտեղ, ուր չէին կարողանում թափանցել, և լույսի շերտեր սփռելով այնտեղ, ուր անտառային ծածկույթը թույլ էր տալիս թափանցել: Արահետը, որ տանում էր դեպի Հյուսիս, շողշողում էր արծաթի փայլով, որը ճեղքում էր անտառը՝ երկնքից մինչև գետին:

Թաց գետնին հստակորեն երևում էին Ուրախ Ռոջերի հետքերը, իսկ բացատում, որը մաքրել էր ինչ-որ որսորդ՝ հոլիկ սարքելու համար, Ուրախ Ռոջերը կանգ էր առել շունչ քաշելու... և շարունակել էր ճանապարհը: Քարոզչի խրճիթը լքելուց երեք ժամ հետո Նեյդան ու Պիտերը դուրս եկան այդ բացատը:

Նրանք գնում էին դանդաղ. լուսնի լույսի տակ աղջիկը կարծես անմարմին ստվեր լիներ: Բացատում կանգ առան, և Պիտերի սիրտը ցավից ճմլվեց, երբ տիրուհին նորից կանչեց Ուրախ Ռոջերին: Դա արդեն ոչ թե կանչ էր, այլ հեկեկոց: Նեյդան այլևս ուժ չուներ, նա հազիվ էր ոտքի վրա մնում, նրա դեմքը սրվել ու գունատվել էր հոգնածությունից, սեղմված շուրթերն ու քարացած հայացքը խոսում էին նրա տանջալից հուսահատության մասին: Նա այլևս ոչ մի բանի վրա հույս դնել չէր կարող, և ինքը դա գիտեր, երբ, գետնին ընկած, հեկեկալով կանչում էր նրան, ում ոտնահետքերն այնպես պարզ դրոշմված էին արահետին ու գնում էին հեռու, դեպի անտառի մութ թավուտները:

— Պիտեր, ես այլևս ուժ չունեմ քայլելու,— տնքաց նա:— Ուժ չունեմ... քայլելու ...

Նեյդան ձեռքերը խաչեց կրծքին: Պիտերը տեսավ, թե լուսնալույսի տակ ինչպես է փայլում էսկիմոսական դանակի ոսկրե պատյանը, տեսավ, որ նրա շուրթերը անձայն ինչ-որ բան են շշնջում, բայց ոչ իր անունը լսեց, ոչ էլ որևէ բառ: Պիտերը վնգստաց ու դանդաղ առաջ գնաց՝ կածանը հոտոտելով: Նա հստակորեն ճանաչեց Ուրախ Ռոջերի հոտը, և մի տաք դող համակեց նրան: Նա հետ նայեց ու կամացուկ վնգստաց՝ իր տիրուհուն հորդորելով վեր կենալ:

— Պիտեր,— կանչեց Նեյդան:— Պիտե՛ր:

Պիտերը վերադարձավ նրա մոտ: Նեյդան պատյանից հանեց դանակը, և սառը պողպատը փայլատակեց նրա ձեռքում: Նեյդայի աչքերը շողացին, նա բռնեց Պիտերին, մոտեցրեց իրեն, և Պիտերը լսեց, թե ինչպես արագ ու ընդհատ-ընդհատ զարկում է նրա սիրտը:

— Պիտե՛ր, Պիտե՛ր,— մրմնջաց նա։— Ի՜նչ լավ կլիներ, որ դու խոսել իմանայիր։ Ի՜նչ լավ կլիներ, որ դու հասնեիր միստր Ռոջերին ու ասեիր, որ ես էստեղ եմ, որ նա պետք է վերադառնա...

Նրա ձեռքերը ջղաձգորեն սեղմվեցին, և Պիտերն զգաց, որ նա ամբողջ մարմնով ցնցվում է։

— Պիտե՛ր,— ասաց նա,— դու այդ բանը կանե՞ս։

Մի քանի վայրկյան թվաց, թե Նեյդան չի շնչում։ Հետո Պիտերը լսեց, թե ինչպես ճչաց նա, կարծես ինչ-որ բան էր մտածել։ Պիտերին բռնած ձեռքերը բացվեցին, և լուսնի դեղնավուն լույսի տակ փայլեց դանակը։

Պիտերը ոչինչ չհասկացավ, բայց նա գիտեր, որ ուշադիր պետք է հետևի իր տիրուհու յուրաքանչյուր շարժումին։ Նեյդան խոնարհեց գլուխը, և համարյա չորացած վարսերը շողշողացին լուսնի տակ։ Մատները խրվեցին զզզզված խոպոպների մեջ, և Պիտերը տեսավ դանակի փայլկտոցը, լսեց նրա ճռնչոցը, իսկ հետո Նեյդայի ձեռքում տեսավ կտրված մազափունջը։ Պիտերը բոլորովին շփոթվեց։ Իսկ Նեյդան դանակը շպրտեց, չգիտես ինչու պատառոտված շորից մի երկար ծվեն պոկեց և խնամքով նրա մեջ փաթաթեց կտրված խոպոպը։ Հետո, նորից մոտ քաշելով Պիտերին, փաթեթը կապեց նրա վզին, ապա չթի էլի մի քանի նեղ շերտեր կտրեց և այնպես պինդ փաթաթեց նրա վզին, որ Պիտերի շունչը բռնվեց։

Եվ այդ ամբողջ ժամանակ Նեյդան խոսում էր նրա հետ հուզված, կցկտուր ձայնով, այնպես որ արյունը եռաց Պիտերի երակներում, իսկ նրա հուզմունքը գնալով աճում էր ու աճում։ Նեյդան, ավարտելով, ոտքի ելավ և, օրորվելով, ինչպես օրորվում էին ծառերի ստվերները, մատնացույց արեց լուսնի լույսով ողողված արահետը։

— Առաջ, Պիտեր,— ցածրաձայն ասաց նա։— Արա՜գ։ Վազի՛ր նրա հետևից, Պիտեր, հասիր նրան, հետ բեր։ Միստր Ռոջերին... Ուրախ Ռոջերին... Առա՜ջ։ Պիտեր։ Առա՜ջ։

Պիտերը այդպիսի հրամանների ծանոթ չէր։ Բայց նա սկսեց հասկանալ, թե ինչ են ուզում իրենից։ Նա հոտոտելով գտավ Ուրախ Ռոջերի հետքը, արագ գլուխը բարձրացրեց ու տեսավ, որ տիրուհին գոհ է իրենից։ Նեյդան շտապեցրեց նրան։ Պիտերը շարունակեց հոտոտել հետքերը, որոնք առաջ էին գնում, իսկ Նեյդան քաջալերում էր նրան ու կրկնում. «Շո՛ւտ, շո՛ւտ»։

Բնազդն ու խելամտությունը Պիտերին հուշեցին, որ ինքը մի բան պիտի անի, և ներքուստ ամբողջովին լարվեց հիացմունքից։ Նեյդան ուզում է, որ ինքը գնա։ Նա ուզում է, որ ինքը հասնի Ուրախ Ռոջերին, և իր վզին կապեց այդ լաթի կտորը, որը պետք է տանի Ուրախ Ռոջերին։ Պիտերը հաչաց ուրախ ու հուզված և, հանդարտ շորորալով, վազեց արահետով։ Դա չգիտակցված ստուգում էր։ Բայց Նեյդան չկանչեց նրան։ Պիտերը ականջները սրեց, սպասելով հետ դառնալու հրամանի, բայց տիրուհին լուռ էր։ Եվ Պիտերը ցնծաց։ Նա չէր սխալվել։ Ինքը Նեյդային չի լքում։ Չի փախչում նրանից։ Նեյդան ինքն է ուզում, որ Պիտերը վազի Ուրախ Ռոջերի հետևից։

Գիշերը կլանեց Պիտերին: Նա ձուլվեց լուսնի արծաթե շողերին, գիշերվա քմահաճ ստվերներին, նրա լռությանն ու գաղտնիքներին, նրա անորոշ սպասումներին: Պիտերը գիտեր, որ փոթորիկը շատ դժբախտություններ էր բերել իր հետ, և առաջվա պես զգաց այդ գիշերային աշխարհի ողբերգության մոտիկությունը, որի միջով վազում էր ինքը: Նա ուժերը լրիվ չէր լարել և, այնուամենայնիվ, եռապատիկ անգամ ավելի արագ էր վազում, քան քիչ առաջ: Նա հիշում էր զգուշության մասին, ժամանակ առ ժամանակ կանգ էր առնում, որպեսզի ականջ դնի, և, չնայած շատ էր ուզում, ոչ մի անգամ չվնգստաց անհամբերությունից: Հիմա, երբ Պիտերը անտառում մնացել էր մենակ, նրա ողջ էությունը պարզորոշ ընկալում էր իր շուրջը փռված կյանքի բաբախը: Նա գիտեր, որ թավ անտառի Գիշերային ամբոխը չի քնում: Փափուկ, մագիլավոր թաթերով, անաղմուկ թևերով, ժանիքներն ու կտուցները սրած գիշատիչները գաղտագողի գիշերվա խավարի մեջ են սողոսկում: Նրանք ստվերների նման սողոսկում են անտառի լուսնակամարների տակ կամ ճախրում են ծառերի արանքում, սպասելով որսին, պատրաստվելով խժռել իրենցից թույլ արարածներին: Պիտերը գիտեր այդ մասին: Եվ փորձն ու բնազդը նախազգուշացրին նրան: Ահա թե ինչու նա, քանի դեռ վազում էր Ռոջեր Մաք-Քեյի հետքով, ուշադիր զննում էր խավարը, հոտոտում էր օդը և կրճտացնում ատամները:

Բայց նրան համակել էր ոչ միայն արկածների ծարավը: Նրա մեջ ապրում էր իր առաքելության պատասխանատվության զգացումը, թեև այն, ինչ մարդը ներողամտորեն անվանում էր կենդանու բանականություն, այստեղ բնավ էլ գործ չուներ: Պատասխանատվության այդ զգացումը առաջացել էր այն բանից, որ նրա վիզը պինդ փաթաթված էր խունացած կտորներով: Դրանք կարծես թե տիրուհու մի մասնիկն էին, նրա հոգու մասնիկը, նրա համար շատ կարևոր մի բան, որ վստահված էր իրեն: Եվ հիմա ողջ զգուշավորությունը, ողջ արիությունը պետք էին Պիտերին այն բանի համար, որպեսզի պահպաներ այդ կտորները, քանի դրանք չէին ընկել Ռոջեր Մաք-Քեյի ձեռքը: Իսկ պահպանել՝ նշանակում էր կռվել: Դա օրենք էր, որին հետևել էին նրա վայրի նախնիների բազմաթիվ սերունդներ: Ահա թե ինչու նա ականջ էր դնում ու հոտոտում էր, և արյունն ավելի ուժգին էր տարածվում նրա երակներում, քանի դեռ վազում էր Ռոջերի հետքով: Նա գոռոց ու կատվի արագությամբ, թեթև շրշյուն լսելով, հետ շրջվեց, բայց դա պարզապես ճյուղն էր շտկվել, որին փոթորկի ժամանակ իրենց տակ սեղմել էին հարևան ճյուղերը: Առջևում, արահետի վրա, փայլատակեց կայծակը, և Պիտերը խուլ գոռոց: Դա լուսանն էր: Պիտերը քարացավ տեղում, իսկ հետո զգուշությամբ շրջանցեց լուսավորված կետը, որի մեջ մի պահ հայտնվել էր անտառային ավազակը՝ զինված քսան կեռ դաշույններով:

Հիմա, երբ շնիկը մենակ էր մնացել անտառում, և մարդու ներկայությունը, մարդու քայլերն ու հոտը այլևս չէին փախցնում վայրի արարածներին, նա նկատեց, որ անտառի գիշերային կյանքը ավելի ու ավելի էր մոտենում իրեն: Մոխրագույն բվերն արդեն խախտել էին լռությունը, երբ անցավ մոտով. նրանք ֆշշացնում էին ու չարագույժ կափկափում հզոր կտուցներով: Պիտերը թեթև խշխշոց լսեց. թփերի միջից, որտեղ թաքուն սողոսկում էին մանր կենդանիները, անճոռնի ոտքերի կտկտոց լսեց և սուր հոտ առավ. դա փշախոզն էր, որ գնում էր կեսգիշերին կաղամախու կեղև կրծելու: Հետո արահետը վերջացավ, և Ուրախ Ռոջերի հոտը նրան տարավ ուղիղ անտառի միջով, որը լի էր լուսնի վտակներով ու

լճակներով, անորոշ ստվերներով ու խավարի սև խորխորատներով: Այժմ Պիտերը ներխուժեց Գիշերային ամբոխի տիրույթների հենց սիրտը: Նա լսեց գայլի ոռնոցը, որ լի էր միայնության թախիծով ու մահվան սպառնալիքով. նա առավ աղվեսի զզվելի հոտը, որը հետապնդում էր որսին, աշխատելով այնպես անել, որ քամին դիմացից փչի. լիակատար անդորրի պահին առջևի սև խորխորատից նրան հասավ ատամների կրճտոց ու խոթխոթոց. դա կզաքիսն էր, որ, աչքերը փայլեցնելով, կաքավի հետ իր հաշիվն էր մաքրում: Իսկ կտուցների կափկափյունը գնալով ավելի չարագուշակ էր դառնում, գորշ ստվերները սլացան հենց նրա գլխավերևով, և նա լսեց փոքրիկ անպաշտպան կենդանիների հոգեվարքի ճիչերը՝ անտառային մկնիկի ծվծվոցը, ինչ-որ մեկի սուր ատամների տակ արթնացած ցերեկային թռչնի ճղճղոցը, օդային մի ավազակի կողմից բռնված ճագարի վայնասունը: Եվ հանկարծ ուղիղ իր դիմաց, լուսնային լճի կենտրոնում Պիտերը մի հրեշ տեսավ: Դա մի հսկայական արջ էր, երկու հաստլիկ քոթոթների հետ, որոնք գլուխկոնծի էին տալիս ու զզվռտվում կապտավուն լույսի մեջ: Պիտերը երբեք արջ չէր տեսել ու չգիտեր ինչ բան է արջը: Բայց արջը, որը անսպասելիորեն գորշ քիթը դուրս հանեց սառը, փխրուն հողի միջից, որտեղ համեղ արմտիք էր փնտրում, գիտեր ինչ բան է շունը: Նա իր կյանքում շատ անգամ էր շուն տեսել, լսել էր նրանց հաչոցն ու գիտեր, որ նրանք միշտ ընկերակցում են մարդուն: Դրա համար էլ ռունգերով օդ քաշեց ու բարձր փնչացրեց, որը ներգործեց քոթոթների վրա, ինչպես մտրակի հարվածը: Նրանք նետվեցին դեպի մայրը, մեկ-մեկ ապտակ ստացան, որը ցույց էր տալիս, թե որ կողմ պետք է փախչեն, և երեքն էլ, խռիվը խշրտացնելով, անհետացան մթության մեջ:

Հակառակ սիրտ ճմլող վախին, Պիտերը չդիմացավ և ցնծությամբ հաչաց: Ի՜նչ լավ էր, որ հենց այն պահին, երբ նրա արիությունն սկսել էր թուլանալ, իրեն տեսնելուն պես հրեշը ծլկեց: Եվ Պիտերը, պոչը վեր տնկած, հաղթական տեսքով վազեց առաջ:

Եվս քառորդ մղոն անցնելով, նոր լուսնալճի մեջ նա տեսավ այծյամի լեշը, որ գայլն էր պատառոտել: Ինքը գայլը, կուշտ կերած, արդեն հեռացել էր, և հիմա երկու խոշոր բվեր ծվատում էին նրա խրախճանքի մնացորդները: Դրանք արու և էգ բվեր էին, իսկական բվային ցեղի Գարգանտյուաներ: Երբ Պիտերը անսպասելիորեն հայտնվեց նրանց առջև, բվերը խոժոռ չարությամբ վեր ճախրեցին. նրանց մագիլներն ու կտուցները կարմրել էին արյունից, իսկ թանձրամիտ ուղեղները լի էին անհագ ագահությամբ: Պիտերն այդ ընթացքում արդեն վարժվել էր չվախենալ բվերից: Ճիշտ է, նրանց կտուցների կափկափոցի մեջ, մանավանդ, երբ դա լսվում էր խավարից, ինչ-որ չարագույժ բան կար, բայց այդ թռչունները երբեք նրա վրա չէին հարձակվում և գերադասում էին թռչել հեռանալ նրա ճանապարհից: Դրա համար էլ, երբ բվերը նստեցին սև եղևնու ճյուղերին, ուղիղ նրա գլխավերևում, դա չխանգարեց, որ Պիտերը հոտոտեր մեռած այծյամին: Թարմ մսի հոտից նրա մեջ արթնացավ քաղցը: Նա սկսեց կրծել փափուկ կողը, որ պատառոտել էր գայլը. ժամանակ առ ժամանակ Պիտերը խուլ գոմռում էր, ասես հայտարարելով, որ ինքն է լեշի տերը, և այդ գոմռոցները հասնում էին մինչև եղևնիների կատարները:

Ի պատասխան լսվեց թևերի շփշփոց, և լուսնի շողերի մեջ փայլատակեց մի բու, ապա՝ մեկ ուրիշը: Մի քանի վայրկյան բվերը գորշ ուրվականների պես անաղմուկ ճախրում էին Պիտերի գլխավերևում: Հետո արուն պարսատիկից նետված քարի նման արագորեն

ճեղքեց արծաթագույն մշուշն ու նետվեց Պիտերի վրա: Նրանք ցած գլորվեցին լեշի վրայից, և առաջին իսկ ակնթարթին Պիտերը բոլորովին շշմեց ծոծրակին հասցրած հզոր թևերի ու սուր կտուցի հարվածներից: Թևավոր Գարգանտյուան վրիպեց, չկարողացավ մագիլներով միանգամից բռնել իր զոհին և հիմա փորձում էր ուժասպառ անել նրան, առանց օդ բարձրացնելու: Նա Պիտերին ծեծկում ու ծվատում էր թևերով ու կտուցով: Եվ հանկարծ բվի մագիլները խրվեցին Պիտերի վզին փաթաթած լաթերի մեջ: Պիտերի սարսափն ու շվարմունքը մի ակնթարթում փոխվեցին մարտական կատաղության: Նա ճարպկորեն շրջվեց ու ատամները խրեց բվի փետուրների մեջ, որոնք այնքան խիտ ու փափուկ էին, որ նրան ոչ մի կերպ չհաջողվեց խոցելի տեղ գտնել: Պիտերը, գռմռալով ու ճանկռելով, պոկեց նրա կրծքի փափուկ աղվամազե ծածկույթը: Բվի սուր մագիլները, լաթը պատռելով, խրվեցին Պիտերի վիզը, բայց նույն պահին էլ Պիտերի ծնոտները իրենց մեջ առան հակառակորդի թաթը: Նա սեղմեց ատամները, խրոթ, կտրվեց ջիլը, ոսկորը ճռթճռթաց, և բուն, ցավից ու սարսափից խռպոտ ֆշշացնելով, լարեց բոլոր ուժերը, որպեսզի ազատվի: Նրա հզոր թևերի լայնությունը հասնում էր հինգ ֆուտի, և վիրավոր Գարգանտյուան ուր որ է օդ կբարձրացներ Պիտերին, բայց նրա ճանկերը խճճվեցին լաթերի մեջ, և երկուսն էլ, մի կծիկ դարձած, նորից փլվեցին գետնին: Պիտերը, գրեթե չհասկացավ, թե ինչ կատարվեց դրանից հետո, միայն մի բան զգաց՝ իրեն մահ է սպառնում: Նա աչքերը փակեց և շարունակեց քաշքշել ու պլոկել ատամների մեջ սեղմած թաթը: Թևերը խլացնող աղմուկով շփշփացնում էին հենց նրա գլխավերևում, երկաթյա կտուցը ծվատում էր նրա մարմինը, և չորս կողմն արդեն ծածկված էր արյան բծերով: Վերջապես ինչ-որ բան տեղի տվեց: Մի սահմռկեցնող ճիչ լսվեց, որը նման չէր սովորական գազանի կամ թռչնի ճիչին, հզոր Գարգանտյուան վեր թռավ ու ընկավ եղևնու վրա՝ ջարդելով չորացած ճյուղերը:

Պիտերը դժվարությամբ ոտքի ելավ՝ բվի թաթը դեռևս ատամների մեջ: Նա կիսով չափ կուրացել էր, ամբողջ մարմինը կարծես ծվեն-ծվեն էր եղել ու արնահոսում էր, բայց, ցավն ու սարսափը խեղդելով, եկավ արբեցնող գիտակցությունը, որ ինքը հաղթել է: Նոր հարձակումից վախենալով՝ Պիտերը կպավ գետնին և ամեն ինչի պատրաստ, լարեց մկանները, բայց հարձակում չեղավ: Լսվում էր, թե նրա խեղված, ջարդված հակառակորդն ինչպես է թպրտում ու ֆշշացնում ճյուղերի արանքում: Պիտերը դանդաղ հետ-հետ գնաց, աչքը չկտրելով քիչ առաջվա մարտադաշտից, և շուռ եկավ, որպեսզի Ուրախ Ռոջեր Մաք-Քեյի հետքերով շարունակի ճանապարհը միայն այն ժամանակ, երբ խավարի պատնեշը նրան կտրեց ճակատագրական բացատից:

Նրա քիչ առաջվա պարծենկոտ գոռոզությունը կորավ: Գարգանտյուայի հետ ունեցած գոտեմարտը արժանի պատիժ էր իր ինքնավստահության համար, և այժմ Պիտերը գողեգող անցնում էր մութ ծառաբների միջով, ճիշտ խորամանկ, աչալուրջ աղվեսի պես: Նա հիշողության մեջ ամուր պահեց, որ ինքը բնավ էլ անտառի ոչ բոլոր բնակիչներին է երկյուղ ներշնչում, չէ՞ որ կափկափող կտուցներն ու անաղմուկ գորշ ստվերները, որոնց նա թեթևամտորեն անտեսել էր, ամենավտանգավոր թշնամիները դուրս եկան: Դաժան դասը օգտակար էր ու ժամանակին: Պիտերը բնազդով հասկացավ, որ գրեթե պատահականորեն փրկվեց, և վերքերի ցավն ավելի քիչ էր տանջում նրան, քան անհավասար կռվի պատճառած վախը, չնայած որ այդ կռվից հաղթող էր դուրս եկել: Բայց

դա գիտակցված վախ էր և ոչ թե վախկոտություն: Առաջ բվերի մութ ուրվականները նրա համար սովորական գիշերային արարածներ էին, որոնց նկատմամբ նա անտարբեր էր, իսկ հիմա ատում էր նրանց և, հենց որ գորշ ստվերները թռչում էին իր գլխավերևով, չարությամբ բացում էր ատամները:

Պիտերը ծածկվել էր վերքերով: Մեջքին ու կողերին ձգվում էին խոր չանգռվածքները, իսկ ոսկրոտ թաթի վերջին հարվածը ծվատել էր նրա ուսը մինչև ոսկորը: Վերքից արյուն էր հոսում, մի աչքը փակվել էր, և ողջ շրջակայքը լուծվել դարձել էր մի միասնական աղոտ կետ: Բնազդը, զգուշությունն ու ամբողջ մարմինն այրող ցավը հուշեցին Պիտերին, որ հարկավոր է թաքնվել խիտ թփուտներում և սպասել լույսը բացվելուն: Բայց նրան առաջ էին մղում իր տիրուհու համառ հրամանի մասին հիշողությունը, լաթե վզակապը և Ուրախ Ռոջերի թարմ հոտը, որի հետքերը լուսնի միջնաշերտերով ու անտառի մութ անձավներով շարունակ առաջ էին գնում:

Հուլիսյան արշալույսը բացվել էր արդեն, երբ Պիտերը կաղալով բարձրացավ քարքարոտ բլրակը և նրա մյուս կողմում տեսավ ոչ մեծ հովիտը: Ինչպես Նեյդան, որ, ուժասպառ եղած չկարողացավ այլևս մի քայլ անել, հիմա էլ ինքն էր պատրաստ անձնատուր լինելու: Բվերի հետ ունեցած կռվից հետո նա մի քանի մղոն ճանապարհ էր անցել, վերքերը չորացել էին ու բորբոքվել, այնպես որ յուրաքանչյուր շարժումը սաստիկ ցավ էր պատճառում: Վնասված աչքը չէր բացվում, իսկ ծոծրակը, որ կտցահարել էր Գարգանտյուան, նվում էր բութ ու տանջալից: Պիտերին թվաց, թե ահագին տարածություն է բաժանում իրեն վաղորդյան մշուշով պատած հովտից, և, փռվելով գետնին, տաք լեզվով սկսեց լիզել ուսի վերքը: Նա հոգնել էր, ցավից ուժասպառ եղել, և նրան ճնշում էր այն զգացումը, որ այլևս անօգուտ է ճանապարհը շարունակելը: Պիտերը նորից նայեց ներքևում փռված հովտին և աղիողորմ վնգստաց:

Եվ այստեղ հանկարծ նրա ռունգերը մի հոտ առան, որը նման չէր մշուշի թաց խոնավությանը: Ծխի հոտ էր: Պիտերի սիրտը զարկեց արագ, և, դժվարությամբ վեր կենալով տեղից, դանդաղ քարշ եկավ դեպի արևմուտք:

Փոքրիկ բացատում, որը ծածկված էր բլրաշարքից ուղիղ անկյան տակ հեռացող երկու ժայռերով, նա գտավ Ուրախ Ռոջերին: Սկզբում տեսավ միայն խարույկի հազիվ մլմլացող ածուխները, իսկ հետո՝ նաև իր տիրոջը: Ուրախ Ռոջերը քնած էր: Նրա քամահարված, տարօրինակ կերպով սրված դեմքը նայում էր երկնքին: Պիտերի հայտնվելը չարթնացրեց Մաք-Քեյին: Նրա դեմքի արտահայտության մեջ մի բան կար, որը Պիտերին հարկադրեց զսպել ուրախ վնգստոցը: Նա կամացուկ մոտեցավ Ռոջերին ու պառկեց կողքին: Ինչքան էլ որ Պիտերը զգույշ էր, այնուամենայնիվ քնածը շարժվեց: Նրա ձեռքը բարձրացավ և, թուլացած, լայնակի իջավ Պիտերի մեջքին: Ասես ենթարկվելով իրենից շատ հեռու, անտառում մնացած աղջկա կամքին ու հուսահատ կանչերին, Ռոջերի մատները կուրորեն սեղմեցին Պիտերի վզին կապված լաթի կտորը՝ լուրը, որ նա բերել էր իր տիրոջից:

Արևն արդեն վաղուց բարձրացել էր՝ լուսավորելով անտառը, իսկ Պիտերը և նրա տերը դեռ քնած էին:

Գլուխ իններորդ

Ուրախ Ռոջերը արթնացավ այն բանից, որ Պիտերը շուռումուռ եկավ: Դեռ քունը գլխին, առանց աչքերը բացելու, Ռոջերը հանկարծ վերադարձավ իրականություն, որը մի քանի ժամ թաղվել էր քնի մեջ: Նրա ամբողջ մարմինը նվում էր: Վիզը փայտացել էր: Նա գերանի նման պառկած էր չոր գետնին: Հետո նրա հիշողության մեջ վերականգնվեցին այն բոլորը, ինչ կատարվել էր նախորդ օրը, և նա առաջին անգամ նկատեց Պիտերին:

Տեղից շտկվելով՝ Ռոջերը զարմանքից աչքերը հառեց շնիկին: Ճիշտն ասած, որ Պիտերը փախել էր քարոզչի խրճիթից հասել իրեն, դրանում առանձնապես զարմանալու բան չկար: Ուզածդ հավատարիմ շունը նույն բանը կաներ: Բայց Մաք-Քեյը շփոթվեց անակնկալից և առաջին պահին նույնիսկ զայրույթի նման մի բան զգաց: Ասես Պիտերը խախտել էր իր վրա դրված պարտականությունը: Երբ նախօրյակին Մաք-Քեյը տեղատարափ անձրևի տակ քայլում էր անտառով, նա Պիտերի մասին մտածում էր միայն որպես մի օղակ, որը իրեն կապում է նրա հետ, ում սիրում էր ինքը: Ռոջերը, կարծես, հանձնարարել էր Պիտերին՝ հսկել ու պահպանել Նեյդային և նրան հիշեցնել իր մասին: Նա որոշ մխիթարություն էր գտել այն բանում, որ հանուն Նեյդայի զոհաբերել էր իր հավատարիմ բարեկամին: Իսկ Պիտերը դավաճանել է իրեն: Պիտերը կարծես կռահեց Մաք-Քեյի զայրույթն ու վրդովմունքը, ծանոթ ժպիտը չտեսավ նրա աչքերում: Նա չշարժվեց տեղից, շարունակեց պառկած մնալ՝ գետնին փռկված, դունչը առջևի թաթերի արանքը խրած. այդ կեցվածքը արտահայտում էր իր մեղքերի խոստովանություն, հնազանդ սպասում արժանի պատիժը կրելու: Եվ, այնուամենայնիվ, կոշտ բրդի խոպոպների տակ փայլող նրա աչքերում Ուրախ Ռոջերը աղերսանք ու ներում կարդաց: Մաք-Քեյը լուռ պարզեց ձեռքը: Դա բավական էր. մի ակնթարթում Պիտերը հայտնվեց նրա կրծքին: Չէ՞ որ նրանց սրտերը կապված էին իսկական սիրով, և Ուրախ Ռոջերը, ոչ այն է ծիծաղից, ոչ այն է հեկեկանքից, կցկտուր ձայնով ասաց.

— Կաղլիկ, ա՜խ, դու, սատանա: Ա՜խ դու, սատանա...

Նրա մատները դիպան Պիտերի լաթե վզակապին, և նա ցնցվեց, հասկանալով, որ այդ լաթերը կտրված են Նեյդայի շրջազգեստից: Տեսնելով, որ տերը վերջապես հասկացավ, թե ինչ կարևոր լուր է բերել ինքը, Պիտերը սկսեց ուշադիր հետևել նրա յուրաքանչյուր շարժումին: Մաք-Քեյը արձակեց հանգույցը, և շագանակագույն մազափնջի վրա խաղաց պայծառ, ասես երեկվա ամպրոպից լվացված արևը:

Այժմ Ուրախ Ռոջերի կրծքից պոկվեց իսկական հեծկլտոցը, և Պիտերը տեսավ, որ տերը շողշողուն մազափունջը սեղմեց դեմքին, մի անհասկանալի դող անցավ նրա հաղթ թիկունքով, իսկ աչքերը խոնավացան, որը անձրևի խոնավությունը չէր:

— Իմ ուրախություն,— մրմնջաց Ռոջերը:— Ա՜խ, ինչո՞ւ ես փոքրիկ երեխա չեմ, Կաղլիկ: Դեռ ոչ մի անգամ... կյանքում դեռ ոչ մի անգամ լաց լինելու այսպիսի ցանկություն չեմ ունեցել:

Նրա աչքերն արցունքակալվել էին, իսկ շուրթերը ցնցվում էին, բայց Պիտերը տիրոջ դեմքին ուրախություն կարդաց: Մաք-Քեյը ոտքի ելավ ու նայեց դեպի հարավ, այն կողմը, որտեղից ինքը ընդառաջ էր գնացել գիշերային հողմին: Նրա երևակայության մեջ ծնվեց մի պատկեր. տեսավ, թե ինչպես Նեյդան, հայր Ջոնի խրճիթում, իր մազափունջը կապում է Պիտերի վզին և նրա առջև բաց է անում դուռը, որի մյուս կողմում մոլեգնում է փոթորիկը, լավ իմանալով, թե իր հրաժեշտի ողջույնը ինչպիսի խնդություն է պատճառելու Ուրախ Ռոջերին: Հավերժական սիրո ու հավատարմության այդ առհավատչյան:

Նա ճշմարտության փոքր մասը միայն գուշակեց: Եվ Պիտերը, բնության ինչ-որ անհեթեթ սխալի հետևանքով զրկված լինելով խոսելու ընդունակությունից, զուր տեղը վազեց դեպի արահետ, ջանալով բացատրել տիրոջը, որ Նեյդան, չվախենալով փոթորկից, եկել է իր հետևից, և հիմա անտառի խորքում սպասում է նրան: Սակայն Մաք-Քեյը մտքի հայացքով տեսնում էր միայն քարոզչի խրճիթի աղոտ լուսավորված սենյակը, ուրիշ ոչինչ:

Նա շուրթերին սեղմեց մետաքսյա մազափունջը, որը դեռևս պահպանում էր անձրևի խոնավությունը, ապա ժլատի խանդոտ շարժումներով հարթեցրեց մազափունջը, նորից փաթաթեց, կապեց պարանով ու դրեց փափուկ եղջերակաշվե պայուսակի մեջ: Նա սկսեց խռիվ հավաքել խարույկի համար, իսկ սիրտը երգում էր. չէ՞ որ հիմա ինքը մենակ չէր:

Նրանք հաց կերան ու առաջ գնացին: Օրերը հաջորդում էին միմյանց, իսկ նրանք գնում էին ու գնում: Եկավ օգոստոսը, նրանք արդեն հեռու հյուսիսում էին և շարունակում էին առաջ գնալ անեզր թավուտներով, քնկոտ լռության մեջ նիրհող «առաջին թռիչքների ամսի» միջով, ամիս, երբ ձագերը թռչել են սովորում, իսկ անանցանելի անտառները խաղաղ քուն են մտնում:

Օրերը դարձան շաբաթներ, և վերջապես մեր ճանապարհորդների առջև բացվեց Եղջերվի լճի ավազանը:

Արևելքում ընկած էր Հուդսոնի ծոցը, դեպի արևմուտք ձգվում էին հյուսիսային Սասկուչևանի մութ անտառներն ու ոլորապտույտ գետերը, իսկ հյուսիսում, հյուսիսից էլ այն կողմ, նրանց հրապուրում էին ամայի հարթավայրերը և Աթաբասկայի՝ Ստրուկների և Մեծ արջի լճերի շուրջը փռված անանցանելի անտառները, որոնք չէին նշված քարտեզի վրա: Հենց այնտեղ էլ նրանք գնացին դանդաղ ու անշեղորեն:

Նրանց ճանապարհին ընկած ճահիճներն ու անտառները ժամանակավորապես ամայացել էին: Որսորդների և տրապպերների խրճիթները, հնդկացիների տիպիները դատարկ էին ու լքված: Ոչ մի տեղ խարույկի ծուխ չէր բարձրանում, արշալույսին ու վերջալույսին չէր լսվում շների հաչոցը, որսորդական արահետները ծածկվել էին խոտով, լռել էին տրապպերների կացինները, և ամեն ինչ բռնված էր մեծ լռությամբ, որը, թվում էր, բաբախում ու տրոփում էր, ինչպես վիթխարի սիրտը՝ վայրի բնության սիրտը, որ միառժամանակ ազատվել էր իր վրա դրած մարդու կապանքներից:

Անտառի բնակիչների համար դա արձակուրդի ժամանակն էր, ամառային տոների ժամանակը: Նրանք մեծացնում էին ձագերին: Նրանց մորթին հիմա ոչ մի բանի պետք չէր,

միսը՝ նույնպես։ Ահա թե ինչու մարդիկ՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ, շների հետ միասին ժամանակավորապես անտառներից քաշվել էին Հուդսոնի ծոցի ընկերության ֆակտորիաները, որոնք ցրված էին այդ հյուսիսային թավուտների սահմանագծին։ Եվս երկու-երեք շաբաթ, և նրանք կվերադառնային։ Նորից խրճիթներից ծուխ կբարձրանա, թխլիկ երեխաները կխաղան տիպիների դռների առաջ։ Տասը հազար անտառային բնակիչներ՝ սպիտակամորթ, հնդկացի, մետիս, երկու-երկու, երեք-երեք, երբեմն ամբողջ ընտանիքներով, վերադառնում էին իրենց զբաղմունքներին այդ վայրի երկրում, որը փռված էր Հուդսոնի ծոցից մինչև արևմտյան լեռները, Ջրբաժանքից մինչև Սառուցյալ օվկիանոս։

Բայց առայժմ բնությունն ազատ էր, և այդ ազատությամբ էր լցված զրնգուն անտառային լռությունը։ Չէ՞ որ եկել էին այն օրերը, երբ գայլը խաղում էր իր ձագերի հետ ու չէր ոռնում, երբ լուսանը շարունակ քնել էր ուզում ու չէր շտապում որս անել. օրեր, որ լի էին սերունդ տալու հոգսերով, նիրհող գիշերների շրշյուններով, կարմրավուն լիալուսնով ու ծանծաղած գետակների քչքչոցով, որոնք երազում էին տեղատարափ ու գարնանային վարարումներ։ Եվ այդ բոլորը՝ միջատների ալարկոտ բզզոցը, ծառերի շրշացող հառաչանքը, գազանների ու թռչունների խեղդված ձայները ձուլվել էին խաղաղ թրթռացող շշուկների մեջ, ասես մինչ մարդը ժամանակավորապես բացակայում էր, բնությունը նոր լեզու էր ձեռք բերել։

Ուրախ Ռոջերի համար դա հենց կյանքն էր որ կար։ Այդ կյանքի շնչառությունը նրան էր հասնում սառը հողից։ Լսում էր նրան և՛ իր վերևում, և՛ շուրջը, թեև ուրիշ շատ մարդիկ ոչինչ էլ չէին լսի, բացի համատարած ճնշող լռությունից։

Մի իրիկուն Մաք-Քեյը վրան զարկեց Բեռնտվուդ լճի ափին։ Համարյա նրա ոտքերի տակից հոսում էր լայն գետակը, որի խորությունը տեղ-տեղ հասնում էր մինչև կոճերը, տեղ-տեղ էլ՝ մինչև ծնկները։ Գետակը քչքչում էր ու երգում ծանծաղուտներում և սահանքներում, այնտեղ, ուր մայիսին ու հունիսին սլանում էր մոլեգնությամբ՝ կատաղած ու փրփրած։ Ցերեկով տոթ անտառի միջով անցնելուց հետո, հոգնած և ուժասպառ, Պիտերը տիրոջը հետևում էր քնկոտ աչքերով։ Այն օրվանից, ինչ նրանք հեռացել էին քաղաքակիրթ վայրերից, Պիտերը մեծացել էր, թիկունք էր գցել։ Ճանապարհի դժվարություններից, ուտելիք ճարելու անհրաժեշտությունից իր կյանքը պահպանելու համար մղած անվերջանալի կռիվներից նա դարձել էր հասուն շուն։ Կես տարեկանում Պիտերը ծածկվել էր սպիներով, ուժեղ էր ու ճարպիկ և ամեն րոպե պատրաստ էր հարձակվելու ու պաշտպանվելու։ Աչքերը, ինչպես էրդելինը, շրջանակված էին կոշտ բրդի օղակներով և շողում էին արթուն զգոնությամբ ու շարունակ հետ էին նայում. Պիտերը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե բարակիրան, կապտաչ աղջիկը, որին երկուսն էլ շատ են սիրում և առանց որի տխրում են այնքան, ինչո՞ւ դեռ չի գալիս։ Եվ նրան շարունակ տանջում էր այն անորոշ տարակուսանքը, թե ինչո՞ւ իր տերը կանգ չի առնում ու չի սպասում նրան։

Փոխվել էր նաև Ուրախ Ռոջերը։ Հանձին նրա դժվար էր ճանաչել Արագահոս գետի ափին ընկած խրճիթի կարմրաթուշ բնակչին, որը ամբողջ օրերով երգում էր առույգ, թեև գիտեր,

որ օրենքի խուզարկուները գալիս են իր հետևից: Նա նիհարել էր անվերջ, անկանգ քայլելուց, դեմքը լրջացել էր: Սակայն ջինջ աչքերը առաջվա պես պահպանում էին ազահ հետաքրքրասիրությունն ու կյանքի սերը, դրան չկարողացավ հաղթել նույնիսկ վիշտը, որը անվերջ սղոցում էր նրա սիրտը, քանի դեռ առաջ էին գնում, շարունակ մոտենալով Լերկ Հողերին:

Մայր մտնող արևի նարնջագույն շողերի մեջ Պիտերը տեսավ, որ տերը հանում է իր գանձը:

Նա վաղուց էր ընտելացել այդ բոպեներին և սպասում էր դրան: Օրվա ընթացքում մի քանի անգամ, անպայման երեկոները, Ուրախ Ռոջերը կրկնում էր միշտ միևնույն արարողությունը: Պիտերը թաքուն մոտենում էր տիրոջը, որը նստում էր ժայռին կռթնած ու քարանում էր կանխավայելումի մեջ: Երբ Ուրախ Ռոջերը հանում էր խնամքով պահպանվող փաթեթը, Պիտերն ամեն անգամ հաճելի, հազիվ նշմարվող մի բուրմունք էր զգում, իր տիրուհու բուրմունքը: Մաք-Քեյը զգուշությամբ բացում էր լաթի կտորը և մի քանի վայրկյան ձեռքում էր պահում շագանակագույն մազերի փունջը՝ Նեյդայի հրաժեշտի ողջույնը հավիտենական բաժանումից առաջ: Իսկ Պիտերը դարձյալ մտածում էր այն մասին, թե ինչու իրենք չվերադառնան այնտեղ, ուր մնացել է աղջիկը, որը, ախր, շատ ավելի լավն է, քան իր մազերը: Ուրախ Ռոջերը նկատելով նրա տագնապն ու տարակույսները, շատ անգամ փորձել էր բացատրել նրան, թե ինչ է տեղի ունեցել: Պիտերը ամեն կերպ ջանում էր հասկանալ, բայց չէր հասկանում: Իսկ երազներում նա միշտ վերադառնում էր սիրելի տիրուհու մոտ, վազում էր նրա հետևից, խաղում նրա հետ, պաշտպանում նրան, լսում նրա ձայնը, զգում նրա ձեռքերի քնքուշ շոյանքը: Եվ նրա շնային սիրտը թախծում էր Նեյդայի համար ոչ պակաս, քան Ուրախ Ռոջերի սիրտը: Սակայն երբ արթնանում էր, նրանք շարունակում էին իրենց ճանապարհը դեպի հյուսիս, այլ ոչ թե հարավ: Պիտերը չէր կարող հասու լինել այդ խորհրդավոր գաղտնիքին, ինչպես չէր կարող պատմել այն բոպեների մասին, երբ Նեյդան, հուսահատ ու արցունքն աչքերին, իրեն ուղարկեց Ուրախ Ռոջերի հետևից, որպեսզի ինքը հետ բերի նրան, ում սիրում էր Նեյդան և կսիրեր ի հեճուկս աշխարհի բոլոր օրենքների՝ ծուռ թե շիտակ:

Այդ գիշեր Բեռնտվուդ լճի մոտ Պիտերը լսեց, որ իր տերը քնի մեջ կանչում էր Նեյդային: Բայց արևածագին նրանք կրկին գնացին դեպի հյուսիս:

Այն բոլոր օրերին ու շաբաթներին, մինչ նրանք գնում էին օգոստոսյան տոթ անտառների միջով, Մաք-Քեյը համառորեն վիճում էր աներևույթ զրուցակցի հետ, պաշտպանելով սեփական իրավունքը: Արդարադատությունը կարող է գտնել իրեն ու, թերևս, կգտնի: Իրեն կարող են կախել ու, թերևս, կկախեն: Բայց արդարադատությունն այդպես էլ չի իմանա, թե ով էր այդ մարդը, որին կախաղան է հանում: Հենց դրա մեջ էր ողբերգական ծաղրը: Օրենքի ի՞նչ գործն է, թե ինքը ջերմ սիրով է վերաբերվում փոքրիկ երեխաներին, անօգնական կանանց ու ծերունիներին: Օրենքը միայն ծիծաղում է այն կանոնների վրա, որոնց ինքը հետևում է միշտ, և, ծանակելով կհռհռա, եթե հանդգնի ասել, որ ինքը այնքան էլ վատ մարդ չէ: Չէ՞ որ օրենքը նրան համարում է հանցագործ, Ջեդ Հոկինսին սպանող, և

յոթ հարյուր ոստիկաններ փնտրում են իրեն, որպեսզի, ողջ թե մեռած, հանձնեն արդարադատությանը:

Բայց արդյո՞ք ինքը այդքան վատ մարդ է: Մի անգամ երեկոյան նա փորձեց այդ հարցը քննարկել Պիտերի հետ:

— Ասենք, թե ես հանցագործ եմ, Կաղլիկ, բայց արդյո՞ք դա իմ մեղքն է,— հարցրեց նա։— Գուցե, մեղքը էս բոլորի մեջ է...— լայն շարժումով նա ցույց տվեց անտառի մթնող պատը։— Ես ծնվել եմ բաց երկնքի տակ, ճիշտ այսպիսի մի գիշեր: Երբ դեռ մայրս կենդանի էր, հաճախ պատմում էր ինձ, որ այդ գիշերը լիալուսին էր, և լուսինը իր բարձունքից նայում էր նրան ու կենդանի արարածի պես զրուցում հետը: Այդ օրվանից էլ ես սիրել եմ և՛ լուսինը, և՛ արևը, և՛ անտառը, և՛ մնացած բոլորը: Հենց դրա համար էլ ես չեմ հավատում մարդկանց հնարած օրենքներին: Դրանից էլ առաջացել են իմ անախորժությունները ոստիկանության հետ, Կաղլիկ: Երբ տեսա, որ նրանց օրենքներից ոչ մի օգուտ չկա, ես ամեն բան դասավորեցի իմ ձևով: Գուցե չափից դուրս շատ եմ սիրել ծառերը, ծաղիկները, արևի լույսը, քամիներն ու փոթորիկները: Եվ թափառել եմ, ուր սիրտս ուզել է: Իսկ ճամփեքին ինչեր ասես չեմ արել: Եվ էդ բոլորն ինձ շատ է դուր գալիս, Կաղլիկ... Հենց դրա համար էլ ես դարձա հանցագործ:

Պիտերը լսեց տիրոջ խեղդված ծիծաղը, որի մեջ ոչ վախ կար, ոչ կարեկցանք:

— Ամեն ինչ սկսվեց պայմանագրային փողերից[4],— շարունակեց նա, թեքվելով Պիտերի կողմը, կարծես նա առարկում էր իրեն։— Գիտես ինչ, Կաղլիկ, դա Դեղին Թռչունի ցեղն էր: Ես դեռ երեխա ժամանակվանից էի ճանաչում նրան: Նա երկու երկար սև հյուսքեր ուներ, իսկ դեմքը համարյա նույնքան գեղեցիկ էր, ինչքան մորս դեմքը: Նրանք ընկերուհիներ էին, ու ես սիրում էի Դեղին Թռչունին, ինչպես հեքիաթի բարի կախարդին: Եվ էդպես էլ կանչում էի նրան: Գիտես, Պիտեր, երեխայի սերը ամենահավատարիմ սերն է աշխարհում, ու մարդը պահպանում է այդ սերը մինչև իր օրերի վերջը: Մորս մահից հետո, շատ տարիներ անց, երբ արդեն մեծ էի, ես եղա Մոնրեալում, Օտտավայում ու Քվեբեկում, և որոշեցի այցելել Դեղին Թռչունի ցեղին... Իսկ նրանք սովի էին մատնվել, Կաղլիկ: Լսո՞ւմ ես: Մեռնում էին սովից։

Մաք-Քեյի խոհական ու քնքուշ ձայնը դարձավ դաժան ու խիստ:

— Ձմեռ էր,— շարունակեց նա։— Թունդ ձմեռ: Դաժան սառնամանիքներ էին սկսվել: Նույնիսկ աղվեսներն ու գայլերը բներից դուրս չէին գալիս: Աշնանը ձուկ բռնել չէր լինում. ձնաբուքը քշում, հալածում էր որսին, և հնդկացիները կոտորվում էին սովից: Երբ ես Դեղին Թռչունին տեսա, Կաղլիկ, սիրտս կանգնեց: Նա ոտի վրա հալվել էր: Միայն աչքերն էին մնացել, մեկ էլ հյուսքերը: Երկու երկար սքանչելի հյուսքերը և աչքերը՝ թուխ, մեծ, խորունկ, ոնց որ երկու լճակներ: Այ դու, բարեկա՛մս, իսկի տեսած կա՞ս, որ հնդկացի կինը լաց լինի: Նրանց մոտ էդպիսի սովորություն չկա: Բայց իմ մանկության այդ բարի

---

[4] **Պայմանագրային փողեր** — փող, որ Կանադայի կառավարությունը պարտավորվել էր վճարել հնդկացի ցեղերին, նրանցից խլած հողերի դիմաց:

կախարդը երբ տեսավ ինձ, տեղում քարացավ, երերաց թուլությունից, իսկ նրա սև աչքերից արցունքները հոսեցին նիհար այտերն ի վար։ Նա ամուսնացել էր Արագավազ Եղջերվի հետ։ Նրանք երեք երեխա էին ունեցել, ու երկուսը մեռել էին մի շաբաթվա մեջ։ Արագավազ Եղջերուն մահամերձ էր։ Իսկ Դեղին Թռչունը բոլորովին հալից ընկել էր ու մի բան էր ցանկանում միայն՝ մեռնել ամուսնու հետ միասին։ Ու հենց այդ ժամանակ էլ ես գնացի... Պիտեր։— Ուրախ Ռոջերը կռացավ, որպեսզի թանձրացող մթնշաղի մեջ ավելի լավ տեսնի շանը, և նրա աչքերը փայլեցին։— Դե, ինքդ ասա, Կաղլիկ, էն ժամանակ ես վա՞տ արի, որ գնացի։ Նրանք ինձ պատմեցին, թե ինչ էր կատարվել։ Տեղացի առևտրականը անուղղելի սրիկայի մեկն է եղել, իսկ հնդկացիական գործերի գծով կառավարական նոր գործակալն էլ, պարզվել էր, նույն պտուղն է։ Նրանք շատ շուտ լեզու են գտնում իրար հետ։ Գործակալը ուղարկում է ցեղին հասանելիք պայմանագրային փողը և իսկույն էլ թաքուն մի քանի արկղ էժանագին վիսկի է առնում ու ճամփում առևտրականին։ Հինգ օր հետո բոլոր փողերը նորից քոչում են առևտրականի գրպանը։ Էստեղ էլ վրա է հասնում ձմեռը։ Ու նրանց վիճակն ավելի է վատանում։ Երբ ես գնացի նրանց մոտ ու իմացա, թե ինչն ինչոց է, վաթսուն մարդուց տասնվեցն արդեն մեռել էին, իսկ մյուսները հազիվ էին ոտի վրա մնում։ Գիտես ինչ, Կաղլիկ, իմ նախապապերից մեկնումեկը հաստատ ծովահեն է եղել։ Ես գնացի ու երեք օր հետո վերադարձա մթերքներով ու տաք շորեր բարձած սահնակով, բոլորին էլ բավարարեց։ Աստված իմ, մի տեսնեիր, թե էդ թշվառներն ինչպես վրա պրծան ուտելիքին։ Ես նորից գնացի ու մի շաբաթ անց ավելի շատ ուտելիք բերեցի։ Դեղին Թռչունի գեղեցկությունը հետ եկավ։ Արագավազ Եղջերուն լավացավ, օր օրի վրա ուժ առավ։ Ամբողջ ցեղը ազատվեց դժբախտությունից, ոտի կանգնեց. ուղղակի հաճելի էր նրանց նայելը։ Ես երկու ամիս էդպես կերակրեցի նրանց։ Ցրտերը վերջացան։ Որսը հետ եկավ։ Ես նրանց էլի պաշարներ հասցրի ու կծիկը դրի։ Էդպես էլ ես դարձա ավազակ, Կաղլիկ։

Ռոջերը ծիծաղեց, և Պիտերը լսեց, թե նա մթության մեջ ինչպես է ուրախ-ուրախ շփում ձեռքերը։

— Ուզո՞ւմ ես իմանալ, թե էդ բոլորն ինչպես եղավ,— հարցրեց Մաք-Քեյը։— Բանն էսպես եղավ. ես գնացի էդ ստոր առևտրականի մոտ ու բախտի բերմամբ նրան մենակ բռնացրի։ Նախ ուզածիս պես քոթակեցի, հետո դանակը դեմ արի կոկորդին ու ստիպեցի մի գրություն գրել, որ ինքը, իբր, անսպասելիորեն շտապ գործով մեկնում է հարավ, իսկ խանութը իր բացակայության ժամանակ հանձնում է ինձ։ Դրանից հետո նրան կապեցի նկուղում, որի տեղը ինձնից բացի ոչ ոք չգիտեր։ Եվ սկսեցի տիրություն անել խանութում, Կաղլիկ, էն էլ ո՜նց։ Էդ ժամանակ տրապպերները գնացել էին իրենց թակարդներն ստուգելու և շատ քիչ էր պատահում, որ մեկնումեկը խանութ մտներ։ Ես էլ ամբողջ երկու ամիս կերակրեցի ու հագցրի իմ ցեղին։ Էնքան կերակրեցի, մինչև գիրացան... Եվ Դեղին Թռչունի աչքերը նորից փայլեցին աստղերի պես։ Հետո ես Ուտիճին,— այդպես էր խանութպանի մականունը,— հետ բերի խանութ, որը արդեն լրիվ դատարկվել էր, մի լավ շշպռեցի, բաժանվելուց առաջ մի անգամ էլ քոթակեցի... ու փասափուսաս քաշեցի։

Մաք-Քեյը վեր կացավ։ Երկնքի սև թավշի վրա վառվեցին առաջին աստղերը։ Եվ Պիտերը լսեց, թե ինչպես իր տերը, ուրախացած, խոր ներշնչեց անուշաբույր օդը։

Հետո նորից խոսեց.

— Էդ ձմեռվանից սկսած, Պիտեր, ձիավոր ոստիկաններն ընկել են իմ հետևից։ Եվ որքան շատ են ինձ հալածում, այնքան ավելի շատ առիթ եմ տալիս դրա համար։ Ես ծեծեցի, մահվան դուռը հասցրի Բոդենին՝ փոստատարին, որը վիրավորեց մի կնոջ, երբ նրա ամուսինը, իմ լավ բարեկամը,— բացակա էր։ Իսկ Բոդենը վերցրեց ու յուրացրեց փողերը, որ տանում էր ինքը, և բոլորը ինձ վրա գցեց։ Դե, ես էլ դրանից հետո իսկապես թալանեցի փոստը... իսկ թե ինչի համար, դու գիտես։ Եվ էդ օրվանից ինչեր ասես, որ չեմ արել։ Բայց իմ զենքերը միայն բռունցքներս են եղել, ես ոչ մի անգամ ատրճանակ կամ դանակ չեմ գործածել, եթե, իհարկե, նկատի չունենանք Ուտիճի հետ կատարված դեպքը։ Իսկ էս բոլորի մեջ, Կաղլիկ, ամենածիծաղելին էն է, որ ես Ջեդ Հոկինսին եմ սպանել։ Գուցե մի օր քեզ կպատմեմ, թե էն ժամանակ ինչ պատահեց ճանապարհին, երբ դու ու Նեյդան հեռացաք։ Դե, իսկ հիմա...

Նա լռեց, և Պիտերն զգաց, որ իր տերը ցնցվեց։ Ապա Ուրախ Ռոջերն անսպասելիորեն թեքվեց նրա կողմը։

— Պիտեր, երեք կանանց մենք պետք է սիրենք մինչև մահ ու գերեզման,— շշնջաց նա։— Իմ մորը, մենակ թե նա վաղուց է մեռել։ Նեյդային, միայն թե մենք էլ երբեք նրան չենք տեսնի...— Նրա ձայնը մի պահ խզվեց։— Եվ... և Դեղին Թռչունին։ Էն ժամանակվանից, որ ես կերակրեցի նրա ցեղին, հինգ տարի է անցել։ Ով գիտի, հիմա նոր երեխեք են ծնվել։ Գիտես ինչ, բարեկամս, արի գնանք տեսնենք։

Գլուխ տասներորդ

Հաջորդ օրը Ուրախ Ռոջերն ու Պիտերը գնացին դեպի հյուսիս-արևմուտք, այնտեղ, ուր ապրում էր Դեղին Թռչունի ցեղը։ Նրանք գնում էին դանդաղ, մեծագույն զգուշություն պահպանելով, և Պիտերը ավելի ու ավելի պարզ էր հասկանում, որ մի անհայտ պատճառով իրենց անհրաժեշտ է միշտ զգոն լինել։ Նա նկատեց, որ իր տերը ամեն անգամ, երբ ծառերի հետևից որևէ ձայն էր լսվում՝ խաշամի խշրտոց, թփերի կամ եղնիկի կճղակների անորոշ շրշյուն, միշտ լարում էր ուշադրությունը։ Սակայն, բնազդը թելադրեց նրան, որ իրենք մարդկանցից են թաքնվում։

Նա դեռ չէր մոռացել, թե ինչպես փրկվեցին Քասիդիից և մի քանի օր թաքնվեցին շիկացած ժայռերի լաբիրինթոսում, որի անունը Ուրախ Ռոջերը Հնոց էր դրել։ Հիմա էլ տերը իրեն այնպես էր պահում, ինչպես այն օրերին։ Նա չէր ծիծաղում, չէր երգում, չէր շվշվացնում, այլ խոսում էր շշուկով։ Հիմա նա այնպիսի փոքրիկ խարույկներ էր վառում, որ Պիտերը զարմանք էր մնում։ Նա թռչուններ ու կենդանիներ չէր որսում, թեև ճանապարհին շատ էին հանդիպում, այլ երեկոները ծուղակ էր դնում ու գետակներում ձուկ էր որսում։ Նրանք գիշերեցին կես մղոն հեռու այն տեղից, որտեղ պստլիկ խարույկի վրա ընթրիք պատրաստեցին։ Եվ Պիտերը քնեց արթուն քնով, ամենափոքրիկ շրշյունի դեպքում վեր թռչելու պատրաստ։ Նրա կամացուկ, նախազգուշացնող գոռոցը մի քանի անգամ

քնահարամ արեց Ռոջերին, որը անմիջապես արթնանում էր ու ձեռքը գցում ատրճանակին:

Ճիշտն ասած, Մաք-Քեյը բնավ էլ համոզված չէր, թե գործի կդներ ատրճանակը, եթե այդ պահին իր առջև տեսներ ոստիկանական կարմիր համազգեստը: Նրա հոգում առաջվա պես պայքար էր գնում: Նա վերլուծում էր իր վիճակը բոլոր տեսանկյուններից, բայց ինչ էլ որ մտածում էր, միշտ նույն եզրակացությանն էր հանգում: Եթե ինքը բանտարկվի, արդարադատությունը նեղություն չի քաշի իրեն պատժելու հնդկացիների օրինական փողերը տերերին վերադարձնելու, փոստը կողոպտելու կամ զանազան այլ մանր-մունր հանցանքների համար: Իրեն կկախեն Ջեդ Հոկինսին սպանելու համար: Եվ օրենքի սպասավորները չեն հավատա, եթե նույնիսկ ինքը ճշմարտությունն ասի. իսկ ինքը երբեք էլ չի ասի այդ ճշմարտությունը: Երևակայությունը շատ անգամ էր նրան պատկերել այդ անհավանական տեսարանը, այնքան անհավանական, որ, չնայած նրա ողջ մռայլությանը, Ռոջերը նրա մեջ դառն ժպիտի առիթ էր գտնում: Նույնիսկ Նեյդան հավատաց, որ Ռոջերն է սպանել իր հոգևոր հորը: Թեև իրականում ինքը Նեյդան էր սպանել: Ու եթե օրերից մի օր ճշմարտությունը բացվի, արդարադատությունը Նեյդային կկախի: Մտովի նա նորից ու նորից վերապրեց այն ճակատագրական գիշերը տեղի ունեցած պատահարը, երբ թվում էր, թե ինքը արդեն երջանկության շեմին է կանգնած. երբ քարոզիչը պիտի պսակեր իրեն ու Նեյդային: Իսկ հետո... անլույս ճանապարհը, հեծկլտացող աղջիկը, որը, օրորվելով, ոտքերը հազիվ քարշ տալով, պատառոտված շորերով դուրս եկավ իր դիմաց, նրա կցկտուր շշնջոցը, երբ նա պատմեց, թե Ջեդ Հոկինսը ինչպես է անտառի միջով քարշ տվել իրեն դեպի Մունիի խրճիթը, և ինչպես է իրեն հաջողվել դուրս պրծնել Հոկինսից ու մթության մեջ ձեռքն ընկած քարով հարվածել նրան, կհավատա՞ր արդյոք ոստիկանությունն իրեն, հայտնի հանցագործին, եթե ինքը պատմեր ճմարտությունն այն մասին, ինչ կատարվել էր դրանից հետո: Այն մասին, թե ինչպես ինքը սլացավ Ջեդ Հոկինսի հետևից, որպեսզի նրա հաշիվը մաքրի, ու տեսավ, որ նա մեռած ընկած է այնտեղ, որտեղ նրան թողել էր Նեյդան: Կհավատայի՞ն իրեն, եթե ինքը թուլության մի պահի խոստովաներ, որ իր վրա էր վերցրել աղջկա մեղքը, որին սիրում է ինքը: Ոչ, իրեն չէին հավատա: Նա չափազանց լավ էր կեղծել բոլոր հանցանշանները: Եթե ինքը պատմեր ճշմարտությունն այն մասին, թե ինչ էր կատարվել Կրեդի ու Մունիի խրճիթի միջև ընկած ճանապարհին, իրեն միայն ստոր խաբեբա ու վախկոտ կանվանեին:

Հենց այդ միտքն էլ գլխավոր սփոփանքը եղավ Ուրախ Ռոջերի համար. միտքը այն մասին, որ ինքը լավ է կեղծել բոլոր հանցանշանները, դրանք ուղղել իր դեմ, և ոչ Նեյդան, ոչ էլ մեկ ուրիշը երբեք չեն իմանա ճշմարտությունը: Նրա սերը լազուր աչքերով աղջկա հանդեպ, որը հավատում ու վստահում էր իրեն, նույնիսկ գիտենալով, որ ինքը ավազակ է, հավերժական է ու անանց, ինչպես հանգուցյալ մոր հանդեպ ունեցած իր սերը:

— Նրա համար մեռնելը իսկի էլ դժվար չէ,— իր խորհրդածություններից արված հետևությունը նա հայտնեց Պիտերին, բնավ չկասկածելով, որ վերջը հենց այդպես էլ լինելու է:

Այդ միտքը չվախեցրեց նրան: Նա հաստատ վճռեց պայքարել իր կյանքի ու ազատության համար, քանի դեռ բավականին ուժ ուներ: Բայց լավ իմանալով թագավորական հյուսիսարևմտյան հեծյալ ոստիկանության համառությունը, Ռոջերը հասկանում էր, որ նրա հետ ունեցած իր գոտեմարտի ելքը միայն մեկը կարող էր լինել: Սակայն Ռոջեր Մաք-Քեյը չէր վհատվում, հակառակ իր ապրած ողբերգությանը, հակառակ անխուսափելի, իր կյանքի էլ ավելի ողբերգական ավարտի մասին ունեցած մտքերի: Քուն թե արթուն նրան սատարում ու մխիթարում էր հիշողությունը այն աղջկա մասին, որը պատրաստ էր մասնակից դառնալ իր թափառումներին և վերջին պահին աղաչում էր իրեն էլ տանել հետը, ինչպիսի ձախորդություններ էլ որ սպասեին իրենց առաջիկայում: Նեյդան գիտեր, որ նա հանցագործ է, որին փնտրում է ոստիկանությունը, բայց դա նրան հետ չկանգնեցրեց: Եվ նույնիսկ այն բանը, որ նա մարդ էր սպանել,— թեկուզ մի սրիկայի, որն արժանի չէր ապրելու, բայց, այնուամենայնիվ, մարդ էր,— չսասանեց նրա վստահությունը Ռոջերի հանդեպ: Եվ հազար անգամ մտածել էր Ուրախ Ռոջերը, թե չի՞ սխալվել արդյոք ինքը, իրենից վանելով Նեյդային, հրաժարվելով նրա սիրուց ու հավատարիմ բարեկամությունից, երբ նա, հակառակ ամեն ինչի, ուզում էր գնալ իր հետ:

Օր առ օր, մինչ նրանք գնում էին դեպի այն տեղերը, ուր ապրում էր Դեղին Թռչունի ցեղը, Ռոջերը կռվում էր ինքն իր հետ և աստիճանաբար, ճնշելով ծանր կասկածները, համոզեց իրեն, որ ճիշտ է վարվել: Նա թույլ չտվեց, որ իր հոգում հաղթի եսասիրությունը, և դեմ գնաց Նեյդային, որ ավազակի կինը չդառնա: Ինքը ոչնչով չի կաշկանդել նրան: Նեյդային սպասում է նոր կյանք և, գուցե, նոր երջանկություն: Ինքը նրան չի դժբախտացրել, և այդ միտքը կարող է մխիթարել իրեն նույնիսկ այն գորշ ցայգաբացի ժամին, երբ օրենքը կստիպի իրեն՝ հատուցել չգործած հանցանքների համար:

Երբեմն վշտին ու թախծին փոխարինելու էր գալիս տարօրինակ հանգստությունը, որ ծանոթ էր միայն նրան, ում հոգում, այլևս սնունդ չգտնելով, հանգչում էր կրքերի հրդեհը: Եվ ահա այժմ, երբ մեր ճամփորդները գնում էին հյուսիս-արևմուտք, դեպի Ուոլլաստոն լճի ափերը, հենց այդպիսի մի հանդարտություն իջավ Ուրախ Ռոջերի հոգուն: Ճիշտ է, դա նման էր ցավի, մեղմ, մշտապես մղկտացող ցավի, բայց փոխարենը նրան նորից սերտորեն միավորեց բնության հետ, արևի հետ, ծառերի ու ծաղիկների հետ, արգասաբեր հողի հետ, այն ամենի հետ, ինչը նրա համար միշտ թանկ էր եղել, իսկ հիմա, ամենասև պահերին, նրա համար մխիթարություն ու սատար լինելու մշտնջենական աղբյուր էր դարձել: Այն բանից հետո, երբ Ուրախ Ռոջերը որոշեց այցելել Դեղին Թռչունի ցեղին, այլևս չէր շտապում: Հիմա նա ջանում էր այնպես պատկերացնել, թե իբր Նեյդան իր հետ է, և այնքան լավ էր հաջողվում նրան, որ Պիտերը բոլորովին շվարել էր, փորձելով հասկանալ, թե ում հետ է խոսում իր տերը:

Նրանց անշտապ ճանապարհորդությունը, մշտական լարվածությունը և մտերմությունը տիրոջ հետ, որը իրեն պահում էր ընկերոջ ու հավասարի պես, խիստ զարգացրել էին Պիտերի մտավոր ընդունակությունները, և նա ուզում էր ապացուցել, որ ինքն արժանի է այդ բարեկամությանն ու վստահությանը: Շնորհիվ ճիշտ ուսուցման, որին լրացնում էր բնազդը, նա հիմա շատ հարցերում ավելի լավ էր ճանաչում անտառն ու անտառային

կյանքը, քան իր տերը: Եվ դրա հետ մեկտեղ Ուրախ Ռոջերը դանդաղ, բայց հետևողականորեն ներշնչում էր նրան, թե հսկայական տարբերություն գոյություն ունի սնվելու համար կատարած որսի և ի սեր զվարճության կատարած անմիտ սպանության միջև:

— Բոլոր կենդանի արարածները ապրելու համար երբեմն պետք է սպանեն, էստեղ արդեն ոչինչ անել չես կարող, Պիտեր,— բացատրում էր նրան Ուրախ Ռոջերը:— Բայց բոլորովին ուրիշ բան է, երբ դու սպանում ես առանց որևէ անհրաժեշտության: Ա՛յ, տեսնո՞ւմ ես էն ծառը, որին փաթաթվել է գայլուկը: Գայլուկը խեղդում է ծառին, ու ժամանակի ընթացքում ծառը կչորանա: Բայց գայլուկը մեղք չունի, որովհետև ուրիշ կերպ չի կարող ապրել: Ճիշտ է, ես արմատից կպոկեմ այդ գայլուկը, քանի որ, իմ կարծիքով, ծառը ավելի պետքական է, քան գայլուկը: Այդպիսի դեպքերում պետք է վարվես այնպես, ինչպես խիղճդ է թելադրում: Ինձ ու քեզ հարկավոր է ապրել, դրա համար էլ այսօր մենք կընթրենք մատղաշ կաքավներով: Գիտես ինչ, Պիտեր, այստեղ ամեն ինչ որոշում է անհրաժեշտությունը: Դու դա հասկանո՞ւմ ես:

Այդ բացատրությունները Պիտերը չէր հասկանում, բայց նա աչքաբաց էր և արագորեն կարողանում էր գլխի ընկնել: Նա շուտով ականջին օղ արեց, որ բույն քանդելը աններելի հանցանք է: Նա զգաց, որ շատ ամոթ բան է, երբ ինքը հաճույքի համար հարձակվում է իրենից թույլ արարածի վրա: Ճիշտ է, դրանից այդպես էլ գլուխ չէր հանում և նման դեպքերում նայում էր տիրոջը, սպասելով, թե նա ինչ ցուցմունք կտա: Օգոստոս ամսին մատղաշ ճագարները շատ դյուրահավատ են լինում, և Պիտերը կարող էր տասնյակներով խեղդել դրանցից, բայց հիմա նա հետապնդում էր նրանց այն ժամանակ միայն, երբ իսկապես քաղցած էր լինում կամ էլ երբ Ուրախ Ռոջերը թույլ էր տալիս: Պիտերի դաստիարակվածության այդ փուլը շատ էր հետաքրքրում նրա տիրոջը: Ավազակը համամիտ չէր այն բնախույզներին, որոնք, իրենց միակ բանական արարածներն էին համարում աշխարհում: Նա հավատում էր, որ Պիտերն օժտված է ոչ միայն սքանչելի բնազդով և ուշիմությամբ, այլև մտածելու ընդունակությամբ, և նա օգնում էր այդ ընդունակությունների զարգացմանը: Ահա հենց դրանով էլ հիմա զբաղվում էր նա:

Դադարի ժամերին Ռոջերը, երբ չէր քնում ու չէր զբաղվում Պիտերի դաստիարակությամբ, սովորաբար կարդում էր պատմական վեպերի կարմիր հատորներից որևէ մեկը, որոնք խլել էր փոստատարից Լերկ Հողերի սահմանի վրա: Նա արդեն համարյա անգիր գիտեր դրանք: Ամենից շատ նրան դուր էր գալիս Նապոլեոնի, Մարգարիտ Անժուացու և Պետրոս Մեծի կենսագրությունները, և երբ նա իր դժբախտությունները համեմատում էր այն դժվարությունների հետ, որոնցից այդ մարդիկ դուրս էին եկել հաղթանակով, լցվում էր առույգությամբ ու վստահությամբ: Եթե բնությունը նրա համար աստված էր և սուրբ գիրք, իսկ Նեյդան՝ ուղեցույց աստղ, ապա այդ բարալիկ գրքերը, գրված մի մարդու ձեռքով, որը վաղուց արդեն մահացել էր, նրա զրուցակիցներն խորհրդատուներն էին: Դրանք Ռոջերին պատմում էին մեծ անձնազոհությունների մասին, քաջության ու խիզախության մասին, հավատարմության, պատվի ու դավաճանության մասին, այն ահավոր ողբերգությունների մասին, որոնց մշտապես հանգեցնում էր անզուսպ փառասիրությունն ու եսասիրությունը: Կարդացած գրքերից Ռոջերը դասեր էր քաղում իր համար: Եվ իր եզրակացությունները

հաղորդում էր Պիտերին: Նրան հատկապես դուր էր գալիս խիզախ ու աներկյուղ Մարգարիտ Անժուացին, և մի անգամ հիացմունքից սիրտը տրոփեց, երբ տպագիր էջերի արանքից մի ձայն շշնջաց նրան, որ Նեյդան էլ նույնպիսի մի Մարգարիտ է, միայն թե հարյուր անգամ նրանից ավելի լավ, որովհետև Նեյդան ոչ իշխանադուստր է, ոչ էլ թագուհի:

— Գիտես ինչ,— բացատրում էր նա Պիտերին,— տարբերությունն այն է, որ Մարգարիտը զոհաբերում է իրեն, պայքարում է ու պատրաստ է մեռնելու ի սեր թագավորի, իսկ մեր Նեյդան՝ ի սեր մի աղքատ մարդու, որին հետապնդում է ոստիկանությունը: Մ՛յ հենց դրա համար էլ Նեյդան շատ ավելի բարձր է Մարգարիտից,— ավելացրեց նա։— Ախր Մարգարիտն այդ զոհաբերություններին դիմում էր ոչ միայն նրա համար, որպեսզի փրկի իր ամուսնուն, այլ որպեսզի մնա թագուհի, իսկ Նեյդային միայն ես ու դու ենք հարկավոր: Եվ ահա այստեղ մենք կհետևենք Պետրոս Մեծի օրինակին,— խոսքը ավարտեց նա տխուր քմծիծաղով,— և թույլ չենք տա, որ նա իրեն կործանի:

Եվ այսպես, օր առ օր նրանք գնում էին դեպի Ուոլլաստոն գետակը, դեպի այն երկիրը, որտեղ ապրում էին Դեղին Թռչունն ու նրա ցեղը:

Սեպտեմբերի առաջին օրերին նրանք կտրեցին անցան Հեյկին և դուրս եկան Ուոլլաստոնի արևմտյան ափերը: Կեչու տերևներն արդեն ոսկեգույն երանգ էին ստացել, իսկ դողդոջուն կաղամախիների շրշյունի մեջ աշնան տագնապալի փսփսոցն էր լսվում: Բարդիները դեղնել էին, արոսիների վրա փայլում էին ծանր, կարմրավուն ողկույզները, իսկ զով, խոնավ թավուտում թավշի նման սևին էին տալիս վայրի հաղարջի հասած հյութալի պտուղները: Ուրախ Ռոջերը հատկապես սիրում էր տարվա այդ ժամանակը, իսկ Պիտերը կյանքում առաջին անգամ էր ծանոթանում սեպտեմբերին: Ցերեկները դեռ շոգ էր, սակայն գիշերները օդը զով էր, թարմացնող, և Պիտերը անտառի բնակիչների ձայների մեջ նոր սուր ելևէջներ էր որսում: Գիշերները նորից սկսել էին ոռնալ գայլերը: Կարմրաքարճիկները մոռացել էին իրենց ընտանեկան ուրախությունները և խռպոտ ձայնով ճչում էին լուսնի տակ: Ճագարները հասունացել էին ու կորցրել իրենց մանկական դյուրահավատությունը, իսկ բվերն ասես ավելի խորն էին թաղվել գիշերային խավարի մեջ և ավելի խորամանկորեն էին հետամտում որսին: Ուրախ Ռոջերը գիտեր, որ մարդիկ արդեն վերադառնում են իրենց խրճիթներն ու որսավայրերը, և էլ ավելի զգուշավոր են դարձել: Նա ուշադիր չորս կողմն էր նայում՝ տեսնելու, թե որևէ տեղից արդյոք ծուխ չի բարձրանում, ականջ էր դնում յուրաքանչյուր ձայնին, յուրաքանչյուր շրշյունին: Տագնապալի մտքերը համակեցին նրան. հինգ երկար տարիների ընթացքում ինչ ասես կարող էր պատահել Դեղին Թռչունի ցեղին: Եվս մի սովի ձմեռ կամ որևէ համաճարակային հիվանդություն կարող էր ոչնչացնել գրեթե ամբողջ ցեղը, իսկ ողջ մնացած մի բուռ մարդիկ ցիրուցան կլինեին, կսփռվեին ամեն մեկը մի կողմի վրա... Իսկ եթե հանկարծ Դեղին Թռչունը մեռած լինի՞:

Երեք օր շարունակ նա գնում էր լճի ծուռումուռ ափով և վերջապես դեմ առավ ձուկ ապխտելու համար հնդկացիների պատրաստած տախտամածին: Չարագուշակ նախազգացումը նոր ուժով համակեց նրան. մարդիկ վաղուց էին հեռացել այստեղից, հողը

ծածկված էր արջի հետքերով, իսկ մոտիկ ափին, ուր թափում էին ձկան փորոտիքը, շորորում էին երկու սև արջեր՝ տռուզ, գիրուկ: Մարդուն և շանը տեսնելով՝ նրանք բոլորովին չանհանգստացան:

Սակայն հաջորդ օրը մայրամուտին նրանք դուրս եկան ցամաքալեզվակ, որտեղ սպիտակ ավազի վրա վազվզում էին հնդկացի երեխաները. նրանք խաղում էին ու ծիծաղում, իսկ նրանց հետ խաղում ու ծիծաղում էր բարձրահասակ, նիհարավուն մի կին, եղջերվի փափուկ կաշվից կարած շրջազգեստով, երկու սև սնդուսե հյուսքերով, որոնք, երբ նա վազում էր, դեսուդեն էին թռչկոտում, զարկվում էին թիկունքին, ինչպես երկու հաստ ճոպաններ: Ուրախ Ռոջերը և Պիտերը նրան տեսան այն պահին, երբ կինը հեռացավ երեխաներից, վազեց դեպի հակադիր կողմը: Բայց հանկարծ նա շրջվեց ու նետվեց ուղիղ իրենց կողմը և, վախեցած մի ճիչ արձակելով, Մակ-Քեյից երկու քայլի վրա կանգ առավ: Պիտերը ուշադիր հետևում էր տեղի ունեցածին: Նա տեսավ, որ կնոջ թուխ աչքերում հայտնված վախը վերածվեց զարմանքի, հետո նա հևասպառ շունչ քաշեց, և այստեղ Ուրախ Ռոջերը գոչեց.

— Դեղին Թռչո՛ւն:

Ռոջերը դանդաղ մոտեցավ կնոջը, դեռևս հավատալով, որ տարիներն այդքան քիչ են փոխել նրան, և Դեղին Թռչունը ուրախությամբ ձեռքերը պարզեց, իսկ Պիտերը, չհասկանալով, թե, ճիշտն ասած, ինչ է կատարվում, կասկածանքով խեթ-խեթ նայում էր հնդկացի թխլիկ երեխաներին, որոնք կամաց-կամաց շրջապատեցին իրենց: Հետո ուռենու հետևից դուրս եկավ մի աղջիկ, և Պիտերը բոլորովին շշմեց, որովհետև նա տեսավ ևս մի Դեղին Թռչուն. նույն սքանչելի, ճկուն կազմվածքը, նույն շողշողուն աչքերը, չնայած նա Նեյդայից էլ ջահել էր: Պիտերը չգիտեր, որ դա Արևացոլքն է՝ Դեղին Թռչունի դուստրը: Բայց իսկույն էլ նրա նկատմամբ լցվեց նույնպիսի համակրանքով, որպիսին նրան ներշնչել էր շողշողուն աչքերով կինը, որը բռնել էր իր տիրոջ ձեռքերը: Դեղին Թռչունը ձայն տվեց աղջկան: Աղջիկը մոտեցավ մորը, և Ուրախ Ռոջերը համբուրեց նրա այտերը: Ապա նրանք գնացին դեպի կացարան, իսկ երեխաները Արևացոլքի գլխավորությամբ սլացան առաջ, որպեսզի առաջինը հայտնեն նորությունը: Արևացոլքի կողքից Պիտերն էլ վազեց:

Պիտերը դեռ երբեք չէր լսել, որ մարդկային կրծքից այնպիսի հառաչանք դուրս թռչի, որպիսին արձակեց Արագավազ Եղջերուն՝ Դեղին Թռչունի ամուսինը և ցեղի առաջնորդը, Ուրախ Ռոջերի հետ ողջագուրվելիս: Դա հնդկացիների կրի ցեղի հին մարտական կանչն էր: Իսկ այն, ինչ կատարվեց երեկոյան, բոլորովին խելքահան արեց Պիտերին: Բոցկլտում էին հսկայական խարույկները, դրանց շուրջը, կեսհարյուրյակ սիվաշյան շների անկարգ ոռնոցի տակ, երգում, պարում, ծիծաղում ու քեֆ էր անում ամբողջ ցեղը: Այդ շները Պիտերին դուր չեկան, բայց նա զզվոտոց չսարքեց, որովհետև ուզում էր պառկել Արևացոլքի կողքին և քիթը խոթել նրա սևուկ, քնքուշ ձեռքի մեջ:

Այդ երեկո, Արագավազ Եղջերվի տիպիի մոտ, մեծ խարույկի կողքին նստած, ամբողջ շաբաթվա ընթացքում Ռոջերն առաջին անգամ իրեն երջանիկ զգաց: Նա շարունակ

նայում էր Դեղին Թռչունին, որը հինգ տարվա մեջ գրեթե բոլորովին չէր փոխվել: Նրա աչքերը շողշողում էին խորունկ փայլով, ատամները կաթից էլ ճերմակ էին, իսկ այտերին խաղում էր մուգ կարմիրը, ճիշտ Արևացոլքի նման, որը լիովին օժտված էր հյուսիսային հնդկացուհու նուրբ գեղեցկությամբ: Նույնպիսի հաճույքով էր նա նայում և Արագավազ Եղջերվին. նրանց երջանկությունն իր երջանկությունն էր: Այդ նույն երջանկությունն էր ճառագում բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաների աչքերում, որոնց նա տեսավ իր շուրջը: Արագավազ Եղջերուն պատմեց նրան, որ երեք ձմեռ իրար հետևից որսը չտեսնված հաջող է եղել, իսկ այդ ամառը ձկան այնքան պաշար են տեսել, որ ամբողջ ձմեռ հերիք կանի, նույնիսկ եթե նորից սև օրեր գան: Նրանց ցեղը հիմա հարուստ էր. մեծ քանակությամբ տաք վերմակներ ունեին, լավ հագուստներ, տիպիներ, հրացաններ ու սահնակներ և դեռ դրանց ավելացրած մի քանի զարմանք բաներ: Նույն երեկոյան Դեղին Թռչունն ու նրա ամուսինը Ուրախ Ռոջերին հպարտությամբ ցույց տվեցին այդ նոր գանձերից երկուսը՝ կարի մեքենան ու գրամաֆոնը: Եվ Ուոլլաստոն լճի ափին, Կրեգից վեց հարյուր մղոն հեռու, Ռոջերը լսեց «Մայր Մակրին», «Տերոողորմյան» և ուրիշ տխուր ու աշխույժ երգեր:

Իսկ ուշ գիշերին, երբ կացարանը քուն մտավ, Ռոջերը Դեղին Թռչունի ու Արագավազ Եղջերվի հետ դեռ երկար նստեց հանգչող խարույկի մոտ ու պատմեց այն մասին, ինչ կատարվել էր իր հետ մարդաշատ բնակավայրերում: Նա ուրախ էր սիրտը բաց անելու համար, և, չնայած Արագավազ Եղջերուն էլ էր նրան լսում, Ռոջերը խոստովանում էր Դեղին Թռչունին, լավ իմանալով, որ նրա զգայուն ու բարի սիրտը լի է կարեկցանքով: Մեղմ ձայնով, որին, ինչպես և նրա բոլոր ցեղակիցների ձայներին, բնորոշ էր մեղեդայնությունը, Դեղին Թռչունը հարցուփորձ արեց Նեյդայի մասին, և նրա բարալիկ, նուրբ մատները քնքշորեն շոյեցին շագանակագույն մազափունջը, որը վստահեց նրան Ռոջերը: Հետո նա ասաց.

— Ես քո աղջկան անուն դրեցի: Նա Ու-Մին է, Աղավնի:

Նրա ձայնի մեջ ինչ-որ մի բան Արագավազ Եղջերվին ստիպեց ցնցվել:

— Աղավնի՛,— կրկնեց նա:

— Հա՛, Ու-Մի, Աղավնի,— գլխով հաստատեց Դեղին Թռչունը, առանց նրանց նայելու: Նրա ողջ կերպարանքը անշարժացել էր, իսկ աչքերում պարում էին խարույկի ցոլքերը: Առանց Ռոջերից թույլտվություն խնդրելու, նա Նեյդայի մազերը դրեց իր ծոցը:— Ու-Մի, Աղավնի,— կրկնեց նա՝ հեռուները նայելով:— Այդպես են կանչում նրան, որովհետև աղավնին թռչում է արագ, ուղիղ ու հավատարիմ: Անտառների, լճերի ու գետերի վրայով է թռչում աղավնին: Նա չի հոգնում: Թռիչքը չի դանդաղեցնում: Նա միշտ էլ տուն է վերադառնում:

Արագավազ Եղջերուն անձայն ոտքի ելավ:

— Գնանք,— շշնջաց նա Ուրախ Ռոջերին:

Դեղին Թռչունը չնայեց նրանց կողմը և ոչ մի խոսք չասաց: Արագավազ Եղջերուն բռնեց Ռոջերի արմունկից ու տարավ իր հետևից: Նրա աչքերի մեջ ակնածալից վախ կար:

— Այս գիշեր Դեղին Թռչունի ոգին կայցելի Ու-Միին,— ասաց նա երկյուղածությամբ:—Նա կլինի էն տեղերում, որոնց մասին դու մեզ պատմեցիր, կմտնի քո աղջկա սիրտը, իսկ առավոտ շուտ Դեղին Թռչունի միջոցով քեզ կպատմի, թե ինչ է պատահել և ինչ կարող է պատահել:

Արագավազ Եղջերուն պառկեց քնելու, իսկ Ուրախ Ռոջերը կանգնած մնաց ուռենու թփուտների մոտ, նայելով Դեղին Թռչունին, որ նստել էր անշարժ, ասես քարե արձան լիներ: Նա մի քիչ անհարմար զգաց: Ռոջերը սնոտիապաշտ չէր, բայց փոխարենը հավատում էր ներշնչումի ու ինքնաներշնչումի ուժին: «Եթե դու բավականաչափ հավատ ու համառություն ունես, ապա ուզածդ բանը կարող ես գլուխ բերել»,— շատ անգամ էր ասել ինքն իրեն: Եվ նա գիտեր, որ Դեղին Թռչունն օժտված է հենց այդպիսի հաստատ համառությամբ ու ոգիների հանդեպ սերնդից սերունդ անցնող անսասան հավատով: Ռոջերը հաստատ գիտեր, որ անձամբ ինքը ոչ մի գերբնական ընդունակություն չունի, բայց գիշերվա խորհրդավոր լռությունը շշնջում էր նրան, թե, կարող է պատահել, Դեղին Թռչունի ուղեղը օժտված է ինչ-որ առեղծվածային հատկություններով, որոնք, նախասկիզբ վիճակից դուրս գալով, քաղաքակրթված մարդը կորցրել է: Նրա այդ հատկությունների շնորհիվ, գուցե, իսկապես հաջողվի իրականացնել այն, ինչը հրաշք էր թվում իրեն: Աշխարհում ինչ ասես, որ չի լինում: Ռոջերը նստեց ավազների վրա ու շարունակեց նայել Դեղին Թռչունին, իսկ Պիտերը գունդուկծիկ եղավ նրա ոտքերի մոտ:

Մաք-Քեյը տեսավ, որ աստղերի աղոտ լույսի տակ հազիվ նկատելի փայլում են Դեղին Թռչունի մազերը, բայց նրա դեմքն ու անշարժ կերպարանքը թաղված էին խորունկ ստվերի մեջ: Կացարանը քնած էր: Նույնիսկ շներն էին սսկվել ու թաղվել էին ավազների մեջ: Խարույկների մլմլացող կրակները հանգան: Անցավ մեկ ժամ, երկրորդը, Ուրախ Ռոջերի կոպերն ասես արճճով լցվեցին, և նա քնեց՝ մեջքը հենած ավազի բլրակին, որ երեխաներն էին սարքել: Նա երազ տեսավ, իբր ինքը թռչում է երկնքում, Դեղին Թռչունի հետ: Դեղին Թռչունը նետի արագությամբ առաջ սլացավ, ինքը հետ մնաց և, վերջապես, վախից գոռաց, որպեսզի նա սպասի իրեն, ինքը ուր որ է ցած կընկնի: Իր իսկ ձայնից արթնացավ: Նա աչքերը բացեց ու տեսավ, որ գորշ երկնքում ծագում է արշալույսը: Արթնացած Պիտերը դունչը քսմսեց նրա ձեռքին: Կողքին, ավազի վրա խոր քնած էր Արագավազ Եղջերուն: Կացարանն առաջվա պես սուզված էր քնած լռության մեջ: Մաք-Քեյը սարսռալով նայեց Դեղին Թռչունի տիպիին:

Դեղին Թռչունը դեռևս նստած էր նույն տեղում, և թվում էր, ամբողջ գիշերը այդպես էլ բնավ չի շարժվել: Ռոջերը դժվարությամբ ոտքի ելավ: Երբ նա անաղմուկ մոտեցավ Դեղին Թռչունին, սա գլուխը բարձրացրեց ու նայեց նրան, հնդկուհու մազերն ու թարթիչները ցողից սպիտակել էին: Դեմքը նիհարել էր ու գունատվել, իսկ աչքերն այնպես էին խոշորացել, որ Ռոջերը նույնիսկ վախեցավ: Թվում էր, Դեղին Թռչունը ուժասպառ է եղել: Նրա ուսերը հոգնած կախ էին ընկել:

Հնդկացի կինը հառաչեց ու դանդաղ, աննկատելի ցնցվեց:

— Նստիր, Նիկևա,— շշնջաց նա, հյուսքերը սեղմելով կրծքին, ասես ուզում էր տաքանալ։

Նա նուրբ ձեռքերով տրորեց աչքերն ու կուչ եկավ։

— Ամեն բան լավ է, Նիկևա,— ասաց կամացուկ։— Ես ամպերի միջով թռա այնտեղ, ուր ապրում է Ու-Մին՝ Աղավնին։ Ես տեսա, որ նա անտառի արահետում լաց էր լինում։ Ես նրա ականջին շշնջացի, որ կգա երջանկությունը, կգա երկար երջանկությունը Նիկևայի ու Աղավնու համար։ Այդ երջանկությունը չի կարող մեռնել։ Նրան չի կարելի սպանել։ Կարմիր շորերով մարդիկ, որոնք սպասարկում են Մեծ Ճերմակ Հորը, չեն կարող նրան սպանել։ Դուք պետք է ապրեք՝ դու և նա։ Եվ Դուք կհանդիպեք։ Եվ ձեզ հետ կլինի երջանկությունը։ Ահա թե ինչ իմացա ես, Նիկևա։ Դուք կհանդիպեք և երջանիկ կլինեք։

— Բայց որտե՞ղ, ե՞րբ,— ակամա հուզվելով՝ շշնջաց Ուրախ Ռոջերը։

Դեղին Թռչունը նորից աչքերը շփեց ու գլուխը խոնարհեց այնպես, որ Մաք-Քեյը տեսավ միայն ցողից խոնավացած նրա մազերը։

— Հեռավոր Երկրում, Նիկևա,— պատասխանեց նա։ Եվ նորից իր մեծ խորհրդավոր աչքերը բարձրացրեց նրա վրա։

— Բայց որտե՞ղ է դա, Դեղին Թռչուն,— անսպասելի երկյուղով հարցրեց Ռոջերը։— Քո կարծիքով, այնտեղ, հա՞։— Եվ նա մատնացույց արեց իրենց գլխավերևում փռված գորշ երկինքը։

— Ո՛չ, երջանկությունը ձեզ սպասում է կյանքում, ոչ թե մահվան աշխարհում,— դանդաղ խոսեց Դեղին Թռչունը։— Ոչ թե Անդրաշխարհում, այլ Հեռավոր Երկրում։ Նրա գլուխը նորից հոգնած ցած կախվեց։— Ես չգիտեմ, Նիկևա, թե դա որտեղ է։ Մեծ Ճերմակ Ամպը փակեց իմ ճամփան։ Բայց մի տեղ գոյություն ունի այդ երկիրը։ Ես կգտնեմ նրան։ Եվ կասեմ քեզ... ու Աղավնուն։

Դեղին Թռչունը ելավ տեղից և, հոգնածությունից օրորվելով, գնաց տիպի։ Ուրախ Ռոջերը լսեց, թե նա ինչպես ծանրորեն փլվեց անկողնուն։

Ռոջերը նայեց դեպի արևելք, որտեղ արշալույսի ալ շողերի մեջ հալվում էր վաղորդյան մշուշը, և փորձեց գլուխ հանել իր զգացմունքներից։ Հետևում հուշիկ քայլերի ձայն լսվեց։ Նրան մոտեցավ Արագավազ Եղջերուն։ Ռոջերը հարցրեց.

— Դու Հեռավոր Երկրի մասին երբևէ լսած կա՞ս։

Արագավազ Եղջերուն գլուխն օրորեց, և երկուսով շարունակեցին լուռ նայել ծագող արևի կարմիր գնդին:

Պիտերը շատ ուրախացավ, երբ կացարանն արթնացավ: Մարդիկ աշխույժ զրուցում էին, ծիծաղում, խարույկներ էին վառում, իսկ նա անհամբեր սպասում էր Արևացոլքի հայտնվելուն: Վերջապես, Արևացոլքը դուրս եկավ Դեղին Թռչունի տիպիից, և հանկարծ, տեսնելով Պիտերին, ժպտաց նրան ճերմակատամ ժպիտով: Նրանք վազեցին դեպի լիճը, և Պիտերը, պոչը խաղացնելով, նայում էր, թե Արևացոլքը ինչպես է լվացվում, մինչև ծնկները սառը ջրի մեջ մտած: Դա Պիտերի համար երջանիկ օր էր: Նա բոլորովին նման չէր հնդկացի շներին, դրա համար էլ Արևացոլքն ու նրա ընկերները հաճույքով սկսեցին խաղալ Պիտերի հետ: Սակայն նույնիսկ զվարճության ամենաթունդ պահին Պիտերը չէր մոռանում նայել իր տիրոջ կողմը:

Իսկ Ուրախ Ռոջերը գրեթե մոռացել էր Պիտերին: Նա փորձում էր իրենից վանել այն մտքերը, որ նրան ներշնչել էր Դեղին Թռչունի մարգարեությունը: Նա մտածեց, որ Դեղին Թռչունի կախարդանքին հավատալը անհեթեթություն է և դրանից ոչ մի լավ բան դուրս չի գա, սակայն ուզում էր հավատալ, և նա բավականաչափ ազնիվ էր, որպեսզի խոստովաներ այդ բանը: Իր կամքին հակառակ Ռոջերը լցվեց նոր հույսով: Բայց այդ հույսը իր հետ քշեց տարավ հուզմունքն ու երկյուղը, որովհետև, Ռոջերի հոգում ծնվեց բնազդական համոզմունքն այն բանի, որ Դեղին Թռչունի խոսքերը կարող են իրականանալ: Ռոջերը նկատեց, որ Արագավազ Եղջերուն մի տեսակ զուսպ է: Առաջնորդը ցածրաձայն ինչ-որ բան բացատրեց մյուս հնդկացիներին: Բնակատեղին սկվեց, բայց այնտեղ եռաց աշխատանքը: Նոր-նոր էր արևը դուրս եկել, երբ ցամաքալեզվակում ոչ մի տիպի չմնաց, բացի Դեղին Թռչունի կացարանից:

Երբ ցամաքալեզվակը դատարկվեց, Դեղին Թռչունը վերջապես դուրս եկավ տիպիից: Նա տեսավ մուտքի մոտ դրված ուտելիքը: Նա ամայություն տեսավ այնտեղ, ուր կանգնած էին իր ցեղակիցների կացարանները, և ջրին մոտիկ, թաց ավազի վրա տեսավ նրանց նավակների հետքերը: Հետո դալուկ դեմքն ու հոգնած աչքերը դարձրեց դեպի արևը և հյուսքերն արձակեց, այնպես որ ծամերը թիկնոցի նման պարուրեցին նրան և շաղ եկան ավազի վրա, երբ նա նստեց պարուսինե տիպիի առջև, որը հիմա դարձել էր ոգիների կացարան:

Ցեղը նոր բնակատեղ էր հիմնել նախկին տեղից երկու մղոն հեռավորության վրա, բայց Արագավազ Եղջերուն և Ռոջերը վերադարձան հրվանդանի վրա գտնվող անտառակը, որն ընդամենը կես մղոն էր հեռու ցամաքալեզվակից: Նրանք տեսան, ինչպես Դեղին Թռչունը դուրս եկավ տիպիից, և հետևեցին նրան: Ապա Արագավազ Եղջերուն ինչ-որ կոկորդային ձայն արձակեց և շարժումներով ցույց տվեց, որ իրենք պետք է հեռանան: Ուրախ Ռոջերն առարկեց. հո չի կարելի Դեղին Թռչունին անպաշտպան թողնել: Այս կողմերում արջեր շատ կան: Ասենք մարդու հետ հանդիպումն էլ միշտ չէ, որ անվտանգ է լինում անտառի թավուտներում: Սակայն Արագավազ Եղջերվի բրոնզագույն դեմքը լի էր հպարտ հանգստությամբ:

— Դեղին Թռչունը միայն բարի ոգիների հետ է հմայում,— հավատացրեց նա Մաք-Քեյին։— Չար ոգիներին նա հեռու է քշում։ Իսկ բարի ոգիները ուզածդ վտանգից կպահպանեն նրան։ Ա՛յ, հենց դրա համար էլ, Նիկնա, էն սովի ձմեռվանից հետո մենք էսպես լավ ենք ապրում։

Նա այդ խոսքերն ասաց կրի ցեղի լեզվով, և Մաք-Քեյն էլ նույն լեզվով պատասխանեց։ Նրանք հետ դարձան ու գնացին դեպի նոր բնակատեղը։ Կեսճամփին հանդիպեցին Արևացոլքին ու Պիտերին։ Ռոջերի նախորդ օրվա ողջագուրանքը դուր էր եկել աղջկան, և հիմա, իր սևուլիկ մատները դնելով Ռոջերի ձեռքի մեջ, այտը դեմ արեց նրան, ապա վազեց առաջ, և Պիտերն էլ, ուրախ-ուրախ հաչալով նրա մոքասինների վրա, սլացավ աղջկա հետևից։

Իսկ Ուրախ Ռոջերն ասաց.

— Ա՜խ, ինչո՞ւ ես քո եղբայրը չեմ, Արագավազ Եղջերու, և ինչո՞ւ Նեյդան Դեղին Թռչունի քույրիկը չէ։ Մենք շատ այսպիսի աղջիկներ կունենայինք։— Եվ նա տխուր նայեց Արևացոլքի հետևից։

Երբ նա այս խոսքերն ասաց Դեղին Թռռչունը նստած էր՝ գլուխը կրծքին հակած ու աչքերը փակ։ Նա ձեռքի մեջ սեղմել էր փափուկ շագանակագույն մազափունջը։ Ամբողջ ցերեկը և ամբողջ գիշերը Դեղին Թռչունն այդ մազափունջը սեղմել էր կրծքին, հավատացած, որ նրա ոգին կթռչի Ու-Միի մոտ ու կգտնի նրան։ Ուտելիքը, որ թողել էին նրա համար, նա թաղել էր հողի մեջ ու հողը կոխկրտել պնդացրել էր։ Երկու օր նա ոչինչ չէր կերել, և երկու օր Մաք-Քեյնն ու Արագավազ Եղջերուն, որ հետևում էին ցամաքալեզվակում կանգնած մենավոր տիպիին, կյանքի ոչ մի նշան չէին տեսնում։

Սակայն երրորդ օրը, արևածագից առաջ, կրակի մեջ գցած թաց ճյուղից ծուխ բարձրացավ։

Արագավազ Եղջերուն խոր հոգոց հանեց։ Դա ազդանշանային ծուխ էր։

— Նա վերջացրեց կախարդանքը,— ասաց Արագավազ Եղջերուն, նշան անելով Ռոջերին։— Քեզ է կանչում, գնա։

Ռոջերի դեմքից անհետացավ մռայլ արտահայտությունը. նա տխրել էր Դեղին Թռչունի բացակայության պատճառով, իսկ հիմա Դեղին Թռչունը շուտով կվերադառնա իր մոտ։ Ուրախ Ռոջերը արագ-արագ գնաց ավազի վրայով։ Նա նորից համոզեց իրեն, որ այդ բոլորը հորինվածք է և ինքը ընդառաջ է գնում այդ ծխին միայն նրա համար, որպեսզի չնեղացնի Դեղին Թռչունին ու նրա ամուսնուն։ Սակայն նրա սիրտը զարկում էր արագ, որովհետև անկարելիի հույսը խլացնում էր առողջ բանականության ձայնը։

Դեղին Թռչունն ընդառաջ ելավ Ռոջերին այն ժամանակ միայն, երբ ընդամենը մի քանի քայլ էր մնում մինչև տիպին։ Եվ Ռոջերը, հոգոց քաշելով, մեխվածի պես կանգ առավ։ Հնդկուհին գրեթե անճանաչելիորեն փոխվել էր. նրա շաղ եկած մազերը պահպանել էին նախկին մուգ փայլը, բայց դեմքը գունատվել էր, նիհարել ու դարձել էր գրեթե այնպիսին,

ինչպիսին եղել էր սովի օրերին: Երկու օր ու գիշեր Դեղին Թռչունը ոչ կերել էր, ոչ խմել, բայց նրա թուխ աչքերը վառվում էին ցնծության մոլեգին կրակով, և Մաք-Քեյն զգաց, որ նրա հուզմունքը իրեն էլ է վարակում:

Դեղին Թռչունը ձեռքերը պարզեց նրան:

— Ես տեսա Աղավնուն, մենք միասին էինք,— ասաց նա:— Աղավնին քնեց՝ գլուխը իմ կրծքին դրած: Ես շատ գաղտնիքներ իմացա, Նիկևա, բոլորը, բացի մեկից: Ոգիներն ինձ չասացին, թե որտեղ է Հեռավոր Երկիրը: Բայց նա Անդրաշխարհում չէ: Դու Հեռավոր Երկիրը կգտնես կենդանի, այլ ոչ թե մեռած: Ահա թե նրանք ինչ ասացին ինձ: Եվ դու չպետք է վերադառնաս այնտեղ, ուր ապրում է Աղավնին: Այնտեղ ամեն ինչ սև է: Ոչ, դու պիտի գնաս միշտ առաջ ու առաջ և պիտի փնտրես Հեռավոր Երկիրը: Դու կգտնես այդ Երկիրը: Եվ կգտնես Աղավնուն, նրա հետ էլ՝ երջանկությունը: Դա կհաջողվի քեզ, Նիկևա: Բայց իմ սիրտը նախատում է ինձ այն բանի համար, որ ես չեմ կարող քեզ ասել, թե որտեղ փնտրես այդ անծանոթ երկիրը: Երբ ես մոտեցա այդ երկրին, ոսկե ու արծաթե ամպերը ծածկեցին նրան, և ես լսեցի միայն թռչունների երգեցողությունն ու ձայնը ոգիների, որոնք ասում էին, որ դու կգտնես այնտեղ տանող ճանապարհը, եթե անխոնջ ու անդադար փնտրես նրան, Նիկևա: Ես ուրախ եմ:

Յուրաքանչյուր խոսքը, որ արտասանում էր Դեղին Թռչունը իր երգեցիկ ձայնով, Ուրախ Ռոջերի հոգում անըմբռնելի հույս էր արթնացնում: Նա գիտեր, որ դա անհեթեթ է, հասկանում էր, որ կողքից դիտողը կժպտար և այդ ամենը հիմարություն կհամարեր, բայց նա ուզում էր հավատալ, և հավատում էր:

Նրա դեմքը բացվեց ու զվարթացավ, ինչպես Դեղին Թռչունի դեմքն էր բացվել: Ռոջերը նայեց շուրջը, նայեց արևի շողերից լուսավորված անտառին ու լճին և հանկարծ ձեռքը թափ տվեց:

— Ես կգտնեմ այդ տեղը, Դեղին Թռչուն, բացականչեց նա:— Ես կգտնեմ քո այդ Հեռավոր Երկիրը: Իսկ հետո,— նա շրջվեց և իր ափերի մեջ առավ Դեղին Թռչունի փոքրիկ նուրբ ձեռքը,— իսկ հետո ես ու Նեյդան կվերադառնանք քեզ մոտ, Դեղին Թռչուն,— ավարտեց նա իր խոսքը:

Եվ Ռոջերը ակնածանքով համբուրեց նրա թուխ մատները, ճիշտ ինչպես իր սրտի թագուհուն հրաժեշտ տվող ասպետը:

Գլուխ տասնմեկերորդ

Մաք-Քեյը Դեղին Թռչունի ցեղի հյուրը դարձավ և երջանիկ էր: Նա կարծես երկար բաժանումից հետո վերադարձել էր իր հարազատ ընտանիքի գիրկը: Դեղին Թռչունը մայրական քնքշությամբ էր վերաբերվում նրան: Արագավազ Եղջերուն սիրում էր Ռոջերին եղբոր պես: Երբ Մաք-Քեյը հանդիպում էր ծերունիներին և խոսք ու զրույցի էր բռնվում, նրանց դաժան, խորշոմածածկ դեմքերը պայծառանում էին, մեղմանում.

երեխաները կրնկակոխ ման էին գալիս նրա հետևից, իսկ Արևացոլքը արևածագին ու արևամուտին միշտ այտը դեմ էր անում նրան համբուրելու համար: Երկար տարիների ընթացքում առաջին անգամ Ռոջերին թվաց, որ ինքը հուսալի ապաստան է գտել: Տաք, մեղմ աշուն էր, արևոտ ցերեկներն ու աստղալից գիշերները հմայում էին, լցնում հույսերով, քնեցնում տագնապները: Ռոջերը օրավուր հետաձգում էր իր մեկնումը, իսկ Արագավազ Եղջերուն համառորեն համոզում էր նրան՝ ընդմիշտ իրենց մոտ մնալ:

Բայց Դեղին Թռչունը համամիտ չէր Արագավազ Եղջերվին, և նրա սև աչքերի հայացքը անթափանց էր մնում: Նա կարծես ինչ-որ բանի էր սպասում, ինչ-որ բանից վախենում էր:

Եվ վերջապես կատարվեց այն, ինչին սպասում էր և ինչից վախենում էր:

Մութ, խաղաղ գիշեր էր, բայց այդ խաղաղության մեջ ինչ-որ ծանր, ճնշող բան կար: Դա նման էր կենդանի արարածի, որը մերթ անշարժանում էր, մերթ անձայն, թաքուն խցկվում էր մութ ամպերի ու սև երկրի արանքը: Խավարը աղոտ տագնապներ էր բերում, գիշերային տոթը ասես ծնունդ էր առնում թաքուն, շղթայված ուժերից, որոնք ճգնում էին ազատություն ստանալ:

Քամի չկար, բայց ամպերը արագորեն սլանում էին երկնքով:

Ծառերի կատարները չէին շարժվում, և այնուամենայնիվ խշշում էին ու փսփսում:

Ծանր, տագնապալի մի նիրհ էր պարուրել անտառին, և այդ նիրհի մեջ ասես մահվան լռությունն էր թաքնված: Ուոլլաստոնի մուգ փայլուն ջրերի մոտ, ճերմակ ավազի վրա սևին էին տալիս Դեղին Թռչունի ցեղի տիպիները: Խարույկների ծխից մրոտված, վատ եղանակներից սևացած այդ տիպիները ասես հսկայական լճի ափին կանգնած ժամապահներ լինեին: Նրանց հետևում, ուռիների տակ քնած էին շները: Այնտեղից ժամանակ առ ժամանակ լսվում էին անհանգիստ վնգստոցներ, ջղաձիգ հառաչանքներ ու ատամների կրճտոց: Խոր ավազի մեջ քնած շները անհանգիստ վերուվար էին անում թաթերը: Տիպիներում տագնապած քնով էին անցել նաև նրանց տերերը: Տղամարդիկ, կանայք, երեխաները անհանգիստ քնի մեջ շուռումուռ էին գալիս, շուտ-շուտ արթնանում էին, իսկ երբ նորից էին քնում, մղձավանջներն սկսում էին տանջել նրանց:

Դեղին Թռչունը պառկել էր իր վերմակի վրա և, աչքերը լայն բացած, սևեռուն նայում էր երդիկի գորշ կետին: Ամուսինը քնած էր: Արևացոլքը փռվել էր անկողնի վրա, ձեռքերը տարածած, և նրա հյուսքերը ընկել էին մոր կրծքին: Դեղին Թռչունի նուրբ մատները ինքնաբերաբար շոյում էին աղջկա մետաքսյա վարսերը: Նա հիշեց, հիշեց այն հեռավոր օրերը, երբ ինքը դեռ չէր հանդիպել Արագավազ Եղջերվին, երբ սպիտակ կինը իր ամենասիրելի ընկերուհին էր, իսկ այդ կնոջ փոքրիկ տղան իրեն անվանում էր «իմ կախարդուհի»:

Ու չնայած Դեղին Թռչունին տանջում էին ծանր նախազգացումները, նա ակամա ժպտաց այդ ամենը հիշելիս, որովհետև դրանք պայծառ, լուսավոր օրեր էին: Հետո նրա մտքերը թռան դեպի այն օրերը, երբ փոքրիկ տղան, մեծանալով, իր ցեղին փրկեց սովամահությունից. փրկեց իրեն, Արևացոլքին ու Արագավազ Եղջերվին: Այդ օրվանից

սկսած հաջողությունը միշտ ժպտում է իրենց: Ոգիները իրենց բարի աչքով են նայում: Նրանք պահպանեցին իր ջահելությունը, գեղեցկություն պարգևեցին Արևացոլքին, վերադարձրին Արագավազ Եղջերվի ուժերը և ամբողջ ցեղին երջանկացրին: Եվ այդ բոլորի համար իրենք պարտական էին մի մարդու, որը հիմա քնած էր լճափին, բաց երկնքի տակ, ծպտված հանցագործին, ավազակին, իր պատանության օրերի փոքրիկ ընկերոջը՝ Ուրախ Ռոջեր Մաք-Քեյին: Նա շարունակեց ականջ դնել ու նայել գորշ երդիկին, բայց այժմ ոգիները ուրիշ մտքեր շշնջացին նրան, և մթության մեջ վախից նրա աչքերը չռվեցին: Ոգիները նրան նախատեցին: Նրանք ասացին, որ այն սովի ձմռանը Ռոջեր Մաք-Քեյը իր պատճառով թալանեց առևտրականին ու քիչ մնաց սպաներ նրան: Նա այդ բանն արեց, որպեսզի Դեղին Թռչնի ցեղը, նրա մերձավորները և հենց ինքը կարողանային ապրել: Բայց այն, ինչ նա արեց, բորբոքեց Նիկևայի՝ իր «փոքրիկ սպիտակ եղբոր» արյունը, որը մեծացել է և հիմա մեն-մենակ թափառում է անտառում, իր շան հետ, իսկ օրենքի կարմրահանդերձ պահապանները փնտրում են նրան: Փնտրում են այն պատճառով, որ նա շատ անգամ է խախտել օրենքը, բայց գլխավորապես այն բանի համար, որ ուզում են պատժել նրան որպես մարդասպանի:

Դեղին Թռչունը նստեց տեղում՝ Արևացոլքի պիրկ հյուսքը ձեռքի մեջ սեղմած: Նա հիշեց, որ ինքը ոգիներին հարցրեց, թե ապագայում ի՞նչ է սպասում Նիկևային, իր սպիտակ եղբորը: Եվ ոգիները պատասխանեցին, որ Նիկևան չար մարդու է սպանել ու ճիշտ է վարվել:

Ոգիները խոստացան նրան, որ Ռոջերն այլևս չի տառապի և որ Հեռավոր Երկրում նա կգտնի սպիտակ աղջկան՝ Նեյդային, կգտնի երջանկություն ու անդորր: Դեղին Թռչունը հավատում էր ոգիներին: Եվ չէր կասկածում, որ նրանք խոսում էին իր հետ: Նա հաստատ գիտեր, որ այդ բոլորը պետք է կատարվի. չէ՞ որ ոգիները չեն ստում: Մանավանդ որ գիշերվա ծանր տոթը մի աղոտ տագնապ էր առաջացրել նրա մեջ: Նա տեղից բարձրացավ՝ ականջ դնելով անտառի շշուկներին: Բայց ոչ մի բան չկարողացավ լսել. թվաց, թե միանգամից շատ մարդիկ են փսփսում: Եվ մի անորոշ երկյուղ համակեց Դեղին Թռչունին:

Նա ուզում էր արթնացնել Արագավազ Եղջերվին, բայց ձեռքը հետ քաշեց և փոխարենը զգուշությամբ մի կողմ հրեց Արևացոլքի հյուսքերը: Հետո ելավ անկողնուց, այնպես կամացուկ, անձայն, որ ամուսինն ու աղջիկը չարթնացան, տիպիից դուրս եկավ ու շուրջը նայեց՝ աշխատելով հասկանալ իր տագնապի պատճառը: Դրսում նույնպես խեղդող տոթ էր: Դեղին Թռչունը մի քանի վայրկյան ուշադիր նայեց երկնքին, ամպրոպի նշաններ փնտրեց այնտեղ ու չգտավ: Երկնքում արագորեն սլանում էին ամպերը, բայց դրանք լուսավոր էին, պայծառ, և տեղ-տեղ ամպերի արանքում առկայծում էին աստղերը: Հեռվից ամպրոպի դղրդյուն չէր լսվում: Քամի էլ չկար: Այստեղ մի պահ Դեղին Թռչունի սիրտը հանկարծ կանգ առավ, և նա ձեռքերը ջղաձգորեն սեղմեց կրծքին: Նա հասկացավ. ոգիները գիշերն այդպես ծանր ու խեղդուկ դարձրին, որպեսզի ինքն արթնանար: Դա նախազգուշացում էր: Ինչ-որ տեղից վտանգ է սպասվում: Եվ այդ վտանգը սպառնում է սպիտակ մարդուն, որ քնած էր լճափին:

Դեղին Թռչունը, թուխ, բոբիկ ոտքերով անձայն քայլերով փափուկ ավազի վրայով, գնաց նրան փնտրելու Ամպերը նոսրացան, աստղերն ավելի պայծառ փայլեցին, և Դեղին Թռչունը դա նախանշան համարեց. ոգիները օգնում են իրեն՝ փնտրելու սպիտակ մարդուն և, ուրեմն, ինքը ճիշտ էր կռահել:

Այդ գիշեր Ուրախ Ռոջերը իր ծածկոցը փռել էր ավազների վրա, ջրից հղկված տափակ սալքարերի մոտ: Նա քնած էր: Բայց Պիտերը չէր քնել, նրա աչքերը աչալրջորեն փայլում էին գիշերվա խավարում: Մկանուտ թաթերը պատրաստ էին ցատկելու: Հորանջելիս Պիտերը չէր վնգստում ու ատամները չէր ղրճտացնում, ինչպես հնդկացիների շներն էին անում:

Մշտական ընկերությունը մի մարդու հետ, որը հարկադրված էր թաքնվել մյուս մարդկանցից, զգուշություն էր սովորեցրել Պիտերին, սրել էր նրա բոլոր զգայարանները: Ճնշող լռությունը և գիշերվա անշարժությունը մի անբացատրելի երկյուղ էին ներշնչել նրան. դրանց մեջ մի անորոշ սպառնալիք է թաքնված, և Պիտերը հետևում էր անհանգիստ շուռումուռ եկող իր տիրոջ յուրաքանչյուր շարժումին, ամեն անգամ, երբ տերը քնի մեջ տալիս էր ծանոթ անունը, նա զգաստանում էր ու ցցում ականջները:

Բայց ահա Մաք-Քեյը ձայն տվեց Նեյդային, ասես աղջիկը իր կողքին լիներ: Նա պարզեց ձեռքը, և ձեռքը կպավ քարին: Ռոջերն աչքերը բացեց և, դանդաղ բարձրանալով, նստեց ավազի վրա: Ամպերը քաշվեցին, երկինքը պարզվեց, և աստղերի դալուկ լույսի տակ Ուրախ Ռոջերը տեսավ, որ մեկը կանգնած է իր կողքին: Սկզբում մտածեց, որ դա Արևացոլքն է, քանի որ Պիտերը ամբողջ մարմնով ձգվել էր նրա կողմը: Բայց, ուշադիր նայելով, ճանաչեց Դեղին Թռչունին: Նրա գեղեցիկ աչքերը նայում էին Ռոջերին սևեռուն ու տարօրինակ հայացքով: Ռոջերը վեր թռավ տեղից, մոտեցավ նրան ու բռնեց ձեռքը: Ձեռքը ասես սառույց լիներ: Նա զգաց, որ Դեղին Թռչունը ամբողջ մարմնով դողում է: Հանկարծ Դեղին Թռչունի հայացքը սահեց նրա կողքով ու նայեց խավարին:

— Լսիր, Նիկևա:

Նրա մատները խրվեցին Ռոջերի ափի մեջ: Վրա հասած լռության մեջ Ռոջերը լսեց նրա սրտի զարկերը:

— Ես արդեն երրորդ անգամ եմ լսում,— շշնջաց Դեղին Թռչունը:— Նիկևա, դու պետք է հեռանաս այստեղից:

— Բայց ի՞նչ ես լսում:

Դեղին Թռչունը գլուխն օրորեց:

— Ես չգիտեմ: Գիտեմ միայն, որ վտանգը մոտիկ է: Ես տեսա նրա ստվերը մեր տիպիի վրա, ու նրա մասին ինձ ասացին գիշերային ձայները: Նա մոտիկ է: Նա գալիս է գաղտագողի, զգույշ ու անձայն: Նա շատ մոտիկ է: Լսիր, Նիկևա: Դու ջրի ճղփոց լսո՞ւմ ես:

— Դա բադն է թևերով շփշփացնում ջրի երեսին, Դեղին Թռչուն:

— Իսկ սա՞:— Նրա մատները ավելի ուժգին սեղմվեցին։— Լսո՞ւմ ես։ Կարծես ծառը ծառին է զարկվում։

— Էդ սուզահավն է ճչում հեռվում, Դեղին Թռչուն։

Դեղին Թռչունը բաց թողեց նրա ձեռքը։

— Նիկևա, արա ինչ որ ասում եմ,— աղաչանքով ասաց նա կրի ցեղի լեզվով։— Ոգիներն այս գիշերը լցրել են տագնապով։ Ես չկարողացա քնել։ Արևացոլքը քնի մեջ տնքում ու շուռումուռ էր գալիս։ Արագավազ Եղջերուն խոսում էր քնի մեջ։ Երբ քեզ մոտ եկա, դու կանչում էիր Նեյդային՝ Ու-Միին։ Ես գիտեմ, վտանգը մոտիկ է։ Շատ մոտիկ է։ Ու էդ վտանգը քեզ է սպառնում։

— Բայց ախր առաջ դու ասում էիր, թե երջանկություն ու հանգիստ է սպասում ինձ, Դեղին Թռչուն,— հիշեցրեց Ռոջերը։— Դու ասում էիր, թե ոգիները խոստացել են, որ, իբր, ոստիկանությունն ինձ չի բռնի, և ինչ-որ Հեռավոր Երկրում ես կգտնեմ Նեյդային։ Թե՞ ոգիները հրաժարվել են իրենց նախկին խոսքից, որովհետև էս գիշեր շատ տոթ էր։

Դեղին Թռչունը հայացքը հառեց խավարին։

— Չէ՛, ոգիները ճշմարտությունն ասացին,— շշնջաց նա։— Միայն թե նրանք ուրիշ բաների մասին էլ էին ուզում պատմել ինձ, բայց չգիտես ինչու չկարողացան։ Երբ նրանք ուզում էին ինձ ցույց տալ Հեռավոր Երկիրը, որտեղ դու կգտնես Աղավնուն, ամեն անգամ ամպերը ծածկում էին նրան։ Իսկ հիմա նրանք ինձ ասում են, որ վտանգը ա՛յ էնտեղ է, լճափին։— Հանկարծ նա բռնեց Ռոջերի արմունկից։— Նիկևա։ Մի՞թե հիմա էլ դու չլսեցիր։

— Էդ ձուկն էր ջրից դուրս թռավ, Դեղին Թռչուն, ուրիշ բան չէր։

Հանկարծ Պիտերը խուլ գռմռաց, և, շրջվելով նրա կողմը, Մաք-Քեյը տեսավ, որ նա էլ ուշադիր նայում է լիճը պարուրած խավարին։

— Ի՞նչ կա, Կաղլիկ,— հարցրեց նա։

Պիտերը նորից գռմռաց։

Ռոջերը շոյեց իր արմունկը բռնած սառը մատները։

— Գնա քնիր, Դեղին Թռչուն։ Ես մի թշնամի ունեմ միայն՝ կարմիր համազգեստով ոստիկանները։ Իսկ նրանք մութ գիշերներին անտառները չեն չափչփում։

— Չէ՛, նրանք քեզ չեն փնտրում,— առարկեց Դեղին Թռչունը։— Ես նրանց չեմ տեսնում, բայց լսում եմ։ Նրանք շատ մոտ են։— Ու նորից սեղմեց Ռոջերի ձեռքը։— Շատ մոտ են,— կրկնեց նա։

— Դու պարզապես հոգնել ես, Դեղին Թռչուն, ու աստված գիտի, թե աչքիդ ինչեր են երևում,— պատասխանեց Ռոջեր Մաք-Քեյը, հիշելով, որ երկու օր նա ոչ կերել է, ոչ խմել,

որպեսզի ոգիներին լավ լսի։— Ոչ մի վտանգ էլ չկա։ Էսպիսի տոթ գիշերին ուղղակի քնել չի լինում, ու դու էլ չգիտես, թե ինչից ես վախենում։

— Էդ ոգիներն ինձ արթնացրին, Նիկևա,— իրենը պնդեց Դեղին Թռչունը։— Նրանք ոչ մի բան չեն մոռանում։ Նրանք չեն մոռացել, թե դու ինչպես գտար մեզ էն ձմռանը, երբ մենք մեռնում էինք սովից ու հիվանդություններից, երբ ես վախենում էի, թե Արևացոլքը աչքերը կփակի ու էլ երբեք չի բացի։ Նրանք չեն մոռացել, որ դու էդ ձմեռը թալանեցիր ֆակտորիան, որպեսզի մեզ փրկես մահից։ Ու քանի որ հիշում են էդ բոլորը, ոգիները չեն կարող ստել։ Եթե էդպես լինի, առաջինը ես կնզովեմ նրանց։ Բայց չէ՛, նրանք չեն ստում։

Մաք-Քեյը լռեց։ Դեղին Թռչունի համոզվածությունը նորից ազդեց նրա վրա։ Իսկ հնդկուհին, առանց նրա դեմքին նայելու, երգեցիկ ձայնով շարունակեց.

— Դու հիմա կգնաս, Նիկևա, ու մենք էլ շուտ չենք տեսնվի։ Չմոռանաս ինչ որ ասացի։ Ու հավատա։ Կա Հեռավոր Երկիրը. այդպես ասացին ոգիները։ Էնտեղ դու կգտնես Ու-Միին՝ Աղավնուն, և կգտնես երջանկությունը։ Իսկ թե որ դու վերադառնաս էնտեղ, որտեղ թողեցիր Աղավնուն, երբ փախար կարմիր համազգեստով ոստիկաններից, ապա ոչ մի բան էլ չես գտնի։ Բացի խավարից ու դատարկությունից։ Հավատա ինձ, ու ամեն բան լավ կլինի։ Բայց եթե չես հավատում...

Հանկարծ նա ձայնը կտրեց։

— Լսեցի՞ր, Նիկևա։ Դա ոչ բադը թևերը շփշփացրեց, ոչ սուզահավը կռնչաց, ոչ էլ ձուկը շրմփաց լիճը։ Դա թիակների ճղփոց էր։

Ռոջերը գլուխը թեքեց ու ականջ դրեց։

— Հա՛, թիակների ճղփոց է,— համաձայնեց նա, ու սեփական ձայնը նրան օտար թվաց։— Երևի քո ցեղակիցներից մեկնումեկը կացարան է վերադառնում, Դեղին Թռչուն։

Դեղին Թռչունը առաջ գնաց ու ձեռքերը պարզեց Ռոջերին։ Նրա մազերն ու աչքերը թավշի պես փայլեցին աստղերի լույսի տակ։ Կիսաբաց շրթունքները դողդողացին։

— Գնա՛ս բարով, Նիկևա,— շշնջաց նա։

Հանկարծ, ձեռքերը կախ գցելով, նա վազեց դեպի իր տիպին և շուտով այնտեղից դուրս եկավ Արագավազ Եղջերվի հետ։ Ուրախ Ռոջերը լուռ նայեց՝ ինչպես նրանք մոտեցան ափին ու ականջ դրեցին՝ անծանոթ նավակը կանցնի կգնա՞, թե շուռ կգա դեպի ափ։ Նավակը մոտենում էր դանդաղ ու զգույշ։ Ջրի վրա գծագրվեց նավակի աղոտ ուրվականը, բայց բոպե առ բոպե ավելի պարզ էր դառնում, և վերջապես Մաք-Քեյը տեսավ, որ նրա մեջ երկու հոգի են։ Արագավազ Եղջերուն, մինչև ծնկները ջուրը մտնելով, ձայն տվեց նավակին։

Նրան պատասխանեց մի ձայն, որը լսելուն պես Մաք-Քեյը, ասես գնդակից զարկված, ընկավ ավազի վրա, Պիտերի կողքին, իսկ Պիտերը ատամները բացեց ու գռմռաց։ Հետո, հնազանդվելով տիրոջ ձեռքի հպումին, նրա հետևից սողաց դեպի ստվերը, և Ուրախ

Ռոջերը պարուսինի կտորի տակից հանեց իր ուսապարկը, փոկերը անձայն անցկացրեց թևերին և շարունակեց նայել ու ականջ դնել:

Երբ նորից լսվեց նույն ձայնը, Ռոջերը քթի տակ ծիծաղեց ու շշնջաց.

— Դա Քասիդին է, Կաղլիկ: Էդ շեկ աղվեսը ուրեմն մեր հետքը գտել է:

Նրա աչքերում աշխույժ կրակներ թրթռացին, և Պիտերը վճռեց, որ իր տերը ծիծաղում է: Ուրախ Ռոջերը ափը խողովակի նման դրեց բերանին և գոռաց բարձր ու հստակ.

— Հե-ե՛յ, Քասիդի: Էդ դո՞ւ ես:

Պիտերը, շունչը պահած, ականջ էր դնում: Նա զգաց, որ սարսափելի վտանգ է մոտենում: Ոչ լճից, ոչ էլ ափից ոչ մի ձայն չէր լսվում: Ուրախ Ռոջերի կանչելուց հետո չորս կողմը մեռելային լռություն տիրեց:

Հետո նորից հնչեց նույն ձայնը, և յուրաքանչյուր բառը հրացանի կրակոցի շեշտակիությամբ ճեղքեց խավարը.

— Այո, սա Քասիդին է: Կապրալ Տերենո Քասիդին, թագավորական հյուսիսարևմտյան հեծյալ ոստիկանության «Մ» ջոկատից: Էդ դո՞ւ ես, Մաք-Քեյ:

— Այո, ես եմ,— պատասխանեց Ուրախ Ռոջերը:— Իսկ մեր պայմանը դեռ մնո՞ւմ է:

— Մնում է:

Ափին ինչ-որ մի ստվեր երևաց ու անհետացավ, և նորից լսվեց նույն ձայնը.

— Զգուշացիր, Մաք-Քեյ: Տեղիցդ չշարժվես, թե չէ կկրակեմ:

Քասիդին ատրճանակը ձեռքին նետվեց հենց այն տեղը, ուր քիչ առաջ կանգնած էին Ուրախ Ռոջերն ու Պիտերը, բայց այնտեղ միայն մի կտոր պարուսին կար ընկած: Հնդկացին՝ Քասիդիի ուղեկիցը, մոտեցավ նրան, և նրանք, երկար ժամանակ անշարժ կանգնած, ականջ էին դնում, թե որևէ տեղից ճյուղերի շրշյուն չի՞ լսվում: Արագավազ Եղջերուն կանգնեց նրանց կողքին, հետո նրան միացավ նաև Դեղին Թռչունը, որի աչքերը ածուխների պես վառվում էին հուզմունքից: Քասիդին նայեց նրան. նա ապշեց Դեղին Թռչունի գեղեցկությունից, բայց հնդկուհու դեմքի արտահայտությունը դուր չեկավ նրան: Իռլանդացին նետվեց դեպի ջուրը և հանկարծ մեխվածի նման կանգ առավ, շվարած մի ճիչ արձակելով. նրա նավակը անհետացել էր իր ողջ հանդերձանքով:

Նրա հետևում, աստղազարդ գիշերվա մթնշաղում հնչեց զրնգուն ծիծաղը, և Դեղին Թռչունը անհետացավ իր տիպիում:

Իսկ ջրի վրա կանգնած մշուշի միջից լսվեց Ուրախ Ռոջեր Մաք-Քեյի հեռավոր ձայնը.

— Մնաս բարո՛վ, Քասիդի:

Վերջին բառը խեղդվեց շան մարտական հաչոցի մեջ: Տիպիում Դեղին Թռչունը իր տաք կրծքին սեղմեց Արևացոլքի թուխամազ գլուխը և շողշողուն ժպիտով նայեց երդիկին, որտեղից եկել էր ոգիների նախազգուշացումը: Եվ կրկին նրա ականջին հասավ հեռավոր կանչը.

— Մնաս բարո՛վ, Քասիդի:

Գլուխ տասներկուերորդ

Ուրախ Ռոջերը Քասիդիի նավակով սահում էր Ուոլլաստոնի սև, թեթևակի կայծկլտացող ջրերի վրայով, համաչափ շարժելով թիերը, և գիշերային օդը կենարար ըմպելիք էր թվում նրան: Այստեղ ասես չկար ճնշող ծանր տոթը: Աստղերի արտացոլքը օրորվում էր մեղմ ծփանքից, որովհետև քամի էր բարձրացել: Եվ Մաք-Քեյի երակներում նորից արթնացավ արկածների հանդեպ ունեցած սերը: Նա ծիծաղեց, ուժ տալով թիերին, և միառժամանակ մոռացավ այն մասին, որ ինքը ավազակ է, որին հետապնդում է ոստիկանությունը, և որ, Նեյդայից զրկվելով, ինքը կորցրեց այն ամենը, հանուն որի արժեր ապրել: Նրա ծիծաղի մեջ հնչեց նախկին ուրախ անհոգությունը. նրան շատ էր դուր եկել Քասիդիի գլխին խաղացած օյինը: Նա կարծես տեսնում էր, թե Քասիդին, կրակոտ, բուռն կատաղությամբ բռնված, նույնիսկ ավելի կրակոտ, քան նրա մազերն էին, ինչպես է հայհոյելով դեսուդեն ընկնում ափին, փնտրելով իր նավակը:

— Մենք կպած ենք նրանից, Պիտեր,— բացատրեց Ուրախ Ռոջերը:— Որտեղ ես, էնտեղ էլ Քասիդին: Ախր բանն էսպես է եղել. շատ տարիներ առաջ Քասիդիին առաջադրանք են տվել (նրանց մոտ այդպես է կոչվում): Իսկ առաջադրանքը մոտավորապես այսպիսին է եղել. «Բռնել Ռոջեր Մաք-Քեյին ողջ կամ մեռած»: Եվ Քասիդին էդ օրվանից կատարում է առաջադրանքը: Բայց նրան ոչ մի կերպ չի հաջողվում ինձ բռնել, Կաղլիկ: Միշտ մի բոպեով ուշանում է:

Բայց չնայած Ուրախ Ռոջերը ծիծաղում էր, նրա սրտում մի ցանկություն կար միայն, որը նույնիսկ ինքն իրեն չէր խոստովանում: Նա շատ անգամ էր առիթ ունեցել սպանելու Քասիդիին, և Քասիդին էլ շատ անգամ կարող էր սպանել Ռոջեր Մաք-Քեյին: Սակայն ոչ մեկը, ոչ էլ մյուսը չէին օգտվել նման հնարավորությունից: Նրանք ազնիվ խաղ էին խաղում, իսկական մարդուն վայել խաղ, և Ուրախ Ռոջերը, համոզված լինելով իրեն հետապնդողի ազնվությանը, մի տեսակ բարեկամական զգացմունք էր տածում նրա հանդեպ. երբեմն ուզում էր մոտենալ Քասիդիին, ամուր սեղմել նրա ձեռքը: Այնուամենայնիվ, նա երբեք չէր մոռանում, որ աշխարհում ավելի անողոք թշնամի չունի, քան կապրալ Քասիդին էր, որ երկար ամիսներ ու տարիներ շարունակ հետապնդել էր իրեն Լերկ Հողերում, Բևեռային շրջանում, Մաքենզի գետի հոսանքն ի վար, հոսանքն ի վեր. այդ անխոնջ հետապնդողը, որը շատ անգամ գրեթե հասել էր նրա հետևից տասը հազար մղոն տարածության վրա, որ կտրել անցել էին նրանք Հյուսիսի խուլ թավուտներում: Միասին խաղալով այդ հրապուրիչ խաղը, նրանք հաղթահարել էին բազմաթիվ մահացու վտանգներ, որոնցով սպառնում էր այդ խստաշունչ երկիրը: Նրանք

սոված էին մնացել ու ցրտահարվել էին, և շատ անգամ հազարավոր մղոններով ամայի տարածություններ էին ձգվել նրանց հետևում, եղել էր նույնիսկ, որ նրանք մահը ավելի էին գերադասել այն ամենից, ինչ կարող էր սպասվել առաջիկայում: Բայց նույնիսկ այդ անապատում էլ, երբ մենակության թախիծը սկսում էր հարևանություն անել խելացնորության հետ, ոչ մեկը, ոչ էլ մյուսը անձնատուր չէին լինում: Խաղի վերջը չէր երևում, Քասիդին շարունակում էր հետապնդումը, իսկ Ուրախ Ռոջեր Մաք-Քեյը պաշտպանում էր իր ազատությունը:

Հիմա, երբ լողում էր դեպի հյուսիս-արևելք, Ուրախ Ռոջերը հիշեց այն պայմանի մասին, որ շաբաթներ առաջ կնքել էին իրենք Կրեգի մոտ, երբ ինքը նորից նեղն էր գցել Քասիդիին, ու նա երդվել էր հրաժարական տալ, եթե հաջորդ հանդիպմանն էլ ձեռքից բաց թողնի նրան: Քասիդին, անշուշտ, իր խոսքի տերը կլինի, և ինչ-որ բան Ռոջերին հուշեց, թե այս գիշեր սկսվեց դրամայի վերջին գործողությունը, որ խաղում էին երկու դերասաններով: Նա դարձյալ քթի տակ ծիծաղեց, պատկերացնելով, թե այնուհետև ափին ինչպես են ծավալվելու գործողությունները: Քասիդին օրենքի անունից նավակ ու հանդերձանք է պահանջում Արագավազ Եղջերվից, իսկ սա առաջնորդին հատուկ մեծագույն արժանապատվությամբ ամեն կերպ ձգձգում է: Ռոջերը համոզված էր, որ կհասցներ առնվազն մեկ մղոնով հեռանալ շիկահեր խուզարկուից, մինչև նա կվերսկսեր հետապնդումը: Իսկ Ուոլլաստոն լիճը, որ վաթսուն մղոն երկարություն ու երեսուն մղոն լայնություն ուներ, մեծ թվով ծածուկ անկյուններ էր առաջարկում նրան, որոնք ապահով թաքստոց կարող էին լինել:

Բարձրացած հյուսիս-արևմտյան քամին նպաստեց նրա մտադրությունների իրագործմանը, և նա սկսեց թիավարել ավելի համարձակ ու եռանդով: Երկու ժամվա ընթացքում նա, աստղերը ուղեցույց ունենալով, նավարկեց ուղիղ դեպի արևելք, հետո շրջվեց հյուսիս: Լույսը բացվելուն պես դիմացի ափին երևաց անտառը, և արևը դեռ չէր ծագել, որ Մաք-Քեյը նավակը դուրս քաշեց ավազների վրա, հրվանդանի ծայրին, որտեղից բացվում էր լճի ողջ տեսարանը:

Հարմար տեղավորվելով խիտ եղևնիների ստվերում՝ Ուրախ Ռոջերն ու Պիտերը ամբողջ օրը աչքերը չորս արած նայում էին լճին, սպասելով իրենց թշնամու հայտնվելուն: Բայց Ուոլլաստոնի խաղաղ լայնություններում ոչ մի տեղ ոչ մի նավակ չէր երևում: Միայն մթնշաղից առաջ, երբ մշուշը նստեց լճի վրա, Մաք-Քեյը վերջապես խարույկ վառեց ու Քասիդիի պաշարներից ընթրիք պատրաստեց. նա գիտեր, որ պարզ եղանակին ծուխը կնկատվի ավելի մեծ հեռավորությունից, քան նավակը: Սակայն, չնայած դիմեց այդ նախազգուշական միջոցին, նա համոզված էր, որ արդեն հանգիստ կարող է վերադառնալ Դեղին Թռչունի ցեղի մոտ:

— Գիտես ինչ կա, Կաղլիկ,— ծխամորճը քաշելով՝ նա դիմեց Պիտերին,— Քասիդին կարծում է, որ մենք ամբողջ թափով ծլկում ենք Հյուսիս: Նա կգնա դեպի լճի վերին ծայրը, իսկ այնտեղից Բլեք-ռիվերով կուղևորվի դեպի Պորքյուփայն լիճը: Դա մի ընդարձակ երկրամաս է. չէ՞ որ մեր նախկին զբոսանքների ժամանակ ես ու Քասիդին տարածության

հարցում իսկի նեղություն չենք քաշել: Հը՛, ինչ ես ասում, Պիտեր, գնա՞նք Դեղին Թռչունի մոտ: Եվ Արևացոլքի մոտ:

Ի պատասխան Պիտերը պոչը տփտփացրեց գետնին, բայց Ուրախ Ռոջերն արդեն փոշմանել էր: Նա ուզում էր հետ դառնալ. մութն ընկնելու հետ նրան համակեց մենակության թախիծը: Միայն Դեղին Թռչունի մոտ նա կարող էր կարեկցանք գտնել, միայն Դեղին Թռչունը նրան վշտակցեց այն բանի համար, որ նա կորցրել էր Նեյդային: Երբ Ռոջերը Դեղին Թռչունի մոտ էր, հուսահատությունից չէր տանջվում, հնդկուհու ձայնը հույս ներշնչեց նրան, իսկ ինքը՝ Դեղին Թռչունը, ամբողջ սրտով երջանկություն ցանկանալով նրան, խոստացավ, որ բոլոր դժբախտություններին վերջ կլինի և խավարին կհաջորդի լույսը: Ռոջերն արդեն իջել էր դեպի ջուրը, որտեղ մանր ալիքները զարկվում էին գլաքարերին, բայց ինչ-որ բան հետ պահեց նրան, և նա վերադարձավ այնտեղ, ուր ճյուղերի կույտի վրա փռված էր նրա վերմակը: Նա պառկեց, բայց երկար ժամանակ նայում էր իր դիմաց փռված խավարին և ոչ մի կերպ չկարողացավ քնել:

Նա մոռացել էր Քասիդիին և հիմա մտածում էր Դեղին Թռչունի մասին: Նախկին կասկածներին, որ հիմնված էին խելամիտ փաստարկների վրա, փոխարինել էր հավատալու ցանկությունը, որի դեմ նա չէր ուզում պայքարել: Անտառներում անցկացրած տարիների ընթացքում նա ամեն տեսակ պատմություններ էր լսել հնդկացի շամանների արտասովոր ընդունակությունների մասին: Նրա մայրը համոզված էր, որ միտքը օժտված է հատուկ ուժով, և այդ բանը սովորեցնում էր իր որդուն, իսկ նա, բնության սիրահարը, հեշտությամբ էր հավատում իր մորը:

«Որևէ բանի մասին մտածիր, հավատա, որ կկատարվի, և դա անպայման կկատարվի»,— կրկնում էր մայրը: Նույն բանն էր ասում նաև Դեղին Թռչունը: Ուրեմն, գուցե, դա ճի՞շտ է: Հանկարծ ու իսկապե՞ս նրա մտքերը հանդիպել են Նեյդայի մտքերին և նույնիսկ թափանցել են ապագայի մեջ, որպեսզի իրեն ցույց տան ճանապարհը: Նա շուրջը ոչինչ չէր տեսնում և ոչինչ չէր լսում. նրան արդեն թվում էր, որ անցած գիշերվա իրադարձությունը Դեղին Թռչունի արտասովոր ձիրքի ապացույցն է: Չէ՞ որ Դեղին Թռչունը իրեն նախազգուշացրել էր մոտեցող վտանգի մասին: Առանց տատանվելու և առանց տարակուսելու: Դեղին Թռչունը ոչինչ չէր տեսել ու ոչինչ չէր լսել, բայց վերադարձել էր նրա համոզվածությունը: Նա գիտեր, որ Քասիդին մոտերքում է:

Ռոջերը նստեց, նրա սիրտը զարկում էր կատաղորեն: Այո՛, այո՛, իհարկե, դա ապացույց է: Դեղին Թռչունն ակամա տվեց իրեն այդ ապացույցը: Դեղին Թռչունին անհանգստացնում էր միայն տագնապը Ռոջերի անվտանգության համար և նրա հանդեպ ունեցած սերը: Եվ այստեղ որքան էլ որ գայթակղիչ էր այդքան պարզունակ բացատրությանը հավատալը, Ռոջերը նորից կասկածների մեջ ընկավ: Եթե Դեղին Թռչունը նրան հրամայեր անմիջապես վերադառնալ Նեյդայի մոտ, նա առանց տատանվելու կհավատար և իսկույն ճանապարհ կընկներ: Սակայն Դեղին Թռչունը նրան թույլ չտվեց վերադառնալ և գուշակեց, որ նրա վերադարձը միայն վիշտ ու դառնություն կբերի: Նա Ռոջերին համոզեց գնալ հայտնի չէ թե ուր, գտնել երևակայական, հնարովի, գոյություն չունեցող Հեռավոր Երկիրը, որի մասին նրան ասել էին անգո ոգիները: Եվ ահա այդ Հեռավոր Երկրում, եթե,

իհարկե, հասնի այնտեղ, նա կգտնի և՛ Նեյդային, և՛ հավիտենական երջանկություն: Ո՛չ, եթե լավ մտածենք, Ռոջերը փորձում էր հավատալ ինչ-որ անդրջրհեղեղյան առասպելի: Գուցեև Դեղին Թռչունն իսկապես ունի ինչ-որ առանձնահատուկ ընդունակություններ, բայց դրանք շատ սահմանափակ են: Եվ հավատալ նրա ասածներին, սնապաշտության ու երևակայության թևերին նստած, իրականության սահմաններից հեռու սլանալ՝ կնշանակի նմանվել անկիրթ ու անուս վայրենու:

Ուրախ Ռոջերը նորից մեկնվեց իր վերմակի վրա, մի անգամ ևս կրկնելով այդ վերջին անհերքելի փաստը: Սակայն երբ վերջապես քնեց, նրա սիրտը չափազանց հանգիստ էր: Նա երազում տեսավ Նեյդային: Նրանք դարձյալ միասին էին, բայց չգիտես ինչու Դեղին Թռչունը շարունակ հետամտում էր նրանց, և ոչ մի կերպ չէին կարողանում պոկվել նրանից: Նրանք վազում էին եղևնիների բացատում, մորիների ու մանուշակների մեջ: Ինքը վազում էր Նեյդայի հետևից ու տեսնում էր, թե նրա շագանակագույն խոպոպներն ինչպես են ծածանվում քամուց:

Բայց որքան էլ արագ էին վազում նրանք, որտեղ էլ որ թաքնվում էին, Դեղին Թռչունը հասնում էր նրանց հետևից: Ամենուրեք տեսնում էին նրա թուխ աչքերի հայացքը: Ի վերջո, արհամարհելով իր սեփական ամաչկոտությունը, Ռոջերը Նեյդային բռնեց սպիտակ, կապույտ, դեղին ծաղիկներով ծածկված բլրակի մոտ ու համբուրեց, իսկ Դեղին Թռչունը, քսան յարդ հեռու, մասրենու թփի հետևում կանգնած, նայում էր նրանց: Այդ համբույրը այնքան իրական էր, այնքան իրական էր Նեյդայի ձեռքերի հպումը Ռոջերի պարանոցին, որ նա, ուրախ ճիչ արձակելով, արթնացավ... ու տեսավ, որ երկինքը շառագունել է:

Մի քանի վայրկյան նա նստած մնաց, ի վիճակի չլինելով ջոկելու, թե որն է երազը, որը՝ իրականությունը: Հետո ձայն տվեց Պիտերին ու նրա հետ իջավ դեպի լիճը:

Այդ ամբողջ օրը Պիտերն ինչ-որ փոփոխություն էր նկատում տիրոջ մոտ: Ուրախ Ռոջերը նրա հետ չէր խոսում, չէր շվշվացնում ու չէր ծիծաղում, այլ գրեթե ամբողջ ժամանակ նստած էր անշարժ, իսկ դեմքին մի անորոշ արտահայտություն էր քարացել: Նա վերջին անգամ կռիվ տվեց Կրեգ վերադառնալու ցանկության հետ: Դեղին Թռչունի գուշակությունն ու նախազգուշացումը հիմա նրա վրա բնավ չէին ազդում: Նա մտածում էր միայն Նեյդայի մասին: Նեյդան այնտեղ սպասում էր իրեն և կգնար իր հետևից, մասնակից կդառնար իր թափառումներին, պատրաստ էր ապրել ու մեռնել իր հետ միասին, կիսել իր վիշտն ու ուրախությունը: Եվ մի քանի անգամ արդեն պատրաստվում էր ճանապարհ ընկնել: Բայց իսկույն էլ նրա մտքի հայացքի առջև հառնում էր մեկ ուրիշ պատկեր. մշտական փախուստ, թաքնվելու անհրաժեշտություն, քաղց, ցուրտ, անվերջանալի ձախորդություններ, իսկ հետո, անխուսափելի, ինչպես արևի ծագումը, բանտ, իսկ գուցեև կախաղան:

Միայն իրիկնադեմին Պիտերը իր տիրոջ դեմքին տեսավ նախկին արտահայտությունը. նա նորից նույն Ուրախ Ռոջերն էր, և այդ Ուրախ Ռոջերն ասաց.

— Ահա և մենք մեր վճիռը կայացրինք, Կաղլիկ: Մեզ չի կարելի հետ դառնալ: Մենք կգնանք Հյուսիս ու ձմեռը կանցկացնենք Լերկ Հողերի երկրում: Դա շատ ընդարձակ երկիր է: Ու եթե Քասիդին էնտեղ էլ հայտնվի...

Նա տրտում վեր քաշեց ուսերը:

Մեկ ժամ անց, երբ արևը արդեն իջնում էր դեպի մայրամուտ, նրանք ճանապարհ ընկան:

Երկու օր շարունակ Ռոջերն ու Պիտերը հանդարտ, անշտապ նավարկում էին Ուոլլաստոն լճի արևելյան ափի երկայնքով: Մաք-Քեյը համոզված էր, որ ինքը ճիշտ է կռահել, թե Քասիդին նոր հետապնդման ծրագիր կազմելիս ինչ կմտածի: Քասիդին, անշուշտ, կգնա արևմտյան ափի երկարությամբ, հետո կկտրի Խատչետ լիճն ու կգնա Բլեք-ռիվերի հոսանքն ի վեր, քանի որ նրա հակառակորդը առաջներում, երբ վտանգը մոտ էր լինում, միշտ գնում էր ուղիղ դեպի հյուսիս: Իսկ ինքը՝ Ուրախ Ռոջերը, վճռեց անշտապ առաջ գնալ Ուոլլաստոնի արևելյան ափի երկարությամբ, որպեսզի հետագայում Բրոշե և Տիվյազե գետերով գնար հյուսիս արևելք, ու խուսափեր հետապնդումից: Այդ դեպքում իր և Քասիդիի միջև եղած տարածությունը ժամ առ ժամ կմեծանար, և, սպասելով հարմար ժամանակի, Պիտերի հետ հանգիստ կհասներ մինչև Լերկ Հողերը:

Պետերը, և միայն Պիտերը նկատեց շրջակա բնության հրաշագեղությունը, երբ երրորդ օրվա իրիկնադեմին նրանք դանդաղ նավարկում էին ափին մոտիկ ու մոտեցան մի ջինջ վտակի, որի անունը Կաղ Որմզդեղն էր: Մինչև մայրամուտ դեռ երկու ժամ էլ կար: Լիակատար անդորր էր տիրում, և Ուոլլաստոնի ջրերը քարացել էին, ինչպես մի շողշողուն հայելի: Եվ այնուամենայնիվ խաղաղ օդի մեջ փոքր-ինչ զգացվում էր աշնան կծող ցուրտը, իսկ բլրաշատ ափին փռված անտառը կարմիր ու ոսկեգույն ալիքներով ձգվում էր հեռուները, պարուրված սեպտեմբերյան մշուշի քողով, որը դիմափոշու քուլա էր հիշեցնում: Այդ երեկոյին վիճակված էր ընդմիշտ մնալու Պիտերի հիշողության մեջ. մինչև իր կյանքի վերջը նա չէր մոռանում այդ մայրամուտը:

Սակայն վտանգի ոչ մի նշան չկար. Պիտերի աչքերը տեսնում էին միայն շրջապատող աշխարհի հրաշալիքները, ականջները լսում էին միայն անտառի քնկոտ ձայները, իսկ քիթը զգում էր միայն խեժի անուշահոտությունն ու հասած հատապտուղների բուրմունքը: Ուղիղ նրանց դիմաց, ափի սպիտակ ավազաշերտից այն կողմ, ձգվում էր ոչ բարձր բլուրների շղթան, որտեղ կապտականաչ փշատերև ծառերին մեջ-մեջ փոխարինում էին արոսենու կարմիր պտերն ու հրածաղկի շերտերը, որոնք բոցկլտում էին մայր մտնող արևի շողերի մեջ:

Այդ դրախտային անկյունից նրանց էր հասնում միայն թռչունների ճլվլոցը, մեկ էլ շեկ սկյուռի բլբլոցը: Բարձր ճչում էր ճայը, իսկ առաջին ու երկրորդ, ավելի բարձր բլուրների արանքում ագռավների երամը անհանգիստ պտտվում էր սև արջի ու նրա պստլիկ քոթոթի գլխավերևում, որոնք արոսենու պտուղներ էին անուշ անում: Բայց Պիտերը արջի հոտը չառավ, չլսեց նրա փնչոցները, և հեռավոր ագռավներն էլ ավելի քիչ հետաքրքրեցին նրան, քան մոտեցող ափի գաղտնիքները:

Պիտերը, որ նստած էր նավաքթին, շրջվեց ու նայեց տիրոջը: Ուրախ Ռոջերի աչքերն ու դեմքը առաջվա պես թախծոտ էին: Ափամերձ անտառը չէր հրապուրում նրան, ինչպես չէր հրապուրում և Պիտերին: Այնտեղ, ինչպես և ամենուրեք, նրան սպասում էին միայն ամայությունը, անխուսափելի մենակությունը, կործանված հույսերի ու փշրված երազների քառսը: Նա կորցրել էր կյանքի հանդեպ ունեցած սերը: Նա այլևս չէր տեսնում գեղեցկությունը: Արևը ուրիշ էր հիմա նրա համար: Երկինքը՝ նույնպես: Անտառային թավուտների անեզրությունը հիմա ճնշում էր նրան և ոչ թե առաջվա պես ուրախացնում:

Պիտերը պարզորոշ զգաց տիրոջ հոգում կատարված փոփոխությունը, թեև գլխի չընկավ, թե ինչն էր դրա պատճառը: Ինչպես Ուրախ Ռոջերն այլևս առաջվա աշխարհը չէր տեսնում իր շուրջը, այդպես էլ Պիտերը այլևս չէր տեսնում առաջվա Ուրախ Ռոջերին:

Նրանք կպան ցամաքաշերտին, որտեղ ավազը գորգից փափուկ էր: Պիտերը դուրս թռավ նավակից: Կիվիվների զույգը խրտնեց ու փախավ ավազաշերտի լայնությամբ: Պիտերը սրեց ականջները, ու այդտեղ էլ նրա քիթը որսաց շատ հետաքրքիր մի հոտ. քիչ առաջ ավազի վրայով անցել էր փշախոզը: Ճայի խռպոտ ձայնը, ինչպես նաև սկյուռի երգեցիկ չրթչրթոցը հիմա մոտիկից էր լսվում:

Պիտերը խոր հաճույք զգաց: Չէ՞ որ դա կյանքի մարմնավորումն էր, իսկ նա, ի տարբերություն տիրոջ, առաջվա պես սիրում էր կյանքը: Պիտերը համարձակ գնաց դեպի այն կողմը, որտեղ ուռիների, դալար կեչիների ու հրածաղիկների ալ շերտերի հետևում սկսվում էր անտառը: Այստեղ ոչ շատ առաջ անձրև էր եկել, և բոլոր բուրմունքները թարմ էին ու հաճելի:

Նա գտավ սև հաղարջի մի թուփ, որ ծածկված էր հյութեղ ու փայլուն պտուղներով, և սկսեց փետրել: Գետնասկյուռը, որ այդ թուփը իր սեփականությունն էր համարում, դժգոհ ծվծվաց և ձարխոտի խավոտ սաղարթների հետևից բարկությամբ նայեց շանը: Պիտերը պոչը թափ տվեց. տիրոջ հետ երկար շփվելը բարեհոգություն էր սովորեցրել նրան: Նա բարեկամաբար հաչաց:

Եվ այստեղ լսեց մի ձայն, որից բոլոր մկանները լարվեցին.

— Ձեռքերդ վե՛ր, Մաք-Քեյ:

Պիտերը հետ նայեց: Իրենցից քիչ հեռու, ափին մոտ, մի մարդ էր կանգնած: Այդ նրա հոտն էր առել ինքը հնդկացի Թոմի խրճիթի մոտ, այդ նրանից էր փախել իր տերը, նրա ձայնն էին լսել իրենք Դեղին Թռչունի տիպիի մոտ երեք գիշեր առաջ: Տերենս Քասիդին էր, հյուսիսարևմտյան թագավորական ոստիկանության կապրալը: Քասիդիից քսան քայլ հեռու կանգնած էր Մաք-Քեյը՝ ուսապարկը մեջքին ու թիակը ձեռքին: Քասիդին դառը ժպիտով նշանի տակ էր առել նրան: Մի պահ բոլորը քարացան անմոռաց կենդանի պատկերի մեջ: Քասիդին գլխաբաց էր, և նրա շեկ մազերը հուրհրում էին արևի տակ: Նա կաս-կարմիր էր կտրել, իռլանդական կապույտ աչքերում շողում էր մոլեգին ուրախությունը. վերջապես երկար տարիներ տևող նրանց վտանգավոր խաղը ավարտվեց: Վերջին քայլը Քասիդին արեց և հաղթեց:

Քասիդիի ձայն տալուց հետո համարյա մի րոպե Մաք-Քեյը մնաց անշարժ կանգնած: Եվ Քասիդին էլ չկրկնեց հրամանը. նա հասկացավ, որ իր հակառակորդը շշմել է անսպասելիությունից, և ուզում էր նրան ժամանակ տալ ուշքի գալու: Հետո Ուրախ Ռոջերը խոր հոգոց հանեց: Նրա ուսերը կախվեցին: Պարկը ցած սահեց ու ընկավ գետին: Նա բաց թողեց թիակը և ձեռքերը դանդաղ վեր բարձրացրեց: Քասիդին ցածրաձայն ծիծաղեց:

Դեռ մի քանի օր առաջ Մաք-Քեյն ինքը հանգիստ կծիծաղեր ի պատասխան նրա, արժանին հատուցելով հակառակորդին նույնիսկ իր պարտության ժամին: Բայց հիմա նա ուրիշ էր:

Հիմա Քասիդին էլ էր նրան ուրիշ տեսակ երևում: Ոչ իր պարտքը սրբորեն կատարող կտրիճ էր, ոչ էլ ազնիվ հակառակորդ, որին նա ուրախությամբ իրեն բարեկամ կհամարեր նույնիսկ մենամարտի ամենաթեժ պահին: Հանձին Քասիդիի հիմա նա տեսնում էր դահճին: Ռոջերի դեմ էր դուրս եկել ամբողջ աշխարհը, և ահա, երբ նա հասել էր ծայրաստիճան հուսահատության, անողոք ճակատագիրը Քասիդիին հանձնարարել էր վերջին մահացու հարվածը հասցնել նրան:

Ռոջերը հնազանդ բարձրացրեց ձեռքերը, բայց միևնույն ժամանակ բռնվեց կույր ցասումով: Աչքերը մթնեցին: Այդ պահին նա չէր մտածում ոչ օրենքի, ոչ մահվան, ոչ էլ ազատության մասին: Կատարված ողջ անարդարությունը նրան հասցրեց կատաղության և ստիպեց մտածել միայն մի բանի մասին՝ վրեժի: Նա պարզապես չէր նկատել իր վրա ուղղված Քասիդիի ատրճանակը: Հազար ատրճանակ էլ լիներ, նա չէր նկատի: Եվ կատաղի մռնչյունով նա ձեռքը գցեց ատրճանակի պատյանին:

Վերջին վայրկյանին միայն Քասիդին կռահեց նրա մտադրությունը և գոչեց.

— Կաց, ի սեր աստծո, վերջ տուր, թե չէ կկրակեմ:

Նույնիսկ Պիտերն զգաց, որ այդ ակնթարթները հղի էին զարհուրելի սպառնալիքներով՝ ողբերգությամբ, մահով: Այդ զգացումը ծանոթ էր Պիտերին. նա այդ բանն զգացել էր այն ժամանակ, երբ Նեյդային փրկելու համար ատամները խրեց Ջեդ Հոկինսի ոտքը:

Վայրկյանի այդ չնչին մասնիկի ընթացքում, որ անհրաժեշտ եղավ Պիտերին ցատկ կատարելու համար, կապրալ Քասիդին հասցրեց մատը դնել ձգանի վրա, քանի որ Մաք-Քեյը արդեն գրեթե ատրճանակը դուրս էր քաշել պատյանից: Քասիդին նշան բռնեց նրա ուսին. նա չէր ուզում Ռոջերին սպանել:

Պիտերը ամբողջ մարմնով հարվածեց Քասիդիին այն պահին, երբ նա կրակեց, և Մաք-Քեյը լսեց գնդակի սուլոցը իր ականջի տակ: Նա հանեց ատրճանակը: Պիտերը, ավելի պինդ սեղմելով ատամները, երկրորդ կրակոցը լսեց ու հասկացավ, որ իր տերն էր կրակում: Երրորդ կրակոցը չեղավ: Քասիդին ծանրորեն փլվեց գետնին, ու նրա բերանից ծիծաղի պես մի բան դուրս թռավ, միայն թե դա ծիծաղ չէր: Նա շրջվեց կողքի վրա՝ իր տակ ճզմելով Պիտերին:

Ուրախ Ռոջերը կանգնել էր, ատրճանակը ձեռքում սեղմած, ու սառած հայացքով նայում էր իր դիմաց: Պիտերը մի կերպ դուրս եկավ իր վրա ընկած մարմնի տակից ու հիմա տարակուսանքով մեկ տիրոջն էր նայում, մեկ այն մարդուն, որը հսկա սարդի նման փռվել էր ավազների վրա: Հետո Մաք-Քեյը ուշքի եկավ: Նա մի կողմ շպրտեց ատրճանակը, իբրև անպետք ու սարսափելի մի բան, ճչալով վազեց դեպի Քասիդին ու կռացավ նրա վրա:

— Քասիդի... Քասիդի...— կանչեց նա:— Աստվա՜ծ իմ, ախր ես չէի ուզում: Քասիդի, բարեկամս...

Նրա ձայնի մեջ այնպիսի տառապանք կար, որ Պիտերը դադարեց գռմռալ: Մաք-Քեյը ուսերից բռնած բարձրացրեց Քասիդիին ու շեկ մազերը հետ քաշեց: Նա շուրջը ոչինչ չէր տեսնում: Նա սպանել էր Քասիդիին: Սպանել էր: Ռոջերը կրակեց, որպեսզի սպանի նրան, և լավ գիտեր, որ ինքը անվրեպ է կրակում: Վերջապես Մաք-Քեյը դարձավ այն, ինչպիսին վաղուց ուզում էր նրան տեսնել օրենքը՝ մարդասպան: Եվ զոհը եղավ Քասիդին, մի մարդ, որը սկզբից մինչև վերջ ազնիվ խաղ խաղաց, ոչ մի անգամ ստոր միջոցների չդիմեց ու հիմա անշունչ պառկած էր ճերմակ ավազների վրա այն պատճառով, որովհետև չօգտվեց իր առավելությունից և անմիջապես չկրակեց: Ռոջերը խզված, խռպոտ ձայնով հայհոյեց ինքն իրեն և, նայելով Քասիդիի դեմքին, հանկարծ հրաշք տեսավ. իռլանդացու աչքերը բաց էին, շրթունքները ծռմռվել էին ցավից, բայց քմծիծաղում էին:

— Ուրախ եմ, որ դու դիտմամբ չարեցիր էս բանը, ասաց նա:— Ես չէի ուզի կարծիքս փոխել քո մասին, Մաք-Քեյ: Բայց արի տես, որ անպետք կրակող ես:

Քասիդիի մարմինը ցնցվեց, ժպիտը անհետացավ դեմքից, և, տնքոցը զսպելով, նա ասաց.

— Գուցեև... Դու ուզում ես ինձ օգնե՞լ, Մաք-Քեյ: Թե որ ուզում ես, ապա էստեղից կես մղոնի վրա, գետակի հոսանքն ի վեր մի խրճիթ կա: Ես կացնի թխկոց լսեցի... Ծուխը տեսա. . . Ես քեզ չեմ մեղադրում: Դու ազնիվ հակառակորդ ես... արագաշարժ... բայց ա՛յ կրակելու մեջ... բանի պետք չես... Հեչ բանի պետք չես...

Նա փորձեց ծիծաղել Ուրախ Ռոջերի երեսին և թուլացած, անշունչ կախվեց նրա ձեռքերի վրա:

Ուրախ Ռոջերը հեկեկաց: Անարցունք, խեղդված, ինչպես տղամարդիկ են լալիս: Նա պատռեց Քասիդիի վերնաշապիկը և կրծքին, աջ ուսի տակ տեսավ բացված վերքը: Վազելով գնաց ջուր բերեց, աշխատեց ուշքի բերել վիրավորին, և այդ ամբողջ ժամանակ Պիտերը լսում էր նույն տարօրինակ ձայները. նրա տերը կարծես խեղդվում էր: Հետո Մաք-Քեյը չոքեց, Քասիդիի մարմինը շալակն առավ, ոտքի ելավ և, օրորվելով, գնաց դեպի գետակը: Այստեղ նա մի արահետ տեսավ ու այդ արահետով, դժվարությամբ քարշ գալով, առաջ գնաց, առանց կանգ առնելու, մինչև որ դուրս եկավ մի փոքրիկ բացատ, որտեղ Քասիդին ծուխ էր նկատել: Այստեղ մի խրճիթ կար: Խրճիթից դուրս եկան մի ծերունի ու մի ջահել աղջիկ:

Պիտերը կամացուկ վնգստաց, որովհետև նրան թվաց, թե այդ ճերմակահեր, երկար մորուքով մարդու հետևից գալիս է Նեյդան: Նույն գեղանի, նուրբ կերպարանքն էր, նույն

շագանակագույն խոպոպները և նույն... Բայց չէ, դա Նեյդան չէր։ Աղջիկը Նեյդայից մեծ էր։ Բարձրահասակ։ Եվ երբ նա տեսավ Ռոջերի արյունաշաղախ բեռը, դեմքը քաթանի պես սպիտակեց։

— Ես վիրավորեցի սրան,— հևասպառ ասաց Մաք-Քեյը։— Աստված է վկա, էդ բանը չէի ուզում։ Վախենում եմ, որ...

Նա լռեց, սարսափելով բարձրաձայն արտահայտել իր կասկածը, թե Քասիդին մեռել է կամ մեռնում է։ Մի քանի վայրկյան նա ոչինչ չէր տեսնում, բացի աղջկա նախատինքով լի աչքերից։ Ծերունին օգնեց նրան, և վիրավորին ներս տարան։ Երբ իռլանդացուն պառկեցրին մահճակալին, Մաք-Քեյը հանկարծ նկատեց, որ սարսափելի թուլացել է, ոնց որ երեխա, ու հասկացավ, թե ինչ թանկ է նստել իր վրա ծանր բեռը շալակին այդքան ճանապարհ անցնելը։ Նա հոգնած նստեց աթոռին, իսկ ծերունի տրապպերը զբաղվեց Քասիդիով։

Ռոջերը լսեց, որ աղջիկը ծերունուն պապիկ է կանչում։ Աղջկա վախը անցել էր, և հիմա նա դեսուդեն էր վազվզում խրճիթում. ջուր էր պատրաստում, վիրակապ ու բարձիկներ, իսկ երբ նայեց Քասիդիի քաթանի պես ճերմակած դեմքին, նրա հայացքում քնքշություն հայտնվեց։ Մաք-Քեյը դեռ անշարժ նստած էր, երևում էր, որ նրա օգնության կարիքը դեռ չկար։ Բայց երբ վիրավորը կամացուկ տնքաց, Ռոջերը վեր կացավ ու մոտեցավ մահճակալին։

— Գնդակը ծակել անցել է,— ասաց ծերունին։— Լավ է, որ դու պայթուցիկ գնդակներից չես օգտվում, բարեկամ։

Քասիդին խորունկ հառաչեց։ Նրա կոպերը ցնցվեցին ու դանդաղ բացվեցին։ Աղջիկն հենց այդ ժամանակ խոնարհվել էր նրա վրա, և Քասիդին տեսավ միայն նրա դեմքն ու շագանակագույն խոպոպները։

— Նա չի՞ մեռնի,— վեհերոտ հարցրեց Ուրախ Ռոջերը։

Ծերունին ձայն չհանեց։ Բայց Քասիդին, քիչ-քիչ գլուխը շրջելով, թույլ ձայնով պատասխանեց.

— Մի՛ վախենա, Մաք-Քեյ։ Չեմ մեռնի...

Ուրախ Ռոջերը կռացավ Քասիդիի վրա, փակելով աղջկա դեմը, և զգուշությամբ բռնեց վիրավորի ձեռքը։

— Շատ եմ ցավում, որ էսպես եղավ, ախպերս,— շշնջաց նա։— Դու հաղթեցիր, ազնվորեն հաղթեցիր։ Ես էլ հեռու չեմ գնա։ Կմնամ էստեղ, մինչև դու ոտքի ելնես։ Խոսք եմ տալիս։

Քասիդին թույլ ժպտաց, բայց իսկույն էլ տնքաց ու աչքերը փակեց։ Աղջիկը Ռոջերին հետ քաշեց մահճակալից։

— Դե դուք մի՛ գնացեք էստեղից: Մնացեք, մինչև նա կլավանա,— ասաց աղջիկը, և նրա տխուր կրակով վառվող աչքերը Ռոջերին հիշեցրին Նեյդայի աչքերը, երբ նա հնդկացի Թոմի խրճիթում խոստովանեց, որ Ջեդ Հոկինսը հարվածել է իրեն:

Այդ իրիկուն նա գիշերելու համար տեղավորվեց գետաբերանի մոտ: Եվ երեք օր շարունակ ամբողջ ժամանակն անցկացնում էր ծերուկ Ռոբեր Բարոնի ու նրա թոռան՝ Ժիզելի խրճիթում: Քասիդին զառանցում էր: Նա շարունակ Ուրախ Ռոջերի անունն էր տալիս: Եվ Ժիզելը, որը գիշեր-ցերեկ նրա մոտից չէր հեռանում ու համարյա բոլորովին չէր քնում, վերջ ի վերջո վճռեց, որ Մաք-Քեյն ու Քասիդին վաղուցվա անբաժան ընկերներ են: Չնայած դրան, Ժիզելը թույլ չտվեց, որ Ուրախ Ռոջերը իր փոխարեն հերթապահի հիվանդի մոտ: Երրորդ օրը Ժիզելը վիրակապեր ու դեղեր բերելու համար Ռոջերին ուղարկեց ֆակտորիա, որը վաթսուն մղոնի վրա էր:

Ուրախ Ռոջերն ու Պիտերը վերադարձան երեք օր հետո, իրիկնադեմին: Խրճիթի պատուհանները լուսավորված էին, և Մաք-Քեյը պատուհանից ներս նայեց: Քասիդին նստած էր անկողնու մեջ՝ բարձերին թիկնած: Նա բոլորովին էլ մեռնողի նման չէր: Կողքին, արջի մորթու վրա նստած էր աղջիկը: Ինչ-որ բան սեղմեց Ուրախ Ռոջերի կոկորդը: Նա իր գնումները կամացուկ դրեց արտասանդուղքին ու դուռը թակեց: Երբ Ժիզելը դուռը բացեց, Ռոջերն ու Պիտերը արդեն ծածկվել էին մթության մեջ:

Հաջորդ առավոտյան Մաք-Քեյը բռնացրեց ծերունի Ռոբերին ու ասաց.

— Ես ոնց որ թե մի տեղում տիտիկ չեմ անում: Կվերադառնամ երկու շաբաթ հետո: Հաղորդեք Քասիդիին, լա՞վ:

Տասը րոպե անց նա արդեն լողում էր Ուոլլաստոնի ափի երկայնքով, իսկ հետո յոթ օր շարունակ մի գետաբերանից մյուսն էր գնում և ոչ մի տեղ երկար չէր մնում: Պիտերը նկատում էր, որ իր տերը օրավուր ավելի է նիհարում: Նրա ձայնը բոլորովին կորցրել էր նախկին առույգությունը, նա հազվադեպ էր ժպտում ու երբեք չէր ծիծաղում: Պիտերը փորձում էր հասկանալ, թե ինչ է կատարվում, և Մաք-Քեյը սկսեց խոսել նրա հետ, բայց ոչ առաջվա պես:

— Մենք կարող էինք սպանել նրան ու ընդմիշտ ազատվել նրանից,— մի անգամ ասաց Մաք-Քեյը, երբ Պիտերի հետ տաքանում էր խարույկի մոտ, քանի որ իրիկունը ցուրտ էր։— Կարողանալը կարող էինք, բայց այդ բանը չարեցինք, ինչպես որ մեզ հետ չվերցրինք Նեյդային: Եվ մենք կվերադառնանք, Պիտեր, ու դրանից հետո թող մեզ կախեն:

Ուրախ Ռոջերը լռեց, մռայլ ու տխուր, մոտավորապես հաշվելով, թե դեռ որքան ժամանակ է մնում իրեն:

Տասերորդ օրը նա բռնեց հետդարձի ճամփան և տասներկուերորդ օրվա իրիկնադեմին, Կաղ Որմզդեղնի գետաբերանի մոտ, նավակը ափ հանեց: Ինքն էլ չիմանալով, թե ինչու, ծերուկ Բարոնի խրճիթը մտնելուց առաջ, նայեց իր ժամացույցին: Ժամը չորսն էր: Խոստացածից երկու օր շուտ էր վերադարձել, և դա նրան ուրախացրեց: Բայց սիրտը տարօրինակ կերպով ճմլվեց: Ռոջերը հավատում էր Քասիդիին: Անշուշտ, իռլանդացին

կհայտարարի, որ իրենցից ոչ ոք չի հաղթել, խաղը ավարտվել է ոչ ոքի, և իրեն բաց կթողնի՝ մի անգամ էլ իր բախտը փորձելու այս ամայի երկրում: Այդպիսի մարդը, եթե նա ազնվորեն գրազ է գալիս, խոսքից չի հրաժարվի: Իսկ եթե չէ...

Ուրախ Ռոջերը կանգ առավ ու դատարկեց ատրճանակը: Համենայն դեպս, ինքն այլևս չի կրակի:

Խրճիթի բաց դռնից ներս էին թափվել աշնանային արևի թույլ շողերը: Մոտենալով՝ Մաք-Քեյը լսեց Ժիզելի ծիծաղը: Նա ինչ-որ բան էր ասում: Հետո տղամարդու ձայն լսվեց, ապա հեռվից նրան հասավ կացնի թխկոցը: Ծերունի Ռոբերն զբաղված էր իր սովորական գործով: Ժիզելն ու Քասիդին տանն էին:

Մաք-Քեյը բարձրացավ արտասանդուղք ու հազաց, որպեսզի իմաց տա իր գալու մասին: Բայց, սենյակից ներս նայելով, նա մեխվածի պես կանգ առավ շեմքին:

Տերենս Քասիդին նստած էր մեծ բազկաթոռին: Ժիզելը, Քասիդիի թիկունքում կանգնած, փաթաթվել էր նրա պարանոցին ու քնքշորեն համբուրում էր:

Այդ պահին Քասիդին տեսավ Մաք-Քեյին ու Պիտերին:

— Հապա ներս արի,— այնպես բարձր ձայն տվեց նա, որ Ժիզելը վեր թռավ:— Դե ներս արի, Մաք-Քեյ:

Ուրախ Ռոջերը ներս մտավ, և Ժիզելը շտկվեց, գլուխը բարձրացրեց, նրա այտերը վառվում էին, աչքերում արտացոլվել էր մայրամուտը: Տերենս Քասիդին, հենվելով բազկաթոռի արմունկներին, առաջ հակվեց ու լայն ժպտաց:

— Դու տարվեցիր, Մաք-Քեյ,— բացականչեց նա:— Ես հաղթեցի:

Այս խոսքերի հետ նա բռնեց աղջկա ձեռքից ու առաջ բերեց:

— Դե, Ժիզել, խոստումդ կատարիր, ապացուցիր նրան, որ ես եմ հաղթել:

Ժիզելը դանդաղ մոտեցավ Ուրախ Ռոջերին. նրա այտերը կարմրել էին մայրամուտի երկնքից, աչքերը ժպտում էին ամոթխած: Ուրախ Ռոջերը սպասում էր, չհասկանալով, թե ինչ է կատարվում: Հանկարծ ժիզելը փարվեց Ռոջերի պարանոցին, չպպոցով համբուրեց այտը, հետո նետվեց դեպի բազկաթոռը, ծունկ չոքեց ու գլուխը սեղմեց Քասիդիի կրծքին, որը, ծիծաղելով, ձեռքերը պարզեց Ռոջերին:

— Ռոջեր Մաք-Քեյ, ծանոթացեք. իմ կինը՝ միսիս Քասիդին,— ասաց նա, և Ժիզելը իր շողշողուն աչքերը բարձրացրեց Ռոջերի վրա:

Ռոջերը, դեռևս շփոթահար, ոչինչ չասաց:

— Երեկ այստեղ եկավ Բրոշեի քարոզիչը ու մեզ պսակեց,— ասաց Քասիդին:— Եվ օգնեց ինձ պաշտոնաթող լինելու դիմում գրել: Մենք երկուսս էլ հաղթեցինք, ախպերս: Ես շատ

շնորհակալ եմ քեզանից էս գնդակի համար, սա երջանկություն բերեց ինձ: Ահա իմ ձեռքը, Մաք-Քեյ:

Կես ժամ անց Ուրախ Ռոջերը արահետով վերադարձավ իր նավակը, նրա աչքերում արցունքներ կային, իսկ սիրտը լիքն էր ուրախ հույսով: Դեղին Թռչունը իրավացի դուրս եկավ: Մի՞թե այն գիշեր Դեղին Թռչունը սա չէր գուշակել: Իսկ եթե այդպես է, ուրեմն, հավանաբար, մյուսներն էլ կկատարվեն:

Նա նորից հավատաց, որ կարող է գտնել իր երջանկությունը, նորից համակվեց կյանքի սիրով, և քանի դեռ Պիտերի ուղեկցությամբ քայլում էր արահետով, նրա շուրթերին Նեյդայի անունն էր, իսկ մտքով Դեղին Թռչունի գուշակության հետ էր, ըստ որի, երբևիցե, ինչ-որ անհայտ-անծանոթ մի վայրում իրենք էլ կգտնեն իրենց երջանկությունը, ինչպես Ժիզելն ու Քասիդին գտան:

Պիտերի ականջին էին հասնում կացնի հեռավոր թխկոցը, թռչունների ծլվլոցն ու սկյուռների չրթչրթոցը, բայց նա լսում էր միայն իր տիրոջ ձայնը, նախկին ձայնը, ուրախ ձայնը, այն ձայնը, որին վարժվել ու որը սիրել էր դեռ Կրեգի ստորոտում, մանուշակի ու գետնամորու օրերին, երբ Նեյդան նրա համար մի ամբողջ աշխարհ էր:

Գլուխ տասներեքերորդ

Մաք-Քեյի թափառումների նպատակակետը առաջվա պես մնում էր անտառը, որը հարյուրավոր մղոններով խրված էր Լերկ Հողերի մեջ: Երեք տարի առաջ նա իր համար խրճիթ էր սարքել և երկար ձմեռվա ընթացքում աղվեսի մորթիներ էր ձեռք բերել: Եվ հիմա նրան ձգում էր ոչ միայն խրճիթը, այլև աղվեսի որսը: Կարիքը կրնկակոխ հետապնդում էր նրան: Փողը, որ նա վերցրել էր իր հետ Կրեգից հեռանալիս, վերջացել էր, պաշարները՝ նույնպես, իսկ սապոգներն ու հագուստները ամբողջովին ծածկված էին կարկատաններով:

Սնոուբերդ լճի մոտ, ուր նա հասավ բախտավոր Քասիդիից բաժանվելուց երեք շաբաթ անց, նրան ժպտաց հաջողությունը: Հենց այդ ժամանակ երկու տրապպերներ Ֆորտ Չերչիլից վերադարձել էին այստեղ, իրենց որսորդական տեղամասը: Նրանցից մեկը հիվանդացել էր, և նրա ընկերոջը օգնական էր պետք, որպեսզի խրճիթ կառուցեր ձմեռելու համար: Մաք-Քեյը տասը օր աշխատեց նրա մոտ, և երբ նա շարունակեց ճանապարհը դեպի հյուսիս, ուսապարկը լիքն էր պաշարներով, ոտքերին նոր սապոգներ էին, իսկ շորերը ավելի տաք էին:

Երբ նա հասավ Կրեգից հազար մղոն հեռու ընկած իր մեկուսի խրճիթը, արդեն հոկտեմբերի կեսն էր: Խրճիթում ամեն ինչ մնացել էր այնպես, ինչպես երեք տարի առաջ էր: Այդ ժամանակամիջոցում ոչ ոք չէր մտել այնտեղ: Չուգունե վառարանն ասես սպասում էր, որ վառեին: Կողքին թափված էին չոր փայտերը: Մեղանին դրված էին թիթեղյա ափսեները, իսկ առաստաղից, կների ու կնգումների աչքից հեռու, կաշեփոկերով կախված էին պահեստային վերմակների ու հագուստների փաթեթները: Այն հեռավոր գարնանից,

ինչ նա հեռացել էր այստեղից, թվում էր մի ամբողջ դար էր անցել: Նա բարձրացրեց հատակի տախտակը, թակարդները, որ խնամքով յուղված էին կարիբուի ճարպով, իրենց տեղում էին: Մոտ կես ժամ Ուրախ Ռոջերը պտտվեց սենյակում, հանեց թաքցրած մյուս իրերը: Տարբեր տեղերից դուրս բերեց թիթեղյա լամպը, նավթի բիդոնը, մոմեր, իսկ երբ գիշերն իջավ, վառարանում արդեն ուրախ գվգվաց կրակը, կայծերի խրձեր նետելով ծխնելույզի մեջ, խրճիթի միակ պատուհանը հաճելիորեն լուսավորվեց, իսկ հին սրճամանը, բլթբլթաց ու թշշաց, ասես ուրախանալով տիրոջ վերադարձի համար:

Լուսադեմին Ռոջերն սկսեց որսորդության պատրաստվել: Երկու օրվա ընթացքում նա երեք կարիբու սպանեց և ամբողջ ձմռան համար մսի պաշար տեսավ: Դրանից հետո փայտ ջարդեց, թունավոր խայծեր պատրաստեց ու նշեց թակարդների տեղերը:

Նոյեմբերի մեկին ամբողջ հյուսիսային երկրով տարածվեց ձմռան սառը շունչը: Հարավի կողմերում էլ աշունը արդեն փչեց վերջին շունչը: Արոսենու մերկ ճյուղերից կախված էին հատուկենտ պտուղները, թոշնած ու մրսած, գիշերները սառնամանիքը կալում-կապում էր գետինը, անտառի ձայնը փոխվել էր, և քամիները ահեղ, սպառնալի նախազգուշացում բերեցին բոլոր մարդկանց ու գազաններին՝ Հուդսոնի ծոցից մինչև Ստրուկների Մեծ լիճը, Ջրբաժանքից մինչև Սառուցյալ օվկիանոսը: Յոթ տարի առաջ, ամբողջ երկրամասի վրա, դա լավ էր հիշում, ձմեռը հարձակվեց մահաբեր հանկարծակիությամբ, միանգամից դաժան ցրտեր սկսվեցին, դրա հետ էլ այնպիսի սով, որպիսին արդեն մի քանի տասնյակ տարի Հյուսիսը չէր տեսել:

Բայց այդ տարի ձմեռը իմաց տվեց իր գալու մասին: Առաջինը լուրը բերեցին գիշերային քամիները, որոնք սև անտառների վրա տարածեցին այսբերգերի սառցե բուրմունքը: Լուսինը դուրս էր գալիս կարմիր ու կարմիր էլ մայր էր մտնում, և կարմիր էր նաև ծագող արևը: Սուզահավերի ճիչերը լռել էին ժամանակից մեկ ամիս առաջ: Վայրի սագերը դեռ պետք է սնվեին Կոգալուկեռում ու Բաֆինի ծոցի ափերին, բայց նրանք արդեն չվել էին հարավ, կուղբերը ամրացրել էին իրենց բների պատերը, մատղաշ կաղամախին ու լաստենին դարսել էին բնի խորքում, որպեսզի չմեռնեն քաղցից, եթե, բան է, հանկարծ սովորականից ավելի հաստ սառցե ծածկույթ կապի: Արևելքում, արևմուտքում, հյուսիսում ու հարավում, թե որսորդների խրճիթներում և թե գայլաորջերում գիտեին, որ գալիս է ձմեռը, և ձմեռը դաժան է լինելու: Ճագարներն իրենց գորշ մուշտակների փոխարեն սպիտակ էին հագել: Որմզդեղենների ու կարիբուների հոտերն սկսել էին իրար գլխի հավաքվել: Գիշերները բեկբեկ ձայնով հաչում, կաղկանձում էին աղվեսները, վերահաս սովը գայլերին ստիպել էր ոհմակներ կազմել, իսկ երկնքում, ուր փայլում էր կարմիր լուսինը, շարան-շարան չվում էին կռունկները:

Ամբողջ նոյեմբերին ու դեկտեմբերին Ուրախ Ռոջերն ու Պիտերը արթնանում էին լուսաբացից երկու ժամ առաջ ու, առանց շունչ քաշելու, աշխատում էին մինչև մութն ընկնելը: Այնքան շատ աղվեսներ կային, որ Մաք-Քեյը ծուղակներ ու խայծեր չէր հասցնում: Դեկտեմբերի տասին նա ուղևորվեց ինսուն մղոն դեպի հարավ ընկած ֆակտորիան: Նա իր հետ երկու հարյուր քառասուն աղվեսի մորթի տարավ, սահնակ ու Պիտերի համար լծվածք պատրաստեց: Նրանք միասին քաշեցին սահնակը և երրորդ օրը

արդեն հասան ֆակտորիա, իսկ չորրորդ օրը բռնեցին հետդարձի ճամփան՝ բերելով նոր պաշարներ և հազար դոլլար կանխիկ դրամ: Ցրտերն ընկան, բուքուբորան սկսվեց, բայց Մաք-Քեյը շարունակում էր թակարդներ դնել և փետրվարի սկզբին նորից ուղևորվեց ֆակտորիա:

Հետդարձի ճամփին վրա տվեց Սև բուքը: Հյուսիսը չի մոռանա այդ բուքը: Հենց այդ ժամանակ էր, որ Դուբոնտ լճի մոտ ցրտահար եղավ ողջ սարկի ցեղը, ոչ ոք կենդանի չմնաց: Ծառերը սառեցին ու կտոր-կտոր եղան ճարճատյունով, որ գնդացրի կրակոց էր հիշեցնում: Լերկ Հողերի տարածքում Աբերդին լճից մինչև Կոպերմայն, բուքը բնաջնջեց բոլոր գազաններին ու թռչուններին: Գետերը սառցակալվեցին մինչև հատակը, իսկ տղամարդիկ ջրի կամ փայտի համար խրճիթներից դուրս գալիս կապկպվում էին պարաններով, որպեսզի չմոլորվեին ձյան ու քամու կուրացնող հորձանքից: Եվ երբ դրսում եղողը այլևս չէր կարողանում դիմադրել բքի սառցե կատաղությանը, խրճիթում մնացած կինը ամբողջ թափով ձգում էր պարանը, ջանալով օգնել նրան:

Սև բուքը Մաք-Քեյին ու Պիտերին բռնացրեց Արտիլերի լճից դեպի արևմուտք և Տելոն գետից դեպի հարավ ընկած հատվածում ու նրանց ստիպեց փոս փորել ու մտնել մեջը: Նրանք գտնվում էին մի վայրում, որտեղ ձյան միջից դուրս ցցված ամենահաստ ճյուղը Մաք-Քեյի բութ մատի հաստությունն ուներ: Գարնանը այստեղ, փարթամ խոտերով ծածկված հարթավայրերում կարիբուներն էին արածում, բայց ձմռանը, երբ ոռնում էր արկտիկական բուքը, այս վայրերը իսկական դժոխքի էին վերածվում:

Վիթխարի ժայռաքարերի մոտ Ուրախ Ռոջերը մի մեծ ձնակույտ նշմարեց: Այդ ձնակույտը իր լայնությամբ չէր զիջում գյուղական եկեղեցուն և գրեթե նրա բարձրությանն էր, իսկ մակերեսը սառույցի ու քամու մշտական ազդեցությունից քարի պես պնդացել էր: Ուրախ Ռոջերը դանակով ծակեց սառցե կեղևը, մի նեղլիկ անցք բացեց և սկսեց դուրս ածել ավելի փափուկ ձյունը, մինչև մի անձավ փորեց, որը իր խրճիթի կեսի չափ կլիներ: Շուտով նրա սեփական ջերմությունը և Պիտերի ջերմությունը այնպես տաքացրին այդ հարմարավետ կացարանը, որ Ռոջերը կարող էր մուշտակը հագից հանել:

Բուքուբորանի այդ առաջին գիշերը Պիտերին թվում էր, թե դրսում բոլոր մարդիկ ողբում ու հեծծում են սև խավարի մեջ: Ուրախ Ռոջերը ժամանակ առ ժամանակ ծխում էր իր չիբուխը, թեև մթության մեջ ծխելը առանձնապես հաճույք չէր պատճառում: Բուքը նրան չէր վախեցնում, ընդհակառակը, նա շատ հանգիստ էր ու ինքնավստահ: Քամին ոռնում էր ու զարկվում ձնակույտին, բայց ներս թափանցել չէր կարողանում: Միայն ավելի շատ ձյուն էր դիզում, որը էլ ավելի տաք ու ապահով էր դարձնում ապաստարանը: Այդ վայրի մոլեգնությունը ոչ միայն զարհուրելի էր, այլև ինչ-որ անհեթեթ բան կար նրա մեջ, և Պիտերը լսեց, որ իր տերը կամացուկ ծիծաղեց մթության մեջ: Այն ժամանակվանից ի վեր, երբ աշնան տաք օրերին նրանք վերջին անգամ հանդիպել էին շեկ Քասիդիին, և իր տերը Ուոլլաստոնի ճերմակ ափերին վիրավորել էր նրան, Պիտերը ավելի հաճախ էր լսում այդ ծիծաղը:

— Գիտես ինչ կա, Կաղլիկ,— սկսեց Մաք-Քեյը, շոշափելով Պիտերի խուճուճ պարանոցը,— մեր գործերը լավ են գնում: Նույնիսկ սկսում եմ հավատալ, որ Դեղին

Թռչունի խոսքը կկատարվի, և ես ու Նեյդան երջանիկ կլինենք: Ի՞նչ կասես, Կաղլիկ: Գարնանը չգնա՞նք Կրեգ:

Պատասխանի փոխարեն Պիտերը շուռումուռ եկավ նրա փաղաքուշ ձեռքի տակ, իսկ քամու նոր պոռթկումը կաղկանձյունով թափվեց ձնաթմբի վրա:

Ուրախ Ռոջերի մատները սեղմեցին Պիտերի վզակոթը:

— Ուրեմն, կգնանք էնտեղ, Կաղլիկ,— ասաց նա, կարծես անակնկալ նորություն էր հաղորդում Պիտերին:— Ես հիմա հավատում եմ Դեղին Թռչունին: Հավատում եմ ու վերջ: Ախր դա սովորական գուշակություն չէր: Եվ նա չէր հմայում, ինչպես հնդկացի շամաններն են հմայում: Ի սեր ինձ ու քեզ, նա փակվեց իր տիպիում ու երեք օր ոչինչ չկերավ. դա հո պետք է օգներ, ճի՞շտ է: Ի՞նչ կարծիքի ես:

Պիտերը փնչացրեց ու ատամները կրճտացրեց, ցույց տալով, որ բոլորը հասկացավ:

— Ախր նրա ասածներից շատերն արդեն իրականացել են,— ինքն իրեն համոզեց Ուրախ Ռոջերը:— Դա չես կարող ժխտել, Կաղլիկ: Նա նախազգուշացրեց, որ Քասիդին հետապնդում է մեզ. էդպես էլ եղավ: Նա ասաց, թե ոգիները իրեն խոստացել են, որ մեզ հեռու կպահեն բանտից: Երբ Քասիդին Ուոլլաստոնի ափին մեզ վրա նշան բռնեց, իսկ մենք փրկվեցինք ու իրեն վիրավորեցինք, և դա քիչ հաջողություն չէր, արդեն մտածում էինք, որ ամեն բան կորած է: Հետո մենք Քասիդիին տարանք խրճիթ, ու տրապպերի թոռնիկն սկսեց խնամել նրան: Քասիդին վերցրեց ու սիրահարվեց նրան... ու ամուսնացավ հետը... Դուրս է գալիս, որ Դեղին Թռչունն էստեղ էլ է ճիշտ: Էլ ո՞նց չհավատանք նրան: Իսկ Դեղին Թռչունն ասում էր, որ մեր բանը լավ կվերջանա, մենք կվերադառնանք Նեյդայի մոտ ու կբախտավորվենք:

Մթության մեջ առկայծեց Ռոջերի ծխամորճի կարմիր կրակը:

— Այ թե ինչ,— ասաց Մաք-Քեյը:— Արի կլինի վառեմ սպիրտի լամպը: Ոնց որ քունս չի տանում: Համ էլ ուզում եմ հավեսով ծխել: Թե չէ ի՞նչ հաճույք պիտի ստանաս ծխելուց, երբ ծուխը չես տեսնում: Ափսոս, որ շները ծխել չեն իմանում, Պիտեր: Խե՜ղճ Պիտեր, դու չգիտես նույնիսկ, թե ինչ բան է լավ ծխամորճը էսպիսի ժամանակ:

Կապոցը փորփրելով՝ Մաք-Քեյը հանեց սպիրտի լամպը: Պիտերը լսեց, թե տերը ինչպես է տնտնում մթության մեջ: Հետո չրխկաց լուցկին, դեղին բոցը լուսավորեց Ռոջերի դեմքը, և Պիետրը ուրախ վնգստաց, հանկարծակի տիրոջը տեսնելը ուղղակի շատ հաճելի էր: Մի վայրկյան անց փոքրիկ լամպը արդեն իր կապտավուն շողքը գցեց ապաստարանի ճերմակ պատերին: Մթության մեջ երկար մնալուց Ուրախ Ռոջերի բիբերը լայնացել էին, և հիմա թվում էր, նրա աչքերը սև էին: Այտերն ու կզակը ծածկվել էին կոշտ, ծակող մազերով: Բայց, այնուամենայնիվ, նա կայտառություն էր ճառագում, կարծես ի հեճուկս դրսում մոլեգնող բուքուբորանի: Դահուկը[5] խրելով ձյունե պատի մեջ՝ Ռոջերը սեղանի նման մի

[5] Հնդկացիների դահուկներն անհամեմատ ավելի կարճ են ու լայն, քան եվրոպացիներինը, և ձվաձև են: Դրանցով ոչ թե սահում են ձյան վրա, այլ քայլում են:

բան սարքեց, լամպը դրեց վրան ու բարեկամաբար աչքով արեց Պիտերին: Ապա, մի գոհունակ հոգոց հանելով, փստացրեց չիբուխը և, ոտքի ելնելով, շուրջը նայեց:

— Վատ չէ, հը՞,— հարցրեց նա:— Որ ուզենանք, մի քանի սենյակ կփորենք, չէ՞, Պիտեր: Ե՛վ հյուրասենյակ կունենանք, և՛ ննջասենյակ, և՛ գրադարան, և՛ շրջակայքում միլիոն մղոնի վրա ոչ մի ոստիկան չկա: Ահա թե որն է ամենահաճելի բանը, Կաղլիկ. էստեղ մենք հեծյալ ոստիկաններից կարող ենք չվախենալ: Նրանց մտքով էլ չի անցնի, որ մեզ փնտրեն աստծուց մոռացված էս տունդրայում, ձյունների մեջ:

Այդ միտքը մեծ հաճույք պատճառեց Ուրախ Ռոջերին: Նա վերմակը փռեց ձնե հատակին, նստեց վրան դեմքով դեպի Պիտերը և, ծիծաղելով, շարունակեց.

— Մենք նրան խաբեցինք, Կաղլիկ: Երբ ստիպված ես թաքնվել, պարզվում է, որ աշխարհն էնքան էլ մեծ չի, բայց էստեղ ոչ ոք մեզ չի գտնի, թեկուզ միլիոն տարի էլ փնտրի: Ինչ լավ կլիներ, թե որ մեզ հաջողվեր էսպիսի մի ապահով տեղ գտնել, որտեղ կինն էլ կարողանար ապրել... Ու Նեյդան էլ մեզ հետ լիներ...

Վերջին շաբաթներին Պիտերը շատ անգամ էր տեսել այն կրակը, որ հիմա բռնկվեց Ուրախ Ռոջերի աչքերում: Այդ կրակը և տիրոջ ձայնի մեջ եղած տարօրինակ դողը ավելի շատ բան էին ասում նրան, քան բառերը, որոնք նա ապարադյուն կերպով փորձում էր հասկանալ:

— Իսկ նա մեզ հետ կլինի,— ոգևորված խոսքը վերջացրեց Մաք-Քեյը և, բռունցքները սեղմելով, թեքվեց Պիտերի կողմը:— Մենք, Կաղլիկ, մեծ սխալ թույլ տվեցինք և շատ ուշ գլխի ընկանք: Մեզ համար դժվար կլինի Հյուսիսից բաժանվելը, բայց ինչ արած, ստիպված ենք: Գուցե Դեղին Թռչունի ոգիները հենց դա էին նկատի ունեցել, երբ խոսել էին Հեռավոր Երկրի մասին, որտեղ ես ու Նեյդան գտնելու ենք մեր երջանկությունը: Աշխարհում Հեռավոր Երկրներ շատ-շատ կան, Պիտեր, և գարնանը, հենց որ ձյունը վեր կենա, որպեսզի կարողանանք գնալ առանց հետքեր թողնելու, մենք կվերադառնանք Կրեգ, Նեյդային կվերցնենք ու ճամփա կընկնենք, կգնանք էնտեղ, որտեղ օրենքը երբեք մեզ չի գտնի: Օրինակ՝ Չինաստան: Էնտեղի մարդիկ դեղին մաշկ ունեն... Է՛հ, մեզ ինչ: Մենակ թե Նեյդան մեզ հետ լինի: Ու մեկ էլ...

Հանկարծ նա լռեց: Պիտերն էլ ականջները սրեց: Երկուսն էլ շրջվեցին դեպի արդեն կիսով չափ ձյունով ծածկված նեղ անցքը, որ բացել էր Մաք-Քեյը ձնաթմբի սառցե կեղևի մեջ:

Նրանք վարժվել էին բքի ոռնոցին: Պիտերն այլևս առաջվա նման չէր ցնցվում քամու վնգոցից ու գրեթե մարդկային հեծեծանքից: Բայց այդտեղ հանկարծ լսվեց մի աղմուկ, որը նախորդ ձայներից ոչ մեկին նման չէր: Դա ձայն էր: Ոչ քամու թվացյալ ձայն, այլ իսկական մարդկային ձայն, և այնքան մոտիկից լսվեց, որ նույնիսկ Ուրախ Ռոջերը մի տեսակ վախ զգաց: Նրան թվաց, թե հենց իրենց ձնաթմբի մոտ ինչ-որ մեկը բարձր ձայնով կանչում է մեկ ուրիշին: Բայց պատասխան չեղավ: Քամին հանդարտվեց, և դրսում մի պահ լռություն տիրեց:

Ուրախ Ռոջերը մի փոքր ճիգ գործադրելով՝ ծիծաղեց:

— Լավ է, որ մենք տեսիլքների չենք հավատում, Պիտեր, թե չէ կմտածեինք, թե դրսում փոխակերպուկ գայլ է թափառում։— Նա լցրեց ծխամորճն ու գլխով արեց.— Հալա Հարավային Ամերիկան էլ կա։ Էնտեղ նրանք ամեն բան էլ ունեն. և՛ աշխարհի ամենամեծ գետերը, և՛ ամենաբարձր լեռները, և՛ այնպիսի ընդարձակ հարթավայրեր, որ նույնիսկ գայլ-փոխակերպուկներն էլ էնտեղ մեզ չեն գտնի։ Էդ տեղերը դուր կգան Նեյդային, Կաղլիկ։ Դե, իսկ եթե նա գերադասի Աֆրիկան կամ, ասենք, Ավստրալիան, գուցե Հարավային Ծովերի կղզին... Սա՞ ինչ բան է։

Պիտերը խայթվածի պես վեր թռավ, իսկ Ուրախ Ռոջերը քար կտրեց ինչպես հնդկացի։ Հետո ոտքի ելավ ու տարակուսանքով նայեց Պիտերին։

— Դա ի՞նչ բան էր, Կաղլիկ։ Քամին, ինչքան էլ որ ուժեղ լինի, չի կարող հրացան կրակել, ճիշտ չէ՞։

Պիտերը քիթը խոթեց դռնից ներս լցված փխրուն ձյան մեջ։ Նա խուլ գոմռաց։ Կոշտ գանգուրների տակից կատաղորեն պսպղացին աչքերը, և նա նայեց Ռոջերին՝ թույլտվություն խնդրելով, որ ձյունը ցրիվ տա ու դուրս գա ոռնացող խավարի մեջ։ Մաք-Քեյը հանդարտ թափ տվեց ծխամորճն ու դրեց գրպանը։

— Գնալը կգնանք,— ասաց նա տարօրինակ ձայնով։— Բայց ախր դա անխելքություն կլինի, Պիտեր։ Քամի էր, ուրիշ բան չէր։ Էնտեղ չի կարող մարդ լինել։ Եվ էն, ինչ որ լսեցինք, կրակոց չէր... Քամին էր...

Մաք-Քեյը երկու-երեք շարժումով շաղ տվեց ձյունը։ Անցքը գտնվում էր հողմահակառակ կողմում։ Դրա համար էլ, երբ նա կիսով չափ դուրս եկավ անցքից, գրեթե քամու ներկայությունը չզգաց։

Բայց ձնաթմբի վրայով առաջվա պես սուրում էր բուքուբորանը, և նա ոչինչ չլսեց, բացի նրա ոռնոցից։ Ու ոչինչ չտեսավ, նույնիսկ՝ առաջ պարզած իր սեփական ձեռքը։

— Էնքան են ընկել մեր հետևից, էնքան են հետապնդել, որ մի տեսակ գերզգայուն ենք դարձել,— հետ սողալով դեպի լույսի կապտավուն շրջանակը ու գլխով անելով Պիտերին՝ ասաց Ռոջերը։— Քնելու ժամանակն է, բարեկամս։ Իսկ քնելու համար սրանից լավ տեղ չես գտնի. թարմ օդ որքան ուզես, ոչ մոծակ կա, ոչ ճանճ, իսկ ոստիկանների մասին էլ չեմ ասում, շուտով մենք ընդհանրապես չենք հիշի, թե նրանք ինչ տեսք ունեին։ Եթե դու դեմ չես, արի սառը թեյ խմենք ու մի քիչ բան ուտենք...

Նրա խոսքը կիսատ մնաց։ Մի պահ քամին փոքր-ինչ հանդարտվեց, ասես ուժ էր հավաքում։ Եվ այն, ինչ որ այժմ լսեց Մաք-Քեյը, ստիպեց նրան ճչալ, իսկ Պիտերը հաչաց։ Գիշերային խավարի միջից կանացի ձայն հասավ նրանց։ Որքան էլ որ Ռոջերը ցնցված էր ու շշմած, նա իսկույն հասկացավ, որ դա քամին չէր, ոչ էլ հոգնած լսողության խաբկանք։ Ձայնը շատ պարզորոշ էր ու հստակ. դա կնոջ ձայն էր, որ սլացավ տայգայի վրայով, օգնություն խնդրելով, ու, խառնվելով փոթորկի ոռնոցին, անմիջապես էլ լռեց։ Եվ, այնուամենայնիվ, Մաք-Քեյը չհավատաց։ Կի՞ն։ Այն էլ այստե՞ղ։ Նա ջղաձգորեն թուքը կուլ

տվեց ու փորձեց ծիծաղել: Կի՛ն... բորանի մեջ, ամենամոտիկ բնակավայրից հազար մղոն հեռու: Ո՛չ, դա անհնարին բան է:

Բայց ծիծաղը չստացվեց, իսկ սիրտը կծկվեց տագնապից: Աղոտ լույսի տակ երևում էին նրա լայն չռված աչքերը:

Ռոջերը նայեց Պիտերին: Շունը, ամբողջովին լարված, կանգնած էր անցքի մոտ: Նա դողում էր:

— Պիտե՛ր:

Պիտերը պոչը թափ տվեց ու փշոտ դունչը շրջեց տիրոջ կողմը: Ուրախ Ռոջերը շատ անգամ էր տեսել իր չորքոտանի ընկերոջ այդ նախազգուշացնող հայացքը: Դրսում մեկը կար: Կամ էլ Պիտերը, ինչպես և ինքը, փոթորկից խելքը թռցրել էր:

Եվ, բանականությանը հակառակ, Ուրախ Ռոջերը վճռեց գնալ փնտրելու: Նա դահուկները հագավ և լամպը այնպես դրեց, որպեսզի տունդրայից երևա նրա լույսը: Ապա դուրս սողոսկեց անցքից: Պիտերը հետևեց նրան:

Ասես նրանց հանդգնությունից գազազելով՝ ձնաթմբի հետևից նրանց վրա հարձակվեց փոթորիկը: Նրանք լսեցին սառցահատիկների սուր ճռթճռթոցը, որ անթիվ-անհամար կոտորակներով սուրաց նրանց գլխավերևով: Քամին հասավ նույնիսկ նրանց ապաստարանին ու ծակծկող ձնափոշին շփեց Ռոջերի դեմքին: Նրանց դիմաց, տնքացող խավարի մեջ, փռվել էր տունդրան: Պիտերը վերև նայեց, ոչինչ չտեսավ, բայց այնուամենայնիվ գլխի ընկավ, թե որտեղից էին գալիս սոսկալի տնքոցները, որ լսել էր ողջ իրիկունը. այդ քամին էր զարկվում ձնաթմբին:

Ուրախ Ռոջերը լարեց լսողությունը, բայց միայն տունդրայում մոլեգնող փոթորկի ոռնոցը լսեց: Հետո եկավ այն կարճատև դադարներից մեկը, երբ մրրիկը կարծես ուժ էր հավաքում, ու նրա մռնչոցը հետզհետե մարեց, ասես արագ սուրացող սայլի անիվների ճռնչոց լիներ: Հետո մի պահ լիակատար լռություն տիրեց, իսկ հյուսիսից կրկին ահեղ դղրդյուն լսվեց, որը նոր պայթյուն էր ազդարարում:

Եվ այդ լռության մեջ նորից ճիչ լսվեց, այնքան պարզորոշ, որ Մաք-Քեյն այլևս չկասկածեց, իսկ դրան հետևեց կրակոցը: Դա իսկապես կնոջ ձայն էր: Որքան Ուրախ Ռոջերը գլխի ընկավ, ճիչը լսվեց իր դիմացի ականակույր խավարից, և նա ի պատասխան բղավեց: Ապա Պիտերի հետ միասին նետվեց դեպի այդ կողմը: Քամու նոր հորձանքը զարկվեց նրա մեջքին ու քշեց տարավ, ասես փրփրադեզ ալիքի կատարին լիներ: Անակնկալի գալով՝ Ուրախ Ռոջերը երևաց ու ընկավ ծնկների վրա. հենց այդ պահին նա տեսավ իր լամպի հազիվ նշմարվող կրակը ձնանձավի մուտքի մոտ և հստակ գիտակցեց, որ եթե ինքը խավարի մեջ չկարողանա տեսնել լույսի այդ աղոտ կետը, ապա իրեն մահ է սպառնում: Նա նորից բղավեց... նորից... նորից: Եվ գլուխը ուսերի մեջ քաշելով, առաջ գնաց:

Հանկարծ մի խելահեղ միտք անցավ Ուրախ Ռոջերի գլխով, ու նա լամպն էլ մոռացավ, անձավն էլ, իրեն սպառնացող մահն էլ: Ձյունի ու քամու խելագար ապշոպի մեջ նա

մարդու ձայն լսեց: Դրան այլևս չէր կասկածում: Եվ դա կնոջ ձայն էր: Իսկ գուցե Նեյդա՞ն էր կանչողը: Գուցե նա եկել է իր հետևի՞ց, վճռելով՝ ինչ գնով ուզում է լինի, գտնել իրեն ու կիսել իր ճակատագիրը: Ռոջերի սիրտը զարկեց տանջալից: Ուրիշ էլ ո՞ր կինը կկտրեր հազարմղոնանոց ամայի տունդրան ու կգար իր հետևից:

Եվ Ռոջերը ձայն տվեց նրան.

— Նեյդա՛, Նեյդա՛, Նեյդա՛...

Իսկ կողքին հաչում էր Պիտերը:

Սև բորանը կլանեց նրանց: Լամպի լույսը լուծվեց խավարի մեջ: Բայց Ուրախ Ռոջերը հետ չէր նայում: Նա կուրորեն առաջ էր գնում, քայլերը հաշվելով ու Նեյդային կանչելով: Երկու անգամ նրան թվաց, թե պատասխան կանչ է լսում, և ամեն անգամ թվում էր, այդ անիրական ձայնը շատ մոտիկից է լսվում: Այդ պահին քամին ահավոր ուժով հարվածեց նրա մեջքին, ոտքը ինչ-որ բանի դեմ առավ ու նա փռվեց ձյունների մեջ: Նրա ձեռքը շոշափեց այն առարկան, որին դեմ էր առել: Դա ձյուն չէր: Մատները ինչ-որ փափուկ ու խավոտ բանի հպվեցին: Տղամարդու մուշտակ էր: Ահա կոճակները, գոտին… և... մորուքավոր դեմքը:

Մաք-Քեյը ոտքի ելավ ու շտկվեց հասակով մեկ: Քամին նորից տունդրայով առաջ սլացավ, հետևում թողնելով լռության մի ակնթարթ: Եվ կանչեց.

— Նեյդա՛, Նեյդա՛, Նեյդա՛...

Արձագանքը այնքան մոտիկից լսվեց, որ նա նույնիսկ ցնցվեց, բայց կանչողը մի մարդ չէր, այլ երկու... ոչ, երեք, և ձայներից մեկը վախեցած, տանջված կնոջ ձայն էր: Մաք-Քեյը շարունակում էր կանչել, իսկ ձայներն ավելի ու ավելի մոտիկից էին պատասխանում, և, վերջապես, առջևում, մի քանի քայլի վրա, աղոտ շարժվող մի կետ հայտնվեց: Ռոջերը օրորվելով այն մարդու ծանրության տակ, որին գտել էր ձյան մեջ, գնաց դեպի այդ կետը: Այժմ նա տեսավ երկու հոգու, որոնք քաշում էին սահնակը, իսկ սահնակի հետևից, հեծկլտալով ու շնչակտուր, ոտքերը հազիվ քարշ տալով, գալիս էր երրորդը:

— Ես գտել եմ մեկին,— ձայն տվեց Ուրախ Ռոջերը:— Ահա նա...

Մաք-Քեյը ցած դրեց իր բեռը, և նրա վերջին բառերը խլացան փոթորկի մռնչոցի մեջ: Բայց սահնակի հետևից եկող կինը լսեց նրան, և Ռոջերը հանկարծ աղոտ կերպով տեսավ, որ նա իր կողքին է. կինը կռացել էր Ռոջերի ոտքերի մոտ պառկած մարդու վրա, իր մարմնով պաշտպանելով նրան քամուց ու անունը տալով, որը քամու ոռնոցի մեջ Ռոջերը լավ չլսեց: Սակայն կապարի ծանրությունն ընկավ նրա սրտից. նա հասկացավ, որ դա Նեյդան չէ: Ռոջերը անկենդան մարմինը դրեց սահնակին, համոզված, որ նա արդեն մեռած է: Կինը ինչ-որ բան ասաց Ռոջերին, բայց նրա թույլ ձայնը խեղդվեց քամու կաղկանձի մեջ: Նա գլխի չընկավ, որ տղամարդկանցից մեկը, որը դժվարությամբ քամուց խլված յուրաքանչյուր քայլի հետ օրորվում էր ու սայթաքում, խռպոտ ձայնով իրեն էր կանչում:

Ուրախ Ռոջերը հասկացավ, որ այն մարդը բոլորովին հալից ընկել է և պատրաստ է պառկել ձյան մեջ ու մեռնել, միայն թե այլևս առաջ չգնա:

— Շատ մոտիկ է,— ձայնեց նա։— Հիմա կհասնենք:

Նրանք լսեցին Ռոջերին: Կինը կախ ընկավ Ռոջերի արմունկից: Տղամարդիկ քաշեցին սահնակը, իսկ Ուրախ Ռոջերը բռնեց մեջտեղի ազատ մնացած լծափոկից ու շրջվեց փոթորկին դեմհանդիման, տարակուսելով, թե նրանք առանց շուն ինչպե՞ս են այսպիսի ճանապարհ դուրս եկել: Թվում է, մի ամբողջ հավիտենականություն անցավ, մինչև որ առջևում նշմարվեց լույսի աղոտ բիծը: Վերջին հիսուն քայլը նրանք դժվարությամբ քարշ էին գալիս, ասես դեմառդեմ ընդառաջ էին գնում չդադարող գնդացրային կրակին: Բայց վերջապես ձնաթումբը նրանց պաշտպանեց քամուց:

Մաք-Քեյը օգնեց, որպեսզի նրանք հերթով ներս մտնեն իր փորած ապաստարանը: Մի քանի րոպե նա ասես կուրացած լիներ, ասես սև քողի միջով դժվարությամբ զանազանեց իր փրկած մարդկանց հողագույն դեմքերն ու ձյունով պարուրված կերպարանքները: Ձյունների մեջ գտած մարդուն նա պառկեցրեց իր անկողնուն, և աղջիկը (հիմա Ռոջերին թվաց, նա շատ ջահել է) լաց լինելով նետվեց նրա մոտ: Այստեղ Ուրախ Ռոջերի տեսողությունը վերականգնվեց, և հենց նույն պահին էլ նա ցնցվեց ու հազիվ ոտքի վրա մնաց, ասես կողքին դինամիտ պայթեց:

Աղջիկը հետ գցեց մորթե գլխանոցը, հեկեկալով սեղմվեց անշարժ պառկած մարդուն, կանչելով՝ «Հայրիկ, հայրիկ»: Նա իսկի էլ նման չէր Նեյդային: Նրա թուխ մազերը կապված էին պինդ հանգույցով, և նա ավելի մեծ էր Նեյդայից: Աղջիկը շատ տգեղ թվաց Ռոջերին, համենայն դեպս՝ այդ պահին: Նրա այտերը ցրտահարված էին, աչքերն ուռել ու փոքրացել էին: Բայց Ուրախ Ռոջերը նրան չէր նայում, նայում էր նրա հորը և մտածում էր, որ շուտով նա շունչը կփչի: Հայրը արդեն ջահել չէր. ճաղատ էր, ճերմակ մորուքով ու սպայական բեղերով: Նա կենդանի էր. աչքերը բաց էին, իսկ կապտած շուրթերը փորձում էին կանչել աղջկան, որը, ձյունից լրիվ կուրացած, ոչինչ չէր տեսնում ու դեռ մտածում էր, թե հայրը մեռել է: Իսկ հայրը կենդանի էր: Նրա հագին ոստիկանական համազգեստի մորթե շինել էր:

Մաք-Քեյը դանդաղ շրջվեց, աչքերից մաքրեց հալվող ձյունը և նայեց մյուսներին: Նրանցից մեկը հոգնած կուչ էր եկել ձյունե պատի տակ: Տեսքից հազիվ երեսուն տարեկան կլիներ, ոչ ավելի, բայց թե նա էլ, երևում է, բոլորովին հալից ընկել էր: Երկրորդը պառկել էր հենց մուտքի մոտ և ուժ չուներ տեղից վեր կենալու: Երկուսի հագին էլ շինել էր, իսկ գոտիներից պատյաններ էին կախված:

Պատի տակ կուչ եկած երիտասարդը փորձեց վեր կենալ, բայց չկարողացավ և ամաչկոտ ժպտաց Մաք-Քեյին:

— Շատ շնորհակալություն, ախպերս,— մրմնջաց նա, դժվարությամբ շարժելով ճաքճքած շուրթերը։— Իմ անունը Փորտեր է. . . «Ն» ջոկատից... Գնդապետ Տևիշին էի ուղեկցում Ֆորտ Չերչիլ... Տևիշին ու նրա աղջկան: Բայց վատ ուղեկցորդ դուրս եկա, ճի՞շտ է: Նա մի

փոքր բարձրացավ տեղից։— Մեզ մոտ սահնակի մեջ կոնյակ կա։ Գուցե մի քիչ տաք նրան, հը՞…— Եվ նա գլխով ցույց տվեց աղջկան ու ճերմակամորուք տղամարդուն։

Գլուխ տասնչորսերորդ

Ուրախ Ռոջերը չպատասխանեց։ Նա լուռ դուրս սողաց անձավից և ափլփելով գտավ սահնակը։ Նա լսեց, որ Պիտերը գալիս է իր հետևից, և, հետ նայելով, լամպի կապտավուն լույսի տակ տեսավ Փորտերի անարյուն դեմքը. սա սպասում էր մուտքի մոտ, որպեսզի օգներ Ռոջերին՝ հակը ներս քաշելու։ Մաք-Քեյը փորձեց իրեն հավաքել։ Ընդամենը քառորդ ժամ առաջ նա ծիծաղում էր ոստիկանության մասին հիշելիս։ Նրան թվում էր, թե ինքը երբեք դրանից ավելի հուսալի թաքստոց չի ունեցել և երբեք այդքան անհասանելի ու անմատչելի չի եղել օրենքի սպասավորների համար։ Նա ոչ մի կերպ ուշքի չէր գալիս։ Ոստիկաններն իր հետևից չէին ընկել։ Նրանք իրեն չէին հետապնդում, ոչ էլ պատահականորեն հանդիպեցին իրեն։ Ո՛չ, նա ինքը նետվեց ձնաբքի մութ քառսի մեջ ու նրանց քարշ տվեց իր անձավը։ Ո՞ւմ մտքով կանցներ, թե ճակատագիրը կարող է այդպիսի գարշելի խաղ խաղալ նրա հետ։

Հետո նա քիչ-քիչ ուշքի եկավ ու սկսեց կտրատել հակերը սահնակին կապող փոկերը։ «Ն» ջոկատի տեղամաս, ինքն իրեն խոսեց նա. դա Ատաբասկա լճին հարող շրջանն է։ Նա ոչ մի անգամ չէր լսել ոչ Փորտերի, ոչ էլ գնդապետ Տևիշի մասին, և քանի որ Տևիշը պարզապես գնում էր Ֆորտ Չերչիլ, ապա թե նա, թե նրա շքախումբը հազիվ թե մտադրություն ունենային ճամփին հանցագործներ որսալու, մանավանդ Ուրախ Ռոջեր Մաք-Քեյին։ Սա էր նրա հաջողության հավանականությունը։ Չէ՞ որ այդպիսի բուքուբորանի մեջ նրանցից թաքնվելը միայն հանդգնություն չէր, դա հաստատ մահ էր։

Սահնակի մեջ կար ընդամենը երկու պարկ, և նա այդ պարկերը անցքի միջով փոխանցեց Փորտերին։ Մի քանի րոպե անց նա արդեն կոնյակի շիշը մոտեցրել էր ճերմակամորուս գնդապետի շուրթերին, իսկ աղջիկը ուշադիր նայում էր նրան. նրա աչքերի ուռուցքը հետզհետե իջնում էր։ Տևիշը ջղաձգորեն մի կում արեց, ու նրա թաթմանով ձեռքը իջավ աղջկա արմունկին։

— Ես շատ լավ եմ, Ջո,— մրմնջաց նա։— Շա՛տ լավ…

Նա նայեց Մաք-Քեյին, հետո աչք ածեց ձնանձավին։ Նրա աչքերը փոչոտ հոնքերի տակից նայում էին դաժան ու ծակող հայացքով։ Դրանք ուշադիր հետևում էին Մաք-Քեյին, որը աղջկան մի կում կոնյակ տվեց խմելու, ապա տափաշիշը հանձնեց Փորտերին։

— Դուք փրկեցիք մեր կյանքը,— ասաց Տևիշը ավելի հաստատուն ձայնով։— Ես չեմ հասկանում, թե ինչ կատարվեց։ Միայն հիշում եմ, որ սայթաքեցի ընկա ու էլ չկարողացա վեր կենալ։ Ես սահնակի հետևից էի գնում, Փորտերն ու Բրեոն քաշում էին, իսկ Ջոզեֆինան՝ աղջիկս, պառկած էր սահնակի մեջ՝ վերմակներով ծածկված։ Թե ինչ եղավ հետո. . . Նա լռեց, և Ուրախ Ռոջերը պատմեց, թե բանն ինչպես էր եղել։ Նա գլխով արեց Պիտերի կողմը, ա՛յ թե ում եք պարտական։ Շունը գլխի ընկավ ու ամեն կերպ հասկացրեց, որ դրսում մարդ կա։ Դե, իրենք էլ որոշեցին դուրս գալ, տեսնել ինչ կա։ Իր անունը Ջոն

Կամինգո է: Ինքը թակարդներ է դնում աղվես որսալու համար, և բուքը վրա էր հասել խրճիթից հիսուն մղոնի վրա: Ինքը առանց շների է ճամփա ընկել, դրա համար էլ ընդամենը մի պարկ է վերցրել հետը:

Բրեոն՝ Տևիշի երկրորդ ուղեկիցը, արդեն ուշքի էր եկել և ուշադիր լսում էր նրան: Հենց որ Մաք-Քեյը մի հայացք գցեց նրա թուխ, նիհար դեմքին, իսկույն հասկացավ, որ այդ խմբի մեջ միայն Բրեոն է իսկականից ճանաչում Հյուսիսը: Բրեոն մի տեսակ տարօրինակ հայացքով էր նայում Ուրախ Ռոջերին: Հետո, կարծես սթափվելով, գլուխը թափահարեց և սկսեց ձյունով շփել ցրտահարված այտերը: Փորտերը հագից հանել էր մորթե շինելը և հիմա բացում էր հակերից մեկը: Երևում էր, որ Փորտերն ու աղջիկը մյուսներից ավելի քիչ էին տառապել: Ջոզեֆինան նայեց Փորտերին: Ապա նայեց Ռոջերին: Ուռուցքը բոլորովին անցել էր, ու թվում էր, աղջկա աչքերը խոշոր էին ու շատ գեղեցիկ: Նա ժպտաց Մաք-Քեյին բարեկամական, անկեղծ ժպիտով: Մաք-Քեյը մտածեց, որ նա, ըստ երևույթին, ուժեղ խառնվածքի տեր է, ու նրան իսկի վախկոտ ու լալկան չես ասի: Դա անմիջապես նկատելի եղավ:

— Վատ չի լինի, եթե բոլորս էլ տաք ապուր ուտենք,— ասաց աղջիկը:— Դուք ի՞նչ կասեք:

Աղջկա աչքերը լի էին երախտագիտությամբ, որը նա չփորձեց խոսքերով արտահայտել: Ռոջերին նա շատ դուր եկավ: Իսկ Պիտերը հետևից կամացուկ մոտեցել էր աղջկան ու նայում էր, թե նա ինչպես է ձյունով շփում ճերմակամորուսի այտերը:

— Մյուս պարկի մեջ սպիրտայրոց կա,— դաժան, կկոցած հայացքը Մաք-Քեյի դեմքից չկտրելով՝ ասաց Բրեոն:— Հա՛, ներեցեք, ձեր անունն ի՞նչ է:

— Կամինգս... Ջոն Կամինգս:

Բրեոն ոչ մի պատասխան չտվեց: Ուրախ Ռոջերը մի անորոշ տագնապ էր զգում, որը գնալով աճում էր: Նրանք արգանակ խմեցին ու մեկական բլիթ կերան: Փոքրիկ խցիկում արդեն շոգ էր, օդը ծանրացավ, և աղջիկը հագից հանեց մորթե մուշտակը: Նրա դեմքի գունատությունն անցել էր, աչքերը փայլում էին, իսկ ձայնը ուրախ էր, երջանիկ, որովհետև փրկություն ու տաքություն էին գտել այնտեղ, ուր մահվան էին սպասում: Փորտերը բարեկամաբար էր վերաբերվում Ռոջերին, ասես հին ընկերոջ հետ էր խոսում: Նա պատմեց, թե ինչ էր տեղի ունեցել: Անպիտան ուղեկիցները լքեցին նրանց, փախան ձնաբուքն սկսվելուն պես, իրենց հետ տանելով երկու լծվածքներն ու սահնակներից մեկը: Իսկ իրենք շարունակեցին առաջ գնալ, հույս ունենալով, թե մի ձնաթումբ կգտնեն ու կպատսպարվեն մրրիկից: Բայց այստեղ տունդրան սեղանի պես հա՛րթ-հարթ էր: Իրենք կրակեցին, իսկ միսս Տևիշը բղավում էր ոչ թե նրա համար, որ հույս ունեին, թե օգնություն կգտնեին, այլ որովհետև փնտրում էին հետ մնացած Տևիշին: Ուղղակի ծիծաղելի էր, խոսքը ավարտեց Փորտերը, թե նման բան կարող էր պատահել գնդապետ Տևիշի հետ, որը հեծյալ ոստիկանությունում ուժեղ, երկաթե մարդու համբավ ուներ:

Տևիշը զուսպ քմծիծաղեց: Բոլորի տրամադրությունն էլ լավ էր, բացառությամբ, թերևս, Բրեոյի: Նա ոչ մի անգամ չծիծաղեց, նույնիսկ չժպտաց: Բայց Ուրախ Ռոջերը նկատեց, որ

մյուսները հատուկ ուշադրությամբ են լսում նրան: Սակայն դրանում ինչ-որ անհասկանալի ու տհաճ բան կար. համենայն դեպս աղջիկը իսկույն դադարեց ծիծաղել: Մաք-Քեյը շուտով հասկացավ, թե աղջիկն ու Փորտերը ինչու են այդպես երջանիկ ժպտում, նկատեց, որ նրանք թաքուն երկու անգամ իրար ձեռք սեղմեցին: Իսկ երբ իրար երեսի նայեցին, նրանց աչքերը պարզ խոսեցին այն մասին, թե ինչ զգացմունքներ են իշխում: Բայց Մաք-Քեյը Բրեոյին չէր հասկանում: Նա չգիտեր, որ Բրեոն «Ն» ջոկատում լավագույն խուզարկուի համբավ ուներ Ատարասկայի և Սառուցյալ օվկիանոսի ափերի միջև, և որ երկու հազար մղոնի վրա փռված Երեք Գետերի շրջանում նրան անվանում են «Շինգուս» — «Աքիս»…

Առաջինը աղջիկը քնեց, այտը հոր ուսին սեղմած: Բրեո-Աքիսը փաթաթվել էր վերմակի մեջ և շնչում էր խոր ու համաչափ: Փորտերը դեռ ծխամորճն էր փստացնում ու քնքշորեն նայում էր քնած Ջոզեֆինա Տևիշին: Նա հպարտորեն ժպտաց ու շշնջաց Մաք-Քեյին:

— Նա իմ հարսնացուն է: Շուտով մենք կամուսնանանք:

Ուրախ Ռոջերը նրա ձեռքը ամուր սեղմելու ցանկություն ունեցավ: Նա գլխով արեց, և ինչ-որ բանից նրա սիրտը թպրտաց:

— Ես հասկանում եմ ձեզ,— ասաց Ռոջերը։— Երբ մթության մեջ լսեցի նրա ձայնը, ես հիշեցի մի աղջկա... էնտեղ, Հարավում:

— Հարավո՞ւմ,— հարցրեց Փորտերը։— Բայց ինչո՞ւ: Եթե դուք սիրում եք նրան, ապա ինչո՞ւ նա այնտեղ է, իսկ դուք՝ այստեղ։

Մաք-Քեյը ուսերը վեր քաշեց։ Առանց այդ էլ նա բերանից որոշ բան թռցրել էր արդեն։ Բայց ոչ Ռոջերը, ոչ էլ Փորտերը չգիտեին, որ Բրեոն պառկած է կիսաբաց աչքերով և ուշադիր ականջ է դնում:

Ուրախ Ռոջերը ձեռքը բարձրացրեց, ասես բուքի ոռնոցի մեջ մի նոր ձայն լսեց:

— Բուքը երկու-երեք օր կտևի: Պառկեք քնելու, Փորտեր: Իսկ ես մի սենյակ էլ սարքեմ միսս Տևիշի համար: Կարծում եմ, դա նրան պետք է, հազիվ թե մենք էստեղից շուտ հեռանանք: Դժվար գործ չէ, համ էլ ժամանակը շուտ կանցնի:

— Ես կօգնեմ ձեզ,— առաջարկեց Փորտերը:

Նրանք մոտ մեկ ժամ աշխատեցին՝ բահերի փոխարեն Մաք-Քեյի դահուկներով զինված։ Եվ այդ ամբողջ ընթացքում Բրեոն աչք չփակեց։ Երբ նա նայում էր Ռոջեր Մաք-Քեյին, շուրթերը ծռմռվում էին տարօրինակ ժպիտից։ Վերջապես Փորտերը պառկեց քնելու: Այդժամ Աքիսը ելավ տեղից ու սկսեց ճմլկոտալ: Մաք-Քեյն արդեն ավարտել էր երկրորդ սենյակը ու հիմա թունել էր փորում, որը երկրորդ ելք պիտի ծառայեր: Բրեոն մոտեցավ նրան ու վերցրեց Փորտերի գցած դահուկը:

— Գուցե ես էլ մի քիչ գործ անեմ,— ասաց նա։— Ոնց որ քունս չի տանում, Կամինգս:

Նա սկսեց ձյունը քերել և կիտել մի կողմի վրա:

— Դուք վաղո՞ւց եք էս կողմերում ապրում,— հարցրեց նա:

— Երրորդ ձմեռն է արդեն: Էստեղ շիկակարմիր աղվեսներ շատ կան, մեկ-մեկ էլ սպիտակ ու սևագորշ աղվեսներ են պատահում:

Բրեոն անորոշ «հըմ» արեց:

— Ուրեմն, երևի, ծանոթ եք Քասիդիին,— անտարբեր ասաց նա, առանց Մաք-Քեյին նայելու:— Կապրալ Տերենս Քասիդիին: Չէ՞ որ սա նրա շրջանն է:

Ուրախ Ռոջերը շարունակում էր փորել:

— Այո, ճանաչում եմ: Մենք անցած ձմռանն ենք հանդիպել: Էսպես, մի քիչ էլ շեկ է: Լավ մարդ է: Նա ինձ դուր է գալիս: Իսկ դուք ծանոթնե՞ր եք:

— Մենք միասին ենք սկսել ծառայությունը,— պատասխանեց Բրեոն. — Բայց նրա բախտը չի բերում: Երեք տարի նա փնտրում է ոմն Մաք-Քեյի: Նրան կանչում են Ուրախ Ռոջեր: Ուրախ Ռոջեր Մաք-Քեյ... Լսե՞լ եք նրա մասին:

Ուրախ Ռոջերը գլխով արեց:

— Քասիդին ինձ պատմել է նրա մասին, երբ մի անգամ գիշերը մնացել էր իմ խրճիթում: Նա, իմ կարծիքով, վատ մարդ չէ:

— Ո՞վ: Քասիդի՞ն, թե Ուրախ Ռոջերը:

— Երկուսն էլ:

Աքիսը առաջին անգամ ուղիղ նայեց իր զրուցակցի դեմքին: Նա տարօրինակ աչքեր ուներ՝ անթափանց, մշտապես կկոցած, կարծես խնամքով թաքցնում էր իր մտքերը: Մաք-Քեյին թվաց, թե դրանք իր ներսն էլ են տեսնում: Մի սարսուռ անցավ նրա մարմնով. դա վտանգի նախազգացումն էր, ավելի կործանարար, քան փոթորիկը:

— Իսկ դուք չգիտե՞ք, որտեղ կլինի նա, այդ Ուրախ Ռոջերը:

— Ո՛չ:

— Բանն այն է, որ Քասիդին կարծում է, թե նա հարավում մի մարդու է սպանել: Բայց սխալվում է, էդ մարդը կենդանի է մնացել: Թե որ հանկարծ հանդիպեք նրան, պատմեք այդ մասին: Լա՞վ:

Ուրախ Ռոջերը գլուխն ու ուսերը մտցրեց հետզհետե երկարող թունելի մեջ:

— Կպատմեմ:

Նա գիտեր, որ Բրեոն ստում է: Գիտեր նաև, որ այդ աչքերի նեղլիկ ճեղքերի հետևում աղվեսի խորամանկություն է թաքնված:

— Ասացեք նաև, որ իշխանությունները մտադիր են ներել նրան վաճառականին կողոպտելու համար. ինչքան չլինի, արդեն հինգ տարուց ավելի է անցել:

Ուրախ Ռոջերը դուրս ելավ թունելից՝ դահուկի վրա մի կույտ ձյուն:

— Լավ, դա էլ կհաղորդեմ,— ասաց նա, ժպտալով այդքան անշնորհք ծուղակի համար։— Բրեռ, չլինի՞ կարծում եք, թե ես հյուրանոց եմ պահում անտուն ավազակների համար:

Բրեռն ժպտաց: Անդուր ժպիտ էր, և Ուրախ Ռոջերը, հետ նայելով, հասցրեց նկատել դա: Երբ նա ձյունը դուրս թափեց ու հետ դարձավ, Բրեռն ասաց.

— Գիտեք ինչ, մեզ հայտնի է, որ Ուրախ Ռոջերը ձմռանը էս կողմերն է մնում: Իսկ Քասիդին ասում էր, որ հարավում մի աղջիկ կա...

Ուրախ Ռոջերի գլուխը անհետացավ թունելի մեջ:

— ... որը շատ կուզենար նրան տեսնել,— խոսքը ավատեց Բրեռն:

Երբ Մաք-Քեյը թունելից դուրս եկավ, Աքիսը հանգիստ ծխամորճ էր ծխում:

— Հա, հիշում եմ... Քասիդին աղջկա մասին էլ է ինձ պատմել,— ասաց Ուրախ Ռոջերը։— Նա ասաց, թե մի օր չէ մի օր կբռնի էդ մարդուն, որովհետև նա ուզում է հանդիպել իր սիրած աղջկան: Ուրեմն, եթե ես հանդիպեմ Ուրախ Ռոջեր Մաք-Քեյին ու նրան ուղարկեմ Հարավ, դրանով օգնած կլինեմ ոստիկանությանը: Ճի՞շտ է, Բրեռ: Իսկ նրան բռնելու համար պարգև նշանակվա՞ծ է: Դրանից մի օգուտ կլինի՞ ինձ, թե չէ:

Բրեռն սպիրտի լամպի աղոտ լույսի տակ նայեց նրան, ծխի քուլաներ բաց թողեց, և նրա բարակ շուրթերը ծռմռվեցին առեղծվածային ժպիտից:

— Բուքը ոնց է ոռնում,— ասաց նա։— Ինձ թվում է... Կամինգս, գնալով ավելի է ուժեղանում:

Բրեռն անսպասելիորեն ձեռքը մեկնեց Պիտերին, որը պպզել էր լամպի կողքին՝ աչքերը չկտրելով անծանոթից:

— Հրաշալի շուն ունես, Կամինգս: Էստեղ արի, Պիտեր, էստեղ: Պիտե՛ր: Պիտե՛ր:

Ռոջերի շունչը բռնվեց: Ախր այն պահից ի վեր, ինչ այդ մարդիկ հայտնվել էին նրա ապաստարանում, նա ոչ մի անգամ բարձրաձայն Պիտերի անունը չէր տվել:

— Պիտե՛ր... Պիտե՛ր...

Աքիսը փաղաքշորեն ժպտաց: Բայց Պիտերը նույնիսկ ականջն էլ չշարժեց: Նա կարծես չտեսավ Բրեռյի իրեն մեկնած ձեռքը: Նրա հայացքը առաջվա պես անվստահ էր ու զրգռիչ: Ռոջերը հազիվ զսպեց իրեն, որպեսզի չգրկի Պիտերին: Աքիսը ծիծաղեց:

— Հրաշալի շուն է, Կամինգս, խոսք չկա։ Ինձ դուր են գալիս այն շները, որոնք հավատարիմ են մնում միայն մի մարդու, և դուր են գալիս այն մարդիկ, որոնք

հավատարիմ են մնում միայն մի շան: Իսկ Ուրախ Ռոջերը հենց այդպիսին է, որ կա, դրանում ինքներդ էլ կհամոզվեք, եթե երբևիցե հանդիպեք նրան: Թափառում է մի շան հետ միայն: Էրդել է, անունը Պիտեր: Տարօրինակ անուն է, չէ՞:

Նա շրջվեց դեպի հարևան սենյակի մուտքը ու, երկար ձեռքերը վեր տնկելով, ծմրկոտաց:

— Փորձեմ նորից պառկել, Կամինգս, գուցե քնեմ: Բարի գիշեր: Տեր աստված, էս ոնց է ոռնում քամին:

— Այո՛, գիշերը ուժեղ բուք է լինելու,— համաձայնեց Մաք-Քեյը: Երբ Բրեոն դուրս գնաց, Ուրախ Ռոջերը նայեց Պիտերին, իսկ կրծքի տակ կատաղի զարկում էր սիրտը: Նա ականջ դրեց քամու ոռնոցին: Բուքը ավելի էր մոլեգնել տունդրայի վրա, և Մաք-Քեյի աչքերը փայլեցին սառը ու չար կրակով: Այս անգամ նա օրենքի ձեռքից էլ չէր պրծնի: Փախուստը հաստատ մահ կնշանակեր: Եվ Բրեոն գիտեր դա: Այո՛, նա բռնվել էր իր իսկ ձեռքով սարքած ծուղակում: Իհարկե, եթե Բրեոն գլխի է ընկել, թե ով է ինքը... Իսկ Բրեոն անկասկած գլխի է ընկել: Մի բան է մնում միայն՝ կռվել:

Մաք-Քեյը մտավ առաջին սենյակը՝ իր պարկն ու վերմակը վերցնելու: Նա Բրեոյի կողմը չնայեց, բայց համոզված էր, որ ոստիկանի կկոցած աչքերը հետևում են իր յուրաքանչյուր շարժումին: Առաջին սենյակում լամպը դեռ վառվում էր, բայց երբ Ռոջերը վերմակը փռեց նոր ննջարանում, փչեց հանգցրեց իր լամպը: Ապա, անաղմուկ փորփրելով, մի անցք բացեց ձյունի միջնապատի վրա: Մինչև մնացած սառցի կեղևը պոկելը մի տասը րոպե սպասեց, ապա, աչքը անցքին մոտեցնելով, տեսավ Բրեոյին: Աքիսը, իր անկողնուն նստած, թեքվեց դեպի կողքին քնած Փորտերը ու բոթեց նրա ուսը:

Ուրախ Ռոջերը էլի մի դյույմ լայնացրեց անցքը ու լսողությունը լարեց: Տնիշն ու իր աղջիկը դեռ հանգիստ քնած էին: Փորտերը փոքր-ինչ բարձրացավ, բայց Բրեոն նախազգուշացնելու համար սեղմեց նրա ձեռքը ու գլխով արեց երկրորդ սենյակի կողմը: Փորտերը հասկացավ ու լուռ մնաց: Բրեոն կռացավ, նրա ականջին ինչ-որ բան փսփսաց: Մաք-Քեյը միայն անհասկանալի փնթփնթոց լսեց: Սակայն շատ պարզորոշ տեսավ, թե ինչպես փոխվեց Փորտերի դեմքը: Երիտասարդի աչքերը չռվեցին, նա նայեց սենյակի մյուս կողմը ու ձեռքը մեկնեց՝ կամենալով արթնացնել Տնիշին ու նրա աղջկան:

Սակայն Աքիսը թույլ չտվեց.

— Մի՛ շտապեք: Թող քնեն իրենց համար:

Մաք-Քեյը միայն այսքանը լսեց: Փորտերն ու Բրեոն շարունակեցին փսփսալ: Նույն ուրախ հուզմունքի արտահայտությունը կար և՛ Փորտերի կարմրավուն դեմքին, և՛ Բրեոյի թուխ կերպարանքին: Ուրախ Ռոջերը շարունակեց նայել նրանց այնքան ժամանակ, մինչև որ Բրեոն լամպը հանգցրեց: Այնժամ նա ձյունով անաղմուկ փակեց անցքը, ու, ափլփելով, մթության մեջ գտավ Պիտերի գլուխը:

— Նրանց թվում է, որ մենք արդեն իրենց ձեռքում ենք, բարեկամս,— շշնջաց Ռոջերը:— Այ թե ինչ են մտածում:

Մոտ մեկ ժամ Ուրախ Ռոջերն ու Պիտերը անշարժ պառկած էին: Բայց քնած չէին: Երբ ժամը լրացավ, Ուրախ Ռոջերը չորեքթաթ սողաց դեպի դռան անցքը ու ականջ դրեց: Հարևան սենյակում չորսն էլ հանգիստ ու համաչափ շնչում էին: Այդ ժամանակ նա սկսեց շոշափել դրսի պատերը, մինչև որ գտավ փխրուն, սրսուռ ձյունը:

— Հենց սա էլ մեզ պետք է,— ասաց նա իրեն կրնկակոխ հետևող Պիտերին:— Մենք կխաբենք նրանց, բարեկամս: Իսկ եթե հարկ լինի՝ կկռվենք:

Գլխով, ուսերով, իրանով նա սկսեց շուռումուռ գալ, պտտվել փափուկ ձյան մեջ: Քիչ-քիչ իր համար ելք փորեց, ոտքից ոտք ճոճվելով, օրորվելով, որպեսզի պնդացնի նոր բացված անցքի կողքերի ձյունը. նա ավելի ու ավելի խորացավ ձնակույտի մեջ ու երկու ֆուտ տրամագծով մի կլոր թունել բացեց: Մեկ ժամ անց նա հասավ ձնակույտի հողմահայաց կողմի արտաքին կեղևին: Ապակու հաստություն ունեցող այդ կեղևը նա չջարդեց, այլ մի քանի րոպե պառկեց, շունչ քաշեց ու ականջ դրեց դրսից լսվող քամու սուլոցին: Նեղլիկ բնի մեջ տաք էր ու հարմարավետ, և Ուրախ Ռոջերի քունը տարավ: Նա դժվարությամբ աչքերը բացեց ու հետ գնաց իր սենյակը: Ձնակոշտերով քողարկելով թունելի մուտքը՝ նա փաթաթվեց վերմակով ու հանգիստ քուն մտավ:

Այժմ ձնաթմբի խաղաղ ընդերքում արթուն էր միայն Պիտերը: Եվ Պիտերն էլ Ուրախ Ռոջերին արթնացրեց այն ժամին, երբ ցածրիկ ամպերի հետևից բացվեց արշալույսը: Մաք-Քեյը զգաց, որ Պիտերը քաշքշում է իրեն, ու աչքերը բացեց: Մի ինչ-որ լույս նշողվեց ներսում, և նա վեր կացավ: Ձյունե պատի հետևում դարձյալ վառվում էր լամպը: Այնտեղից ինչ-որ խշխշոց ու ցածր, անորոշ փսփսոց էր լսվում: Մաք-Քեյը նորից բացեց խցանված անցքը, լայնացրեց ու ներս նայեց:

Բրեոն ու Տևիշը քնած էին, բայց Փորտերը նստած էր իր անկողնու վրա, իսկ կողքին մի կերպ տեղավորվել էր աղջիկը: Հիմա նրա մազերը հանգուցված չէին, այլ թափված էին ուսերին: Ռոջերը լայն չռած աչքերը հառել էր երկու սենյակներն իրար միացնող անցքին: Նա տեսավ, որ աղջկա ձեռքը դրված էր Փորտերի արմունկին: Փորտերը ինչ-որ բան էր փսփսում աղջկան և այնքան էր մոտեցել նրան, որ շուրթերը հպվում էին աղջկա մազերին, ու թեև Ուրախ Ռոջերը ոչ մի խոսք չլսեց, բայց գիտեր, թե Փորտերի աչքերն ինչու են այդպես փայլում, ջահել ոստիկանը Ջոզեֆինա Տևիշին պատմում էր, թե ով է իրենց փրկարարը: Նա տեսավ, ինչպես հանկարծ աղջիկը հոնքերը կիտեց, լսեց նրա հուզված շշնջոցը, բայց Փորտերը մատը դրեց աղջկա շուրթերին և գլխով արեց նրա հոր կողմը: Հետո ձեռքը դրեց աղջկա ուսին, և Մաք-Քեյը տեսավ, ինչպես նրանց շուրթերը ձուլվեցին իրար տևական համբույրով: Ապա աղջիկը արագորեն հետ քաշվեց ու նորից պառկեց հոր կողքին: Փորտերը նրան ծածկեց վերմակով ու պառկեց իր անկողնում, Բրեոյի կողքին:

Ուրախ Ռոջերը գլխի ընավ, թե ինչ է կատարվել: Աղջիկն արթնացել է և, մութից վախենալով, արթնացրել է Փորտերին, որպեսզի նա լամպը վառի: Փորտերը օգտվել է այդ հանգամանքից, որպեսզի նրան հայտնի Բրեոյի հետաքրքիր հայտնագործության մասին և համբուրի նրան: Մաք-Քեյը շոյեց Պիտերի ծոծրակի կոշտ բուրդը և ականջ դրեց: Բուքի ռռնոցը չէր լսվում, և նա մտածեց, որ բուքը, հավանաբար, հանդարտվել է:

Նա շարունակ նայում էր անցքից: Մոտավորապես կես ժամ անց այն բանից հետո, երբ Փորտերը նորից քնեց, նա նկատեց, որ Ջոզեֆինա Տևիշը քնած չէ. նա նստած էր իր անկողնու վրա: Հետո կամացուկ չոքեց տեղում և վերջապես ոտքի ելավ: Կռանալով Փորտերի ու Բրեոյի կողմը, աղջիկը համոզվեց, որ նրանք քնած են, և գաղտագողի մոտեցավ Ռոջերի սենյակը տանող անցքին: Ռոջերը արագորեն մեկնվեց իր անկողնուն ու Պիտերին սեղմեց իրեն:

— Կամաց, բարեկամս, կամաց,— շշնջաց նա:

Անցքից երևացող լուսավոր կետը անհետացավ. աղջիկը կանգնել էր անցքի առաջ ու ականջ էր դնում, իմանալու՝ Ռոջերը քնա՞ծ է, թե ոչ: Ռոջերը սկսեց խռմփացնել, բայց աչքերը փակելուց առաջ հասցրեց նկատել, որ Ջոզեֆինա Տևիշը ուղիղ դեպի իրեն է գալիս: Ահա նա խոնարհվեց Ռոջերի վրա: Աղջկա նուրբ խոպոպները հպվեցին նրա դեմքին ու ձեռքերին: Ջոզեֆինան կամացուկ ծնկի իջավ, շոյեց Պիտերին և մեղմորեն բոթեց Ռոջերի ուսը:

— Ուրախ Ռոջեր,— շշնջաց նա:— Ուրախ Ռոջեր Մաք-Քեյ:

Ռոջերն աչքերը բացեց և ուղիղ իր գլխավերևում տեսավ նրա դեմքը:

— Հը՛, ի՞նչ կա,— հարցրեց նա հազիվ լսելի ձայնով:

Աղջիկը դժվարությամբ շունչ քաշեց ու ջղաձգորեն սեղմեց նրա ուսը: Կիպ կռանալով Ռոջերի դեմքին, նա հազիվ լսելի ձայնով շշնջաց.

— Դուք... դուք քնած չե՞ք:

— Ոչ:

— Դե ուրեմն լսեք. եթե դուք Ուրախ Ռոջեր Մաք-Քեյն եք, ապա հեռացեք այստեղից, շուտ: Քանի դեռ Բրեոն չի արթնացել: Կարծում եմ՝ բուքը արդեն հանդարտվել է... էլ քամու ձայն չի լսվում... Թե որ առավոտը ձեզ էստեղ գտնի...

Աղջիկը բաց թողեց նրա ուսը: Ուրախ Ռոջերը մթան մեջ շոշափելով գտավ նրա ձեռքը, և աղջիկը նրան պատասխանեց ամուր բարեկամական ձեռքսեղմումով:

— Ես անչափ շնորհակալ եմ ձեզանից այն ամենի համար, ինչ որ արեցիք հանուն մեզ,— շշնջաց Ջոզեֆինան:— Բայց օրենքը... և Բրեոն... անողոք են:

Ջոզեֆինան անհետացավ այնքան արագ ու անաղմուկ, ինչպես որ հայտնվել էր: Մաք-Քեյը անցքի միջով նայեց նրա հետևից, մինչև աղջիկը նորից պառկեց հոր կողքին:

Նա մոտ քաշեց Պիտերին:

— Նորից ստիպված ենք փախչել, Կաղլիկ,— շշնջաց նա:— Մի անգամ էլ փորձենք:

Մաք-Քեյը արագ ու անձայն գործի անցավ: Քառորդ ժամ անց նրա բոլոր իրերը կապկպված էին, թունելի մուտքն էլ բաց էր: Նա մտավ հարևան սենյակը, որտեղ, աչքերը

լայն բացած, պառկած էր Ջոզեֆինան: Աղջիկը գլուխը բարձրացրեց, և Ուրախ Ռոջերը նշաններով հասկացրեց, թե ինչ է խնդրում, կարելի՞ է մի բան վերցնել նրանց իրերից: Աղջիկը գլխով արեց: Նա կռացավ, փորփրեց պարկը, իսկ երբ շտկվեց, աղջիկը նրա ձեռքում տեսավ հին թերթերի կապոցն ու զարմացած աչքերը չռեց նրա վրա, նրա հայրը այդ թերթերը տանում էր Ֆորտ Չերչիլի առևտրականին: Բայց Ռոջերի ագահ ու մեղավոր հայացքը ամեն բան բացատրեց նրան, և աղջիկը ժպտաց՝ անձայն երախտագիտության խոսքեր շշնջալով: Դռան մոտ Ուրախ Ռոջերը հետ նայեց: Եվ այստեղ Ջոզեֆինան իսկական գեղեցկուհի թվաց նրան. այնպիսի լույս կար նրա աչքերում, երբ նա ամբողջ մարմնով ձգվեց դեպի Ռոջերը, ասես կամենալով քաջալերել նրան դժվարին ճանապարհից առաջ: Հանկարծ աղջիկը ափը դրեց շուրթերին ու հրաժեշտի շնորհապարտ մի համբույր հղեց Ուրախ Ռոջերին:

Երբ Մաք-Քեյը սողոսկեց թունելի միջով, հետևից լսելով Պիտերի շնչառությունը, նրա սիրտը ուրախ երգում էր: Նա նորից ստիպված եղավ փախչել իշխանությունների հետապնդումից, բայց նրան օգնեց ու երջանկություն ցանկացավ այդ ազնիվ աղջիկը:

Ուրախ Ռոջերը թունելի վերջում ջարդեց սառցակեղևն ու դուրս եկավ տունդրա, որտեղ արդեն բացվում էր մռայլ ձմեռային օրը: Երկինքը ծածկված էր ծանր ամպերով, բայց քամին դադարել էր: Մի քանի ժամ անդորր տիրեց, որով նշանավորվեց Սև Բորանի երկրորդ օրվա սկիզբը:

Ծանրութեթև անելով փրկության բոլոր հնարավորությունները՝ Մաք-Քեյը ցածրաձայն ծիծաղեց.

— Շուտով բուքը նորից պար կբռնի, Կաղլիկ,— ասաց նա։— Ավելի լավ է, թեքվենք հարավակողմ, դեպի անտառ, էստեղից մինչև անտառ տասներկու մղոն է:

Նա շրջանցեց ձնաթումբը և անշեղ առաջ գնաց: Իսկ այն սենյակից, որ փորել էր ավազակը, և որը փրկել էր նրանց կյանքը, Ջոզեֆինա Տևիշը նայում էր մարդու և շան գորշ ուրվապատկերներին, մինչև որ նրանք ձուլվեցին ձմեռային տունդրայի գորշասպիտակավուն երկրին ու երկնքին:

Գլուխ տասնհինգերորդ

Մաք-Քեյը, ճեղքելով փոթորիկը, տունդրայի սրտում ընկած մեծ ձնաթմբից քսան մղոն դեպի հարավ գնաց: Մի օրուգիշեր, սպասելով փոթորկի դադարելուն, նա մնաց գաճաճ եղևնուտում, որը եզերում էր մինչև Սառուցյալ օվկիանոսը ձգվող անտառազուրկ հարթությունները: Նա համոզված էր, որ այստեղ իրեն ոչ մի վտանգ չի սպառնում: Ձյունն ու քամին տեղնուտեղը սրբում էին հետքերը: Երկրորդ օրը նա ուղղվեց դեպի իր խրճիթը, ընտրելով ամենակարճ ճանապարհը: Տունդրայում առաջվա պես մոլեգնում էր ձնաբուքը, բայց ծառերի արանքում քամու ուժը թուլանում էր: Մաք-Քեյը չէր կասկածում, որ փոթորկի հանդարտվելուն պես ոստիկանության պարեկը հեշտությամբ կգտնի իր խրճիթը: Փորտերն ու Տևիշը նրան չէին անհանգստացնում: Բայց նա գիտեր, որ Բրեոյի

ձեռքից չի պրծնի: Բրեոն հաստատ կհոտոտի իր խրճիթը: Դրա համար էլ նա ուզում էր կանխել ոստիկանին, ավելի շուտ հասնել խրճիթ:

Երկրորդ գիշերը նա ոչ մի կերպ չկարողացավ քնել: Գիտակցությունն ասես բռնվել էր խելագար տենդով: Մտքերն անկարգ խռնվում էին, ինչպես կեր ճարելու համար դեսուդեն զարկվող գայլ-փոխակերպուկը: Մտքերը նրան չէին ենթարկվում ու չէին թողնում քնի, թեև ուժասպառ էր եղել: Նա հիշեց իր կյանքի վերջին օրերը, հիշեց, թե քանի անգամ է դուրս պրծել ոստիկաններից և թե ինչպես այս անգամ քիչ մնաց նրանց ձեռքն ընկներ: Ենթադրությունը անողոք քննիչի նման ցույց էր տալիս նրան, որ ցանցը գնալով ավելի է սեղմվում, ու թե որ մի անգամ էլ բռնվեց, վերջ, էլ փրկություն չի լինի: Հետո, ասես հանդարտվելով, մտքերը հանկարծ նրան փոխադրեցին Կրեգի փեշերին կապույտ երկնքի տակ փռված կանաչ մարգագետինը, Նեյդայի մոտ:

Հիմա դա երազ էր թվում: Մի՞թե այդ բոլորը իսկապես եղել էր: Հանգիստ, խաղաղ ամիսները մարդաբնակ վայրերում, որտեղ ինքը հանդիպեց Նեյդային, և նա սիրեց իրեն, իսկ երբ խոստովանեց, որ ինքը ավազակ է ու թաքնվում է ոստիկանությունից, նա ցանկություն հայտնեց կիսել իր ճակատագիրը: Ռոջերն աչքերը փակեց ու փոխադրվեց վերջին փոթորկոտ գիշերը, որ անցկացրեց Կրեգի փեշերին: Նա նորից եղավ ծեր քարոզչի խրճիթում, դրսում փայլատակեցին կայծակները, պայթեց ամպրոպը, իսկ ինքը գրկեց Նեյդային, զգաց նրա շուրթերի հպումը, նայեց աչքերի մեջ, որ լի էին հուսահատությամբ ու աղերսանքով: Հետո նա տեսավ, որ Նեյդան, կծկված, պառկած է աթոռի մոտ, և զզգզված մազերը Ռոջերի աչքերից ծածկում էին նրա դալուկ դեմքը: Նա այդպես տեսավ Նեյդային նաև այն վերջին պահին, երբ մինչև դուռը բացելն ու գիշերվա փոթորկոտ խավարի մեջ սուզվելը ինքը անվճռականորեն հետ նայեց:

Մաք-Քեյը հոգոց հանեց, ոտքի ելավ, իրենից վանելով տեսիլքները, և չոր խռիվ զցեց խարույկի մեջ: Նա ձայն տվեց Պիտերին և ասաց այն, ինչ արդեն մի քանի անգամ ասել էր և՛ նրան, և՛ իրեն:

— Եթե մենք նրան վերցնեինք մեզ հետ, Կաղլիկ, դա մարդասպանություն կլիներ: Սպանությունից էլ վատ կլիներ:

Նա նայեց ձյունահողմին, որ պտույտ էր գործում խարույկի լույսի մեջ, և ականջ դրեց քամու կականին: Լույսի շուրջը բոլոր կողմերի վրա փախչում էր ձյան քողը: Սառնամանիքը հասավ քառասուն աստիճանի: Եվ Մաք-Քեյը թախիծով ուրախացավ այն բանի համար, որ Նեյդան իրենց հետ չէ:

Նա պինդ փաթաթվեց վերմակով, հայացքը սևեռեց խարույկի կրակին ու սկսեց երազել անիրագործելիի մասին: Բոցի լեզուների մեջ հառնում էր Նեյդայի դեմքը՝ ջինջ, դեռատի, գրեթե պատանեկան դեմքը, բայց նրա աչքերում իր ամբողջ ուժով շողշողում էր սերը: Ուրախ Ռոջերը կախարդվածի նման նայում էր կրակին, և նրան արդեն թվաց, թե իր երազները իրականանում են. Նեյդան իր կողքին էր, նրա աչքերը խոսում էին սիրո, արիության ու հավատարմության մասին: Ինքը գրկեց նրան, զգաց նրա վարսերի ու շուրթերի քնքուշ, հաճելի հպումը, իր պարանոցին փաթաթված ձեռքերի ջերմությունը: Նա

նույնիսկ լսեց, թե ինչպես է տրոփում իր սիրտը, բայց այստեղ խարույկի միջից հանկարծ հայտնվեց Դեղին Թռչունի դեմքը: Ռոջերը տեսավ հնդկացի կնոջ խոշոր աչքերը. Դեղին Թռչունը ինչ-որ բան ասաց նրան: Բոցի լեզուները գալարվեցին նրա հյուսքերի շուրջը, շուրթերը շարժվեցին, հետո նա աներևութացավ, ասես խարույկի ծխի հետ միասին համբառնեց դեպի սև երկինք:

Պիտերը լսեց իր տիրոջ ճիչը: Ուրախ Ռոջերը վեր թռավ տեղից, վերմակը մի կողմ շպրտեց ու սկսեց հետուառաջ անել, մինչև որ, տրորելով, ձյունի մեջ մի խոր արահետ բացեց: Նա հասկացավ, որ դա զառանցանք էր քնի մեջ, որ խենթություն կլիներ դրան հավատալը և, այնուամենայնիվ, հավատում էր, որովհետև ուզում էր հավատալ: Որովհետև անխուսափելի հուսահատությունը նորից հաջորդել էր արդեն լքող հույսին: Նրա հոգու սև քառսը ցրվեց: Ի վերջո նա պպզեց ու ձեռքերի մեջ առավ Պիտերի փշփշոտ դունչը:

— Կաղլիկ, ախր նա ասաց, որ ամեն ինչ լավ կլինի,— բացականչեց Ռոջերը բոլորովին այլ ձայնով:— Դեղին Թռչունն այդպես ասաց, չէ՞: Հին ժամանակներում նրան կայրեին կրակի վրա որպես կախարդի, որովհետև նա ասում է, թե իբր իր ոգուն կարող է ուղարկել ուր ուզի, և կարող է տեսնել այն, ինչը չեն տեսնում ուրիշները: Թեկուզ էդպես էլ որ չլինի, մեկ է, ես ու դու պիտի հավատանք դրան:— Նա ծիծաղեց:— Պիտի հավատանք, որ այսօր երկուսն էլ էստեղ են եղել,— շարունակեց նա:— Ե՛վ Նեյդան, և՛ Դեղին Թռչունը: Ես հավատում եմ, որովհետև այս ամենի մեջ խոր իմաստ կա:

Ուրախ Ռոջերը ոտքի ելավ, և Պիտերը տիրոջ շուրթերին տեսավ ծանոթ ժպիտը, երբ նա, գլուխը հետ գցած, սկսեց դիտել ձնահողմը, որ սուրում էր եղևնու ճյուղերի սև քողի վրայով: Բուքի ոռնոցը Մաք-Քեյի համար այլևս չարագուշակ ու ծաղրական չէր առաջվա պես. հիմա նրան թվում էր, թե այդ ոռնոցի մեջ քաջալերիչ ձայներ կան, որոնք պահանջում են, որ ինքը չնահանջի ընդունած որոշումից:

Եվ նա, ձեռքերը լայն տարածելով, ասաց.

— Պիտեր, մենք հետ կդառնանք, կգնանք Նեյդայի մոտ:

Լույսը բացվեց, բայց շուրջը ոչ մի փոփոխություն չեղավ: Միայն խավարը արդեն նոսրացել էր: Հիմա նա կարողանում էր զանազանել եղյամով պատած ծառաբները, իսկ տագնապահույզ իրարանցման մեջ վերևում գծագրվեցին եղևնիների սուր կատարները:

Երբ Ուրախ Ռոջերը շարունակեց ճանապարհը դեպի իր խրճիթը, նա եռում էր հուզմունքից, որը ջերմացնում էր նրան ու ցրում անքուն գիշերների բերած խոնջանքը: Նրան թվում էր, թե բուքը սկսում է հանդարտվել, իսկ եղանակը տաքացել էր, սակայն անկենդան հարթավայրի վրա առաջվա պես ոռնում էր քամին ու ձյան թաթառներ բերում, իսկ սառնամանիքը հասնում էր քառասունմեկ աստիճանի: Բայց Ուրախ Ռոջերին թվում էր, թե ծակծկող սառցափոշով լցված օդը այլևս առաջվա պես չի դաղում, և այնտեղ, ուր երեկ նա միայն ձյունով ծածկված ծուռտիկ ու զաճաճ եղևնիներ էր տեսել, այժմ ցերեկվա ճերմակ լույսի տակ նորից հայտնվեց բնապատկերը՝ լեցուն վայրի խոժոռ գեղեցկությամբ, միայն արևն էր պակասում, որպեսզի ողջ շրջակայքը փայլեր արտակարդ շքեղությամբ:

Սակայն արևն այդպես էլ չերևաց: Ասենք Մաք-Քեյը դա չնկատեց էլ. նա մտածում էր Նեյդայի և տուն վերադառնալու ծրագրերի մասին:

— Հենց տուն,— ասաց նա Պիտերին, որը շորորալով գնում էր նրա հետևից, դահուկների բացած հետքով:— Էստեղից մինչև Կրեգ հազար մղոն է, ձյունի, սառույցի ու աստված գիտի, թե էլ ինչի հազար մղոն: Բայց մենք կհասնենք էնտեղ:

Հիմա Ուրախ Ռոջերը հաստատ գիտեր, թե ինքը ինչ է անելու: Նրան թվում էր, թե ապաքինվել է ծանր հիվանդությունից: Նա հիմարություն էր արել: Վաղուց նա պետք է սառնասրտորեն ծանրութեթև աներ իր վիճակը: Այո՛, իհարկե, Կրեգի մոտ, քաղաքակիրթ վայրերում, նրան կարող է սպասել կախաղանի օղակը, բայց չէ որ կախաղանի մռայլ ստվերը միշտ էլ կրնկակոխ հետապնդել է իրեն: Նա միշտ էլ փախչում է ինչ-որ մեկից, լինի դա Քասիդին, Բրեռն, Տևիշը թե մեկ ուրիշը, որը հյուսիսամերիկյան թագավորական հեծյալ ոստիկանության կարմիր համազգեստ ունի հագին: Եվ այդպես կլինի մինչև վերջ: Իսկ երբ այդ վերջը հասնի, երբ նրանք, այնուամենայնիվ, բռնեն իրեն, ապա լավ կլինի, որ այդ բանը պատահի Կրեգի մոտ և ոչ թե այստեղ, Լերկ Հողերի կողմերում:

Բացի դրանից, մնացել էր անբացատրելի, անհեթեթ հույսը, որ ինքը Նեյդայի հետ միասին, այնուամենայնիվ, կգտնի այն խորհրդավոր, անվտանգ ու երջանիկ բույնը, այն Հեռավոր Երկիրը, որի մասին ասում էր Դեղին Թռչունը, խոստանալով, որ այնտեղ «ամեն բան լավ կվերջանա»: Ըստ էության Մաք-Քեյը սնահավատ չէր և հոգու խորքում կասկածում էր Դեղին Թռչունի հմայությանը, բայց հիմա բռնել էր նրա խոսքից, ինչպես խեղդվողն է ձեռքը գցում ծղոտին: Այդ հույսը ուժ ու եռանդ էր տալիս նրան, և նա, բանականությանը հակառակ, հավատում էր Դեղին Թռչունին: Համոզված էր, որ նրա շատ կանխագուշակումներ արդեն իրականացել են: Մի՞թե այն տոթ, անձուկ գիշերը Դեղին Թռչունը չգուշակեց Քասիդիի գալու մասին: Եվ հավանաբար, նրա ոգիներին է պարտական ինքը այն հրաշքի համար, որ կատարվեց Կաղ Որմզդեղն գետակի մոտ: Եվ նրանք էլ հենց գուշակեցին այն, ինչ պատահեց տունդրայում: Ուրեմն, ինչո՞ւ չհավատալ, որ մյուսները նույնպես կկատարվեն:

Ի դեպ, Մաք-Քեյը գերադասում էր քիչ մտածել այդ մասին: Նրան առաջ էր մղում մի ցանկություն, որը ծածկում էր մնացած բոլորը. նա ուզում էր նորից տեսնել Նեյդային, հարթմնի, ոչ թե քնի մեջ, նորից գրկել նրան, համբուրել, ինչպես անցած գնացած օրերին, զգալ նրա մազերի քնքուշ հպումը իր դեմքին և նորից լսել նրա երդումը հավերժական սիրո մասին, որ տվել էր նա քարոզչի խրճիթում այն հեռավոր երեկոյան: Դե՛, իսկ հետո... Նրան շատ էլ չէր անհանգստացնում, թե ինչ կլիներ հետո: Թող գար Աքիս-Բրեռն, կամ Փորտերը, կամ էլ հեծյալ ոստիկանության կարմիր համազգեստավորներից որևէ մեկ ուրիշը, որը անխոնջ կերպով հետապնդում է իրեն: Եթե խաղը դրանով վերջանա, ինքը գոհ կլինի:

Երբ Ուրախ Ռոջերը դադար տվեց թեյ եփելու և մի տաք բան ուտելու համար, փորձեց Պիտերին բացատրել իր կյանքի այդ նոր նպատակը:

— Ամենագլխավորն այն է, որ բարեհաջող տեղ հասնենք...— սկսեց նա, իսկ գլխում մտքերը խառնվել էին իրար։

Եվ Մաք-Քեյը տաքացրած բլիթ ու մի կտոր յուղոտ կրծքամիս կերավ, ապա շարունակեց բացատրել Պիտերին, թե ինքը ինչի վրա է հույս դրել։ Տիրոջ առույգ ու վստահ տոնը ուրախ հուզմունք պատճառեց Պիտերին։ Այդ տոնը ամեն տեսակ արկածներ էր խոստանում, և Պիտերի այտամորուսները սպառնալից ցցվեցին, աչքերը փայլեցին, իսկ պոչը աշխուժորեն տփտփացրեց ձյուներին։

Ուրախ Ռոջերը նույնիսկ կամացուկ ծիծաղեց։

— Հիմա փետրվարն է,— ասաց նա։— Մարտի վերջին մենք էնտեղ կլինենք, Կաղլիկ։

Եվ նրանք շարունակեցին ճանապարհը, շտապելով շուտ տեղ հասնել, քանի դեռ գիշերային խավարը իրենց չէր պարուրել հաստ վերմակով։ Հանկարծ մի տարօրինակ զգացում համակեց Ուրախ Ռոջերին, նա նորովի հասկացավ, որ շրջապատող աշխարհը անվերջանալիորեն ամայի է ու անմարդաբնակ։ Ասես աչքերը բացվեցին, և նա հասու եղավ մի ճշմարտության. նրա համար ամեն ինչ կորցրեց իմաստը, բացի Նեյդայից։ Ինքը միայն նրա համար է ապրում։ Չէ՞ որ այնտեղ, հեռո՛ւ-հեռվում, Նեյդան պարզել էր ձեռքերն ու աղաչում էր պահպանել իրեն։ Նա միակ մարդն է աշխարհում, որին ինքը պետք է։ Ռոջերը հիշեց այն քրքրված գրքերից մեկը, որ ընկած էր իր ուսապարկում, այնտեղ պատմվում էր Ժաննա Դ՛Արկի մասին։ Եվ մտածեց, որ կապտաչյա աղջկա հոգում, որին ինքը թողել էր Կրեգում, ապրում է նույն վեհապանծ ոգին ու անխախտ հավատարմությունը, որոնք առաջնորդում էին ֆրանսուհի հերոսին։

— Եվ ես կգնամ նրա մոտ։ Կգնա՛մ։

Այս վերջին խոսքերը նա բարձրաձայն ասաց, գրեթե գոռաց ի նշան այն բանի, որ այլևս ոչ մի բան չի կարող կանգնեցնել նրան։ Եվ Պիտերն էլ հաչաց ի պատասխան։

Բայց որքան էլ շտապում էին, մութը վրա հասավ ճանապարհին։ Երբ մութն ընկավ, բուքը նկատելիորեն հանդարտվեց, հավանաբար սպառեց իր ուժերը։ Ուրախ Ռոջերը հասկացավ, թե դա ինչ է նշանակում։ Առավոտյան երկինքը կպարզվի, և Աքիս-Բրեռն, Փորտերն ու Տևիշը կհեռանան հյուրընկալ ձնաթմբից։

Հյուսիսի անտառային կյանքի ամբողջ փորձն ու իմացությունը ճնշում էին նրան։ Որքան էլ որ տարօրինակ է, նա ողջ սրտով ուզում էր, որ բուքը շարունակի մոլեգնել։ Նրան պետք էր որոշ բաներ անել, քանի դեռ բուքը շարունակվում էր։ Եվ ամեն անգամ, երբ վերջանում էին այդ դադարները և տունդրայի վրա նորից վայում ու ոռնում էր քամին, իսկ եղնիների կատարները ճկվում ու ճռթճռթում էին, դա ուրախացնում էր նրան։ Թանձրացող խավարի մեջ նրանք դուրս եկան երկարավուն ու ցածրիկ մի բլրակ, որը բաց տունդրայով շեղորեն ձգվում էր մինչև անտառ, որտեղ և գտնվում էր Ռոջերի խրճիթը։ Մեկ ժամ անց նրանք հասան խրճիթ։ Ուրախ Ռոջերը դուռը բացեց և, օրորվելով, շեմքից ներս մտավ։ Շնչելով խրճիթի տաք օդը, նա վատ զգաց ու հենվեց պատին։ Ծանր շունչ քաշեց և հանկարծ

զարմանքով նկատեց, որ բոլորովին ուժասպառ է եղել: Նա լսեց, ինչպես Պիտերը ծանրորեն թրմփաց հատակին:

— Հոգնե՞լ ես, Կաղլիկ:

Ռոջերը մեծ դժվարությամբ բացեց ճաքճքած շուրթերը:

Ի պատասխան Պիտերը պոչով հարվածեց հատակին: Հարվածը համընկավ քամու այն դադարներից մեկին, որոնք այնքան անհանգստացնում էին Ուրախ Ռոջերին:

— Լավ կլիներ, որ մի երկու ժամ էլ բուքը չդադարեր,— մրմնջաց նա՝ լիզելով չորացած շուրթերը:— Թե չէ...

Նա թաթմանները հանեց ու ափլփելով գտավ լուցկին՝ մտածելով Բրեոյի մասին: Ռոջերը միայն նրանից էր վախենում: Եթե բուքը դադարեր, Աքիսը, անշուշտ, կփնտրեր խրճիթն ու կգտներ իր հետքը: Մաք-Քեյը վառեց սեղանին դրված թիթեղյա լամպը և, հիշելով, որ այլևս հարկ չկա խնայողություն անելու, արջի ճարպից պատրաստած մեկական մոմ վառեց խրճիթի բոլոր անկյուններում: Փոքրիկ խրճիթը լուսավորվեց: Բայց այդ լույսի տակ առանձնապես շատ բան չերևաց. իր ձեռքով սարքած սեղանը, մի աթոռ, հին երկաթյա վառարանը, մեկ էլ թախտի վրա գցած վերմակը, որով նա ծածկել էր իր մյուս իրերը: Վառարանի հետևում թափված էին չոր փայտերը, և հինգ րոպե անց բոցի գվվոցը միախառնվեց դրսում նորից սկսված քամու ոռնոցին:

Հոգնածությունը մոռանալով՝ Ուրախ Ռոջերը գործի անցավ: Հենց որ սենյակը տաքացավ, շորերը հանեց հագից ու իսկական խրախճանք պատրաստեց:

— Հաշվենք, թե ծննդյան տոն է, Կաղլիկ: Արի ինչ կա չկա դնենք սեղանին: Եվ բանկայով թթու դրած սալորը, վեց հատի փոխարեն, լրիվ ուտենք: Այսօր արի ոչ մի բանից մեզ չզրկենք:

Նույնիսկ Պիտերը շշմել էր տիրոջ անխոհեմ շռայլությունից: Մի ժամ հետո նրանք ճաշը վերջացրին, և Մաք-Քեյը հացկերույթը ավարտեց երկու գավաթ տաք սուրճ խմելով: Նա հանգստացավ, հետ ընկավ աթոռի թիկնակին ու վառեց ծխամորճը: Պիտերը կուշտ ուտելուց հետո փռվեց հատակին, ցանկանալով մի քիչ աչքը կպցնել: Բայց չքնեց: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում իր տիրոջ հետ: Հանկարծ Ռոջերը ելավ տեղից, հագավ ծանր դոխան[6], դրեց մորթե գլխարկը և ծխամորճը խոթեց գրպանը: Հետո թևերն անցկացրեց ուսապարկի փոկերի մեջ, շալակեց պարկը և, էլ ավելի մեծ տարակուսանք պատճառելով Պիտերին, կես շիշ նավթը շաղ տվեց շիկացած վառարանի հետևում դարսած չոր փայտերի վրա ու մոտեցրեց վառած լուցկին: Երբ տերը ոտքի մի հարվածով վառարանը շուռ տվեց հատակին, Պիտերը շվարած վնգստաց:

Կես ժամ անց, երբ Պիտերն ու Ուրախ Ռոջերը բլրի գագաթից հետ նայեցին, հյուսիսային անապատների մռայլ տարերքի վրա, որը լքել էին իրենք, բարձրացել էր կրակե սյունը:

---

[6] Դոխա — ներսից ու դրսից մորթով պատած մուշտակ:

Տունդրայից սուրում էր կատաղի քամին ու ծակծկող ձնափոշին լցնում նրանց աչքերը: Եվ չնայած դրան, Ուրախ Ռոջերը շարունակում էր նայել:

— Համա թե վառվում է՛,— փնթփնթաց նա մորթե օձիքի մեջ:— Կես ժամ հետո լրիվ մոխիր կդառնա: Ու թե որ քամին մի երկու ժամ էլ դիմանա, Բրեոն էստեղ ոչ մի բան չի գտնի՝ ոչ խրճիթը, ոչ հետքերը, միայն ձնակույտեր կտեսնի:

Մաք-Քեյն իջավ բլրի լանջն ի վար: Նա գնաց ուղիղ դեպի հարավ, մնալով բաց տունդրայում, որտեղ ձնահողմը տեղնուտեղը ծածկում էր դահուկների հետքերը: Հիմա մութը նրան չէր վախեցնում: Նրա առջև փռված էր անծայր տունդրան, բայց փոքր-ինչ դեպի արևմուտք սկսվում էր անտառը:

Մաք-Քեյը երկու անգամ շեղվեց ճանապարհից ու դուրս եկավ անտառեզր, բայց իսկույն էլ վերադարձավ տունդրա, հետևելով, որ քամին ճիշտ թիկունքից փչի: Նա չգիտեր, թե այդպես քանի ժամ էր քայլել: Հետո սկսեց քայլերը հաշվել, չափեց կես մղոն, մեկ մղոն... Եվ նորից սկսեց հաշվել, մինչև վերջապես նրան թվաց, թե մի ինչ-որ հինգ հարյուր քայլի վրա չափից դուրս շատ ժամանակ ու ճիգեր է ծախսում: Ոտքը սկսեց մղկտալ, դա դահուկային ջղակծկումի նախանշան էր: Մաք-Քեյը քթի տակ ծիծաղեց շրջակա խավարի վրա: Նա գիտեր ինչ է նշանակում, դա նույնպիսի ահեղ նախազգուշացում էր, ինչպես այն առաջին անգամ, երբ լողալիս ոտքը կծկվեց: Եթե փորձեր շարունակել ճանապարհը, շուտով ստիպված կլիներ չորեքթաթ սողալ:

Նա արագորեն թեքվեց անտառի կողմը: Նրա կարծիքով խրճիթը վառելու պահից մոտ երեք ժամ էր անցել: Կես ժամ անց (հիմա նա առաջ էր գնում դանդաղ, մանր քայլերով) նա հասավ անտառեզրին: Հաջողությունն այստեղ էլ չլքեց նրան, որի մասին նա իսկույն տեղեկացրեց Պիտերին. նրանք հայտնվել էին խիտ եղևնուտում: Մաք-Քեյը հանեց դահուկները, որոնք հիմա խանգարում էին, ու խորացավ թավուտի մեջ: Այստեղ անհամեմատ ավելի տաք էր, իսկ քամին ընդհանրապես այստեղ չէր թափանցում:

Ուրախ Ռոջերը արձակեց ուսապարկը և միջից մի չոր խեժոտ ճյուղ հանեց, որ խրճիթից էր հետը վերցրել: Լուցկին մոտեցնելուն պես ճյուղը բռնկվեց ջահի պես և տասը քայլի վրա լուսավորեց նրանց ապաստարանը: Մաք-Քեյը խռիվ հավաքեց ու մի եղևնի կտրեց, որը, խարույկի մեջ թե գցեր, մինչև առավոտ մարմանդ կվառվեր: Երբ ջահը այրվեց վերջացավ, խարույկն արդեն բռնկվել էր: Ուրախ Ռոջերը ձյունը մաքրեց, փաթաթվեց վերմակով ու Պիտերի հետ միասին պառկեց խռիվի հաստ գորգի վրա փռած ճյուղերի մեջ:

Եղևնին ամբողջ գիշերը մարմանդ այրվեց: Տունդրայում դեռ երկար վայեց քամին: Բայց հետո հանդարտվեց, և աշխարհի վրա իջավ մեծ լռությունը: Մրրիկը դադարելուց հետո առաջին ժամերին ոչ մի կենդանի արարած չհամարձակվեց գլուխը դուրս հանել իր թաքստոցից: Երկինքը քիչ-քիչ պարզվեց: Ամպերի արանքում այսուայնտեղ առկայծեցին աստղերը: Բայց Ուրախ Ռոջերն ու Պիտերը քնել էին մեռելի պես ու ոչինչ չգիտեին այդ փոփոխությունների մասին:

Գլուխ տասնվեցերորդ

Բավականին ժամանակ անցավ, մինչև որ վերջապես Պիտերը արթնացրեց Ռոջերին. նախ նա հոտոտեց խարույկի մեջ մլմլացող ածուխները, հետո անհանգստացավ ու դունչը քսմսեց տիրոջ դեմքին: Մաք-Քեյը նստեց տեղում, վրայից դեն գցեց ճյուղերն ու տեսավ, որ եղևնիների կատարները ողողված են արևի շողերով: Նա աչքերը տրորեց ու մի անգամ էլ նայեց: Հետո հանեց ժամացույցը, առավոտվա ժամը տասն էր: Նա աչք գցեց տունդրայի կողմը ու տեսավ, որ տունդրան պսպղում է արևի ճառագայթների տակ: Ուրախ Ռոջերը վաղուց արդեն իսկական արև չէր տեսել, և նա Պիտերի հետ վազեց դեպի տունդրայի ծայրը, որ հարյուր քայլի վրա էր: Ուրախ Ռոջերն ուզում էր գոռալ ինչքան ուժ ուներ: Նրա առջև փռված հարթավայրը մինչև հորիզոն փայլում էր շլացուցիչ ճերմակությամբ, իսկ վերևում երկինքը նույնքան ջինջ էր ու կապույտ, ինչպես Կրեգի վրա:

Մաք-Քեյը վերադարձավ խարույկի մոտ՝ երգելով: Եվ Պիտերը հանկարծ հիշեց այն անցած գնացած ժամանակները, երբ իր տերը հաճախ էր այդպես երգում: Դա եղել էր հնդկացի Թոմի խրճիթում, որտեղից երևում էր գետի մյուս կողմն ընկած Կրեգ լեռը. հիշեց մինչև այն օրը, երբ Տերենս Քասիդին նրան ստիպեց հեռանալ և ուրիշ ապաստան փնտրել: Հիշեց այն երջանիկ օրերը, երբ Նեյդան գալիս էր իրենց մոտ, և երբ իրենք գնացին նրան հանդիպելու լեռան ստորոտում: Հիշեց այն օրերը, երբ մոխրագույն մայր մկնիկը իր ձագուկների հետ անհոգ ու բախտավոր ապրում էր իրենց զզրոցի տուփի մեջ: Պիտերը բոլորովին մոռացել էր այդ օրերը, բայց հիմա հանկարծ ամեն բան հիշեց: Իր տերը նորից դարձել էր առաջվա Ուրախ Ռոջերը:

Այդ ջինջ ու խաղաղ առավոտին Մաք-Քեյի երգը տարածվեց շրջակայքում մոտ մեկ մղոնի վրա: Բայց նա այլևս ոչ մի բանից չէր վախենում: Ինչպես բուքը, ասես նորացրել էր աշխարհը, այնպես էլ արևը ցրել էր նրա հոգու տրտմությունը և երջանկություն էր խոստանում: Հաջողությունը նրա կողմն էր: Բնությունը նորից գիրկը բաց էր արել Ռոջերի առջև, և նա երգում էր այնպես, ասես ոչ թե հազար մղոն էր բաժանում նրան Նեյդայից, այլ ընդամենը՝ մեկ:

Երբ նախաճաշից հետո նրանք կրկին ճանապարհ ընկան, Ուրախ Ռոջերը հռհռաց, մտածելով, թե ինչպես է Բրեռն հիմա փնտրում իր հետքերը, որոնք ոչնչացել էին քամուց, ձյունից ու կրակից: Ոչ մի մարդ ի զորու չէր այդ բանն անելու, նույնիսկ Աքիսը: Հարավ գնալու ճանապարհին առաջին օրը, լուսաբացից մինչև մայրամուտ, երկնքում շողում էր արևը: Ոչ մի ամպ ոչ մի անգամ չպղտորեց այդ փայլը: Եվ օդը այնքան տաքացավ, որ Ուրախ Ռոջերը հետ գցեց մորթե կնգուղն ու գլխարկի ականջակալները ծալեց: Իսկ գիշերը բյուրավոր աստղեր վառվեցին երկնքում:

Հաջորդ օրվանից Ուրախ Ռոջերի ու նրա շան հույսերը վերածվեցին անսասան հավատի: Պիտերը գիտեր, որ իրենք գնում են դեպի հարավ, այնտեղ, ուր նա միշտ ուզում էր գնալ, և ամեն իրիկուն, խարույկի կողքին նստած, Մաք-Քեյը թղթի վրա մատիտով նշում էր, թե ինչքան ճանապարհ են անցել օրվա ընթացքում և դեռ որքան է մնում: Նա արդեն ոչ մի կասկած չուներ: Նա չէր էլ մտածում այն մասին, թե Կրեգի մոտ որևէ փոփոխություն կարող է լինել. Ջեդ Հոկինսը սպանված էր, իսկ Նեյդան մնացել էր ծեր քարոզչի մոտ: Եվ

նա հանգիստ ու անհոգ կանխավայելում էր իրենց հանդիպման ուրախությունը: Միակ վտանգը Բրեոն էր և օրենքի մյուս խուզարկուները: Բայց եթե ինքը խորամանկությամբ գերազանցի նրանց, ապա կհանդիպի Նեյդային:

Նրանք անշեղորեն գնացին դեպի հարավ-արևմուտք, մինչև հասան Թելոն, իսկ այնտեղից, բուքին ու դաժան սառնամանիքին, մի անհայտ վայրի անտառի միջով ուղևորվեցին դեպի Դուբոնտ լիճը: Առաջին երեք շաբաթվա ընթացքում նրանք միայն մի անգամ մոտեցան մարդկային բնակավայրի, Ուրախ Ռոջերը թեքվեց դեպի հնդկացիական փոքրիկ բնակատեղին՝ Պիտերի համար կարիբուի միս ու մոքասիններ գնելու: Ապա Հոդս լճի ճանապարհին երկու անգամ կանգ առան տրապպերների խրճիթում:

Մարտի սկզբին նրանք հասան Կորած լճի ավազանին. այժմ արդեն մինչև Կրեգ մնում էր երեք հարյուր մղոն:

Եվ ահա այստեղ Պիտերը փխրուն ձյան մեջ եղջերվամսի սառած կտորներ տեսավ. դրանք թունավոր խայծեր էին գայլերի համար, որ ֆրանսիացի տրապպեր Բուալոն էր շաղ տվել: Ուրախ Ռոջերը արդեն խարույկ էր վառել, սկսել էր եղջերվի ճարպ տաքացնել ու պատրաստվում էր բլիթ թխելու, երբ տեսավ իր կողմը սողացող Պիտերին: Նա քարշ էր տալիս հետևի ոտքերը, որոնք արդեն կաթվածահար էին եղել բնամորմի ներգործությունից: Մի ակնթարթում Մաք-Քեյը ամբողջ տաք ճարպը լցրեց Պիտերի կոկորդը, ապա հապշտապ մի նոր բաժին տաքացրեց ու նորից լցրեց կոկորդը, այնպես, որ ի վերջո Պիտերը թունավորված միսը հետ տվեց:

Կես ժամ անց Բուալոն, որ հանգիստ ճաշում էր իր խրճիթում, զարմացած վեր թռավ տեղից, դուռը առանց թակելու կրնկի վրա բացվեց ու ներս մտավ դժգույն, այլայլված դեմքով անծանոթ մի մարդ՝ շան անկենդան մարմինը գրկած: Եվ դրանից հետո դեռ երկար ժամանակ մահվան ուրվականը ճախրում էր ֆրանսիացու որսորդական խրճիթի վրա: Բուալոյի համար, որը սրտանց կարեկցում էր եղբայր տրապպերին ու ցավում էր, որ իր այծերի պատճառով այդպիսի դժբախտություն է պատահել, այնուամենայնիվ, Պիտերը «եղած-չեղած շուն էր»: Բայց երբ նա տեսավ, թե ինչպես են ցնցվում կաթվածահար շան վրա խոնարհված անծանոթի հաղթ ուսերը, ու լսեց, թե ինչպիսի վշտով ու ցավով են լեցուն նրա ճերմակած շուրթերից պոկվող անկապ, կցկտուր խոսքերը, նույնիսկ վախեցավ: Պիտերը պառկած էր մեռածի պես: Ուրախ Ռոջերը հանկարծ գրկեց նրա անշարժ մարմինը և, դեմքը հպելով պարանոցի կոշտ խոպոպներին, սկսեց աղաչել նրան, որ աչքերը բացի, չմեռնի: Բուալոն խաչակնքեց, շոշափեց Պիտերին ու Մաք-Քեյին բացատրեց, որ շունը ողջ է, որ սիրտը խփում է ուժեղ ու համաչափ, և որ թույնից առաջացած կաթվածը քիչ-քիչ կարծես անցնում է: Մաք-Քեյը ֆրանսիացուն նայեց որպես հրաշագործի: Նա գրկից բաց թողեց Պիտերին, հետ-հետ գնաց և, թախտի մոտ ծունկ չոքելով, դիտում էր, թե ինչպես Բուալոն, գրավելով իր տեղը, պահածոյացրած տաք կաթ է լցնում Պիտերի կոկորդը: Շուտով Պիտերն աչքերը բացեց ու խոր շունչ քաշեց:

Բուալոն հետ նայեց ու վեր քաշեց ուսերը:

— Նա լավ է շնչում, մայր... Թույնը արդեն դադարել է ներգործել: Ձեր շունը չի մեռնի: Մաք-Քեյը շվարած ոտքի ելավ: Նա երերաց ու նոր միայն զգաց, որ դեմքը արցունքոտված է: Կրծքից մի ծիծաղ պոկվեց, որ նման էր հեկեկոցի: Նա մոտեցավ պատուհանին ու, ոչինչ չտեսնելով, հայացքը հառեց ճերմակ անտառին: Ռոջերը շատ անգամ էր հանդիպել մահվանը երես առ երես, բայց դեռ երբեք նրա ներկայությունը այդպիսի ահ ու սարսափ չէր զցել իր վրա, ինչպես հիմա, երբ մահը այնքան մոտ էր Պիտերին, իր թափառումների հավատարիմ ընկերոջը:

Երբ նա շրջվեց, Բուալոն արդեն Պիտերին փաթաթել էր վերմակով ու արջի մորթով ծածկել: Բայց դեռ շատ օրեր անցան, մինչև որ Պիտերը լրիվ ապաքինվեց:

Այդ տարի Հյուսիսում գարունը շուտ բացվեց: Եղջերվի լճից դեպի հարավ ձյունը սկսեց հալվել մարտի երկրորդ կեսին, իսկ ապրիլի առաջին շաբաթին արդեն հալ ընկավ գետերի սառույցը: Փչում էին հարավարևմտյան քամիները, և Բուալոն անվերջ կրկնում էր, թե տարվա այդ ժամանակ դեռ երբեք այդպիսի տաքեր չէին եղել այս կողմերում: Ապրիլի առաջին շաբաթվա վերջին Պիտերը լիովին կազդուրվեց, և Մաք-Քեյը նորից ճանապարհ ընկավ:

Ձմեռային հանդերձանքի մի մասը նա թողեց Բուալոյի խրճիթում և հիմա ավելի թեթև էր գնում ու հույս ուներ ավելի շուտ տեղ հասնել, քան կնվազեր «չվող սագերի լուսինը»: Սակայն առաջին օրերին Պիտերը շուտ էր հոգնում, և առայժմ նրա աչքերի շուրջը եղած կարմրությունը դեռ լրիվ չէր անցել, Ուրախ Ռոջերն ստիպված էր չափավորել իր անհամբերությունը, քանի որ, երբ վերջապես նրանք Ջրբաժանքի վերջին լանջով ցած իջան և հայտնվեցին Հարավային Կանադայի անտառների ու լճերի մեջ, «չվող սագերի լուսնին» արդեն փոխարինել էր «գորտերի լուսինը»:

Ռոջերն այնքան ուրախ էր, որ արդեն նրան թվում էր, իբր ոչ թե դժբախտությունը, այլ ճակատագրի ողորմածությունը իրեն ուշացրեց ճանապարհին, որպեսզի ինքը «տուն» վերադառնար գարնան ամենաթեժ պահին: Շուրջը ամենուրեք կյանքի արթնացման ու նորացման խորհրդավոր երաժշտությունն էր լսվում: Այդ երաժշտությամբ էր շնչում և՛ երկինքը, և՛ արևը, և՛ ախորժաբույր հողը, որի վրայով քայլում էր ինքը, և՛ առաջին կանաչի շղարշը հագած ծառերը, և հարավից վերադարձած թռչունների ծլվլոցը: Նրա բարեկամ ձայերը նորից ճչում էին խռպոտ և ուրախ, վիճելով ու պարծենալով արևի շողերի տակ, բացատների վրա երևում ու անհետանում էր ագռավների թևերի սև թավիշը, փայտփորիկները, կարմիր շամփրուկները և ընկուզահավերը հետուառաջ էին թռչում, ձեռուոտ ընկած, հոգատար խնամքով բներ էին սարքում, չիլ կաքավները խրախճանք էին անում, կտցահարելով կաղամախու տռուզ բողբոջները, իսկ մայրամուտի ոսկեզօծ պահին նա լսեց առաջին շիկահավի երգը:

Իսկ մինչև Կրեզ մնացել էր ընդամենը մեկ օրվա ճանապարհ:

Այդ վերջին գիշերը Ուրախ Ռոջերն անցկացրեց խարույկի կողքին նստած, ծխամորճ էր ծխում ու մեկ-մեկ դանթում: Հենց որ երկինքը սկսեց գունատվել, նա ճանապարհ ընկավ ու այնպես արագ էր քայլում, որ Պիտերը, հակառակ իր սովորության, ոչ թե նրա առջևից էր

վազում, այլ կողքից, և կեսօրից դեռ շատ առաջ նրանք տեսան իրենց դիմաց բարձրացող լեռնաշարքը, որի հետևում էին գտնվում հնդկացի Թոմի ճահիճը, Նեյդայի մարգագետինը և Կրեգի կատարը։

Կեսօրին Ուրախ Ռոջերը անցավ լեռնանցքը։ Նա ծանր էր շնչում, որովհետև շատ անհամբեր էր, ուզում էր շուտ տեսնել ծանոթ վայրերը և գրեթե վազելով բարձրացավ զառիկող լանջը։ Բայց ահա, դժվարությամբ շունչը տեղը բերելով, նա ագահ հայացքը գցեց ծանոթ հովտին ու մի պահ չհասկացավ, թե ինչ տեսարան բացվեց իր առաջ։ Իսկ հաջորդ պահին սիրտը կորեկի հատ դառավ։

Նրա ոտքերի տակ ամենուրեք, որքան աչքը կտրում էր, արևելքում, արևմուտքում, հարավում, փռված էր մոխրակույտերի սև անապատը։ Կրակը հասել էր մինչև լեռան ստորոտը, որի կատարին կանգնած էր Ուրախ Ռոջերը, և այնտեղ, ուր մոլեգնել էր հրդեհը, գարնան ոչ մի նշան չէր երևում, այն դեպքում, երբ թիկունքում գարունը փթթում էր իր ողջ հրաշալիքներով։

Մաք-Քեյը նայեց այն կողմը, ուր գտնվում էր հնդկացի Թոմի խրճիթը։ Անտառային ճահճի տեղում հիմա երևում էին միայն հազարավոր սևացած կոճղեր ու ածխացած ծառաբներ, որ մնացել էին եղևնիների, մայրիների ու սոճիների անանցանելի թավուտից, ուր գիշերները ոռնում էին գայլերը։

Նա նայեց Արագահոս գետակի հոսանքն ի վար, որտեղ գտնվում էր ծերունի քարոզչի խրճիթը, և որտեղ իր երազների մեջ նա հանդիպում էր Նեյդային։ Բայց անտառի փոխարեն նա տեսավ մի սև ու մռայլ ամայուտ։

Այնժամ նա հայացքը շրջեց Կրեգի կողմը, ու տեսավ նրա հետևից բարձրացող ածխացած ծառերի մերկ, անպտուղ կատարները, որ նշան էր գարնանային լազուր երկինքը այլանդակող ավերման ու ամայացման։

Նրա կրծքից մի ճիչ դուրս թռավ՝ լի հուսահատությամբ ու սարսափով. կատարվել էր Դեղին Թռչունի մարգարեությունը։ Այս անգամ նա հիշեց Դեղին Թռչունի խոսքը, թե Կրեգում իրեն միայն խավարն է սպասում, և որ Նեյդային այնտեղ չի գտնի։ Ասես նա լսեց Դեղին Թռչունի երգեցիկ ձայնը, որը նորից ու նորից կրկնում էր նույն խոսքը։

Մաք-Քեյը, տնքալով, խենթի պես վազեց դեպի հովիտ, և, առանց ոտքի տակ նայելու, հապճեպորեն գնաց ուղիղ փլվածքների ու մոխրակույտերի միջով։ Պիտերը դժվարությամբ էր գնում նրա հետևից։ Կես ժամ անց նրանք հասան այն տեղը, ուր գտնվում էր քարոզչի խրճիթը, և տեսան մոխրակույտը, որի վրա սևացած խանձողներ էին թափթփված։ Արահետի հետքն էլ չկար։ Նախկին դրախտավայրը անհետացել էր ընդմիշտ, զոհ էր գնացել կործանարար հրդեհին, որի մռայլ խարանը անջնջելիորեն դրված էր երկրի երեսին։

Պիտերը լսեց տիրոջ հեկեկոցը։ Նա ինքն էլ հասկացավ, որ դժբախտություն է պատահել. զգուշությամբ հոտոտեց օդը, իմանալով, որ իրենք տուն են վերադարձել, բայց, այնուամենայնիվ, դա տուն չէր։ Նա բնազդով նայեց Կրեգին, և Ուրախ Ռոջերը, նկատելով,

որ Պիտերը ուշադիր նայում է կիրճին, որի մյուս կողմում կանգնած էր Ջեդ Հոկինսի խրճիթը, հանկարծ ոգևորվեց: Հավանաբար, կրակն այնտեղ չի հասել, և, ուրեմն, Նեյդան այնտեղ է, գուցե նաև հայր Ջոնը...

Մաք-Քեյը գնաց դեպի կիրճը: Մինչև կիրճը մոտ մեկ մղոն էր, և յուրաքանչյուր քայլի հետ նրա հույսը նվազում էր, քանի որ շուրջը ավելի շատ ապացույցներ էր տեսնում այն բանի, թե կրակե օվկիանոսն ինչպիսի ուժով էր վրա պրծել Կրեգի լանջերին ու լիովին ամայացրել: Նրանք կտրեցին անցան հովիտը, որտեղ մի ժամանակ դալար եղևնուտում ծաղկում էր մանուշակն ու կարմրին էր տալիս մորին: Երբ նրանք իջան ոչ խոր ձորակը, Պիտերը նորից հեկեկոցի ձայն լսեց ու հանկարծ հասկացավ, թե որտեղ են իրենք. առաջ այստեղ բացատ էր, որտեղ ինքն ու տերը հանդիպում էին Նեյդային: Եվ այստեղ Պիտերը, մոռանալով տիրոջը, մոռանալով ամեն տեսակ զգուշություն, արագորեն նետվեց դեպի Կրեգը երկու մասի բաժանող կիրճը:

Ուրախ Ռոջերը նույնպես վազեց, ու երբ կիրճը անցավ, գերմարդկային լարումից ու տեսած սարսափներից ոտքերը թուլացան: Շնչակտուր լինելով, նա ուրախության մի ճիչ արձակեց ու հենվեց ժայռին: Առջևում էլ փռված էր նույն խանձված սև անապատը, ինչ որ հետևում, բայց Ջեդ Հոկինսի խրճիթը անվնաս էր մնացել: Կրակը ընդհուպ մոտեցել էր խրճիթի շեմին ու այնտեղ էլ մարել էր:

Մաք-Քեյը գնաց դեպի Նեյդայի նախկին կացարանը ու փակ դռան առաջ տեսավ Պիտերին, շունը կանգնած էր անշարժ, ինչ-որ բանից ասես հուզված ու վրդովված: Ուրախ Ռոջերը դուռը հրեց, գաղջ խոնավությունը զարկվեց նրա դեմքին: Խրճիթը դատարկ էր: Գերեզմանային խավար էր այնտեղ:

Մաք-Քեյը իրեն ստիպեց շեմքից ներս մտնել: Տոտիկները թփթփացնելով՝ իրեն պատի ճեղքը գցեց թմբլիկ անտառային առնետը, խշխշացին թղթի պատառիկները, և ամեն ինչ թաղվեց մեռելային լռության մեջ: Նեյդայի սենյակի դուռը բաց էր, և Ռոջերը ներս մտավ: Նրա հայացքն ընկավ մահճակալի մերկ տախտակներին, սենյակում ուրիշ ոչինչ չկար:

Ուրախ Ռոջերը շշմածի պես դեսուդեն ընկավ խրճիթում, իսկ Պիտերը անաղմուկ հետևում էր իր տիրոջը: Նրանք դուրս եկան, և Ուրախ Ռոջերը հանկարծ տեսավ, որ հեռվում, մոխիրների անապատի վրա ինչ-որ սև բան էր ցցված: Դա խաչ էր, երկու մատղաշ ծառերից կոպիտ սարքած խաչ. ծառերը ածխացել էին կրակից, բայց այն մնացել էր կանգնած՝ սև ու չարագույժ:

Նա դանդաղ սեղմեց բռունցքները. այդ խաչի տակ հանգչում էր Ջեդ Հոկինսի աճյունը, այն գարշելի սրիկայի, որը խորտակել էր իր կյանքը:

Մաք-Քեյը վերադարձավ խրճիթ, մտավ Նեյդայի սենյակն ու դուռը ներսից փակեց: Պիտերը մնաց դրսում հսկելու և շատ երկար նստեց առմուտքում՝ ներսից ոչ մի ձայն չլսելով:

Երբ տերը խրճիթից դուրս եկավ, նրա դեմքը գունատ էր ու մթնդած: Ուրախ Ռոջերը նայեց այն կողմը, ուր առաջ սևին էր տալիս անտառը, որի միջով այն ահավոր գիշերը ինքը

վազում էր դեպի Մունիի խրճիթը։ Հիմա անտառի հետքն էլ չէր երևում, բայց արահետը մնացել էր, և Մաք-Քեյը ճանաչեց այն ոլորանը, որտեղ բերանքսիվար ընկած էր մեռած Ջեդ Հոկինսը։ Եվս կես մղոն առաջ գնալով՝ նրանք դուրս եկան երկաթգիծ։ Ըստ երևույթին, այստեղ հրդեհը հասել էր առավելագույն ուժգնության ու ավելի մեծ ավերածություններ էր գործել. մայր մտնող արևի շողերով ողողված սև հեռաստաններում ոչ միայն կյանքի նշույլ չէր երևում, այլև ոչ մի անվնաս մնացած ծառ չկար։

Եվ հանկարծ Ուրախ Ռոջերին համակեց վախը, շատ ավելի սարսափելի, քան մինչ այդ պահը նրան ծվատող հուսահատությունն էր։ Նրա շուրջը սև գերեզմանոց էր փռված. հրդեհը այստեղ լափել էր ամեն ինչ։ Իսկ գուցե Նեյդան ու քարոզիչը չե՞ն կարողացել փրկվել։ Այդ երկյուղը էլ ավելի սաստկացավ, երբ արևը մայր մտավ ու երկրի վրա իջավ խավարը, իր հետ խոնավ սառնություն ու տհաճ խանձահոտ բերելով։

Խրճիթ վերադառնալու ճանապարհին Մաք-Քեյը Պիտերի հետ չխոսեց։ Առաջին սենյակում լուսամուտագոգին դրված էր լամպը, իսկ օջախի կողքին փայտ էր դարսած։ Ուրախ Ռոջերը անխոս վառեց օջախը, կտրեց պատրույգի ծայրը ու վառեց։ Իսկ Պիտերը, ասես անցյալի ուրվականներից վախեցած, խցկվեց մի անկյուն ու անշարժ պառկեց։ Մաք-Քեյը ոչ ընթրեց, ոչ էլ ծխեց. նա երկար նստեց, առանց շարժվելու, հետո վերցրեց վերմակը և, մտնելով Նեյդայի սենյակը, փռեց մահճակալին։ Ապա հանգցրեց լամպն ու պառկեց, աչքը պատուհանին, որի միջով քանի՛-քանի գիշերներ լուսինը նայել էր Նեյդային։

Այդ գիշերը նույնպես լուսնկա էր։ Արևելքում երկինքը գունատվեց, և շուտով կտրտված, ատամնավոր լեռնաճյուղի հետևից դուրս նայեց լուսինը, լուսավորեց մռայլ մոխրակույտերն ու մեղմ լույսով ողողեց սենյակը։ Երկինքը ջինջ էր, ոչ մի ամպ չէր ծածկում լիալուսնի կլոր սկավառակը, որը կարծես, ժպտում էր պատուհանից, չիմանալով, որ Նեյդան այլևս այնտեղ չէ, և ինքը զուր է լուսավորում խրճիթի մերկ պատերը։ Ուրախ Ռոջերը հանկարծ հասկացավ, թե ինչու լուսինն արևից շատ էր սիրում։ Լուսնի շողերը նրան կտրում էին ամբողջ աշխարհից, և Ռոջերին թվաց, թե ինքը տեսնում է անկողնու վրա նստած աղջկա փխրուն կերպարանքը, լսում է նրա սրտի զարկերը, նշմարում է նրա դեմքն ու լուսնին կարկառած նուրբ ձեռքերը։ Նեյդան քանի՛-քանի անգամ պատմել էր նրան, թե ինչպես է ինքը դիմավորում գիշերային լուսատուին ու հայացքով փնտրում Լուսնամարդու՝ իր երկնային բարեկամի, իր խաղընկերոջ ժպտացող դեմքը։

Ռոջերը մի պահ թեթևություն զգաց, բայց այստեղ լուսինը, ասես այդ փոքրիկ սենյակում օտար մարդ տեսնելով, մտավ ամպերի հետևը, և չորս կողմը մթնեց։ Սակայն ամպերը քաշվեցին, ու հանկարծ Ուրախ Ռոջերը տեսավ Լուսնամարդուն։ Դեռ երբեք այդքան պարզ, այդքան հստակ չէր տեսել նրան։ Թեև Նեյդան շատ անգամ հրապուրիչ ու միամիտ հավատով պատմել էր, թե ինքը ինչպես է բարեկամություն անում Լուսնամարդու հետ, և բացատրել էր, որ նրա դեմքը ամեն անգամ տարբեր արտահայտություն է ունենում. մեկ հիվանդ տեսք ունի, մեկ՝ առողջ, մեկ երջանիկ ժպտում է, մեկ էլ նայում տխուր ու մռայլ, տանջվելով ինչ-որ խորհրդավոր վշտից, որի մասին նա ոչինչ չգիտի։

«Ամեն անգամ հենց որ նայում եմ Լուսնամարդուն, իսկույն իմանում եմ՝ ուրա՞խ կլինեմ, թե տխուր,— ասում էր Նեյդան։— Նա միշտ էլ այդ մասին ասում է ինձ, նույնիսկ այն

ժամանակ, երբ երկինքը ծածկված է ամպերով, ու նա շատ հազվադեպ է դուրս նայում դրանց արանքից: Համ էլ նա շատ բան գիտի ձեր մասին, միստր Ուրախ Ռոջեր, որովհետև ես ախր ամեն ինչ պատմում եմ նրան»:

Մաք-Քեյը դանդաղ վեր կացավ մահճակալից ու անցավ մյուս սենյակը, այնտեղից էլ արտասանդուղք ելավ, և Պիտերը տարակուսանքով նայեց իր տիրոջ կերպարանքին՝ շուրջը վառված ծառաբների նման սև ու անշարժ, և նույնիսկ նայեց երկնքին, ջանալով հասկանալ, թե Ուրախ Ռոջերը ինչ է տեսել այնտեղ: Բայց այնտեղ ոչ մի նոր բան չկար, ինչ որ կար, նա արդեն հարյուր անգամ տեսել էր. անթիվ-անհամար աստղեր էին, նրանց մեջ լողում էր թագուհի լուսինը՝ ջինջ, թափանցիկ, նման սարդոստայնի, ամպեր ու լռություն, մեծ, խաղաղ լռություն, ասես քաղցր քնի մեջ, երբ ինքը քնում էր՝ դունչը տիրոջ ծնկներին դրած:

Հետո Պիտերը լսեց, որ Ուրախ Ռոջերը կամացուկ ասաց.

— Ա՛յ կտեսնես, Դեղին Թռչունը ճիշտ էր ասում: Ախր նա ասաց, չէ՞, որ էստեղ ամեն ինչ սև կլինի: Էդպես էլ կա: Նշանակում է, մենք Նեյդային կփնտրենք նրա խոստացած տեղը՝ Հեռավոր Երկրում, որն ընկած է անտառներից ու լճերից այն կողմ, էնտեղ, ուր մենք ոչ մի անգամ չենք եղել, չնայած համարյա հազար մղոն ամայի տարածություն ենք կտրել: Էնտեղ մարդիկ կիրակի օրերը նստած են տոթ, խեղդուկ եկեղեցիներում, ու նրանք կծիծաղեն մեզ վրա, Կաղլիկ, որովհետև մենք նման չենք նրանց: Էնտեղ կգտնենք Նեյդային: Նրան հրդեհն է էստեղից քշել, ու հիմա որևէ ավանում նա մեզ է սպասում:

Նա խոսեց հաստատ ու համոզված, և թախծոտ արտահայտությունը չքացավ նրա դեմքից, որ նայում էր պայծառ երկնքին:

Հետո ավելացրեց.

— Այսօր մենք չենք քնի, Պիտեր: Մենք առաջ կգնանք լուսնի հետ միասին:

Կես ժամ անց մարդու և շան մենավոր կերպարանքները ճամփա ընկան դեպի մոտակա ավանը, որը տասնհինգ մղոնի վրա էր: Լուսինը նայեց նրանց հետևից ու ասես խրախուսաբար ժպտաց:

Գլուխ տասնյոթերորդ

Խրճիթից դուրս գալով՝ Մաք-Քեյը նախ գնաց դեպի կիրճից ոչ հեռու գտնվող մեծ քարափը, և Պիտերը լսեց, ինչպես տիրոջ շուրթերից մի ծիծաղ պոկվեց, որը նման չէր ծիծաղի: Բայց նա խուճուճ մռութը վեր չտնկեց, այլ միայն կամացուկ վնգստաց: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե իրականում ինչ էր կատարվել և ինչու նախկին տունը անճանաչելիորեն փոխվել էր: Ամբողջ ցերեկը, ամբողջ երեկոն և այն պահից, երբ լուսինը դուրս եկավ, նա փորձում էր գլուխ հանել դրանից: Նա գիտեր, որ վերադարձել է հարազատ վայրերը, բայց այստեղ առաջվա կանաչ խոտը չկար այլևս, փոխարենը անթիվ-անհամար ծառեր վերածվել էին ածխացած կոճղերի: Անանցանելի անտառներն այլևս

չէին շրջապատում բացատը: Իսկ այնտեղ, ուր ինքն ու Նեյդան, իրար առաջ տալով, վազվզում էին ծաղիկների միջով, հիմա Կրեգը բոլորովին մերկ էր, ու խանձված հողից ժանտ մեռելահոտ էր փչում: Այն ամենը նա յուրովի, շնային ուղեղով դեռ կարող էր մի կերպ հասկանալ, բայց մի բան բոլորովին անհասկանալի էր. ինչո՞ւ Նեյդան խրճիթում չէր, ինչո՞ւ նա այստեղ չէր սպասել իրենց, չնայած աշխարհը շատ էր փոխվել:

Նա նստեց, Ուրախ Ռոջերը նորից լսեց նրա տխուր վնգստոցը: Շնային այդ թախիծի մեջ մարդը ինչ-որ չափով մխիթարություն է գտնում, գոնե կա մի արարած, որը կիսում է քո վիշտը: Եվ նա մրից սևացած ձեռքով թփթփացրեց իր ընկերոջ մեջքին:

— Պիտեր, ա՛յ այս քարափից, հենց այստեղից որտեղ հիմա կանգնած ենք, ես առաջին անգամ տեսա Նեյդային: Դա վաղուց էր, շատ վաղուց,— ասաց նա, աշխատելով առույգություն տալ խզված ձայնին: Իսկ եղևնուտը հիշո՞ւմ ես, ա՛յ էնտեղ: Դու, փոքրիկ ու անխելք մի շնիկ, նստած էիր նրա ծնկներին, թաթերդ խճճվել էին նրա մազերի մեջ, ու այնպես ջղային էիր գոմռում, որ ես քո ձայնը հեռվից լսեցի: Հենց էդ ժամանակ էլ ես տրորեցի ճյուղը, և Նեյդան հետ նայեց, ու ես նորից մտածեցի, թե որքան գեղեցիկ է նա. դեռ բոլորովին երեխա էր, աչքերը ոնց որ կապույտ ծաղիկներ լինեին, մազերը շողշողում էին արևի տակ, իսկ այտերին արցունքի հետքեր կային: Նա լաց էր եղել, Կաղլիկ, էս ստոր սրիկայի պատճառով, որը պառկած է ա՛յ էն խաչի տակ: Հիշո՞ւմ ես, Պիտեր, ինչպես էիր հաչում ինձ վրա, երբ ես մոտեցա ձեզ:

Պիտերը պոչը թափահարեց:

— Դա սկիզբն էր,— շարունակեց Ռոջերը: Իսկ սա, կարծես թե, վերջն է: Բայց...— նա սեղմեց բռունցքները, և նրա ստվերը զայրույթով դեսուդեն նետվեց ժայռի վրա:— Բայց մենք կգտնենք նրան ավելի շուտ, քան այդ վերջը վրա կհասնի, Կաղլիկ: Կգտնենք, եթե նույնիսկ ստիպված լինենք նրան փնտրել հենց ոստիկանության աչքի առաջ:

Նա իջավ քարքարոտ լանջն ի վար, ու նրա սապոգների դոփյունը խուլ արձագանք տվեց տիրող մեռելային լռության մեջ: Մաք-Քեյը նորից գնաց արահետով, որը տանում էր ծուռումուռ երկաթուղու մյուս կողմը: Այդ երկաթուղին, որ դուրս էր գալիս Ֆորտ Ուիլյամից և ութսուն մղոն խորանում էր անտառի մեջ, կոչվում էր «Պ. Դ. Վ.»— «Պորտ-Արտուր— Դուլուտ— Վեստերն»: Բայց երկաթուղին այդպես էլ Դուլուտ չէր հասել, և որոշ սրամիտներ այդ տառերն այսպես էին վերծանում. «Պռատ: Դաժան: Վայրագ»: Ուրախ Ռոջերը շատ անգամ էր ծիծաղել ամեն տեսակ անհեթեթությունների վրա, որոնց մասին իրեն պատմել էր Նեյդան: Օրինակ՝ գնացքում, որ այստեղով շաբաթական ընդամենը երկու անգամ էր անցնում, միշտ վերանորոգող բրիգադ էր լինում. ամռանն ու աշնանը մեքենավարը և ուղեկցորդները հատապտուղ էին հավաքում անտառում ու թակարդներ էին դնում, մի անգամ էլ հալածեցին արջին ու նրա հետևից հասան գրեթե մինչև Ուայթֆիշ լիճը, իսկ այդ ընթացքում գնացքը կանգնել էր բաց դաշտի մեջ ու սպասում էր: Նեյդան գնացքը անվանում էր թնդանոթի թոփ, որովհետև մի անգամ օրուգիշերվա մեջ նա վաթսունինը մղոն էր անցել: Բայց այդ գիշեր, երբ Ուրախ Ռոջերը Պիտերի հետ միասին երկաթուղու պաստառ դուրս եկավ, ծիծաղելու տրամադրություն չուներ: Նեղ ու սև

հողաթումբը, ինչպես ողբերգության վշտալի տողեր, գնում էր դեպի խավարը, թաղվելով մթության ահավոր ծովի մեջ:

Մարդն ու շունը նորից կանգ առան, հիշելով այն մասին, որ առաջներում եղել են այստեղ: Պիտերը դարձյալ վնգստաց, և ինչ-որ բան նրան դրդեց հաչալ լուսնի վրա, ինչպես հաճախ էր հաչում այն օրերին, երբ դեռևս անհոգ շնիկ էր: Բայց տերը առաջ գնաց, և Պիտերը հնազանդ քարշ եկավ նրա հետևից, քայլելով անհարթ-անհավասար փայտակոճերի վրայով: Չորս կողմը տարածված էր սև քառսը, իսկ գլխավերևում փռված էր պայծառ լուսնկա երկինքը, և այդ ամենի վրա ինչ-որ սահմռկեցուցիչ անիրականի երանգը կար: Լուսնի շողերի արծաթն ու ոսկին ի վիճակի չէին լուսավորելու սև մոխրակույտերը, ու չնայած բարձունքում մեր ճամփորդները շատ պարզորոշ տեսնում էին նույնիսկ ամենաթեթև ամպերն ու ամենահեռավոր աստղերը, նրանց շուրջը, ուր առաջ լիարյուն կյանքով խշշում էր անտառը, դաժան ամայություն էր տիրում: Միայն երկաթուղու պողպատյա գծերն էին փայլփլում լուսնի շողերի տակ ու մեկ էլ աստղալից երկնքի հենքի վրա մռայլորեն ուրվագծվում էին ածխացած ծառաբները:

Պիտերը տառապում էր ոչ այն պատճառով, որ ոչինչ չէր տեսնում շուրջը, նրան տանջում էր ծանոթ ձայների ու բույրերի բացակայությունը: Եվ, ամբողջ մարմնով լարված, սպասում էր, թե ահա ուր որ է մի դժբախտություն կպատահի: Իրենց անվերջանալի թափառումների ընթացքում բազում գիշերներ նա ահա այսպես վազել էր իր տիրոջ կողքից, և պատահել էր, որ լուսինն ու աստղերը բոլորովին չէին լուսավորում, այնպես որ նրանք ճանապարհը շոշափելով էին գտնում: Բայց միշտ էլ, և՛ ներքևում, և՛ վերևում, և՛ իր շուրջ, նա զգում էր կյանքի ներկայությունը: Բայց ահա այդ գիշեր ոչ մի տեղ կյանքի նշույլ չէր երևում. նա չէր զգում կյանքի բույրը, չէր լսում գիշերահավքերի կանչը, բվերի թևաբախումը, բադերի կռինչը, սուզահավերի ճիչերը: Նա ապարդյուն լարեց լսողությունը, հույս ունենալով լսել խաշամի խշխշոցը և քամու փսփսոցը ճյուղերի արանքում: Նրա նուրբ, զգայուն քիթը չորսաց ոչ ջրաքիսի մշկաբույրը, ոչ աղվեսների կծու հոտը, ոչ էլ կաքավների, ճագարների կամ հաստլիկ փշախոզուկի հազիվ նկատելի հոտը: Եվ ոչ մի տեղից ոչ մի ձայն չլսվեց, ոչ գայլի ոռնոց, ոչ որմզդեղնի ծանր եղջյուրների հարվածներ մատղաշ ծառերին, ոչ էլ նույնիսկ որևէ տրապպերի շան հաչոց:

Հողը լռում էր, և նրա լռության մեջ ինչ-որ սահմռկեցուցիչ բան կար: Պիտերին նույնիսկ թվաց, թե սարսափելի ու աներևույթ մի արարած ջանում է խլացնել իր տիրոջ ոտնաձայները: Մաք-Քեյը, որ նույնպես նկատել էր այն ամենը, ինչը շփոթության մեջ էր գցել Պիտերին, ի տարբերություն նրա, հասկացավ այդ ճնշող լռության պատճառը, և քիչ-քիչ սարսափը համակեց նրան: Շուրջը եղած ամայությունը, կյանքի լիակատար բացակայությունը վկայում էր, թե որքան կործանարար է եղել հրդեհը: Չէ՞ որ ոչ մարդիկ, ոչ էլ կենդանիները չէին վերադարձել այստեղ, թեև հրդեհը, դատելով ամեն ինչից, եղել էր դեռ անցած աշնանը, մոտ կես տարի առաջ: Այրված երկրամասը վերածվել էր գերեզմանոցի, ու գերեզմանային խոր լռությունը վկայում էր, որ մոխրակույտերը տարածվում էին շատ ու շատ մղոններով:

Եվ այդ մտքին հաջորդեց մի սարսափելի ենթադրություն. նման կրակի ծովի մեջ անխուսափելիորեն պետք է որ բազմաթիվ մարդիկ ոչնչանային: Չէ՞ որ կրակը նրանց վրա էր թափվել անսպասելի ուժգին հորձանքով, արշավաձիու արագությամբ սլացել էր անտառների վրայով, և միայն երկաթգծի այս նեղ պաստառն է անհուսալի փրկարար միջոց եղել: Շատ տեղերում մարդիկ միայն հրաշքով էին խուսափել մահից: Իսկ խեժառատ փշատերև անտառներում, որոնց մեջ ապրում էր Նեյդան, հրդեհը, անկասկած առավել մեծ ուժով էր մոլեգնել: Եվ, պայքարելով իր սիրտը կաշկանդող սառցե սարսափի դեմ, Մաք-Քեյը հիշեց ճերմակահեր քարոզչին՝ հայր Ջոնին, որի խրճիթում պատսպարվել էր Նեյդան այն հեռավոր փոթորկալից գիշերը, երբ Ջեդ Հոկինսը անշունչ պառկած էր արահետի վրա, միակ չտեսնող աչքը հառած կայծակներից ծվատվող մութ երկնքին: Այն ժամանակ հայր Ջոնը խոստացավ հոգ տանել Նեյդայի մասին, և հիմա Մաք-Քեյը հավատացնում էր իրեն, որ քարոզիչը, անշուշտ, կարողացել է փրկել նրան կրակե մահից, որը հուսինի նման փլվել էր նրանց վրա: Եվ համոզում էր իրեն, որ այլ կերպ լինել չէր կարող: Նա նույնիսկ բարձրաձայն ասաց այդ խոսքերը, և Պիտերը, լսելով նրա ձայնը, մոտ վազեց դնչով քսմսվեց տիրոջ ոտքերին:

Բայց վախը չանցավ: Ընդհակառակը, սկսեց ավելի շատ տանջել Ուրախ Ռոջերին: Մաք-Քեյը կյանքում երկու անգամ հանդիպել էր անտառային հրդեհի ու երկու անգամն էլ նրան հաջողվել էր, առաջկտրուկի տալով, փախչել մահվան բերանից: Բայց այդ հրդեհները ոչնչով չէիր համեմատի սրա հետ: Ուրախ Ռոջերին հանկարծ թվաց, թե լսում է կրակի մռնչյունը, որ բոցերի մեջ կուչ եկած, կծկված հողը ցնցվում է իր ոտքերի տակ, որ գլխավերևում, կայծեր ցրելով, սլանում են վառված խանձողները, իսկ շուրջը ամեն ինչ ծածկված է ժանտահոտ ծխով: Ընդամենը մի քանի ժամ առաջ նա տեսել էր այն տեղը, ուր առաջ հայր Ջոնի խրճիթն էր. այնտեղ էլ չորս կողմը ածուխ ու մոխիր էր փռված: Իսկ եթե կրակը նրանց հանկարծակիի է բերել, ու նրանք փախչելու տեղ չեն ունեցե՞լ...

Նա ճչաց ցավից՝ անզոր լինելով հաշտվել անխուսափելիի հետ:

— Դա չի կարող պատահել, Պիտեր: Չի՜ կարող պատահել: Նրանք հասել են երկաթգիծ... կամ գնացել են մինչև լիճ... ու մենք որևէ ավանում կգտնենք նրան:

Նա կանգ առավ և լուսնի աղոտ լույսի տակ նայեց դեպի ձախ: Այն, ինչ տեսավ այնտեղ, նրան ստիպեց ցած իջնել հողապատնեշից, որի տակով ձգվում էր ջրիկ ցեխով լցված առուն: Դա այն էր, ինչ մնացել էր փայտակոճեր պատրաստողի խրճիթից. խանձված գերանների մի կույտ էր, մոխիրը քամուն տված: Նույնիսկ այստեղ, հենց երկաթգծի հողապատնեշի մոտ, կրակը լափել էր ամեն ինչ:

Մաք-Քեյը նորից անցավ առուն, մինչև ծնկները թաղվելով ցեխի մեջ, ու առաջ գնաց: Նա լարեց ողջ հոգեկան ու ֆիզիկական ուժերը, որպեսզի չցնորվի: Դարձյալ ու դարձյալ բարձրաձայն կրկնեց, որ Նեյդան ու քարոզիչը փրկվել են, որ ինքը կգտնի նրանց որևէ բնակավայրում: Ոստիկանության մասին չէր էլ մտածում: Մեկ չէ՞ր, թե ինչ կպատահեր իրեն: Միայն թե կարողանար գտնել Նեյդային, համոզվեր, որ նա ողջ է, քանի դեռ չէին բռնել իրեն կամ ծուղակը չէր ընկել: Այնուամենայնիվ, նա գիտակցում էր, որ պետք է զգույշ լինի, թեև պատրաստ էր իրեն վտանգելու, միայն թե տեսներ Նեյդային:

Նրանք մոտ մեկ ժամ քայլեցին, իսկ լուսինը, որ մայր էր մտնում արևմուտքում, ասես հետ նայեց, որպեսզի մի անգամ էլ տեսնի նրանց: Երբ նրանք շրջվեցին, հետևում սևին էր տալիս մութ անդունդը, իսկ առջևում, այնտեղ, ուր ընկել էին լուսնի շողերը, անձև, անորոշ ստվերներ էին օրորվում, և նույնիսկ որոշ բաներ կարելի էր տեսնել: Անշունչ ծառաբների հետևում նրանք երկու անգամ նկատեցին լճի արծաթյա փայլը ու մեկ մղոնի չափ գնացին գետի երկայնքով, ականջ դնելով նրա քաղցր կարկաչին: Բայց այստեղ, ուր ջուրը պատրաստվում էր նոր կյանք ծնելու, նույնիսկ այստեղ էլ կյանքի հետք չկար:

Էլի մեկ ժամ անցավ, և Ուրախ Ռոջերը սրտի տրոփյունով դեռ համառորեն լարում էր տեսողությունը, իմանալու, թե ինչ է թաքնված առջևում փռված մթության մեջ: Մնում էր մեկ մղոն մինչև մոտակա ավանը, մինչև փայտասղոցարան, որը շրջապատված էր սղոցած տախտակների տափակ կույտերով, մաքուր, գեղեցիկ փայտե տնակներով ու կրպակներով, որտեղ անտառը սկսվում էր հենց դռների առաջից: Անշուշտ, բնակիչներն ավանը պաշտպանել են կրակից, և այնտեղ ինքը կգտնի Նեյդային ու քարոզիչին: Չէ՞ որ հայր Ջոնը հաճախ էր գնում այդ ավանը՝ այցելելու կարմիր այտերով ու կապույտ աչքերով ֆինն վերաբնակիչներին:

Բայց նրանք գնում էին ու գնում, և առաջվա պես շան հաչոց չէր լսվում, և ոչ մի լույս չէր ճեղքում անթափանց խավարի պատը: Ահա վերջապես նրանք անցան ոլորանը և նեղ գետակի վրայի կամուրջը: Մաք-Քեյը գիտեր, որ այստեղից կարող էր քարը շպրտել մինչև ավանի առաջին տները: Բայց հաջորդ րոպեին նա քարացավ տեղում. ու սարսափից ախ քաշեց. ավանը չկար: Լուսնկա երկնքի հենքի վրա չէր երևում ոչ մի տուն, ոչ մի կենդանի ծառ: Այն տեղը, ուր պետք է լինեին խանութն ու փոքրիկ եկեղեցին, սպիտակ էր ներկված, աչքը ոչ մի բան չէր ջոկում, բացի նույն անձև, ահազդու խավարից:

Ուրախ Ռոջերը նորից ցած իջավ հողաթմբից, երկար կանգնեց ու ականջ դրեց, այնպես որ Պիտերը նույնիսկ վախենում էր շարժվել: Հետո, ձեռքերը խողովակաձև դնելով բերանին, Ուրախ Ռոջերը բարձր գոռաց, և Պիտերը վախից ցնցվեց: Բայց ոչ ոք չպատասխանեց այդ կանչին, միայն խուլ արձագանքը գլորվեց խավարի միջով: Ավանից ոչ մի հետք չէր մնացել: Կրակը նույնիսկ սղոցած տախտակների կույտերը հողին էր հավասարեցրել:

Ուրախ Ռոջերը կրկին բարձրացավ հողաթմբի վրա ու առաջ գնաց՝ հևալով ու ծանր շնչելով: Այստեղ մահն էր եղել, անսպասելի ու անողոք մահը: Ու եթե այդ նույն ճակատագիրն է բաժին ընկել ֆիննական ավանին, եթե այդ ուժեղ կանայք ու էլ ավելի ուժեղ տղամարդիկ չեն կարողացել իրենց տները փրկել կրակից, ապա ի՞նչ կլիներ այն խրճիթին, որտեղ ապրել են ծերունի քարոզիչն ու Նեյդան:

Մաք-Քեյը մոռացել էր, որ կողքից վազում է Պիտերը: Նա միայն մի բանի մասին էր մտածում. ինչ ուզում է լինի, գոնե մի կենդանի մարդ գտնի: Նա շարունակ վազում էր և քայլերը դանդաղեցնում էր միայն նրա համար, որպեսզի շունչ քաշի ու ականջ դնի: Եվ ահա այդպիսի դադարներից մեկի ժամանակ Պիտերն առաջինը կենդանի ձայն լսեց, հեռվից շան հաչոց էր գալիս:

Կես մղոն անցնելուց հետո նրանք տեսան խրճիթի մութ ուրվականը, որի շուրջը չէին երևում ածխացած բների հարցական նշանները: Պատուհանները լուսավորված չէին, բայց խրճիթի հետևից կրկին շան հաչոց լսվեց, և Ուրախ Ռոջերը նետվեց այն կողմ: Նրա ոտքերի տակ հիմա մոխիրը չէր խշխշում, ու նա հասկացավ, որ այդ հրկիզված անապատում դեմ է առել կյանքի առաջին օազիսին: Ռոջերը բռունցքներով հարվածներ տեղաց դռանը և շուտով լսեց, թե տղամարդու ծանր մարմնի տակ ինչպես ճռճռաց մահճակալը, ապա կնոջ ձայն լսվեց: Մաք-Քեյը նորից թակեց, ու պատուհանից առկայծեց լուցկու կրակը: Ճռնչաց փականը, դուռը բացվեց, և Ուրախ Ռոջերը իր առջև տեսավ մի տղամարդու՝ գիշերաշապիկով, կոպիտ, խոժոռված դեմքով ու կոշտ մորուքով: Նա ձեռքում բռնել էր լամպը:

— Ներողություն եմ խնդրում արթնացնելու համար,— ասաց Ուրախ Ռոջերը,— բայց ես ամբողջ ձմեռը Հյուսիսում եմ եղել, հիմա վերադարձել եմ բարեկամներիս մոտ, իսկ էստեղ ածխից ու մոխրից բացի ուրիշ բան չկա: Դուք առաջին մարդն եք, որին կարող եմ հարցնել նրանց մասին:

— Նրանք որտե՞ղ էին ապրում,— փնթփնթաց մորուքավորը:

— Կրեգ լեռան փեշերին:

— Տեր աստված,— սենյակի խորքից լսվեց կնոջ ձայնը:

— Կրեգի փեշերին իսկական դժոխք էր, կրակի ամենաթեժ տեղը, էն էլ գիշերով,— բացատրեց տղամարդը:

Ուրախ Ռոջերը հենվեց դռան սեմին, որպեսզի չընկնի:

— Ուրեմն, դուրս է գալիս, որ...

— Էնտեղ քչերը փրկվեցին,— փնթփնթաց մորուքավորը, ասես կամենալով շուտ ազատվել այդ անկոչ հյուրից:— Եթե դուք Մունիի մասին եք ասում, նա վառվել է: Ռոբսոնն էլ, շվեդ Ջեկն էլ, Ադամսների ողջ ընտանիքն էլ. ոչ մեկը էնտեղից կենդանի չմնաց...

— Ո՛չ, ո՛չ,— նրան ընդհատեց Ուրախ Ռոջերը, որի սրտում իրար հետ կռվում էին հույսն ու հուսահատությունը:— Ես ուզում եմ իմանալ հայր Ջոնի քարոզչի մասին, մեկ էլ Նեյդա Հոկինսի մասին, որ ապրում էր նրա մոտ... կամ գուցե, իր հոգևոր մոր մոտ, Հոկինսի խրճիթում:

Տղամարդը գլուխն օրորեց ու իջեցրեց լամպի պատրույգը:

— Ես ոչ մի բան չեմ լսել ոչ աղջկա, ոչ էլ նրա մոր՝ պառավ վհուկի մասին,— պատասխանեց նա:— Իսկ ա՛յ, քարոզիչը ազատվեց ու չգիտեմ ուր գնաց:

— Մենա՞կ, թե աղջկա հետ:

— Ոչ մի աղջիկ էլ չկար հետը,— նորից լսվեց կնոջ ձայնը, ու մահճակալը այնպես ճռճռաց, որ Պիտերը ականջները տնկեց:— Հայր Ջոնը մեզ մոտ եկավ հրդեհը դադարելու երկրորդ

օրը և ասաց, որ մեռելներին թաղել են: Նեյդա Հոկինսը նրա հետ չէր: Ու նա էլ չասաց, թե ով է մեռել, ով է փրկվել, մենակ թե...

Ամուսինը շրջվեց նրա կողմը, ու կինը սսկվեց:

— Դուք ի՞նչ գիտեք,— հարցրեց Ուրախ Ռոջերը, շեմքից ներս մտնելով:

— Գիտենալը՝ չգիտեմ,— պատասխանեց կինը,— մենակ թե կարծում եմ, որ նա չի փրկվել: Ախր պառավ Հոկինսը կրակի բերանն ընկավ էն ժամանակ, երբ վազում էր դեպի լիճը:

Մորուքավորը ձեռքը գցեց դռանը՝ հաստատ փակելու մտադրությամբ:

— Ի սեր աստծո, սպասեք,— աղերսագին խնդրեց Ուրախ Ռոջերը, ուսը դեմ տալով դռանը:— Կրեգից ու նրա շրջակայքից փրկվածներ հո եղել են, չէ՞:

— Կեսը, գուցեև ավելի քիչ,— պատասխանեց մորուքավորը:— Ես ձեզ ասացի, չէ՞, որ էնտեղ իսկական դժոխք էր: Ու ամենից վատն էն էր, որ կրակը խոր գիշերով հասավ էնտեղ: Ու հլա ճեպընթաց գնացքից էլ արագ էր շարժվում: Էստեղ քսան ակր հող էինք մաքրել ու խրճիթն էլ հենց դրա մեջտեղում էր, բայց էլի համ իմ մորուքը խանձվեց, համ սրա մազերը: Մեր ձեռքերն էլ են վառվել: Իսկ խոզերը տաքությունից սատկեցին: Գուցե կուզենայիք գիշերը մեզ մո՞տ մնալ, բարեկամ:

— Ո՞չ, ես պետք է շարունակեմ ճամփաս,— ասաց Ռոջերը, ահից սարսռալով:— Դեռ շա՞տ կա, որ էս խանձատափը վերջանա:

— Մի տասը մղոն կլինի: Հրդեհը հենց էնտեղ էլ սկսվել էր, քամին հաջորդ ավանի կողմից էր փչում:

Ռոջերը հետ-հետ գնաց, դուռը փակվեց: Երբ նորից հողաթումբ բարձրացան, նա տեսավ, որ լույսը արդեն հանգել էր, իսկ շուտով հեռվում մարեց նաև շան հաչոցը: Այժմ Մաք-Քեյը անասելի հոգնածություն զգաց: Հույսը այլևս զորավիգ չէր կանգնում նրան, և երկու անքուն գիշերների հոգնածությունն սկսեց ցույց տալ իրեն: Նա դանդաղ էր քայլում, ավելի ու ավելի հաճախ սայթաքելով անհարթ փայտակոճերի վրա: Սակայն համառորեն իրենից վանում էր այն միտքը, թե Նեյդան մեռել է. նա այնքան հաճախակի էր կրկնում. «Չի՛ կարող պատահել, չի՛ կարող պատահել», որ այդ բառերը հնչում էին նրա ականջներում իբրև ինչ-որ երգի կրկներգ: Իսկ նրա աչքերի առաջ երևում էր քարոզչի գունատ, նիհար դեմքը, որը երդվել էր հոգ տանել Նեյդայի մասին ու մորուքավոր վերաբնակչի խրճիթն էր մտել միայնակ:

Նրանք ևս երկու ժամ քայլեցին և վերջապես հասան անտառին, որը կրակից չէր տուժել: Ուրախ Ռոջերը վերմակը փռեց խիտ եղևնու տակ, և սպասեցին լուսաբացին: Պիտերը պառկեց գետնին ու քնեց, բայց Ուրախ Ռոջերը դեռ երկար նստեց ծառին հենված, և միայն այն ժամանակ, երբ երկինքը սկսեց գունատվել, կարճ ժամանակով ննջեց անհանգիստ քնով: Նրան արթնացրեց քնից նոր զարթնած թռչունների ծլվլոցը, և նա լվացվեց մոտերքում հոսող առվի սառը ջրով: Պիտերը տարակուսանքի մեջ ընկավ. տերը խարույկ չվառեց և չկերակրեց իրեն:

Նրանք գիշերել էին ավանի մոտակայքում և լուսաբացին արդեն ավանում էին: Բոլոր տները քնած էին, և միայն մի ծխնելույզից էր ծուխ բարձրանում դեպի վաղորդյան ջինջ ու պայծառ երկինք: Այդ խրճիթի դուռը բացվեց, արտասանդուղք դուրս եկավ մի երիտասարդ, հորանջեց, ճմլկոտաց ու աչքը գցեց երկնքին, մոտավորապես որոշելով, թե ինչ եղանակ է խոստանում օրը: Հետո գնաց դեպի գերանաշեն ախոռը, և Ուրախ Ռոջերն էլ նրա հետևից գնաց այնտեղ: Ի տարբերություն մորուքավորի, երիտասարդը սիրալիր ժպիտով բարևեց նրան:

— Բարի լույս,— ասաց նա։— Շատ կանուխ եք վեր կացել...

Այստեղ նա տեսավ Ուրախ Ռոջերի շորերին ու կոշիկներին նստած մուրը և նրա գունատ, հողագույն դեմքը:

— Դուք հենց նո՞ր եք եկել,— հարցրեց նա կարեկցանքով։— Էնտեղի՞ց:

— Այո՛, էնտեղից: Ես վաղուց էս կողմերում չեմ եղել և ուզում եմ իմանալ՝ իմ բարեկամներին արդյո՞ք հաջողվել է փրկվել: Դուք ճանաչո՞ւմ եք հայր Ջոնին՝ քարոզչին, որ ապրում էր Կրեգի ստորոտում:

Երիտասարդը գլխով արեց:

— Ճանաչում եմ,— պատասխանեց նա։— Հայր Ջոնը երեք տարի առաջ թաղեց իմ եղբորը: Եթե դուք նրան եք փնտրում, ուրեմն իմացած եղեք, որ ողջ և առողջ է: Հրդեհից մեկ շաբաթ հետո նա փոխադրվեց Ֆորտ Ուիլյամ. դա սեպտեմբերին էր, ութ ամիս առաջ:

— Իսկ նրա հետ մի աղջիկ չկա՞ր, Նեյդա Հոկինս անունով,— հարցրեց Ուրախ Ռոջերը, ջանալով թաքցնել այն հուզմունքը, որով սպասում էր պատասխանին:

Երիտասարդը գլուխը տարուբերեց:

— Ո՛չ, նա մենակ էր: Ֆորտ Ուիլյամ գնալու ճանապարհին գիշերը իմ տանը մնաց ու ոչ մի բան չասաց Նեյդա Հոկինս անունով աղջկա մասին:

— Իսկ ուրիշների մասին բան ասա՞ց:

— Նա շատ էր տանջված ու բոլորովին կոտրված էր պատահած դժբախտությունից: Ինչքան հիշում եմ, նա ոչ մեկի մասին էլ չխոսեց:

Այստեղ երիտասարդը նկատեց, որ Ուրախ Ռոջերի դեմքը ավելի գունատվեց, ու տեսավ այն հուսահատությունը, որը նրան չհաջողվեց սքողել:

— Բայց մեր ավանի միջով շատ աղջիկներ անցան գնացին, որոնք ազատվել էին հրդեհից: Թե հարազատների հետ, թե մենակ,— ասաց նա հուսադրելու համար։— Իսկ ինչպիսի՞ն էր Նեյդա Հոկինսը:

— Նա համարյա երեխա է: Ես էդպես էլ ասում էի նրան,— պատասխանեց Ուրախ Ռոջերը սառը, մեռած ձայնով։— Նա տասնութ տարեկան է ու շատ գեղեցիկ: Աչքերը կապույտ են, մազերը շագանակագույն, որոնք օրորվում են ու միշտ թափվում ճակատին: Թե որ մի անգամ նրան տեսնեիք, էլ չէիք մոռանա:

Երիտասարդը ձեռքը քնքշորեն դրեց Մաք-Քեյի ուսին:

— Նա էստեղով չի անցել,— ասաց։— Բայց հույսդ մի՛ կտրիր, գուցե կգտնեք: Չէի՞ք կամենա ինձ հետ նախաճաշել: Էստեղ մի մարդ էլ կա ինձ մոտ: Նա գնում է հենց էնտեղ, որտեղից հիմա եկել եք դուք: Նա էլ փնտրում է մեկին, գուցե թե մի օգտակար բան իմանա ձեզանից: Մտադիր է գնալ Կրեգի կողմերը:

— Կրեգի կողմե՞րը,— կրկնեց Ուրախ Ռոջերը։— Իսկ նրա անունն ի՞նչ է:

— Բրեռ,— պատասխանեց Երիտասարդը։— Սերժանտ Բրեռ, հյուսիսարևմտյան թագավորական հեծյալ ոստիկանությունից:

Ուրախ Ռոջերը շրջվեց ու շոյեց ձիու պարանոցը, որը համբերությամբ սպասում էր առավոտյան իր բաժին վարսակին: Բայց երբ ձեռքն իջավ ձիու մետաքսյա պարանոցին, նա ոչինչ չզգաց: Սիրտը քարի պես ծանրացավ, և նա ուշացրեց պատասխանը: Հետո ասաց.

— Շատ շնորհակալ եմ, բայց ես արդեն նախաճաշել եմ, իսկ հիմա գնում եմ անտառ, դեպի հյուսիս-արևմուտք, Ռեյն-ռիվերի կողմը: Ու լավ կլինի իմ մասին ոչ մի բան չասեք էդ Բրեռյին, թե չէ կմտածի, որ ես ինչ-որ բան եմ թաքցնում իրենից: Բայց... եթե դուք սիրել եք ձեր եղբորը, ապա կհասկանաք, որ հիմա ինձ համար շատ դժվար է օտար մարդկանց հետ խոսելը:

Երիտասարդը նորից սիրալիր ձեռքը դրեց նրա ուսին:

— Ես ամեն բան հասկանում եմ,— ասաց նա,— և սրտանց հավատում եմ, որ կգտնեք նրան:

Նրանք լուռ իրար ձեռք սեղմեցին, և Ուրախ Ռոջերը շտապեց հեռանալ խրճիթից, որի ծխնելույզից արդեն բարձրանում էին ծխի առաջին քուլաները:

…Երեք օր անց Ֆորտ Ուիլյամ փոքրիկ քաղաքը մտավ մի մարդ, իր շան հետ: Նա փնտրում էր հրդեհից փրկված քարոզչին՝ ոմն Ջոնի և Նեյդա Հոկինս անունով ջահել, գեղեցիկ աղջկան: Նա նախ մտավ միսիայի հինավուրց շենքը, որի ամրապինդ պարիսպների պաշտպանությամբ դեռ անցյալ դարում առևտրականները մորթիներ էին փոխանակել հնդկացի որսորդների հետ: Հայր Ավգուստինը, խոր ծերության հասած մի

հոգևորական, զրուցելով անծանոթի հետ, գնալուց հետո ասաց, որ այդ մարդը հավանաբար հիվանդ է, գուցեև նույնիսկ ցնորված:

Եվ ճիշտ որ: Ռոջերին այնպիսի մի հուսահատություն էր պատել, որ այնքան էլ հեռու չէր խենթությունից: Նա արդեն չէր հավատում, որ Նեյդան փրկված լինի կրակից, թեև նրա մահը հաստատող որևէ ապացույց էլ չէր գտել: Ասենք վերջինս այնքան էլ մեծ նշանակություն չուներ, քանի որ սեպտեմբերյան հրդեհի ժամանակ շատերը անհետ կորել էին, ու չնայած արդեն մայիսն էր, նրանց ճակատագրի մասին ոչ մեկը ոչինչ չգիտեր: Փոխարենը նա ամենուրեք լսում էր, որ հայր Ջոնին հաջողվել է փրկվել, որ նրան տեսել են այստեղ, ու տեսել են մենակ:

Բացի դրանից, հայր Ավգուստինը նրան ասաց, որ սեպտեմբերին հայր Ջոնը մի քանի օր մնացել է իրենց մոտ, միսիայում, մտադիր լինելով այնուհետև մեկնել հյուսիս, Պոշկոկադան լճի կողմերը:

Պիտերն ու նրա տերը այլևս անելիք չունեին Ֆորտ Ուիլյամում: Ուրախ Ռոջեր Մաք-Քեյը կասկած չուներ, որ Բրեոն արդեն գտել է իր հետքը ու աքիսի արյունռուշտ համառությամբ գալիս է այդ հետքով. հո զուր չէ, որ նա այդպիսի մականուն էր ստացել: Դրա համար էլ փոքրիկ խանութում լրացրեց իր պաշարները, հույս ունենալով, որ Բրեոն այդքան շուտ գլխի չի ընկնի այստեղ հարցուփորձ անել իր մասին: Նա մտածում էր, որ հինգ-վեց օր հետո կգտնի հայր Ջոնին ու նրանից կիմանա ողջ ճշմարտությունը, որքան էլ սարսափելի լինի այն: Տիրոջ հուսահատ տրամադրությունը ազդեց նաև Պիտերի վրա: Նա չէր հասկանում խոսքերը, բայց զգում էր, որ անուղղելի դժբախտություն է պատահել, ու հիմա նրա վարմունքի մեջ ինչ-որ գայլային բան էր հայտնվել, և Պիտերը կորցրել էր նախկին կայտառությունը: Նրա տեսողությունն ու հոտառությունը մշտապես լարված էին, ու նա կասկածանքով ականջ էր դնում ամեն մի շրշյունին: Իսկ գիշերները, երբ խուլ թավուտում ինչ-որ մի տեղ վառած փոքրիկ խարույկի կողքին նրանք ավարտում էին ընթրիքը, Պիտերը քնում էր մի աչքը բաց, պատրաստ ամենափոքր իսկ տագնապի դեպքում վեր թռչել տեղից:

Այն գիշերից հետո, երբ իրենք մտան մորուքավոր վերաբնակչի խրճիթը, Ուրախ Ռոջերի դեմքը սրվել էր ու դալկացել: Նա շատ անգամ էր մտածել, թե ինչպես կվարվի այն ճակատագրական պահին, երբ վերջապես Բրեոն, այդ մարդորսը, կհասնի իր հետևից: Ֆորտ Ուիլյամից դուրս գալուց հետո Ռոջերը նախազգուշական միջոցներ էր ձեռք առել ավելի շուտ ըստ իր սովորության, ինքնապահպանման աղոտ բնազդի թելադրանքով, և Բրեոյի հետ ունենալիք հանդիպումը հիմա գրեթե նրան չէր վախեցնում: Նա բնավ էլ ցանկություն չուներ վախճանը ձգձգելու: Խաղը երկար էր տևել, հետաքրքիր էր ու հրապուրիչ, բայց հիմա նա հոգնել էր, և առանց Նեյդայի ապագան նրան պատկերվում էր որպես անլույս տրտմություն: Եթե Նեյդան մեռած է, ինքը էլ ո՞ւմ համար պիտի ապրի: Այդ միտքը իր հետ մի տարօրինակ հանգստություն բերեց, և նա փաթաթեց ու պինդ հանգույցով կապեց պատյանի կաշեփոկը: Երբ Բրեոն իրեն բռնի, այդ հանգույցը խոսքերից ավելի պարզ կասի, որ ինքը կամավոր է հանձնվում:

Մաք-Քեյն ու Պիտերը խուլ թավուտների միջով գնում էին դեպի Պոշկոկադան լիճը, իսկ շուրջը ցնծում ու փթթում էր հրաշագեղ գարունը: Ձմռան սառը շնչից հետք էլ չէր մնացել, և տաք ամառը լիակատար տերուտիրական էր դարձել ժամկետից մեկ ամիս շուտ: Բայց Ուրախ Ռոջերը կյանքում առաջին անգամ չնկատեց արթնացած հողի գեղեցկությունը: Առաջին ծաղիկները չէին ուրախացնում նրան: Նա այլևս կանգ չէր առնում, որպեսզի ամբողջ կրծքով շնչեր խեժի բույրով հագեցած անուշահամ օդը: Նա լսում էր թռչունների երգեցողությունը, բայց դա նրա հոգում առաջվա արձագանքը չէր գտնում, և գետակներից հոսող երաժշտության հանդեպ էլ անտարբեր էր մնում: Սուզահավերի ճիչի մեջ նա անխուսափելի մենակության սուգն էր լսում, իր շուրջը միայն անկենդան անապատ էր տեսնում:

Այդպես նա ի վերջո հասավ Պոշկոկագան լիճը թափվող Բեռնտվուդ գետակը: Ու երբ օրը թեքվեց դեպի մայրամուտ, անտառի թավուտից կացնի թխկոցներ լսեցին:

Նրանք դանդաղ ու անաղմուկ գնացին ձայնի կողմը ու շուտով գետաողորանի մոտ, փոքրիկ բացատի կենտրոնում մի խրճիթ տեսան: Խրճիթը նոր էր, և ծխնելույզից ծուխ էր բարձրանում: Կացնի հարվածները լսվում էին քիչ հեռվից, եղևնիների ու կեչիների թփուտներից: Մաք-Քեյն ու Պիտերը թեքվեցին այն կողմ և անմիջապես էլ դեմառդեմ հանդիպեցին փայտահատին: Ուրախ Ռոջերը մի ճիչ արձակեց. նրանց առջև կանգնած էր հայր Ջոնը:

Չնայած կրած տառապանքներին, սպիտակահեր ծերունին կարծես ջահելացել էր այն օրվանից, ինչ վերջին անգամ Ուրախ Ռոջերը տեսել էր նրան: Երբ հայր Ջոնը տեսավ Ռոջերին, կացինը ձեռքից ցած գցեց, և դեմքի զարմանքը փոխվեց ուրախության:

— Մաք-Քե՛յ,— բացականչեց նա՝ ձեռքերն առաջ պարզելով:— Բարեկամս:

Նա տեսավ, թե որքան է փոխվել Ուրախ Ռոջերը, հուսահատության կնիքը տեսավ նրա դեմքին, և քարոզչի աչքերում ուրախությանը փոխարինեցին կարեկցանքն ու խղճահարությունը: Նրանք ամուր ձեռքսեղմումով ողջունեցին միմյանց, բայց լուռ էին. միայն հայացքներն էին խոսում: Վերջապես քարոզիչն ասաց.

— Դուք գիտեի՞ք: Մեկնումեկը ձեզ ասե՞լ էր:

— Ո՛չ,— պատասխանեց Ուրախ Ռոջերը, գլուխը կախելով:— Ոչ ոք էլ ինձ բան չի ասել:— Նա կարծեց, թե խոսքը Նեյդայի մահվան մասին է:

Հայր Ջոնը ամուր սեղմեց նրա ձեռքը:

— Անքննելի են տիրոջ ուղիները,— կամացուկ ասաց նա:— Ռոջեր, դուք Ջեդ Հոկինսին չեք սպանել:

Ուրախ Ռոջերը բուռ անտարբերությամբ նայեց նրան, չիմանալով թե ինչ ասի:

— Այո՛, այո՛, դուք նրան չեք սպանել,— կրկնեց հայր Ջոնը:— Այն գիշերը, երբ դուք համոզված էիք, թե Հոկինսին մեռած թողել եք արահետի վրա, նա բարեհաջող

վերադարձավ տուն: Բայց մի քանի օր անց հարբած գնացել էր ժայռերը, սայթաքել ընկել էր ու ջարդուփշուր եղել: Խեղճի կինը ցանկություն էր հայտնել, որ նրան խրճիթին մոտիկ թաղեն...

Բայց Ուրախ Ռոջերը ոչ Բրեռ-Աքիսի մասին էր մտածում, ոչ էլ այն մասին, որ իրեն այլևս կախաղան է սպառնում: Հայր Ջոնի ձայնը կարծես շատ հեռվից եկավ:

— Մենք այդ մասին բոլոր Հյուսիս գնացողներին ասացինք, հույս ունեինք, որ ի վերջո մեկնումեկը ձեզ կգտնի, և դուք կվերադառնաք: Ու նա էլ էր սպասում, գիշեր-ցերեկ սպասում էր...

Ինչ-որ մեկը խրճիթից գալիս էր նրանց կողմը. մի աղջիկ զնգուն ձայնով երգում էր: Մաք-Քեյի դեմքը խարույկի մոխրից էլ սև դարձավ:

— Տեր աստվա՜ծ,— խռպոտ ձայնով շշնջաց նա:— Իսկ ես կարծում էի... կարծում էի, թե նա զոհ է գնացել հրդեհին:

Հայր Ջոնը միայն հիմա հասկացավ, թե ինչու է այդպես փոխվել Ուրախ Ռոջերը:

— Չէ, ինչ եք ասում, նա ողջ է,— բացականչեց ծերունին:— Հրդեհի հենց հաջորդ օրը հնդկացի ուղեկցողի հետ ես նրան ուղարկեցի էս կողմերը: Դրանից հետո ձեզ հանձնելու համար նամակ թողեցի Ֆորտ Ուիլյամի՝ վառվածների օգնության կոմիտեում: Կարծում էի, ամենից առաջ այնտեղ կմտնեիք:

— Հակառակի պես հենց միայն այնտեղ չեմ եղել,— բացականչեց Ուրախ Ռոջերը:

Նեյդան կանգ առավ բացատի եզրին, որովհետև նրա ձայնի վրա թավուտից դուրս թռավ մի տարօրինակ գազան, շուն էր, էրդելի պես գանգրամազ, քերծեի թաթերով ու անտառային գայլի հաստ մկանուտ մարմնով: Պիտերը ցատկեց նրա վրա, ինչպես անում էր այն տարիներին, երբ դեռ լակոտ էր: Եվ Նեյդայի շուրթերից մի հեկեկացող ճիչ դուրս թռավ.

— Պիտե՜ր: Պիտե՜ր: Պիտե՜ր…

Այդ ճիչը լսելուն պես Ուրախ Ռոջերը բաց թողեց հայր Ջոնի ձեռքն ու նետվեց դեպի բացատ:

Նեյդան, ծունկ չոքած, գրկել էր Պիտերի փռչոտ գլուխն ու շվարած նայում էր կեչու թփուտի կողմը. այնտեղից դուրս վազեց մի մարդ ու հանկարծ քարացավ տեղում, ասես կուրացավ մայր մտնող արևի շողերից: Եվ, իսկույն էլ անտանելի թուլություն զգալով, բաց թողեց Պիտերին ու ձեռքերը պարզեց բացատ դուրս եկած գորշ կերպարանքին: Արցունքները նրան խեղդեցին, ուզեց ինչ-որ բան ասել ու ոչ մի խոսք չկարողացավ արտաբերել: Մի րոպե անց բացատ դուրս եկավ հայր Ջոնը ու թաքուն նայեց մասրենու թփի հետևից. նա տեսավ գրկախառնված զույգին, որոնց շուրջը մոլեգնորեն ցատկոտում էր Պիտերը, թաշկինակը հանեց, սրբեց աչքերը ու դանդաղ գնաց կացնի հետևից, որ թողել էր նոր կտրած փայտի դարսակի մոտ:

Ռոջերի գլուխը դժժում էր, մի քանի րոպե ասես խլացել էր, նույնիսկ Պիտերի գեղգեղուն հաչոցը չէր լսում, որովհետև ամբողջ աշխարհը միաձուլվել էր Նեյդայի խեղդվող շնչառության ու նրա տաք հպումների մեջ: Ռոջերը ոչինչ չէր տեսնում, բացի Նեյդայի դեմքից ու լայն բացված աչքերից: Ասենք Նեյդայի դեմքն էլ կարծես արծաթե մշուշի միջից էր տեսնում ու ասես երազի մեջ էր զգում իր պարանոցին փաթաթված նրա ձեռքերը. քանի՛-քանի անգամ էր նա այդպիսի երազներ տեսել հեռավոր Հյուսիսում, գիշերային խարույկների կողքին:

Հանկարծ Նեյդան ճչաց:

— Ռոջե՛ր... ախր դու... ինձ կխեղդես,— շշնջաց նա, դժվարությամբ շունչ քաշելով, բայց ինքը ձեռքերը բաց չթողեց:

Այդ ժամանակ միայն Ռոջերը գլխի ընկավ, որ ցավ է պատճառում Նեյդային, ու մի քիչ հետ քաշվեց, աչքը նրանից չկտրելով:

Եթե այդ պահին Ռոջերը կարողանար տեսնել իրեն այն վիճակում, ինչպիսին նրան տեսավ հայր Ջոնը, երբ նա դուրս եկավ անտառից, ինչպիսին հիմա տեսնում էր Նեյդան, ապա հպարտությունը, ուրախությունն ու արիությունը տեղնուտեղը կցնդեին նրա սրտից: Այն օրվանից, ինչ նա դուրս էր եկել Կրեգից, ոչ մի անգամ չէր սափրվել, ու հիմա նրա դեմքը ծածկված էր կոշտ փշամազով, վաղուց չխուզված մազերը զզզվել էին, երկար անքնությունից ու մշտապես ճնշող հուսահատությունից աչքերը լցվել էին արյունով:

Բայց Նեյդան այդ ամենը չէր նկատում: Իսկ գուցեն վշտի ու թախծի այդ վկաները նրա աչքում ավելի էին գեղեցկացնում Ռոջերին: Հիմա Ռոջերի առջև այլևս առաջվա փոքրիկ աղջնակը չէր: Նեյդան հասունացել էր, ինչպես Մաք-Քեյին թվաց, շատ էր հասունացել: Նա մեծացել էր, իսկ անհնազանդ խոպոպները հիմա հավաքել էր գեղեցիկ հանգույցի մեջ: Նկատելով այդ փոփոխությունները՝ Մաք-Քեյը մի ակնածալից վախ զգաց: Այո, նրա առջև Կրեգի այն փոքրիկ աղջնակը չէր, այլ մի անծանոթ գեղեցկուհի: Այդ հրաշք կերպարանափոխությունը կատարվել էր ընդամենը մեկ տարվա ընթացքում, և Ռոջերը վախեցավ. Ջեդ Հոկինսը երևի չէր համարձակվի ձեռք բարձրացնել այս նոր Նեյդայի վրա: Ու նա սիրտ չարեց նորից գրկել Նեյդային:

Բայց այն ակնթարթին, երբ Ռոջերը բաց թողեց ձեռքերը, տեսավ, որ մի բան, այնուամենայնիվ, մնացել էր առաջվանը. դա Նեյդայի աչքերի փայլն էր, աչքերը, որոնք նայում էին Ռոջերին նույնպիսի սիրով ու հավատով, ինչպես նայում էին մի ժամանակ հնդկացի Թոմի խրճիթում, երբ ծովահեն միսիս Քիդը խշխշացնում ու ծվծվում էր զզրոցի թերթերի տակ, իսկ Պիտերը, ամբողջովին վիրակապերի մեջ, նրան էր նայում մայր մտնող արևի շողերով ողողված թախտի վրայից: Եվ մինչ Ռոջերը տատանվում էր, Նեյդան ինքը նորից գրկեց նրան ու գլուխը դրեց կրծքին, ծիծաղելով ու լաց լինելով, իսկ հայր Ջոնը, որ մոտեցել էր նրանց, քնքշորեն շոյեց Նեյդայի ուսը, ժպտաց Մաք-Քեյին ու դանդաղ գնաց դեպի խրճիթ: Նրա գնալուց հետո դեռ որոշ ժամանակ Ռոջերը կանգնած մնաց՝ դեմքը Նեյդայի մազերի մեջ թաղած: Երկուսն էլ լուռ էին ու ականջ էին դնում կողք կողքի

տրոփող իրենց սրտերին: Հետո Նեյդան ձեռքը բարձրացրեց ու քնքշորեն շոյեց Ռոջերի փշոտ այտը:

— Ես այլևս թույլ չեմ տա, որ դուք փախչեք ինձանից, միստր Ուրախ Ռոջեր,— ասաց նա, ինչպես մի ժամանակ ասել էր փոքրիկ Նեյդան, բայց հիմա նրա ձայնի մեջ վճռականություն ու ինքնավստահություն կար:

Եվ երբ Մաք-Քեյը գլուխը բարձրացրեց, իր շուրջը տեսավ արևով լուսավորված աշխարհը, որը միշտ էլ սիրել էր ինքը:

Գլուխ տասնութերորդ

Հաջորդ բոլոր օրերին Պիտերը նկատում էր, որ Բեռնտվուդի ափին ընկած խրճիթում ինչ-որ տարօրինակ հուզմունք է տիրում: Եվ չնայած որ ոչինչ չէր պատահել, բայց, միևնույն է, այնպիսի զգացողություն կար, որ ահա ուր որ է մի բան կպատահի: Բեռնտվուդ գալու հաջորդ օրը տերը ասես մոռացավ նրա գոյությունը: Նեյդան, ճիշտ է, նկատում էր նրան, բայց կարծես թե նա էլ էր փոխվել, իսկ հայր Ջոնը իր տանը ապրող հնդկացի ամուսինների հետ ամբողջ օրը զբաղված էր տնտեսությամբ: Քարոզչի գունատ, նիհարած դեմքը լուսավորում էր առեղծվածային ժպիտը, որը առանձնապես գրգռում էր Պիտերի հետաքրքրասիրությունը և ստիպում էր զգոն լինել: Շրջապատի մարդկանց անհասկանալի վերաբերմունքը լիակատար տարակուսանքի մեջ էր գցել խեղճին: Երրորդ օրվա առավոտյան Նեյդան իր ննջարանից դուրս չեկավ, Ուրախ Ռոջերը առանց նախաճաշելու գնաց անտառ, և հայր Ջոնը մենակ նստեց սեղանի մոտ, քնքուշ ժպիտով նայելով Նեյդայի սենյակի փակ դռանը: Նույնիսկ Ուսիմիսկան՝ Դալար Տերևը, սևահեր հնդկուհին, որը մաքրում էր տունը, նա էլ մի տեսակ էր, երբ մտավ Նեյդայի սենյակը, իսկ նրա ամուսին Միստուսը, հևալով ու փնչացնելով, տունը լիքը եղևնու ճյուղեր լցրեց:

Ուրախ Ռոջերը մենմենակ անցուդարձ էր անում անտառում, մոլեգնորեն փստացնելով չիբուխը: Մի նյարդային դող էր համակել նրան, և նա չէր կարողանում զսպել իր հուզմունքը: Նա շատ վաղ էր վեր կացել և առավոտվանից նրան չէր հաջողվում իրեն բուռը հավաքել: Ռոջերը թույլ էր ու անօգնական: Բայց դա անսահման երջանկության թուլությունն ու անօգնականությունն էր: Նեյդայի հետ հանդիպելու մասին երազելիս նա պատկերացնում էր, որ տեսնելու է պատառոտված զգեստով ու քրքրված մաշիկներով, իր հոգեհայր Ջեդ Հոկինսի դաժան վերաբերմունքից միշտ վախեցած առաջվա աղջնակին, այն փոքրիկ, անպաշտպան աղջնակին, որին ինքը ամեն գնով պարտավոր էր պահել ու պահպանել չարից ու փորձանքից: Նրա մտքով էլ չէր անցնում, որ Հայր Ջոնի մոտ անցկացրած մի քանի ամիսների ընթացքում նոր «տասնութի մեջ մտած աղջնակը» հասունացած աղջիկ կդառնար:

Ռոջերը փորձեց վերհիշել, թե ինչ ասաց Նեյդան նախորդ օրվա երեկոյան, որ ինքը ավազակ էր, ավազակ էլ մնացել է, որ իրեն հետապնդում է օրենքը ու միշտ այդպես կլինի, ինչպիսի օրինակելի կյանքով էլ որ ինքը ապրելու լինի, որ Նեյդան գտնվում է հայր Ջոնի

խնամակալության տակ և պետք չէ, որ սիրի իրեն, թող նա հետ վերցնի իր երդումը, որ նա շատ ավելի բախտավոր կլինի, եթե վերցնի ու մոռանա Կրեգի փեշերին անցկացրած օրերը:

«Դու արդեն հասուն աղջիկ ես,— ասաց նա՝ շեշտելով վերջին բառերը։— Եվ ինքնուրույն ես դարձել: Ես այլևս պետք չեմ քեզ»:

Իսկ Նեյդան լուռ նայեց նրան, ասես կարդում էր հոգին, հետո հանկարծ ծիծաղեց, գլուխը այնպես ցնցեց, որ մազերը շաղ եկան ուսերին, և կրկնեց այն նույն խոսքերը, որ ասել էր անցած-գնացած ժամանակներում. «Առանց ձեզ... ես կմեռնեմ... միստր Ուրախ Ռոջեր», ապա շրջվեց ու դուրս փախավ խրճիթից: Այդ պահից սկսած նա այլևս Նեյդային չէր տեսել:

Եվ այդ նույն պահից Ռոջերն ասես բռնվեց տենդով, ու ձեռքերը դողացին, և ժամացույցն հանեց ու տեսավ, թե ինչ արագ է անցնում ժամանակը:

Իսկ Պիտերը խրճիթում քիթը խոթել էր Նեյդայի դռան տակ ու ականջ էր դնում, թե ինչպես է նա անցուդարձ անում սենյակում, բայց Նեյդան այդպես էլ դուռը չբացեց: Այստեղ մի նոր հանելուկային բան տեղի ունեցավ. Ուսիմիսկան, նրա ամուսինը և հայր Ջոնը պատերը զարդարեցին թավասաղարթ ճյուղերով, այնպես որ Պիտերին թվաց, թե ինքը նորից ընկել է Կրեգի մոտակա եղևնուտի բացատը, մանավանդ որ նրանք հատակը ծածկել էին խոտերով ու ծաղիկներով:

Հույս չունենալով, թե կհասկանա ինչ է նշանակում այդ ամենը, Պիտերը փռվեց արտասանդուղքի կողքին ու տաքանում էր մայիսյան արևի տակ, մինչև որ տերը վերադարձավ անտառից: Իսկ հետո ընդհանրապես անհասկանալի բան տեղի ունեցավ: Ուրախ Ռոջերի հետևից նա խրճիթ մտավ ու տեսավ, որ Միստուսն ու Դալար Տերևը լուրջ կեցվածքով նստած են աթոռներին, իսկ հայր Ջոնը կանգնած է փոքրիկ սեղանի մոտ, որի վրա դրված էր բաց գիրքը. երբ Ռոջերն ու Պիտերը ներս մտան, քարոզիչը նայեց ժամացույցին ու սիրալիր գլխով արեց նրանց: Այստեղ Պիտերը շատ պարզորոշ տեսավ, որ իր տերը ջղաձգորեն թուքը կուլ տվեց, ասես ինչ-որ բան էր դեմ առել կոկորդին: Նրա մաքուր ածիլված այտերը կավճի պես սպիտակեցին: Կյանքում առաջին անգամ Պիտերը տիրոջը տեսավ այդպես վախեցած ու կամացուկ վնգստաց եղևնու ճյուղերի տակից, սպասելով, որ ահա ուր որ է բաց դռնից ներս կմտնի զարհուրելի թշնամին:

Հայր Ջոնը թակեց Նեյդայի դուռը:

Հետո վերադարձավ իր սեղանի մոտ, ու երբ դռան բռնակը դանդաղ պտտվեց, նրա տերը նորից թուքը կուլ տվեց ու գնաց դեպի դռան կողմը: Վերջապես դուռը բացվեց, և նրանք տեսան Նեյդային: Ուրախ Ռոջերը ախ քաշեց (այնքան կամաց, որ Պիտերը հազիվ լսեց) ու ձեռքերը պարզեց նրան:

Դա այն Նեյդան չէր, որը դիմավորել էր Ռոջերին հայր Ջոնի խրճիթի մոտ, բացատում, այլ նախկին Նեյդան էր, Կրեգ լեռան աղջիկը, նա, որից Ուրախ Ռոջերը բաժանվել էր այն ամպրոպացայտ գիշերը: Նա հերարձակ էր, ինչպես այն օրերին, երբ խաղում էր Պիտերի

հետ մարգագետիններում ու ժայռերի մեջ, նրա հարսանեկան զգեստը մաշված էր ու գունաթափված, որովհետև նրա հագին հին շորն էր, որ նա հագել էր այն զարհուրելի գիշերը, երբ ինքը Պիտերին ուղարկեց իր սիրած մարդու հետևից, իսկ պստլիկ ոտքերին մաշված ու պատառոտված մաշիկներն էին, որոնցով նա անտառային արահետով վազում էր Ռոջերի հետևից: Հայր Ջոնը տարակուսանքով նայեց նրան, իսկ Ուրախ Ռոջերի աչքերում այնպիսի երջանկություն փայլեց, որ Նեյդան գրկեց նրան ու համբուրեց:

Այնուհետև Նեյդան, ամբողջովին շառագունած, Մաք-Քեյի հետ միասին կանգնեց հայր Ջոնի առաջ, որը ձեռքն էր առել բաց գիրքը, և, երկար թերթերունքների տակից աչքերը խոնարհելով, հանկարծ բռնեց Պիտերի շփոթահար հայացքը: Նա մատով աննկատ մոտ կանչեց շանն ու ձեռքը դրեց նրա գլխին: Հայր Ջոնը սկսեց խոսել, և Պիտերը, դունչը տնկած, ուշադիր ականջ դրեց: Ուրախ Ռոջերը նայում էր ուղիղ իր դիմաց, քարոզչի թիկունքում պատին ամրացրած եղևնաճյուղերի դրասանգին, բայց հպարտորեն բարձրացել էր գլուխը, և վախը անհետացել էր նրա դեմքից: Իսկ Նեյդան կիպ կանգնած էր Ռոջերի կողքին, այնպես որ գլուխը հպվել էր Ռոջերի ուսին, իսկ մատները սեղմում էին նրա բութ մատը, ինչպես այն երանելի գիշերը, երբ նրանք քայլում էին Կրեգի ստորոտում ընկած մարգագետնով:

Պիտերն էլի ոչինչ չէր հասկանում, բայց վեհանձն ու արժանապատվությամբ էր պահում իրեն: Երբ այդ բոլորը ավարտվեց, և հայր Ջոնը համբուրեց Նեյդային ու սեղմեց նրա տիրոջ ձեռքը, Պիտերը ատամները բացեց ու քիչ էր մնում գոռոար, որովհետև տեսավ, որ Նեյդան անձայն լաց է լինում, ճիշտ ինչպես այն հեռավոր օրերին, երբ ինքը փոքրիկ շնիկ էր: Բայց հիմա Նեյդայի կապույտ աչքերը լայն բացված էին, և նա հայացքը չէր կտրում Ուրախ Ռոջերից, այտերը վարդագունել էին, իսկ շուրթերը թեթևակի դողում էին: Եվ հանկարծ արցունքների հետ եկավ ժպիտը, իսկ Ուրախ Ռոջերը շրջվեց հայր Ջոնից ու գրկեց Նեյդային: Այդժամ Պիտերը պոչը թափահարեց ու դուրս վազեց արևաշող բացատ, որովհետև այնտեղ կոճղի վրա նստած էր շեկ սկյուռիկը և ծաղրանքով չրթչրթացնում էր: Հետո Նեյդան ու Ռոջերը դուրս եկան խրճիթից ու բացատի միջով գնացին դեպի մատղաշ թփուտները, որտեղից իրենց գալու օրը լսել էին հայր Ջոնի կացնի ձայնը: Նեյդան նստեց տապալված ծառաբնի վրա, իսկ Մաք-Քեյը կանգնեց կողքին, բաց չթողնելով նրա ձեռքը:

Մինչև այստեղ գալը Ռոջերը ոչ մի ծպտուն չէր հանել և, թվում էր, հիմա էլ ի վիճակի չէր բերանը բացելու:

Աչքը չկտրելով ոտքերի տակ փռված կանաչ խոտերից՝ Նեյդան կամացուկ հարցրեց.

— Միստր... Ուրախ Ռոջեր... դուք ուրա՞խ եք:

— Այո,— պատասխանեց Ռոջերը:

— Ուրա՞խ եք, որ ես հիմա... ձեր կինն եմ:

Պատասխանելու փոխարեն Մաք-Քեյը խոր հոգոց հանեց, ու Նեյդան գլուխը բարձրացնելով, տեսավ, որ նա նայում է եղևնիների վերևում փռված անհուն լազուրին:

— Որ ես ձեր կինն եմ,— կրկնեց Նեյդան ու այտով հպվեց նրա ուսին։

— Այո, ուրախ եմ,— պատասխանեց Ռոջերը։— Այնքան ուրախ եմ... որ... սարսափում եմ։

— Դե, եթե ուրախ եք, ապա մի անգամ էլ համբուրեք ինձ։

Ուրախ Ռոջերը մոտ քաշեց Նեյդային, նրա դեմքն առավ իր ափերի մեջ ու պինդ համբուրեց շուրթերը։ Երբ բաց թողեց, Նեյդան նրան նայեց երջանկությամբ լի աչքերով, ապա, հետ քաշվելով, ասաց պահանջկոտ.

— Դուք էլ ինձանից չե՞ք փախչի։

— Ո՛չ։

— Նշանակում է, ես էլ ուրիշ ոչ մի բան չեմ ուզում կյանքից,— շարունակեց Նեյդան ու կրկին սեղմվեց նրան։— Չէ՞ որ ինձ էլ ոչինչ հարկավոր չէ ձեզնից բացի։

Ուրախ Ռոջերը չպատասխանեց, զգաց միայն, ինչպես է կողքին կամացուկ տրոփում Նեյդայի սիրտը, ու լսեց թռչունների զրնգուն ծլվլոցը։ Եվ երկուսն էլ շատ երջանիկ էին։ Բայց այստեղ Պիտերը, որը տխրել էր, գնաց ուսումնասիրելու անտառի արևոտ խորքերը։

Եվ, լսելով նրա զգույշ, գաղտագողի քայլերի ձայնը, որը կարծես խոսում էր այն մասին, որ առջևում իրեն վտանգ է սպասում, Ուրախ Ռոջերը այլայլվեց։ Նեյդայի ափը քնքշորեն սեղմվեց նրա այտին։

— Դուք ինձ շա՞տ եք սիրում։

— Կյանքիցս ավելի,— պատասխանեց Մաք-Քեյը, հետևելով, թե Պիտերն ինչպես է հոտոտում հարավային թույլ քամին։

Նեյդան մատը քնքշորեն դրեց նրա շուրթերին։

— Ու ե՞ս էլ այսուհետև ձեզ հետ կլինեմ… միշտ և ամենուրեք։

— Այո՛, միշտ և ամենուրեք։— Սակայն նրա աչքերը նայեցին խիտ անտառի հեռուներին ու տեսան իր հետևից եկող մարդու նիհար ու անողոք դեմքը։ Բրեռ Աքիսի դեմքը։

Նա գրկեց Նեյդային ու նրա գլուխը սեղմեց իր կրծքին։

— Միայն թե դու երբեք չփոշմանես դրա համար,— ասաց Ռոջերը՝ առաջվա պես նայելով անտառի կողմը։

— Ո՛չ, ո՛չ, ես երբեք-երբեք չեմ փոշմանի,— ցածրաձայն բացականչեց Նեյդան։— Թեկուզ թափառական դառնանք աշխարհով մեկ, մնանք անտուն ու անտեղ, քաղցած ու մերկ, թեկուզ միշտ հալածվենք ոստիկանությունից... ու մեռնենք։ Ես ոչ մի բանի համար չեմ ափսոսա, քանի դեռ ձեզ հետ կլինեմ։

Ռոջերը լուռ էր: Նա շուրթերը հպեց Նեյդայի փափուկ շագանակագույն վարսերին, ու Նեյդան սկսեց պատմել այն, ինչ որ արդեն լսել էր հայր Ջոնից. թե ինչպես, երբ Ռոջերը հեռացել էր քարոզչի տնից, ինքը երկար ժամանակ վազել էր նրա հետևից, անձրևի ու ամպրոպի տակ: Իսկ Ուրախ Ռոջերը իր հերթին պատմեց, թե ինչպես լուսադեմին Պիտերն արթնացրել էր իրեն, ու ինքը գտել էր Նեյդայի նվերը, որը փրկել էր իրեն հուսահատությունից ու խելագարվելուց, և թե ինչպես Ուոլլաստոն լճի ափին այդ նվերը ի պահ էր տվել Դեղին Թռչունին:

Նրանք երկար թափառեցին գարնանային անուշահոտ անտառում, և Նեյդան մի ամբողջ ժամ նրան հարցուփորձ արեց Դեղին Թչունի ու Արևացոլքի մասին: Այսպես նա քիչ-քիչ իմացավ, որ մանուկ օրերին Ռոջերը Դեղին Թռչունին բարի կախարդուհի էր անվանում: Երբ Ռոջերն ավարտեց իր պատմությունը, Նեյդայի աչքերը փայլում էին, ու արագ էր շնչում:

— Օրերից մի օր մենք կգնանք այնտեղ,—շշնջաց Նեյդան:— Ես հպարտանում եմ քեզանով, իմ Ռոջեր: Ու ես արդեն սիրում եմ Դեղին Թռչունին... Արևացոլքին նույնպես: Մենք մի օր կայցելենք նրանց, լա՞վ:

Ուրախ Ռոջերը գլխով արեց, ու նրա սիրտը կրծող սարսափը անհետացավ. այնքա՜ն երջանիկ էր նա:

— Այո՛, մենք կայցելենք նրանց: Ես այդպիսի մի երազ տեսա, և այդ երազը պաշտպանեց ինձ, երբ մահվան սպառնալիքը կախվեց գլխիս:

Հետո Ռոջերը պատմեց Քասիդիի մասին, որին նա թողել էր Ուոլլաստոնի մյուս ափին, ծեր տրապպերի ու նրա Ժիզել թոռնիկի խրճիթում, որտեղ հեծյալ ոստիկանության շեկ կապրալը գտել էր իր երջանկությունը:

Ժամանակը աննկատելի անցավ և միայն իրիկնադեմին նրանք խրճիթ վերադարձան: Նեյդան կրկին փակվեց իր սենյակում և դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ Ուսիմիսկայի պատրաստած հարսանեկան ճաշը արդեն սեղանին էր:

Եվ Ուրախ Ռոջերը, նրան տեսնելով, նորից կամացուկ ախ քաշեց, որովհետև Նեյդան կրկին կերպարանափոխվել էր: Նրա առջև դարձյալ նոր, հասուն Նեյդան էր. սկսած մազերից, որ գեղեցիկ սանրվածքով հանգուցել էր գլխին, մինչև պստլիկ ոտքերին հագած նուրբ կոշիկները: Ձեռքերը, որ մի ժամանակ ծածկված էին կապտուկներով, հիմա ձյունի պես ճերմակ էին, և նրա ողջ նրբին գեղեցկությունը այնքան ապշեցրեց Մաք-Քեյին, որ նա շշմած, բութ հայացքով երկար նայեց Նեյդային, մինչև վերջինս մոտեցավ ու չպպոցով համբուրեց նրա այտը, այնպես բարձր, որ Պիտերը անսպասելիությունից ականջները ցցեց: Հետո Նեյդան համբուրեց հայր Ջոնին և ուրախ-ուրախ սկսեց կարգադրություններ անել հարսանեկան սեղանի շուրջը:

Հիմա Նեյդան այլևս չէր քաշվում, երբ նրան անունով էր դիմում, երբ շատ անգամ համարձակորեն նրան Ռոջեր անվանեց, իսկ երկու անգամ էլ ամաչկոտ չարաճճիությամբ նույնիսկ ասաց «ամուսինս», և այդ երանելի ճաշի ամբողջ ընթացքում հյուսիսային

թափառումների ձախորդություններից կոփված Մաք-Քեյը սիրով ու երանությամբ լի աչքերը չէր հեռացնում իր կնոջից և ապշած ու զարմացած էր իր երջանկության համար:

Բայց նույնիսկ այդ անխռով ժամին նրա ուղեղի ամենահեռավոր անկյունում թաքնված էր տագնապալի հուշը Բրեռ-Աքիսի մասին:

Գլուխ տասնիններորդ

Երբ աղջամուղջը թանձրացավ և երկնքում հայտնվեցին աստղերը, Ռոջերը հայր Ջոնին պատմեց իր ունեցած երկյուղների մասին:

Նեյդան ձայն տվեց Պիտերին ու գնաց խրճիթ, իսկ հայր Ջոնը, գունատ դեմքը դարձնելով անծայրածիր շքեղաշուք երկնքին, ասես անձայն գոհաբանական աղոթք էր շշնջում, և հենց այդ ժամանակ էլ Ուրախ Ռոջերը ձեռքը հուշիկ դրեց նրա ուսին:

— Հայր Ջոն,— ասաց նա,— ի՞նչ սքանչելի գիշեր է:

— Լույսի ու բարեբերության գիշեր է,— պատասխանեց քարոզիչը:— Նայեք աստղերին: Ասես կենդանի էակներ լինեն և, ցնծալով, ի վերուստ իրենց օրհնությունն են առաքում ձեզ:

— Միևնույն է... ես վախենում եմ:

— Վախենո՞ւմ ես:

Հայր Ջոնը նայեց Մաք-Քեյին ու տեսավ, որ նրա աչքերը սևեռված են անտառին:

— Այո՛, վախենում եմ. . . նրա համար...

Եվ Մաք-Քեյը քարոզչին համառոտ պատմեց այն մասին, ինչ տեղի էր ունեցել տունդրայում ձմռանը, և թե ինչպես քիչ էր մնում ինքը ընկներ Բրեռյի ձեռքը, երբ, Կրեգ վերադառնալիս, փնտրում էր հայր Ջոնին ու Նեյդային:

— Նա գալիս է իմ հետքով,— խոսքը ավարտեց Ուրախ Ռոջերը:— Ու, հավանաբար, շուտով կհասնի այստեղ:

Քարոզիչը քնքշորեն բռնեց նրա արմունկը:

— Դուք Ջեդ Հոկինսին չեք սպանել, զավակս, և դա իմ ու Նեյդայի ամենամեծ սփոփանքն է եղել այս բոլոր ամիսներին: Նեյդան գիշեր ու ցերեկ ձեր մասին էր մտածում ու հավատում էր, որ դուք նորից կտեսնվեք:

— Նա ինձ համար կյանքից էլ թանկ է, եթե հազար կյանք ունենայի, հազարն էլ նրան կտայի,— շշնջաց Մաք-Քեյը:— Թե որ մի բան պատահի... հիմա.

— Այո՛, եթե պատահի այն, ինչից դուք վախենում եք, ի՞նչ կլինի այնժամ,— հարցրեց հայր Ջոնը անկեղծ, սրտառուչ ձայնով:— Ի՞նչ կլինի, Ռոջեր: Դուք չեք սպանել Ջեդ Հոկինսին: Եվ

եթե արդարադատությունը հարկադրի ձեզ հատուցել այն բանի համար, ինչը օրենքի խախտում է համարում, ուրեմն ինչ, շա՞տ մեծ կլինի այդ հատուցումը:

— Բանտ, հայր Ջոն: Հնարավոր է, հինգ տարի բանտարկություն:

Քարոզիչը կամացուկ ծիծաղեց ու աչքերը հառեց շողշողացող աստղերին:

— Հինգ տարի՜,— կրկնեց քարոզիչը:— Զավակս, մի՞թե հինգ տարին մեծ հատուցում է այն գանձի դիմաց, որին այսօր դուք երդվեցիք պահել ու պահպանել: Հի՜նգ, ընդամենը հինգ կարճ տարիներ: Իսկ նա կսպասի ձեզ, կհպարտանա ձեր այն արարքներով, որոնք ձեզ հասցրել են բանտի, և ծրագրեր կկազմի այն բազում լուսավոր տարիների համար, որ կգան այդ հինգ կարճատև տարիներից հետո: Անպայման կսպասի, և այդ ընթացքում ավելի կլավանա ու կգեղեցկանա: Ռոջեր, մի՞թե դա մեծ զոհաբերություն է, մի՞թե չափից դուրս մեծ գին է: Հինգ տարի... իսկ հետո կլինի հանգստություն, սեր, առհավետ երջանկություն: Ինքներդ ասացեք, Ռոջեր:

Մաք-Քեյը փորձեց պատասխանել, բայց ձայնը կտրվեց.

— Իսկ ի՞նչ կլինի նրա վիճակը, հայր Ջոն...

— Այո-ո՜, գիտեմ, ինչ եք ուզում ասել,— մեղմորեն նրան ընդհատեց քարոզիչը:— Ես նրան համոզեցի, բերեցի նույն փաստարկները, ինչ որ դուք կանեիք, Ռոջեր: Ես դիմեցի նրա բանականությանը: Բացատրեցի, որ ձեզ կբանտարկեն, եթե այստեղ մնաք, և տարօրինակ զուգադիպությամբ, ես էլ հինգ տարի ասացի: Բայց թե նա համառ է, Ռոջեր, շատ է համառ ու ոչինչ չուզեց լսել: Եվ նա առաջինը տվեց այն հարցերը, որ հիմա ձեզ եմ տալիս: «Հինգ տարին ի՞նչ է որ,— հարցրեց նա՝ ժխտելով իմ տրամաբանությունը:— Ի՞նչ է հինգ, տասը, նույնիսկ քսան տարին, եթե ես իմանամ, որ դրանից հետո մենք միասին կլինենք»: Այո՜, նա շատ համառն է, Ռոջեր: Նա շա՜տ-շատ է սիրում ձեզ:

Մաք-Քեյը ինչ-որ բան փնթփնթաց ու լռեց՝ ցրված նայելով աստղերին:

— Իսկ դրանից հետո, այն բանից հետո, երբ ես տեղի տվեցի նրա համառությանը, նա անմիջապես սկսեց նոր ծրագրեր կազմել, որ մենք, այսինքն՝ ես ու ինքը, կբնակվենք ձեր բանտին մոտիկ մի տեղ, և որ ամեն օր դուք նրանից լուր կստանաք իր և ձեր տղայի մասին...

— Ասացիք տղայի՞, հայր Ջոն:

— Դա նրա երազանքն է, Ռոջեր:

Ռոջերը մի խեղդված ճիչ արձակեց ու ձեռքերով դեմքը ծածկեց: Քարոզիչը մի ակնթարթ լռեց, ապա շարունակեց գրեթե շշուկով.

— Ես երկար տարիներ ապրել եմ անտառի թավուտներում, Ռոջեր, և շատերն են իրենց սրտերը բացել իմ առաջ: Բայց Նեյդայի սերը ամենամեծ հրաշքն է, որպիսին ինձ վիճակվել է տեսնել իմ ամբողջ կյանքում: Իսկ ես շուտով յոթանասուն տարեկան եմ դառնում: Դու

հասկանո՞ւմ ես, թե դա ինչ բան է: Եվ մի՞թե դա ձեզ ուրախություն ու անվախություն չի ներշնչում:

Քարոզիչը պատասխանի չսպասեց, այլ դանդաղ, գլխիկոր գնաց դեպի խրճիթ՝ Ռոջերին մենակ թողնելով աստղերի հետ: Եվ ինչպես քիչ առաջ նրանց ցոլքը լուսավորում էր հայր Ջոնի դեմքը, հիմա էլ լուսավորում էր խոր վճռականությամբ լցված Մաք-Քեյի դիմագծերը: Ի սեր Նեյդայի, ի սեր իրենց ապագա որդու նա չէր ուզում անել այն զոհաբերությունը, որի մասին ասաց հայր Ջոնը: Բայց հիմա, քարոզչի հետ ունեցած խոսակցությունից հետո, այդ զոհաբերությունն այլևս այնքան սարսափելի չէր թվում, ինչպես առաջ: Հիմա դա այլևս ողբերգություն չէր, այլ միայն կարճատև բաժանում. չէ՞ որ նրանք սպասելու են իրեն՝ Նեյդան ու իրենց տղան... Հանկարծ նա շրշյուն լսեց և, հետ նայելով, տեսավ Նեյդային, որը, աստղերի լույսի տակ էլ ավելի վայելչակազմ ու գեղեցիկ թվաց:

— Ես ասացի նրան,— խրճիթ վերադառնալով՝ շշնջաց հայր Ջոնը Նեյդային:— Ու հիմա բանտարկության միտքը այլևս չի վախեցնի նրան, ոչ իր համար, ոչ էլ ձեզ:

Եվ Նեյդան, խաղաղ ու հանգիստ, եկավ նրա մոտ, իսկ նրա ժպիտի մեջ, երբ նա ձեռքերը պարզեց Ռոջերին, մի նոր հասուն իմաստություն ու գրեթե մայրական քնքշանք կար: Ռոջերը սիրտ արեց խոսել միայն այն ժամանակ, երբ Նեյդան հպվեց նրա ուսին, և նա շատ մոտիկից տեսավ Նեյդայի երկար թերթերունքներով ծածկված աչքերը:

— Այն, ինչ որ ինձ ասաց հայր Ջոնը, ճի՞շտ է,— հարցրեց Ռոջերը:

— Ճիշտ է,— շշնջաց Նեյդան:

Աղջկա մատները կամացուկ շոյեցին Ռոջերի այտը, իսկ սա, որին այդ մի խոսքն էլ հերիք էր, շուրթերը հպեց նրա փափուկ վարսերին, և հոգիների այդ լիակատար դաշնության մեջ նրանք լսեցին գիշերվա մեղմ շշուկները:

— Ռոջեր...— վերջապես խոսեց Նեյդան:

— Ի՞նչ է, իմ Նեևա:

— Իսկ դա ի՞նչ է նշանակում, Ռոջեր...

— Դա նշանակում է «սիրելի», «կին»:

— Այդ դեպքում դա ինձ դուր է գալիս: Բայց ավելի շատ ինձ դուր է գալիս, երբ դու ասում ես...

— Իմ կինը:

— Այո... Ես ինձ շատ երջանիկ եմ զգում, Ռոջեր: Քո... կինը: Դա ամենալավ բառն է աշխարհում: Դա... մեկ էլ...

Նա դեմքը թաքցրեց Ռոջերի կրծքում:

— Մեկ էլ «մայր» բառը,— խոսքը ավարտեց Ռոջերը:

— Այո՛,— ասաց Նեյդան դողդոջուն ձայնով։— Իմ մայրը, Ռոջեր... ես նրան չեմ հիշում։ Բայց երազումս հաճախ եմ տեսնում։ Ու միշտ կարոտում եմ նրան։ Երևի, շատ լավ բան է մայր ունենալը։

— Բայց, երևի, մայր լինելը էլ ավելի լավ է, Նեյդա։

— Լսիր,— նրա խոսքը կտրեց Նեյդան։

— Դա Ուսիմիսկան է երգում։

— Սիրո՞ երգ է։

— Այո՛, կրի հնդկացիների լեզվով։

Նեյդան գլուխը բարձրացրեց ու նայեց նրան։

— Այն օրվանից, ինչ մենք ապրում ենք էստեղ, մեզ շրջապատող այս ամբողջ հրաշալի աշխարհը ինձ երգ էր խոստանում, Ռոջեր։ Եվ երբ դու վերադարձար, նա սկսեց երգել, ու հիմա ամբողջ ժամանակ երգում է, գիշեր ու ցերեկ։ Ռոջեր, երբևէ մտքովդ անցե՞լ է բաժանվել այս բոլորից, գնալ այն մեծ քաղաքներից մեկը, որոնց մասին ինձ շատ է պատմել հայր Ջոնը։

— Իսկ դու կուզենայի՞ր գնալ Նեյդա։

— Մի անգամ կուզենայի լինել էնտեղ, բայց ապրել՝ չէ։ Ես ուզում եմ միշտ անտառում ապրել, Ռոջեր, որտեղ ես ու դու ծանոթացանք։

Նա բարձրացավ թաթերի վրա ու Ռոջերին համբուրեց։

— Ես ուզում եմ ապրել Դեղին Թռչունի ու Արևացոլքի մոտ...Դե, խնդրում եմ... միստր Ուրախ Ռոջեր։ Հայր Ջոնն էլ մեզ հետ կգա։ Եվ էնտեղ բոլորս միասին շատ երջանիկ կլինենք. Դեղին Թռչունը, Արևացոլքը և ես...

Հանկարծ Ռոջերը այնպես պինդ գրկեց Նեյդային, որ նա ակամա ճչաց։

— Բայց մինչ այդ, երևի, մենք պետք է բաժանվենք, Նեյդա։ Ճիշտ է, ոչ երկար ժամանակով։ Ի՞նչ է հինգ տարին, երբ ամբողջ կյանքը մեր առջևում է։ Ոչինչ... Շուտ կանցնեն այդ տարիները...

— Այո՛, շուտ կանցնեն,— կրկնեց Նեյդան այնպես կամացուկ, որ Ռոջերը հազիվ լսեց։ Բայց նա պարզ լսեց Նեյդայի հեկեկոցը։ Ճիշտ է, Նեյդան անմիջապես փորձեց ժպտալ, և Ռոջերը, իմանալով, որ այդպես նրա համար ավելի լավ է, ձևացրեց, թե ոչինչ չի նկատել։ Այսպես ուրեմն, մինչդեռ հայր Ջոնն ու Պիտերը խրճիթում անհամբեր նրանց էին սպասում, Նեյդան ու Ռոջերը աստղազարդ երկնքի տակ քննում էին իրենց ապագան։

Գլուխ քսաներորդ

Զարմանալի ջինջ ու խաղաղ կիրակի օր էր: Բեռնտվուդի վրա բարձրացել էր ոսկեհեր տաք արևը, զրնգուն ձայնով երգում էին հավքերը, և երբ լուսաբացին հայր Զոնը դուրս եկավ խրճիթից, նրան թվաց, որ օդը արտակարգ մաքուր է ու բուրումնավետ: Նա շատ էր սիրում բնության զարթոնքի այդ վաղ ժամերը, դեռ մթնշաղոտ անտառի քնկոտ շշուկները և յուրահատուկ լռությունը, որի մեջ հնչյունները տարածվում էին հեռո՛ւ-հեռուները: Այդ առավոտ նա շան հաչոց լսեց, թեև շունը ամենաքիչը մեկ մղոն հեռու էր իրենից, և Պիտերը, որ ուղեկցում էր նրան, դանդաղ ականջները տնկեց: Քարոզիչը առաջին անգամ չէ, որ տեսնում էր վտանգին հանդիպելու Պիտերի մշտական պատրաստակամությունը, այն զգուշավորությունը, որ նա շարունակ հոտոտում էր օդը, և նրա աչքերի ու ականջների մշտական զգոնությունը: Մաք-Քեյը նրան բացատրել էր, թե Պիտերն ինչու է այդպիսին: Բայց հիմա, երբ Պիտերի հետ իջնում էր դեպի գետախորշ, հայր Զոնը նորովի ըմբռնեց այդ բոլորը: Քարոզիչը, մոռացած իր իսկ հուսադրող ու մխիթարող խոսքերը, ամբողջ գիշերը մտածել էր Մաք-Քեյի գլխին կախված սարսափելի ու անխուսափելի վտանգի մասին:

Եվ այնուամենայնիվ... հինգ տարին այնքան էլ երկար ժամանակ չէ: Իր իսկ սեփական կյանքի ուզածդ հինգ տարին, երբ հիշում էր դրանք, հիմա նրան թվում էր հինգ րոպե, ոչ ավելի: Ութ հնգամյակ առաջ նա առաջին անգամ տեսավ նուրբ դիմագծերով այն սիրունիկ աղջկան, որը նրա համար դարձավ մի ամբողջ աշխարհ, ինչպես Նեյդան Ռոջերի համար, և չնայած նրան կորցնելուց հետո երեսուն տարի էր անցել, ժամանակն այնպես արագ էր թռչում, որ երբեմն թվում էր, թե ընդամենը մի քանի ժամ առաջ էր գրկել նրան ու լսել էր նրա ձայնը: Սակայն գալիք հինգ տարին, ի տարբերություն անցած տարիների, մի ամբողջ հավիտենություն էր, և հայր Զոնը տխրությամբ էր մտածում դրա մասին, նայելով ջրի հայելուն, որի մեջ արտացոլվել էր շառագունած երկինքը:

Հի՛նգ տարի: Իսկ ինքը ախր ծեր է արդեն: Իր համար այդ տարիները անտանելի երկար ու ծանր կլինեն: Բայց Ռոջերն ու Նեյդան շատ են ջահել: Եվ այդ հինգ տարիները, երբ հետագայում հիշելու լինեն, շատ կարճ կթվան նրանց: Հայր Զոնը շարունակեց խորհել իր ապրած երկար կյանքի մասին, և այն կարճ ժամանակի մասին, որ դեռ մնացել էր նրան ապրելու, ու այդ հինգ տարիները օրենքի պիղծ ներխուժումից պատնեշելու մոլեգին ցանկությունը ավելի ուժգնորեն համակեց նրան. և ոչ միայն հանուն Նեյդայի ու Ռոջեր Մաք-Քեյի, այլև հանուն իրեն: Իր տխուր կյանքի մայրամուտին նա ուրախություն ու սփոփանք էր գտել նրանց սիրո մեջ, և մտածելով այն մասին, թե անողոք, մարդկանց մոլորության մեջ գցող արդարադատությունը ինչպես է դատաստան տեսնում այդ սիրո հետ, նա լցվեց զայրույթով ու ցասումով, որոնք ավելի շատ սազում էին ռազմիկին, քան աստծո հնազանդ ծառային:

Քարոզիչը ապարդյուն կերպով կռիվ էր մղում այդ, ինչպես ինքն էր գտնում, մեղսալից զգացմունքի դեմ: Իսկ երբ նախաճաշի ժամին նա նայեց Նեյդայի ու Ռոջերի երջանիկ դեմքերին, անհարմար զգաց, կարծես ինչ-որ բանում խաբել էր նրանց: Եվ ոչ մի կերպ նա չէր կարողանում ազատվել այն թաքուն վախից ու տագնապից, որ կրծում էին նրա սիրտը:

Հայր Ջոնին թվում էր, թե այդ օրը ինչ որ ասում էր ինքը, բոլորը կեղծ էին. օրինակ՝ երբ նա քարոզ էր կարդում աղոթատանը հավաքված մերձակա բնակիչների համար (աղոթատունը կառուցվել էր նրանց օգնությամբ): Քարոզիչը խոսում էր կրիների լեզվով և անգլերեն, նա խոսեց հույսի ողորմածության մասին և այն մասին, որ ամեն մի դժբախտության մեջ կարելի է մի լուսավոր բան գտնել. Մաք-Քեյը լսում էր նրան, Նեյդայի ձեռքը բռնած, և հոգին լցվում էր խաղաղությամբ: Եթե այդ պահին բաց դռնից ներս մտներ Բրեոն, Ռոջերը շատ հանգիստ կդիմավորեր ոստիկանության ծառայողին, քանի որ հայր Ջոնը համոզել էր նրան, որ այդպիսի զոհաբերությունը անհրաժեշտ է:

Ավելի ուշ, երբ ծխականները ցրվեցին, ու նրանք նորից մենակ մնացին, հայր Ջոնը կրկին ստիպված էր լսել Դեղին Թռչունի պատմությունը, որովհետև Նեյդան անվերջ հարցուփորձ էր անում նրա մասին: Սակայն քարոզիչը առաջին անգամ իմացավ, թե բարոյական ինչ օժանդակություն է ստացել Ուրախ Ռոջերը նրա մարգարեությունից:

— Իհարկե դա անմտություն էր,— մեղավոր տեսքով խոստովանեց Մաք-Քեյը, չնայած Նեյդայի աչքերից հասկացավ, որ նա անկեղծորեն հավատում է Դեղին Թռչունի կախարդելու ընդունակությանը։— Ես գիտեի, որ խաբում եմ ինքս ինձ, բայց դրանից թեթևություն էի զգում:

— Ո՛չ, իսկի էլ անմտություն չէ,— առարկեց Նեյդան։— Դեղին Թռչունը եկել է ինձ մոտ, հիմա ես դա գիտեմ: Եվ առաջուց ամեն բան հայտնի է եղել նրան:

— Հավատը երբեք չի կարելի անմտություն համարել,— մեղմ ասաց հայր Ջոնը։— Դեղին Թռչունը հավատացել է, և դա է գլխավորը: Նա բնավ չի կասկածել, հավատացել է, հնարավոր է, հատուկ ուժ է տալիս մտքին: Ես հավատում եմ մտքի զորությանը, զավակներս։ Ես հավատում եմ, որ կգա այն օրը, երբ միտքը մեր առջև բաց կանի նույնիսկ կյանքի գաղտնիքը: Անտառի թավուտներում անցկացրած ավելի քան քառասուն տարիների ընթացքում ես տարօրինակ բաներ շատ եմ տեսել, և դրանց մեջ ոչ վերջին տեղն են գրավում հոյակապ ընդունակությունները այն մարդկանց, որոնք դեռ սերտ միասնության մեջ են բնության հետ։ Ինձ թվում է, Ռոջեր, որ Դեղին Թռչունը շատ օգտակար խորհուրդներ է տվել քեզ։ Քո մտքով չի՞ անցել արդյոք...

Քարոզիչը լռեց, հասկանալով, որ դեռևս խոսում է նույն բնազդական տագնապի, գրեթե վախի ազդեցության տակ:

— Ի՞նչ էիք ուզում ասել, հայր Ջոն,— թեքվելով նրա կողմը՝ հարցրեց Նեյդան:

— Դա պարապ հետաքրքրություն է, սիրելիս, երևի, դրա համար կծիծաղեք ինձ վրա։ Ուզում էի ասել, թե Ռոջերի մտքով չի՞ անցել արդյոք, որ այդ խորհրդավոր Հեռավոր Երկիրը, որ տեսել է Դեղին Թռչունը, պարզապես Կանադայի սահմաններից դուրս գտնվող որևէ երկիր է: Դե, ասենք, Միացյալ Նահանգները...

Նա խոսեց գրեթե իր կամքին հակառակ և իսկույն նկատեց, որ Նեյդան բռնեց իր խոսքի թաքուն միտքը: Նեյդայի աչքերը չռվեցին: Դրանց կապույտը մշուշվեց, և երբ շրջվեց, Ռոջերը տեսավ, որ Նեյդան ճմռթում է իր շրջազգեստի բոլորածալքը։

— Կամ, ասենք, Չինաստան, Աֆրիկա, Հարավային Ծովեր,— ծիծաղեց Ռոջերը, հիշելով իր երազները։— Ուզածդ երկիրը, մենակ թե էստեղից հեռու լինի։

Նեյդայի շուրթերը թեթևակի բացվեցին, նա կարծես ինչ-որ բան էր ուզում ասել, բայց լռեց, ձեռքերը ծնկներին սեղմելով, և երբ, այնուամենայնիվ, խոսեց, քարոզիչը հասկացավ, որ նա չի համարձակվում բարձրաձայն ասել այն, ինչ իրականում մտածում էր։

— Ես շատ եմ սիրում Դեղին Թռչունին ու կգա մի օր, երբ նրան կասեմ այդ մասին,— ասաց Նեյդան։

Հարկ է հիշել, որ այն օրվանից, ինչ Պիտերը իր տիրոջ հետ եկել էր Բեռնտվուդ, շարունակ նրան թվում էր, թե ինքը մի շատ կարևոր բան է կորցրել. տարված իր երջանկությամբ՝ Մաք-Քեյը գրեթե ուշադրություն չէր դարձնում նրա վրա, ասենք Նեյդան էլ հիմա նրանով չէր զբաղվում, հետը չէր խաղում, ինչպես անցած օրերին։ Նրան աչքաթող էին արել, և նա հալումաշ էր լինում մենակությունից, բայց այստեղ Նեյդան հանկարծ ձայն տվեց նրան ու իր հետևից տարավ խիտ եղևնուտը։ Պիտերը հիացմունքից սկսեց հաչալ շնիկի պես, իսկ Նեյդան նույնիսկ ոչ ամուսնուն նայեց, ոչ հայր Ջոնին։ Սակայն քարոզիչը, այնուամենայնիվ, հասցրեց նկատել նրա դեմքի արտահայտությունը։

— Ես անզգույշ գտնվեցի,— ասաց նա ծանր շունչ քաշելով։— Ես լավ չվարվեցի, որովհետև հիմա իմ պատճառով նա կուզենա ձեզ հետ միասին փախչել գնալ այնտեղ... հարավ։ Նեյդան հավատում է Դեղին Թռչունին, քանզի Դեղին Թռչունը օգնել է ձեզ՝ վերադառնալու իր մոտ։ Նա հավատում է...

— Ախր ես էլ էի հավատացել,— պատասխանեց Ռոջերը՝ նայելով կանաչ եղևնիների պատին։

— Այո՛... և այնուամենայնիվ, լավ կլինի, որ դուք մնաք։ Երջանկությունը առանց հատուցման չի գալիս։ Այդպիսին է կամքը աստծո։

Ուրախ Ռոջերը վեր կացավ ու նայեց հարավի կողմը։

— Սա մեծ փորձություն է, հայր Ջոն։ Ես չգիտեմ, արդյոք ուժ կգտնե՞մ իմ մեջ նրանից բաժանվելու համար։ Թե որ Բրեոն գոնե մի քանի ամիս սպասե՛ր։ Բայց հիմա...

Նա դանդաղ գնաց դեպի այն կողմը, որտեղ եղևնու ճյուղերի քողի հետևում թաքնվել էին Նեյդան ու Պիտերը։ Հայր Ջոնը նայեց նրա հետևից, և շուրթերին թրթռաց ժպիտը։ Հոգու խորքում նա հասկանում էր, որ ինքը վախկոտ է, և որ այս երիտասարդները հոգով ուժեղ են իրենից։ Նրանք երջանիկ են, քանզի ինքը կեղծ ճանապարհով նրանց մեջ հավատ ներշնչեց ապագայի հանդեպ, և նրանք հաշտվեցին անխուսափելիի հետ։ Եվ ահա այժմ թուլության պահին ինքը փորձության ենթարկեց նրանց։ Հայր Ջոնը նայեց նրա հետևից. նա զղջաց դրա համար, ընդհակառակը, նրա սրտից մի ծանր քար ընկավ։

Մի քանի րոպե քարոզչի հոգում պայքարում էին պարզ, մարդկային զգացմունքը և իր հրաժարումը այն բանից, ինչ պահանջում էր նրա քարոզած կրոնը։ Նա դեռ երբեք այդպիսի հոգեվիճակում չէր եղել։ Նրա մեջ հանկարծ արթնացավ հույսը։ Հինգ տարին

նրա համար երկար ժամանակ էր: Նա նորից ու նորից անդրադարձավ այդ մտքին, որը իր հետևից մեկ ուրիշ միտք բերեց. ինքնապահպանման բնազդը գոյության առաջին օրենքն է և, հետևաբար, չի կարող մեղսական լինել: Այսպես հայր Ջոնը մտքով հրաժարվեց այն ամենից, ինչ ասել էր մինչ այդ, չնայած, երբ մեկ ժամ հետո Նեյդան ու Ռոջերը, առաջին ծաղիկների փնջերը ձեռքներին, վերադարձան խրճիթ, նրա դեմքը ոչնչով չմատնեց այդ բանը:

Նեյդայի այտերը վարդի պես կարմրել էին, իսկ աչքերը կապույտ էին, ինչպես կրծքին ամրացրած մանուշակների փունջը:

Հայր Ջոնը զգաց, որ Ուրախ Ռոջերին այլևս չի ճնշում անխուսափելի վտանգի հանդեպ ունեցած անզորության գիտակցումը. երբ Ռոջերը նայեց Նեյդային, նրա աչքերում փայլեց անսասան հավատը:

Երբ մութն ընկավ, Պիտերը միակ վկան եղավ հույժ խորհրդավոր մի իրադարձության: Նա նստած էր Նեյդայի կողքին, նրա սենյակում: Եվ Նեյդան ճիշտ առաջվանն էր. նա իր ափերի մեջ էր առել Պիտերի գռուզ դունչը ու բլբլացնում էր հետը: Բայց այստեղ հանկարծ Պիտերը հիշեց մի կապոց, որովհետև Նեյդան շատ կամացուկ, ասես վախենալով, թե ինչ-որ աներևույթ ականջներ լսում են իրեն, ամեն տեսակ իրեր լցրեց սեղանի վրա, հավաքեց մի կապոցի մեջ ու հանգուցեց, բայց դա ուրիշ կապոց էր: Այդ կապոցը նա թաքցրեց իր մահճակալի տակ, այնինչ առաջինը նա թաքցրել էր Կրեգի ստորոտում ընկած խիտ եղևնուտի բացատում, մասրենու թփի տակ: Այդ իրիկուն հայր Ջոնը շուտ պառկեց քնելու: Նա մտածում էր Բրեոյի մասին, մինչև Հուդսոնի ծոցի ընկերության ամենամոտ ֆակտորիան ընդամենը տասներկու մղոն էր, իսկ ոստիկանը, պարզ է, նախ կգնա այնտեղ և հետո արդեն տնետուն կընկնի՝ իր զոհին փնտրելու:

Եվ ահա կեսգիշերին քարոզիչը կամացուկ ելավ տեղից և մոմի լույսի տակ մի երկտող գրեց Նեյդային այն մասին, որ ինքը գործով գնալու է ֆակտորիա և չի ուզում արթնացնել նրանց, քանի որ վճռել է գնալ դեռ լույսը չբացված: Երբ նստեցին նախաճաշելու, Նեյդան այդ գրությունը կարդաց Մաք-Քեյին:

— Նա հաճախ է այդպես անում,— բացատրեց Նեյդան:— Սիրում է լուսնի շողերի տակ ման գալ անտառում:

— Բայց հիմա ախր նորալուսին է,— նկատեց Ռոջերը:

— Ճիշտ է...

Եվ հայր Ջոնի գնալուց հետո երկինքը ծածկվեց ամպերով ու մութը կոխեց. մատը աչքը մտցնեին, չէր տեսնի:

— Դու լսեցի՞ր, որ նա գնաց:

— Այո, Երբ նա վառեց մոմը, որպեսզի գրի այդ երկտողը, տեսա նրա դեմքը: Նա հուզված էր:

— Ի՞նչը նկատի ունես, Ռոջեր:

Մաք-Քեյը հետևից մոտեցավ ու, աթոռի թիկնակի վրայից կռանալով, համբուրեց կնոջ փափուկ մազերն ու տարակուսանքով լի աչքերը:

— Դա նշանակում է, սիրելիս, որ հայր Ջոնը գնացել է ֆակտորիա, որպեսզի հարցուփորձ անի Բրեոյի մասին: Դա նշանակում է՝ հոգու խորքում նա ցանկանում է, որ մենք մինչև վերջ հետևենք Դեղին Թռչունի խորհրդին: Չէ՞ որ հայը Ջոնը, իր իսկ կարծիքով, գլխի ընկավ, թե ինչ բան է Հեռավոր Երկիրը: Դա մի աշխարհ է, որ ընկած է մեր անտառներից այն կողմ, այնքան մեծ, հսկա մի աշխարհ, որ, եթե հարկ լինի, կարող ենք թեկուզ տասը հազար մղոն գնալ, այնպես որ հեծյալ ոստիկանությունը մեր հետքն էլ չգտնի: Ահա թե ինչու է նա էս մութ գիշերով գնացել ֆակտորիա:

Նեյդան փաթաթվեց նրա պարանոցին և բարալիկ, հուզված ձայնով ասաց.

— Ռոջեր, իմ կապոցը պատրաստ է: Ես երեկ եմ հավաքել կապել ու թաքցրել եմ մահճակալիս տակ:

Ռոջերն ավելի պինդ գրկեց նրան:

— Եվ դու պատրաստ ես ինձ հետ գնալու, ուր էլ որ լինի՞:

— Այո՛, ուր էլ որ լինի:

— Թեկուզ աշխարհի ծա՞յրը:

Գզգզված գլուխը սեղմելով Ռոջերի կրծքին՝ Նեյդան փորձեց գլխով անել:

— Ու լքել հայր Ջոնի՞ն:

— Այո՛, հանուն քեզ: Բայց ես կարծում եմ... հետագայում... մի օր նա կգա մեզ մոտ:

Աղջկա մատները հպվեցին Ռոջերի այտին:

— Մենակ թե, Ռոջեր, թող էդ աշխարհի ծայրին էլ մեծ ու հրաշալի անտառներ լինեն:

— Կամ անապատ, որտեղ նրանց մտքով էլ չի անցնի մեզ փնտրել,— ծիծաղեց Ռոջերը:

— Երևի անապատն ինձ դուր կգա, Ռոջեր:

— Իսկ անմարդաբնակ կղզի՞ն:

Նեյդան նորից գլխով արեց.

— Ինձ ամեն տեղ էլ դուր կգա, եթե մենք միասին լինենք:

— Ուրեմն... կգնանք,— ասաց նա, ջանալով հանգիստ խոսել, չնայած կրակի պես մի տաք ալիք համակեց նրան: Եվ գրեթե անխռով շարունակեց:— Սակայն, դա նշանակում է,

Նեյդա, որ դու ստիպված կլինես հրաժարվել գրեթե այն ամենից, ինչի մասին որ երազել ես: Այս անտառներից, որ դու սիրում ես, հայր Ջոնից, Դեղին Թռչունից, Արևացոլքից...

— Ես միայն մի բան եմ երազում,— քնքշորեն նրա խոսքը կտրեց Նեյդան:

— Բայց չէ որ հինգ տարին շատ շուտ կանցնի,— շարունակեց Ռոջերը:— Դե ո՞վ ասաց, որ ինձ անպայման հինգ տարի կտան և ոչ թե չորս կամ նույնիսկ երեք: Իսկ հետո մենք կարող ենք հանգիստ ապրել այն երկրում, որը այնքան շատ ենք սիրում: Ես ուրախությամբ կմնամ ու ինքս կհանձնվեմ ոստիկանությանը, եթե իմանամ, որ դրա շնորհիվ մենք կարող ենք երջանիկ լինել:

— Ես միայն մի բան եմ երազում,— կրկնեց Նեյդան՝ շոյելով նրա այտը:— Ուզում եմ միշտ քեզ հետ լինել, Ռոջեր: Եվ ուր էլ որ ինձ տանելու լինես, միևնույն է, ես աշխարհի ամենաերջանիկ կինը կլինեմ:

— Կինը,— ծիծաղեց Ռոջերը:— Ինձ համար դու միշտ մնում ես այն փոքրիկ աղջնակը, որին հանդիպեցի Կրեգի ստորոտում:

Եվ հանկարծ, Նեյդային ամուր սեղմելով կրծքին, նա ցասումնալից մարտահրավերով գոչեց.

— Ինձ համար ավելի հեշտ է զրկվել կյանքից, քան թե կորցնել Նեյդային, արձակ մազերով, մորուց կարմրած քթիկով այն աղջնակին, որը սրբությամբ հավատում էր Լուսնամարդուն: Եվ ես կսիրեմ նրան մինչև իմ կյանքի վերջը:

Այնուամենայնիվ, այդ ամբողջ օրը, մինչ նրանք սպասում էին հայր Ջոնի վերադարձին, Ուրախ Ռոջերը նորից ու նորից համոզվեց, թե այն ժամանակից ի վեր որքան է փոխվել Նեյդան: Սակայն այդ փոփոխությունը նույնպես ուրախություն ու հիացմունք էր պատճառում նրան: Նեյդան այլևս այն երկչոտ, ահաբեկված որբուկը չէր, որը ձգտում էր դեպի Ռոջերը թերևս միայն նրա համար, որ նա մեծ էր, հաղթանդամ և ուժեղ, ու կարող էր պաշտպանել իրեն: Ո՛չ, հիմա նա իրեն սիրում է որպես ամեն ինչով հավասար ընկեր, բարեկամ, և ոչ այն պատճառով, որ վախենում է ինչ-որ բանից ու անօգնական է զգում իրեն: Եվ Ռոջերը ոչ պակաս հիացմունքով մի բան էլ նկատեց. հիմա ինքը սկսել էր ավելի շատ հույս դնել Նեյդայի վրա, և երբ նրանք քննարկում էին իրենց ծրագրերը, Նեյդայի հանդարտ վճռականությունն ու ծանրակշիռ դատողությունները նոր ուժ ու վստահություն էին տալիս նրան: Շոյելով Նեյդայի ծամերը՝ նա ասաց.

— Երբ մազերդ այսպես սանրած են, դու իմ Մարգարիտ Անժուացին ես: Իսկ երբ մազերդ արձակ են, նորից դառնում ես Կրեգի փոքրիկ Նեյդան: Ու... ու ես չեմ հասկանում, թե ճակատագիրն ինչի՞ համար ինձ պարգևեց այդ երջանկությունը:

Այդ ամբողջ օրը Պիտերն էլ էր փորձում յուրովի հասկանալ, թե ինչ է կատարվել Նեյդայի հետ իրենց բաժանումից հետո: Նեյդայի ձեռքերի հպումը առաջվա պես ուրախացնում էր Պիտերին, և, այնուամենայնիվ, նա ինչ-որ փոփոխություն նկատեց: Երբ Նեյդան այտը սեղմեց Պիտերի այտին ու սկսեց խոսել նրա հետ, ձայնը ավելի քնքուշ հնչեց, քան անցած

օրերին, բայց, միևնույն է, ինչ-որ բան պակասում էր, պակասում էր իրենց նախկին ընկերական հավասարությունը, թեև Պիտերը այդ բանը չէր կարող հասկանալ: Սակայն նոր Նեյդայի հանդեպ տոգորվել էր մոլի պաշտամունքով, որը էլ ավելի ուժեղ էր նախկին սիրուց: Հիմա նրան հաճույք էր պատճառում պառկել ու քիթը խոթել Նեյդայի կոշիկի կամ շրջազգեստի փեշերի մեջ: Բայց երբ իրիկնադեմին Նեյդան գնաց իր սենյակը և իսկույն էլ դուրս վազեց այնտեղից, մազերն արձակած ու Կրեգից բերած գունաթափ ժապավենով կապած, Պիտերն սկսեց թռչկոտել նրա շուրջը և ուրախ-ուրախ հաչալ, իսկ Նեյդան, ի պատասխան նրա հրավերի, սկսեց նրա հետ վազվզել բացատում:

Ամբողջովին կասկարմիր կտրած՝ Նեյդան վազեց Ուրախ Ռոջերի մոտ ու ընկավ նրա գիրկը:

Եվ հանկարծ Նեյդայի շաղ եկած խոպոպների քողի միջով Մաք-Քեյը տեսավ, որ մեկը դուրս եկավ անտառից: Դա հայր Ջոնն էր: Նա մի պահ կանգ առավ, ապա, օրորվելով, դանդաղ մոտեցավ նրանց, թվում էր, ուր որ է կընկնի:

Նեյդան լսեց Ռոջերի ջղաձիգ հոգոցը, զգաց, որ նրա ձեռքերը սեղմվեցին, և, հետ նայելով, նույնպես տեսավ քարոզչին: Մի ճիչ արձակելով՝ նա պոկվեց Մաք-Քեյից ու նետվեց դեպի ծերունին: Հայր Ջոնը ծանրորեն հենվեց Նեյդայի ուսին, և նույն պահին էլ վազելով նրանց մոտեցավ Մաք-Քեյը: Քարոզչի դեմքը այլայլվել էր հոգնածությունից, նա հևում էր, բայց սիրտը բռնելով, այնուամենայնիվ փորձեց ժպտալ:

— Ես շատ արագ եկա, շտապում էի,— ասաց նա՝ ջանալով հանգիստ խոսել: Եվ բոլորովին շնչասպառ եղավ:

Նա շունչ քաշեց ու նայեց Ուրախ Ռոջերին:

— Ռոջեր... ես շտապեցի... որպեսզի ձեզ ասեմ... Բրեոն շատ մոտիկ է: Ես ընդամենը կես մղոն կամ մի մղոն առաջ ընկա:

Հայր Ջոնը Նեյդայի գունատված դեմքը առավ իր ափերի մեջ ու թանձրացող աղջամուղջի մեջ նայեց նրան:

— Չափազանց ուշ է… ես հասկացա, որ սխալվել եմ... զավակներս,— ասաց նա հանգիստ ձայնով:— Դուք չպետք է սպասեք Բրեոյին: Հեռացեք: Չի կարելի ժամանակ կորցնել: Եթե մթության մեջ Բրեոն ճանապարհը չկորցնի, մի քանի րոպե հետո այստեղ կլինի: Շուտ արեք:

Մինչ խրճիթին հասնելը Նեյդան լուռ էր: Բայց նրա համառորեն ցցված կզակն ու հետ գցած գլուխը Ռոջերին ասում էին, որ նա պատրաստ է ամեն ինչի ու բնավ չի վախենում:

Խրճիթում նրանց դիմավորեց Ուսիմիսկան, ու Նեյդան ինչ-որ բան շշնջաց նրա ականջին: Երևում է, նրանք ամեն ինչի մասին պայմանավորվել էին նախօրոք: Ուսիմիսկան խոհանոցից բերեց լեփլեցուն ուսապարկը, իսկ Նեյդան իր սենյակից դուրս բերեց կապոցը:

Նա, հուզմունքից ծանր շնչելով, կանգ առավ Մաք-Քեյի ու քարոզչի առաջ:

— Այլևս պետք չէ մլուլ տալ,— ասաց Նեյդան: Ինչ որ մեզ կարող է պետք գալ, վերցրել եմ:

Մի պահ նա ամեն բան մոռացավ, բացի հայր Ջոնից, և, փաթաթվելով նրան, անարցունք աչքերը հառեց նրա դեմքին:

— Դուք կգաք մեզ մոտ, չէ՞,— շշնջաց նա:— Խոստանո՞ւմ եք:

Քարոզիչը նույնպես գրկեց Նեյդային ու այտը սեղմեց նրա այտին:

— Կաղոթեմ աստծուն, որպեսզի կատարվի դա,— կամացուկ շշնջաց նա:

Նեյդայի ձեռքերը ջղաձգորեն սեղմվեցին, և այդ պահին էլ խրճիթի դռան առաջ լսվեց նախազգուշական հաչոցը:

— Պիտե՛ր,— ձայնեց Նեյդան:

Հայր Ջոնը հանգցրեց լամպը:

— Փախեք, զավակներս,— հրամայեց նա:— Շուտ: Քսան քայլի վրա գետախորշից ներքև մակույկ կա թաքցրած: Երեկ իմ խնդրանքով այստեղ եկած հնդկացիներից մեկն է թողել: Ռոջեր... Նեյդա...

Հայր Ջոնը մթության մեջ ափլփելով գտավ նրանց ձեռքերը:

— Աստծո օրհնությունը թող ձեզ վրա լինի: Գնացեք դեպի հարավ...

Ուղիղ հարավ, դե, շո՛ւտ: Ինձ թվում է, ոտնաձայներ եմ լսում...

Եվ նրանց հրեց դեպի դուռը: Նեյդան վերցրեց կապոցը, իսկ Ռոջերը՝ պարկը: Հանկարծ քարոզիչը նկատեց, որ Պիտերը կանգնած է կողքին, կռացավ ու պինդ բռնեց ծոծրակից:

— Գնաք բարով...— շշնջաց նա խռպոտ ձայնով:— Գնաք բարով... Նեյդա... Ռոջեր...

Նեյդան, հեկեկալով, մթության միջից պատասխանեց.

— Մնաք բարով, հայր Ջոն:

Քարոզիչն ու Պիտերը լարված ականջ դրեցին այնքան ժամանակ, մինչև որ իրենց սիրելիների ոտնաձայները հալվեցին գիշերային խավարում:

Պիտերը վնգստաց ու փորձեց դուրս պրծնել, բայց հայր Ջոնը դուռը փակեց:

— Ավելի լավ է դու մնաս այստեղ, Պիտեր,— փորձեց բացատրել նա:— Եթե մնաս ինձ մոտ, քեզ համար լավ կլինի: Չէ՞ որ նրանք շատ հեռու են գնալու ու բնակվելու են մի երկրում, որտեղ դու կարող ես հալումաշ լինել ու մեռնել: Ասենք, մակույկի մեջ էլ քեզ տեղ չի լինի: Խելացի եղիր, Պիտեր, ու մնա ինձ մոտ... ինձ մոտ...

Եվ Ուսիմիսկան, որ անշարժ կանգնած էր մթության մեջ, լսեց, թե ինչպես հայր Ջոնը, ափլփելով լամպը փնտրելիս, ծիծաղեց տարօրինակ ու խեղդված ծիծաղով:

Գլուխ քսանմեկերորդ

Խրճիթը լուսավորվեց: Նախ բռնկվեց լուցկու դեղին կրակը, հետո վառվեց լամպը: Եվ հենց որ մթության միջից հայտնվեց հայր Ջոնի մոմագույն դեմքը, Պիտերը վնգստաց ու սկսեց ճանկռել դուռը:

Ուսիմիսկան՝ Դալար Տերևը, կանգնել էր անշարժ, ասես արձան լիներ, և, կարծես, չէր շնչում, թեև նրա խոշոր թուխ աչքերը սևեռված էին հայր Ջոնի վրա: Նրա համառ հայացքի մեջ երկյուղած վախ կարդալով՝ ծերունին հաղթական ժպտաց:

— Ամեն ինչ լավ է, Ուսիմիսկա,— կիսաձայն ասաց նա կրի լեզվով:— Գնացին, ու էլ չեն բռնի նրանց: Քո գործերով զբաղվիր, իբրև թե ոչինչ էլ չի եղել: Ռոպե առ ռոպե Բրեռն այստեղ կլինի:

Քարոզիչը շտկեց ուսերը, ասես հավաքելով ողջ ուժերն ու արիությունը, ապա մոտ կանչեց Պիտերին ու սկսեց սփոփել շանը, որի տերն ու տիրուհին մթության մեջ քիչ առաջ վազեցին դեպի գետախորշ:

— Նրանք հիմա արդեն հասել են գետախորշ,— ասաց նա ու նստեց, շոյելով Պիտերի փշփշոտ դունչը:— Երևի արդեն իջել են գետախորշ, իսկ Բրեռն բացատ է դուրս եկել հակառակ կողմից: Ռոջերը պետք է որ հեշտությամբ գտնի մակույկը, որը ոչ մի բանով քողարկված չէ և ընդամենը քսան քայլի վրա է: Կարծում եմ, արդեն գտել է, և մի քանի ռոպե հետո կհեռանան ափից: Իսկ Բեռնտվուդի ափերը ծածկված են խիտ անտառով, և գիշերով ոչ ոք չի համարձակվի ոտքով ընկնել նրանց հետևից:

Հանկարծ նա ամուր սեղմեց ձեռքերը, և Ուսիմիսկան, որ աչքի պոչով հետևում էր նրան, տեսավ, որ քարոզչի դեմքը պայծառացավ:

— Նրանք արդեն լողում են,— ուրախ բացականչեց հայր Ջոնը,— իսկ Բրեռն դեռ բացատը չի անցել:

Քարոզիչը վեր կացավ ու սկսեց անցուդարձ անել սենյակում, իսկ Պիտերը, տխուր ու թախծոտ, նորից սկսեց հոտոտել դուռը: Ուսիմիսկան, որ, ինչպես նրա բոլոր ցեղակիցները, միշտ զգում էր վտանգի պահը, քաշեց պատուհանների վարագույրները, և հայր Ջոնը քաջալերանքով ժպտաց: Նրան տհաճություն էր պատճառում այն միտքը, որ Բրեռն՝ մարդախույզը, պատուհանից կարող է թաքուն հետևել իրենց: Սենյակում հետուառաջ անելով, նա շարունակում էր ականջ դնել՝ արդյոք Բրեռյի քայլերի ձայնը չի՞ լսվում: Պիտերը, հոգոց հանելով, դադարեց դուռը ճանկռել ու նստեց Նեյդայի սենյակի առաջ:

Հայր Ջոնը կանգ առավ Պիտերի կողքին ու ձեռքը դրեց նրա գլխին:

— Գուցե մենք դեռ կգնանք նրանց մոտ,— ասաց նա, ավելի շուտ ինքն իրեն։— Մի օր կգնանք, երբ նրանք հեռվում անվտանգ պատսպարան կգտնեն։

Քարոզիչը հանկարծ զգաց, որ իր ձեռքի տակ Պիտերը ամբողջովին լարվեց, իսկ Ուսիմիսկան նախազգուշացնող ճիչ արձակեց։ Հետո նա ցածրաձայն երգեց խոհանոցում և սկսեց մաքրել արդեն փայլեցրած կաթսաներն ու թավաները և շարունակեց երգել այն պահին, երբ խրճիթի դուռը լայն բացվեց։ Շեմքին կանգնած էր Բրեռ-խուզարկուն։

Նրա անսպասելի հայտնվելը զարմացրեց նույնիսկ Պիտերին, որը ոչ մի ոտնաձայն չէր լսել դրսից։ Խուզարկուն մի քանի վայրկյան այդպես կանգնած մնաց, նրա նիհար սրված դեմքը պարզ գծագրվում էր գիշերային խավարի մեջ, իսկ հանելուկային աչքերը, կկոցված, բայց գայլիկոնի նման սուր, թափանցիկ հայացքով զննեցին խրճիթը, հայացք, որից ոչ մի բան չէր սպրդում։

Նրա կեցվածքի մեջ մահացու սպառնալիք կար, և Պիտերը խուլ գոռաց։ Նա իսկույն ճանաչեց այդ մարդուն։ Նրան տեսել էր տունդրայում, ձնակույտերի մեջ, ու անմիջապես անվստահությամբ էր լցվել նրա նկատմամբ, իսկ հետո ինքն ու տերը փախել էին նրանից Սև Բուքի ամենաթունդ պահին։ Պիտերը գլխի ընկավ, նույնքան արագ, որքան Բրեռն։ Առանց որևէ տրամաբանական դատողության նա հասկացավ, որ այդ մարդու հայտնվելը դժբախտություն է գուշակում, և Ուրախ Ռոջերի ու Նեյդայի կասկածելի անհետացումը կապեց նրա հետ։ Բրեռն լուռ գլխով արեց։ Հետո տեսավ Պիտերին, ու նրա շուրթերը ծռվեցին ժպիտից։ Այդ ժպիտը գրեթե բարեկամական էր, բայց այնուամենայնիվ, տհաճ տպավորություն թողեց։ Դա խոսում էր այդ մարդու խառնվածքի մասին, նրա անողոքության, համառության և իր նպատակին հասնելու կարողության մասին։ Թվում էր, նա դաժան ու անողորմ ճակատագրի մարմնավորումն է։

Բրեռն նորից գլխով արեց ու ձեռքը առաջ մեկնեց։

— Պիտեր,— կանչեց նա։— Մոտ արի, Պիտե՛ր։

Պիտերը թափ տվեց ականջները, բայց տեղից չշարժվեց։ Սակայն Բրեռյի սուր հայացքը այդ աննշան շարժումն էլ որսաց։

— Դեռևս պահպանում է հավատարմությունը մի մարդու հանդեպ,— խրճիթ մտնելով ու կանգ առնելով քարոզչի առաջ, ասաց նա։— Որտե՞ղ է Մաք-Քեյը, հայր սուրբ։

Բրեռն դուռը բաց թողեց, և Պիտերը առանց հապաղելու օգտվեց դրանից։ Ուսիմիսկան տեսավ, թե ինչպես նա երկու ցատկով հայտնվեց դրսում, բայց հետ չկանչեց նրան, այլ շարունակեց ուշադիր ականջ դնել։ Բրեռն կրկնեց իր հարցը.

— Որտե՞ղ է Մաք-Քեյը, հայր սուրբ։

Պիտերը խավարի մեջ լսեց խուզարկուի ձայնը, որովհետև նա մի պահ կանգ առավ՝ փնտրելով Նեյդայի ու Ռոջերի թարմ հետքը։ Դա շատ պարզ, միամիտ հետք էր, որ ուղիղ գնում էր դեպի գետախորշ, իսկ այնտեղից քսան քայլ հոսանքն ի վար, դեպի կոպիճով

ծածկված ցամաքալեզվակը: Այդ ցամաքալեզվակում պարզ երևում էր նավակի բացած ակոսը, և այստեղ էլ հետքերը վերջանում էին:

Պիտերը վնգստաց, նայելով անտառի պատերի արանքում բացված սև թունելին, որտեղից հազիվ լսելի քչքչում ու քլթքլթում էր դեպի էլ ավելի մութ ու խիտ թավուտը գնացող ջուրը: Նա մինչև փորը մտավ ջուրը, գրեթե արդեն վճռել էր լողալով հասնել տիրոջ հետևից, բայց ոտը կախ զցեց, ականջ դրեց, սակայն ոչ ձայն լսեց, ոչ թիերի ճողփյուն: Այնուամենայնիվ, նա գիտեր, որ Նեյդան և Ուրախ Ռոջերը պետք է մոտերքում լինեն:

Պիտերը դուրս եկավ ցամաքալեզվակ ու գնաց գետի հոսանքն ի վար, ուշադիր հոտոտելով օդը և շուտ-շուտ կանգ առնելով, որպեսզի ականջ դնի: Երբեմն-երբեմն նա օդի մեջ որսում էր տիրոջ հոտը, բայց, հաճախակի կանգ առնելով, ժամանակ շատ կորցրեց, դրա համար էլ նավակին չհասավ:

Նավախելին նստած Մաք-Քեյը ճյուղերի արանքից թափանցող հատուկենտ աստղերի թույլ լույսի տակ հազիվ էր նշմարում Նեյդայի գունատ դեմքը:

Նա ուրախությունից անձայն ծիծաղեց: Վերջապես իմ երազանքը կատարվեց, Նեյդա,— շշնջաց նա:— Դու ինձ հետ ես: Ու մենք բոլորովին ուրիշ աշխարհ ենք գնում: Էնտեղ ոչ ոք մեզ չի գտնի: Ոչ ոք, բացի հայր Ջոնից, որը կգա մեզ մոտ, երբ լուր կտանք նրան: Դու հո չե՞ս վախենում:

Նեյդան պատասխանեց փոքր-ինչ դողդոջուն ձայնով:

— Չէ՛, չեմ վախենում, մենակ թե էստեղ շատ մութ է...

— Եվս երկու-երեք գիշեր, ու լուսինը կրկին կլուսավորի մեզ, քո լուսինը, և Լուսնամարդն էլ մեզ կժպտա: Ես հասկանում եմ, թե որքան դժվար է Լուսնամարդու համար, Նեյդա, երբ նա տանջվում է երկրի մյուս կողմում ու չի կարողանում քեզ տեսնել:

Նեյդան չպատասխանեց, և Ռոջերը, առաջ թեքվելով, ուշադիր նայեց նրան:

Այստեղ նա մի հառաչանք լսեց, որ նման էր հեծկլտոցի:

— Ես Պիտերի մասին եմ մտածում,— մրմնջաց Նեյդան՝ կանխելով Ռոջերի հարցը:— Ինչո՞ւ Պիտերին մեզ հետ չվերցրինք:

— Իսկապես, իզուր չվերցրինք,— պատասխանեց Ռոջերը և մի պահ նույնիսկ դադարեց թիավարել:— Գուցե Պիտերի համար այդպես ավելի լավ է: Նա անտառներում է մեծացել և ուրիշ կյանքի սովոր չէ: Իսկ էնտեղ, ուր գնալու ենք...

— Ես հասկանում եմ: Իսկ հետո հայր Ջոնը նրան կբերի՞ մեզ մոտ:

— Այո՛: Նա խոստացել է: Պիտերն ու հայր Ջոնը կգան մեզ մոտ:

Նեյդան շրջվեց ու նայեց իր դիմաց փռված անթափանց խավարին։ Խավարն այնքան խիտ էր, այնքան թանձր, որ թվում էր, ուր որ է նավակը դեմ կառնի պատին։ Եվ մակույկի շուրջը քլթքլթացող ջուրն էլ ձյութի պես սև էր թվում։

— Մենք կանցնենք մայրուտի հետևի մեծ ճահճի միջով,— բացատրեց Ուրախ Ռոջերը։ — Էնտեղ կարելի է աչքակապոցի խաղալ, առանց աչքերը կապելու, ճի՞շտ է։ Դու մի բան տեսնո՞ւմ ես, թե չէ։

— Նավախելից այն կողմ ոչինչ չեմ տեսնում, Ռոջեր։

— Հապա ինձ մոտ արի, մենակ թե զգույշ, ասաց Ռոջերը։

Նեյդան հնազանդվեց։

— Հիմա դանդաղ շուռ արի, երեսդ դեպի նավաքիթը, ու գլուխդ դիր ծնկներիս։

Նեյդան դա էլ արեց։

— Այսպես լավ է,— շշնջաց նա, ավելի հարմար տեղավորվելով։— Շատ լավ է։

Ռոջերը կռացավ, այնպես որ քիչ մնաց ողնաշարը ջարդեր, և, մթության մեջ գտնելով նրա այտը, համբուրեց։

— Ես վախենում էի, թե դու չես նկատի ջրի վրա հանդիպած ճյուղերը,— ուղղվելով՝ բացատրեց Ռոջերը։— Հանկարծ կարող էիր զարկվել այդ ճյուղերին ու վնասվել։

Նրանք լռեցին, և Ռոջերը նորից դանդաղ ու համաչափ գործի դրեց թիերը։ Հետո Նեյդան խորամանկորեն հարցրեց.

— Ռոջեր, դու միայն ճյուղերի մասին էիր մտածում ու մեկ էլ, որ դրանք կարող էին ինձ վնասել, չէ՞։

— Իհարկե,— պատասխանեց նա ծիծաղելով։

— Դե որ էդպես է, ինձ համար նստելը հարմար չէ,— բողոքեց Նեյդան։— Ավելի լավ է ուղղվեմ, թող ճյուղերը աչքերս հանեն։

Բայց նա չշարժվեց, միայն զգուշությամբ, որպեսզի Ռոջերին չխանգարի, հպվեց նրա այտին։

— Դու էստեղ ես,— մրմնջաց նա՝ ասես հանգստացած։— Ես համենայն դեպս ուզեցի ստուգել. այստեղ շատ մութ է ախր։

Եվ այդ անթափանց խավարի մեջ, կուրորեն ճեղքելով ջրային լաբիրինթոսը, նրանք երջանիկ էին։ Մաք-Քեյը ուշադիր նայում էր իր առջև ու ոչինչ չէր տեսնում, և նրա յուրաքանչյուր շարժումը թեթև էր ու ճշգրիտ, ինչպես պարի շարժումները։ Նույն զգացմունքն էր համակել նաև Նեյդային։ Գիշերն այլևս նրան չէր վախեցնում։ Չէ՞որ հիմա իրենք միասին էին, և միասին էլ, ահ ու երկյուղ մոռացած, ընդառաջ էին գնում անհայտ

խորհրդավոր ու հրապուրող, կանչող ապագային: Իսկ գիշերը հուսալիորեն քողարկում էր նրանց: Նեյդայի համար խավարը սրտամոտ էր ու հույս էր ներշնչում: Ռոջերը էլի երկու անգամ ընդհատեց թիավարելը, ափլփելով գտավ Նեյդայի դեմքը, և Նեյդան, խաղաղ ու երջանիկ, շուրթերով հպվեց նրա ձեռքին:

Նրանք շատ դանդաղ էին շարժվում ճահիճների միջով, որովհետև մթության պատճառով Ռոջերը, զգուշությամբ ճանապարհ գտնելով, մեծ դժվարությամբ էր թիավարում: Նա հաճախ էր խրվում թփուտների մեջ կամ դեմ էր առնում ճահճոտ ափին, և Նեյդան շատ անգամ հարկադրված էր լուցկի վառել, որպեսզի օգնի նրան՝ դուրս գալու տապալված ծառի ճյուղերի միջից: Ռոջերին շատ էին դուր գալիս այն պահերը, երբ խավարի մեջ հանկարծ գծագրվում էր Նեյդայի դեմքը, և երկու անգամ առանց որևէ անհրաժեշտության խնդրեց լուցկի վառել, որպեսզի ավելի երկար սքանչանա նրանով:

Բայց ի վերջո Ռոջերն զգաց, որ մակույկն ընկավ հոսանքի մեջ. շուտով ծառերի կատարները նոսրացան. շուրջը փոքր-ինչ լուսավորվեց, և նա հասկացավ, որ մոտենում են ճահճի ծայրին: Կես ժամ անց ճահիճը մնաց հետևում, գլխավերևում հայտնվեց ջինջ երկինքը, իսկ մակույկից դուրս խոխոջում էր արագահոս գետակը: Նեյդան շտկվեց. արդեն այնքան լույս էր, որ Ուրախ Ռոջերը նրա վարսերի մեջ նույնիսկ աստղալույսի ցոլքեր տեսավ: Տեսավ նաև նրա դեմքի քնքուշ ծամածռությունը, թեև Նեյդան փորձեց ժպտալ:

— Օ՜յ,— բացականչեց Նեյդան։— Ոտքերս լրիվ փայտացել են: Չեմ կարող տեղիցս շարժվել:

— Հիմա մի հարմար տեղ կգտնենք ու կհանգստանանք,— պատասխանեց Մաք-Քեյը՝ վերջին լուցկու լույսի տակ նայելով ժամացույցին։— Մենք առնվազն երկու ժամով առաջ ենք անցել Բրեոյից. չէ՞ որ նա ոչ մի տեղից չէր կարող նավակ գտնել:

Ուրախ Ռոջերն ուշադիր զննեց ափերը և շուտով աջ կողմում տեսավ սպիտակ ավազաշերտը: Այնտեղ էլ հենց կես ժամ հանգստացան:

Հետո շարունակեցին ճանապարհը, և այժմ Մաք-Քեյը պատրաստ էր օրհնելու ճահիճը. չէ՞ որ հիմա այդ ճահիճը պատնեշ էր լինելու Բրեոյի ճանապարհին:

— Չեմ կարծում, որ նա առանց նավակի կկարողանա ճահիճն անցնել, նույնիսկ եթե գլխի ընկնի, թե մենք որ կողմ ենք գնացել,— բացատրեց նա Նեյդային։— Դա նշանակում է, որ մեզ ոչ մի բան չի սպառնում:

Նրա ձայնի մեջ ուրախ հրճվանք կար, որը կարող էր վերածվել դաժան հուսահատության, եթե նա կարողանար տեսնել անթափանց խավարը այնտեղ, ուր Բեռնտվուդը օղակ էր տալիս ճահճի շուրջը, կամ էլ ավելի թանձր խավարի մեջ, որ պարուրել էր ճահճուտը նրա երկու ափերին:

Ճահճուտով, դժվարությամբ ճանապարհ գտնելով խորուտների ու ջրասույզ ծառաբների միջով, որոնք մթության մեջ զարհուրելի հրեշների էին նման, վազում էր Պիտերը:

Իսկ Բեռնտվուդով դանդաղ, բայց աներեր լողում էր մի մարդ։ Նա տղմոտ հատակից ճարպկորեն հետ էր հրվում մի երկար ձողի օգնությամբ, որին հնազանդորեն ենթարկվում էր մետաղալարով իրար կապված մայրու երկու բներից պատրաստված լաստը, և հեշտությամբ անցավ այնտեղից, որտեղից քիչ առաջ դուրս էր պրծել մակույկը։

Այդ մարդը Բրեռ-խուզարկուն էր։

— Նա ճահիճը չի կարող անցնել,— հաղթական ցնծությամբ կրկնեց Մաք-Քեյը։— Նույնիսկ եթե գլխի էլ ընկնի, որ մենք այս կողմն ենք եկել, միևնույն է, ճահիճը չի կարող անցնել, Նեյդա։

— Ոչ էլ թե գլխի կընկնի,— նույնպիսի համոզվածությամբ առարկեց Նեյդան։

Իսկ նրանց հետևից, ճահճի սև խավարի մեջ, երբեմն մռայլ ժպիտից բացելով նեղ շուրթերը և բվի աչքերի նման կլոր, չռված աչքերը խավարին հառելով, իր լաստով առաջ էր գնում Բրեռն։

Գլուխ քսաներկուերորդ

Պիտերը, թաց, ցեխակոլոլ, համառորեն վազում էր խրուտների միջով, որովհետև շարունակ զգում էր Բրեռյի անհասկանալի, անձայն ներկայությունը մոտերքում։ Հազիվ նկատելի զեփյուռը, որ ասես թիթեռի թևերից էր բարձրանում, երբեմն նրա ռունգերին էր հասցնում Բրեռյի հոտը, բայց մեծ մասամբ տաք օդը բոլորովին անշարժ էր։ Ամեն անգամ այդ հոտը գալիս էր առջևից, և ի վերջո Պիտերը վճռեց, որ Բրեռն պետք է այնտեղ լինի, որտեղ գտնվում են Նեյդան ու Ռոջերը։ Սակայն նրանց հոտը չէր առնում, և դա շփոթության մեջ էր գցում Պիտերին։ Նա երբեմն հայտնվում էր հենց սև ջրի կողքին, բայց ամեն անգամ մի քանի վայրկյանով ուշանում էր ու չէր կարողանում խավարի մեջ տեսնել Բրեռյի ստվերը կամ լսել ձողի թեթև ճղփոցը։

Նա առաջ էր վազում անձև, անորոշ ստվերների ու անհասկանալի հեծեծող ձայների միջով, որից արյունը սառչում էր երակներում, չնայած վաղուց արդեն ոչ մի բանից չէր վախենում։ Հիմա նրան չէր վախեցնում բվերի կատաղի ֆշշոցը։ Լսելով կտուցների չարագույժ կափկափյունը՝ նա կանգ չէր առնում ու ճամփից չէր շեղվում։ Ծառերի կեղևին զարկվող մագիլների հարվածները և խաշամի մեղմ խշխշոցը հիմա նրա համար նորություն չէին, և նա դրանց վրա ուշադրություն չէր դարձնում, ամբողջովին կլանված էր մի ցանկությամբ. որքան կարելի է, շուտ հասնել իր տիրոջը։ Հիմա բոլորովին ուրիշ բան էր վախեցնում Պիտերին ու կարմիր կրակներ վառում նրա աչքերում. յուղի պես փայլող թանձր ցեխի չլմփոցը, որը փորձում էր կլանել նրան, ճահճի խռպոտ քրքիջը, որը կենդանի արարածի նման կառչում էր նրանից, ստիպում էր հազալ ու թքել անվերջ, երբ դուրս էր պրծնում նրա ճանկերից։

Ցեխը բռնել էր Պիտերի աչքերը, ու երբեմն նա նույնիսկ մութն էլ չէր տեսնում, բայց այնուամենայնիվ շարունակում էր առաջ վազել։ Եվ վերջապես, նորից հայտնվելով վտակի

ափին, նա մի նոր ձայն լսեց. դա Բրեոյի ձողի մեղմ ու համաչափ ճղփոցն էր: Պիտերը վազքն արագացրեց, որովհետև թաթերի տակ գետինը գնալով պնդացավ, և շուտով հասավ լաստով առաջ գնացող մարդուն: Լսեց նրա շնչառությունը, նույնիսկ անտառի սև պատի հենքի վրա նշմարեց ոչ այնքան սև, շարժվող ստվերը:

Բայց Նեյդայի կամ Ուրախ Ռոջերի հոտը չկար, դրա համար էլ սովորական զգուշավորությունը թույլ չտվեց մատնելու իր ներկայությունը: Նա չփորձեց Բրեոյից առաջ անցնել, գնաց նրան հավասար կամ մի քիչ հետ մնալով, որպեսզի շարունակ լսի ճողփյունը: Նա անընդհատ բարձրացնում էր դունչն ու հոտոտում էր, հույս ունենալով, թե ուր որ է կհայտնաբերի ներկայությունը նրանց, որոնց ուզում էր գտնել ինչ գնով էլ լինի:

Լուսադեմին նրանք դուրս եկան ճահճից, իսկ երբ Բրեոն լաստը կայանեց ցամաքաշերտում, որտեղ մի քանի ժամ առաջ հանգստացել էին Նեյդան և Ուրախ Ռոջերը, արևելքում արդեն բացվում էր արշալույսը:

Բրեոն շատ հոգնած էր, բայց ավազի վրա հետք տեսնելով, նա գրեթե բարեսրտորեն քթի տակ ծիծաղեց: Տրամադրությունը լավ էր, սակայն կողմնակի մարդու համար դժվար էր դա կռահելը: Անտառային թավուտներում Բրեոն անսիրտ մարդու համբավ ուներ: Նա օժտված էր գայլի ու աղվեսի որսորդական բնազդով, աքիսի անողորմ համառությամբ, և անշեղորեն հետևում էր օրենքի տառին, չիմանալով ինչ բան է կարեկցանքը և ոչ մեկին բացառություն չանելով: Համենայն դեպս, այդպիսի կարծիք կար նրա մասին, իսկ եթե նրա հոգում որևէ ազնվություն էլ թաքնված էր, ապա, նայելով նրա սառը, կկոցած աչքերին, բարակ շուրթերին և չար ու հեգնալից դեմքին, դժվար էր այդ մասին գլխի ընկնելը: Ղեկավարությունը նրան համարում էր անխափան մի մեխանիզմ, որը բռնում էր հանցագործին, նույնիսկ այն դեպքում, եթե իրենից առաջ բոլորը անհաջողություն էին կրել:

Բայց այդ առավոտ, երբ գիշերային նավարկությունից հետո ամբողջ մարմինը ջարդվում էր, Բրեոն, նայելով դավաճան հետքերին, քթի տակ ծիծաղեց, ապա ծիծաղեց բարձրաձայն: Նա այնպես ճմլկոտաց, որ ոսկորները ճռթճռթացին: Բրեոն ինքն իր հետ խոսելու սովորություն չուներ, բայց ահա թե ինչ մտածեց.

«Այ էստեղ, էս քարի վրա նստել է Ուրախ Ռոջեր Մաք-Քեյը: Միայն մի դրոշմ կա: Նշանակում է, կինը նստել է նրա ծնկներին. ահա նրա կրունկների հետքերը: Կնոջ հագին տուֆլիներ են, ոչ թե մոքասիններ»:

Մի անգամ էլ քթի տակ ծիծաղելով՝ նա լաստանավից իջեցրեց ծառայական թիկնապայուսակը:

«Շտապելու հարկ չկա,— մտածեց նա։— Հիմա նրանք իմ ձեռքից էլ չեն պրծնի: Նրանք կարծում են, թե ինձ խաբել են, և սխալվում են: Իսկ դրա վերջը միշտ էլ վատ է լինում: Միշտ»:

Երբ Բրեոն բոլորովին մենակ էր լինում, երբեմն մի քիչ ազատություն էր տալիս իրեն, ասես կարճ ժամանակով ազատություն էր պարգևում կալանավորին: Օրինակ՝ նա

շվշվացրեց: Եվ բավականին մեղեդիկ, կարծես անցած-գնացած երջանիկ պահերը մտաբերեց: Իսկ երբ կրծքամիս տապակեց ու մի բուռ չորացրած կարտոֆիլ լցրեց եռացրած ջրի մեջ, սկսեց երգել, նույնքան հաճելի, նույնիսկ այնպիսի ականջների համար, ինչպիսին Պիտերի ականջներն էին:

Քանզի Պիտերը թաքուն մոտեցել էր թփուտների միջով ու հիմա, Բրեոյից ընդամենը քսան քայլ հեռավորության վրա պառկած, ագահորեն ներծծում էր իր կրծքամսի բուրմունքը:

Պիտերը ծանոթ էր գայլերի ու աղվեսների սովորույթին, բայց Բրեոյին չէր ճանաչում ու գլխի չէր ընկնում, թե ինչու հանկարծ նա այդպես բարձրաձայն սկսեց սուլել և ինչու նրա երգը էլ ավելի զրնգուն հնչեց: Մի քանի րոպե անց, առանց Պիտերի կողմը շրջվելու, Բրեոն հանգիստ ու գործնականորեն ձայն տվեց նրան.

— Այստեղ արի, Պիտեր: Նախաճաշը պատրաստ է:

Պիտերը զարմանքից նույնիսկ բերանը բացեց: Իսկ Բրեոն, շրջվելով նրա կողմը, քթի տակ ծիծաղեց ու շատ սիրալիր ձայնով շարունակեց կանչել նրան: Պիտերը վեր թռավ տեղից՝ պատրաստ կռվելու կամ փախչելու: Բրեոն կրծքամսի մի յուղոտ կտոր գցեց նրա առաջ: Միսն ընկավ Պիտերի դնչից երկու քայլ հեռու, իսկ նա սարսափելի քաղցած էր: Զմայլելի բուրմունքը արբեցրեց նրան ու ստիպեց մոռանալ զգուշավորությունը: Մի քանի վայրկյան նա կռվում էր ինքն իր հետ, ապա կամաց-կամաց մոտեցավ ու հանկարծ, կայծակնային արագությամբ միսը հափռելով, միանգամից կուլ տվեց:

Բրեոն աշխույժ ծիծաղեց, և Պիտերին թվաց, որ արևից լուսավորված նրա դեմքը թշնամու դեմք չէ:

Առաջին կտորին հաջորդեց երկրորդը, ապա երրորդը, և շուտով Բրեոն ստիպված եղավ նորից միս տապակել:

«Սա քեզ այն բանի համար, որ այն ժամանակ արեցիր տունդրայում,— մտածեց նա:— Թե, որ դու չլինեիր...»

Բրեոն այդ միտքը չավարտեց: Իսկ Պիտերի վրա էլ ոչ մի ուշադրություն չդարձրեց: Նա թերևս շներին ավելի լավ էր ճանաչում, քան մարդկանց, և Պիտերին ոչնչով ցույց չտվեց, թե իրականում այդքան շատ հետաքրքրում է իրեն: Առաջվա պես շվշվացնելով ու երգելով, Բրեոն լվաց ամանները, պայուսակը նորից տեղավորեց լաստանավի վրա ու շարունակեց առաջ գնալ հոսանքն ի վար:

Պիտերը, որ այդպես էլ թփերի տակից դուրս չեկավ, ոչ միայն զարմացած էր, այլև լքված զգաց իրեն: Ախր այդ մարդը իսկի էլ թշնամու նման չէր, բայց հիմա լքում է իրեն, ինչպես դրանից առաջ իր տերն ու տիրուհին էին լքել: Նա վնգստաց, և Բրեոն դեռ չէր ծածկվել տեսողությունից, երբ Պիտերը հայտնվեց ցամաքալեզվակում և իսկույն էլ զգաց Նեյդայի ու Մաք-Քեյի հոտը: Բրեոն դիտմամբ ջրեզերքին չորացրած կարտոֆիլի մի մեծ կտոր էր թողեց, և Պիտերը դա խժռեց նույնպիսի ագահությամբ, ինչպես քիչ առաջ կրծքամիսն էր խժռել: Իսկ հետո, ինչպես և հույս ուներ Բրեոն, նա վազեց լաստի հետևից:

Բրեոն չէր շտապում, բայց կանգ էլ չէր առնում: Նրա անշտապ, անշեղ առաջընթացի մեջ գրեթե անգիտակից մի բան կար, թեև նա գիտեր, որ մակույկը համարյա երկու անգամ ավելի արագ կարող է լողալ, քան լաստանավակը: Նա ուշադիր զննում էր ափերը: Մինչև կեսօր Բրեոն երեք անգամ դադարքի հետքեր նկատեց և, հիշելով նապաստակի ու կրիայի հեքիաթը, ծիծաղեց: Ինքը այդ կանգառներում երկու-երեք րոպեից ավելի չէր մնում, իսկույն շարունակում էր ճանապարհը: Պիտերին տարակուսանք էին պատճառում տունդրայից եկած մարդու համաչափ-հանդարտ շարժումները: Նա հետևում էր այդ շարժումներին, և նրան ավելի ու ավելի էր գրավում դրանց անփոփոխ միօրինակությունը: Վերև-ներքև, վերև-ներքև՝ բարձրանում ու իջնում էր երկար ձողը, բարձրահասակ կերպարանքը օրորվում էր համաչափ, լաստանավակից սկիզբ էին առնում երկու փոքրիկ ալիքներ, իսկ օդում լողում էին խուզարկուի չիբուխի ծխի քուլաները: Բրեոն շուրջը չէր նայում: Բայց, այնուամենայնիվ, ամեն ինչ տեսնում էր: Մինչև կեսօր նա հինգ անգամ տեսավ Պիտերին, բայց ձայն չհանեց ու բնավ ցույց չտվեց, որ տեսել է նրան:

Կեսօրին նա ափ ելավ, որպեսզի ճաշ պատրաստի. վառեց խարույկը, թավան հանեց, շտկվեց և նույն ինքնավստահ տոնով ձայն տվեց.

— Հե՜յ, Պիտեր, Պիտե՜ր: Հապա մի եկ այստեղ, բարեկամս:

Եվ Պիտերը եկավ: Կռիվ տալով բնազդի հետ, որը նրանից զգուշություն էր պահանջում, նա թփերի տակից նախ գլուխը հանեց ու նայեց Բրեոյին: Սա, առանց Պիտերի վրա ուշադրություն դարձնելու, սկսեց միս կտրատել: Երբ տապակվող մսի աստվածային բուրմունքը հասավ Պիտերի քթին, նա կամաց-կամաց մոտեցավ ու խորունկ տնքոցով փռկվեց գետնին:

Բրեոն լսեց այդ տնքոցը:

— Ինչ է, էլի սովա՞ծ ես, Պիտեր,— անտարբեր հարցրեց նա:

Բրեոն այդ րոպեի համար տապակած կրծքամսի պաշար էր պահել, որ մնացել էր նախաճաշից: Նա մաս-մաս կտրտեց միսը, գցեց Պիտերի առաջ ու մտածեց.

«Ինչի՞ համար եմ էս բանն անում: Շունը իսկի էլ ինձ պետք չի: Նա միայն կխանգարի ինձ ու իմ պաշարները կուտի: Բայց անկեղծ սրտով եմ անում: Պարտքը հարկավոր է վճարել, չէ որ նա փրկեց ինձ տունդրայում»:

Ահա Բրեոն՝ անգութ ու անսիրտ մարդը, օրենքի խուզարկուն, այսպես մեկնաբանեց դա: Եվ նա Պիտերի համար հինգ շերտ կրծքամիս տապակեց:

Հիմա արդեն Պիտերը բացեիբաց, առանց թաքնվելու վազում էր լաստանավի հետևից: Իրիկնադեմին Բրեոն մի այծյամ սպանեց, և ընթրիքին նա ու Պիտերը կուշտ թարմ միս կերան: Պիտերի անվստահությունը վերջնականապես նահանջեց, և նա Բրեոյին թույլ տվեց շոյել իրեն: Ձեռքերի այդ հպումը այնքան էլ դուր չեկավ Պիտերին, բայց նա քաղաքավարությամբ դիմացավ, և Բրեոն քաջալերանքով փնթփնաթաց, թեև նրա խիստ ձայնը չմեղմացավ.

— Միայն քո տիրոջն ես սիրում, հա՞…

Այդ օրը Պիտերը մի քանի անգամ Նեյդայի ու Ռոջերի հոտն առավ այնտեղ, ուր նրանք ափ էին ելել, և իրիկնադեմին վերջնականապես համոզվեց, որ Բրեոն իրեն տանում է նրանց մոտ: Հենց դրա համար էլ նա շարունակեց գնալ Բրեոյի հետևից:

Հաջորդ օրը նրանք տեսան լքված մակույկը, փախստականները հարավ էին գնացել ոտքով, անտառի միջով: Բրեոն ուրախացավ, քանի որ նրան շատ էր ձանձրացրել ձողով աշխատելը: Երեկոյան դուրս եկավ նորալուսինը, և, տեսնելով նրա նեղ մանգաղը, Պիտերը մոլեգին ցանկություն ունեցավ առաջ նետվել ու հասնել նրանց, ում որ փնտրում էր: Սակայն մյուս, էլ ավելի հզոր բնազդը նրան հարկադրեց մնալ Բրեոյի հետ:

Այդ գիշեր Բրեոն մեռելի պես քնեց մայրու ճյուղերից սարքած իր մահճում: Բայց լուսաբացից մեկ ժամ առաջ արդեն ոտքի վրա էր ու խարույկ էր վառել, իսկ արշալույսի առաջին շողերի հետ ճանապարհ ընկավ: Հիմա խուզարկուն շուրջը չէր նայում այլևս հետքեր փնտրելու, հասկանալով, որ դա անօգուտ է: Բայց նա լավ գիտեր Մաք-Քեյի մտադրությունը և արագ էր գնում, մոտավորապես հաշվելով, որ Նեյդան այդ ընթացքում երկու անգամ քիչ ճանապարհ կանցնի: Ցերեկվա ժամը երեքին նա հասավ բարձր բլրաշարքին ու նրանցից մեկի կատարին կանգ առավ:

Պիտերին կրծում էր անհամբերությունը, և նա կորցրեց վստահությունը Բրեոյի հանդեպ: Ոչ թե այն պատճառով, որ սկսել էր նրանից վախենալ, այլ որ ամբողջ օրվա ընթացքում ոչ մի անգամ Նեյդայի կամ Ուրախ Ռոջերի հոտը չէր առել, և կամաց-կամաց Պիտերը եկավ այն եզրակացության, որ հենց ինքը պետք է որոնի նրանց: Բրեոն նկատեց Պիտերի խռովքը և հասկացավ դրա պատճառը:

«Արժի, որ աչքս շան վրա պահեմ,— մտածեց Բրեոն:— Նա և՛ հոտառություն ունի, և՛ բնազդ, որոնք ես չունեմ: Այո, դա օգուտ կտա: Մաք-Քեյն ու նրա կինը մոտերքում պիտի լինեն: Հնարավոր է, որ նրանք ավելի դանդաղ են գնում, քան ենթադրում եմ, և գուցե այս բլուրները դեռ չեն անցել, իսկ գուցեն արդեն հարթավայրում են: Եթե այդպես է, ուշ թե շուտ, ես կտեսնեմ խարույկի ծուխը:

Մոտ մի ժամ նա հեռադիտակով զննում էր հարթավայրը, հույս ունենալով, որ ծառերի հետևում ինչ-որ տեղ ծուխ կտեսնի: Նա աչքից բաց չէր թողնում նաև Պիտերին, որը վազվզում էր լանջն ի վար, ավելի ու ավելի լայն օղակներ գծելով: Եվ հանկարծ նրանից երկու հարյուր յարդի վրա Պիտերը տարօրինակ կերպով սկսեց պտույտներ գործել մարգագետնի ծայրին: Նա գետինը հոտոտեց, քթով օդ որսաց, հետուառաջ վազվզեց: Հետո, առանց տատանվելու, գնաց դեպի հարավ-արևմուտք:

Մի ակնթարթում Բրեոն վեր թռավ տեղից, վերցրեց պայուսակն ու նետվեց դեպի մարգագետին: Այնտեղ նա փխրուն հողի վրա ինչ որ բան տեսավ և, մռայլ ժպիտը բարակ շուրթերին, նույնպես ուղիղ գնաց դեպի հարավ-արևմուտք:

Պիտերի գտած հետքը երեք-չորս ժամվա վաղեմություն ուներ և նրան դուրս բերեց ոտքի բացած արահետը, որը, մի քանի մղոն դեպի հարավ գնալով, վերջանում էր Հուդսոնի ծոցի

Ընկերության ֆակտորիաներից մեկի մոտ: Այդ արահետի վրա, որտեղով անտառային թավուտների բնակիչների մի քանի սերունդներ էին անցել, իրենց դրոշմն էին թողել նաև Ռոջեր Մաք-Քեյի ծանր սապոգները: Հիմա արդեն Պիտերը ավելի որոշակիորեն էր զգում ծանոթ բուրմունքը, բայց զգուշավորությունը, որ անտառային կյանքն էր սովորեցրել, թույլ չէր տալիս ավելի արագ առաջ գնալու, չնայած որ անհամբերության կրակը հանգիստ չէր տալիս նրան:

Նորից մութը վրա հասավ, հետո դուրս լողաց լուսինը, ավելի պայծառ, քան նախօրյակին, և լուսավորեց նրանց ճանապարհը:

Գլուխ քսաներեքերորդ

Ուիլլոուբեդ գետի խաղաղ ջրերի վրա, այնտեղ, ուր գետը, լքելով անանցանելի փշատերև անտառը, գալարվում էր Նելսոնի հովտում տարածված արծաթափայլ կեչիների պուրակում, հետզհետե շառագունեց արշալույսը: Գետնից բարձրացավ թեթև բուրավետ մշուշը, ձգվելով դեպի ջինջ, թափանցիկ երկինք, որը նոր պայծառ օր էր խոստանում արթնացող բնությանը: Այդ թեթև մշուշի մեջ ճռվողաց առաջին թռչնակը, սկզբում երկչոտ ու անվստահ, իսկ հետո ավելի համարձակ ու ավելի բարձր: Սակայն մշուշը ցրվելուց հետո միայն փետրավոր երգիչը լրիվ արթնացավ քնից, և ջրի վրա կախված կեչու ճյուղերի միջից տարածվեց նրա զրնգուն դայլայլը:

Թռչնակը շարունակ ցած էր նայում, ասես զարմանալով, թե ինչու է այդպիսի լռություն ու անշարժություն տիրում այնտեղ, ուր մայրամուտին այնքան հետաքրքիր բաներ էին տեղի ունենում, ու զրնգում էր երգը, որ բոլորովին նման չէր իր սեփական երգին: Բայց հիմա ոչ ոք չարձագանքեց նրան: Եղևնու ու մայրու ճյուղերից սարքած քողտիկը փայլփլում էր ցողից, բոցկլտուն խարույկի տեղում սևին էին տալիս հանգած ածուխները, և, փետուրները ցցելով, նա հանդիսավոր ցնծությամբ գեղգեղաց այգաբացի օրհներգը:

Քողտիկում Նեյդան այդ երգը լսում էր կիսարթուն վիճակում: Նա պառկած էր, գլուխը հարմար հանգչում էր Ռոջերի ձեռքին, և նրան թվում էր, թե երգը հեռուներից է գալիս: Նեյդան ժպտաց, նրա շուրթերը թրթռացին, կարծես քնի մեջ էլ նա պատրաստ էր մրցության մեջ մտնել փոքրիկ երգչի հետ: Իսկ հետո երգը սլացավ ավելի հեռուն: Նեյդան այլևս չէր լսում երգը և նորից կարճ ժամանակով թաղվել էր խոր նիրհի մեջ, երբ հանկարծ ինչ-որ անհասկանալի մի բան արթնացրեց նրան:

Նա դժվարությամբ բացեց աչքերը: Նրա գլուխը այլևս Ռոջերի ձեռքին չէր հանգչում, Ռոջերը նստել էր կողքանց ու Նեյդային չէր նայում: «Երևի շատ ուշ է», տեսնելով, որ ամուսնու դեմքը լուսավորված է արևի շողերից, մտածեց Նեյդան: Նա ժպտաց, նստեց տեղում ու, երջանիկ ծիծաղելով, թափահարեց մազերը:

— Ռոջեր...— սկսեց նա:

Եվ, աչքերը չռելով, քարացավ տեղում. Ռոջերի կողքին կանգնած էր Պիտերը: Բայց դա չէր պատճառը, որ Նեյդայի շունչը բռնվեց ու ահից ասես սիրտը սուր ասեղով ծակեցին:

Գերանի վրա, որ նախորդ օրը Ռոջերը թավուտից էր քարշ տալով բերել, նստած էր նիհար, սուր դիմագծերով մի մարդ ու նայում էր նրանց: Մի տարօրինակ ժպիտ էր խաղում նրա շուրթերին, և Նեյդան անմիջապես գլխի ընկավ, որ դա Բրեոն է:

Բրեոն մի քանի վայրկյան նստած մնաց լուռ ու անշարժ, և այնուամենայնիվ Նեյդան սարսափեց: Նա վճռեց, որ Բրեոյի աչքերը մարդու աչքեր չեն, իսկ շուրթերը իրար վրա դրված երկու դանակների սայրեր էին հիշեցնում: Նրա ժպիտը, ավելի ճիշտ՝ կիսաժպիտը, ոչ միայն ուրախ չէր, այլև չարախինդ էր: Բրեոյին նայելիս, ոչ մեկի մտքով չէր անցնի, թե նա սիրում է կատակել:

Ոստիկանը գլուխ տվեց.

— Բարի լույս, Ուրախ Ռոջեր Մաք-Քեյ: Եվ... բարի լույս, միսիս Մաք-Քեյ: Կներեք, որ ներխուժեցի ձեր մենաստանը, բայց պարտքը մնում է պարտք: Ես Բրեոն եմ, թագավորական հյուսիսարևմտյան հեծյալ ոստիկանության սերժանտ:

Մաք-Քեյը լիզեց շուրթերը: Բրեոն դա նկատեց, և նրա ժպիտը ավելի լայնացավ:

— Ես հասկանում եմ, որ հիմա ձեզ համար դժվար է,— ասաց նա:— Բայց շնորհակալություն հայտնեք Պիտերին: Այդ նա ինձ բերեց ձեզ մոտ:

Բրեոն վեր կացավ և անփութորեն ատրճանակը ուղղեց Ուրախ Ռոջերի վրա:

— Բարի եղեք, Մաք-Քեյ, մոտ եկեք,— ասաց նա՝ զնգզնգացնելով ձեռնակապերը, որ բռնել էր ձախ ձեռքում:

Ռոջերը ելավ տեղից, նրա հետ էլ Նեյդան, որը երկու ձեռքով կախվեց Ռոջերի արմունկից:

— Դա ավելորդ է, Բրեո,— ասաց Ռոջերը:— Ես դիմադրելու միտք չունեմ:

— Համենայն դեպս, այսպես ավելի հուսալի է, առարկեց Բրեոն, և նրա աչքերը փայլեցին:— Տվեք ձեռքերդ, խնդրեմ...— Ապարանջանը շրխկոցով փակվեց Ուրախ Ռոջերի դաստակների վրա:— Ախր ես Բրեոն եմ և ոչ թե Տերենս Քասիդին,— քմծիծաղ տվեց ոստիկանը:— Ու երբեք զուր տեղը համարձակ քայլի չեմ դիմում: Երբեք:

Բրեոն կայծակնային արագությամբ կռացավ, և երկրորդ ապարանջանը չրխկաց Նեյդայի ձեռքերին: Ապա հետ-հետ գնաց և նույն քմծիծաղով նայեց իր գերիներին:

— Ա՛յ, հիմա ամեն ինչ կարգին է,— ծիծաղեց Բրեոն: Հիմա դուք իմ ձեռքից էլ չեք պրծնի:— Նա ատրճանակը պահեց և խոր գլուխ տվեց Նեյդային.— Ինչպե՞ս է ձեզ դուր գալիս ընտանեկան կյանքը, միսիս Մաք-Քեյ:

Ռոջերը սփրթնեց. նույնիսկ Նեյդան էլ այդպես գունատ չէր:

— Վախկոտ,— ասաց նա ցածրաձայն, բայց պարզորոշ։ Ստոր, թշվառ վախկոտ։ Դու մտադիր ես կապանքների մե՞ջ թողնել կնոջս։

— Ճիշտ այդպես,— պատասխանեց Բրեոն։— Ես մտադիր չեմ ձեզ ներելու այն գլխացավանքների համար, որ պատճառել եք ինձ։ Կարծում եմ, որ յուրաքանչյուր մարդ պետք է իր պարտքերը մարի, լինի տղամարդ թե կին։ Համ էլ, ով գիտի, ինչքան հեքիաթներ եք պատմել նրան։

— Դա ճիշտ չէ,— զայրույթով բացականչեց Նեյդան, դուք...

— Հապա, հապա, շարունակեք,— բարեհոգաբար խրախուսեց Բրեոն։— Ձեր խոսքը ավարտեք, միսիս Մաք-Քեյ։ Եթե դուք հարմար խոսք չեք գտնում, ես կարող եմ հուշել։

Նա լռեց ու զբաղվեց ծխամորճով։

— Գիտեք ինչ, ես այնքան էլ ճշգրիտ չեմ կատարում պաշտոնական հրահանգները, երբ գտնվում եմ այսքան բարի մարդկանց շրջապատում, հեգնանքով ներողություն խնդրեց նա։— Ուրիշ խոսքով ասած, դուք երկուսդ էլ անուղղելի հանցագործներ եք։ Քասիդին մեծ թվով ծանրակշիռ հանցանքներ է ներկայացրել ձեր դեմ։ Նա ասում է, Մաք-Քեյ, որ ձեզ անմիջապես պետք է կախել, հենց որ մեր ձեռքն ընկնեք։ Նա ինձ նախազգուշացրեց, որ զգույշ լինեմ, եթե առիթ ներկայանա, դուք գիշերը կոկորդս կկտրեք ու աչք էլ չեք թարթի։ Իսկ ես
պետքական մարդ եմ։ Առանց ինձ ղեկավարությունը ոչ մի կերպ յոլա չի գնա։

Մաք-Քեյը լռում էր՝ շուրթերը պինդ սեղմած։

— Հիմա, երբ դուք զրկված եք դիմադրելու հնարավորությունից, ես ուզում եմ որոշ բաներ պատմել,— հայտարարեց Բրեոն։— Հետն էլ խարույկ կվառեմ։ Մի բան պիտի ուտե՞նք, թե չէ։ Ես ու Պիտերը գայլի պես քաղցած ենք։ Լավ շուն է, Մաք-Քեյ։ Նա մեզ փրկեց տունդրայում։ Դուք այդ մասին պատմե՞լ եք միսիս Մաք-Քեյին։

Բրեոն պատասխանի չսպասեց և, շվշվացնելով, կեչու կեղևը վառեց ու դրեց մայրու չոր ճյուղերի տակ, որ նախօրյակին Ռոջերն էր հավաքել։

— Հենց էնտեղ էլ սկսվեցին իմ ձախորդությունները, միսիս Մաք-Քեյ, Լերկ Հողերում,— շարունակեց նա առանց Ռոջերին նայելու։— Գիտեք ինչ, մեզ երեքիս՝ գնդապետ Տևիշին, Փորտերին (որը հիմա նրա փեսան է) և ինձ նահատակվելու և ընդմիշտ հեծյալ ոստիկանության պատմության գիրկն անցնելու բացառիկ հնարավորություն ներկայացավ։ Բայց էս դմբոները՝ ձեր ամուսինն ու Պիտերը, գործը փչացրին։ Դե, Պիտերից խեր չկա, ինչքան չլինի նա շուն է։ Բայց կասկած չկա, որ Մաք-Քեյը չար մտադրություն ուներ։ Նա շատ անպատկառ կերպով մեզ թույլ չտվեց նահատակ դառնալ. մթության մեջ գտավ մեզ ու տարավ իր ապաստանը։ Չափից դուրս ազնիվ արարք է, չէ՞, ինչ եք կարծում։ Դե, գնդապետ Տևիշը երևելի մարդ է, իսկ Փորտերը նրա փեսան է, ասենք միսիս Տևիշն էլ մեզ հետ փրկվեց։ Ահա նրանք էլ վճռեցին, որ էս գործն էսպես թողնել չի կարելի։

Բրեոն նրանց կողմը չէր նայում. անտանելի դանդաղկոտությամբ նա ցախ էր դնում խարույկի վրա:

— Իսկ հետևանքը...— Նա մեջքը շտկեց ու դարձավ նրանց կողմը:— Իսկ հետևանքը այն եղավ, որ ամենատհաճ պարտականությունը դրեցին ինձ վրա, Մաք-Քեյ, գտնել ձեզ և ձեր բոլոր անցած մեղքերի թողությունը տալ հավիտյանս հավիտենից, ամեն: Ահա, վերցրեք:

Բրեոն խոշոր կնիքներով կնքված մի ծրար հանեց ծոցագրպանից ու մեկնեց Մաք-Քեյին ու Նեյդային: Ոչ Նեյդան, ոչ էլ Ռոջերը ծրարը չվերցրին: Բրեոյի շուրթերին էլի խաղում էր հեգնական ժպիտը, շաղափող աչքերը սառը և ուրախ հայացքով նայում էին նրանց, և առաջին պահին նրանք չկասկածեցին, որ դա նրա հերթական չար կատակներից մեկն է: Հետո Նեյդան խլեց ծրարը ու բացեց, իսկ Մաք-Քեյը նայում էր Բրեոյին՝ հավատալով ու չհավատալով:

Նեյդան ճչաց, և այդ ճիչը, իրար խառնելով արցունքն ու հրճվանքը, Մաք-Քեյին պարզեց ճշմարտությունը : Թանկարժեք թուղթը ձեռքի մեջ սեղմած՝ Նեյդան դեմքը թաքցրեց ամուսնու կրծքին, իսկ Բրեոն, ամբողջ բերանով մեկ ժպտալով, թիկունքից մոտեցավ նրանց, և Մաք-Քեյը լսեց, ինչպես բանալին պտտվեց ձեռնաշղթայի փականքի մեջ:

— Բացի դրանից, ինձ հանձնարարված է ամեն տեսակ հիմարություններ հաղորդել ձեզ,— ասաց ոստիկանը՝ վերադառնալով խարույկի մոտ:— Առաջին. այդ շեկ անբան Քասիդին խնդրեց ձեզ հայտնել, որ ինքը բացատրում ձեզ համար չորսսենյականոց տուն է սարքում և որ ձեր գալու օրը պատրաստ կլինի: Երկրորդ. Դեղին Թռչուն անունով սքվոն և կարմրամորթը, որին կոչում են Արագավազ Եղջերու, պատվիրել են ձեզ ասել, որ դուք միշտ էլ ցանկալի հյուր կլինեք իրենց տիպիում: Իսկ այն սիրունիկ աղջիկը, որի անունը Արևացոլք է, այնքան համբույրներ է ուղարկում ձեզ, որքան տերևներ կան անտառում...

Բրեոն շունչ քաշեց ու քթի տակ ծիծաղեց, առանց գլուխը բարձրացնելու: Դրա համար էլ չտեսավ, որ Նեյդան շողշողացող աչքերով իրեն է նայում:

— Բայց ամենածիծաղելին կապված է նորածնի հետ,— շարունակեց նա, պատրաստվելով միսը կտրատել:— Նրանք մոտ ժամանակներս սպասում են երեխայի աշխարհ գալու (ես նկատի ունեմ Քասիդիի կնոջը): Եվ արդեն նրա համար անուն են ընտրել. եթե տղա լինի՝ Ռոջեր, իսկ եթե աղջիկ լինի՝ Նեյդա: Նրանք խնդրել են, որ դա էլ ձեզ ասեմ: Հիմար մարդիկ են, ճի՞շտ է: Երջանկությունից խելքները թռցրել են...

Եվ այստեղ Ֆրանսուա Բրեոն, որը իր կյանքում քիչ զարմանալի ու սարսափելի արկածներ չէր տեսել, հիմա բախտ ունեցավ ճաշակելու մի բան, որն իր համար բոլորովին նորություն էր: Հանկարծ, առանց նախազգուշացնելու, երկու բարալիկ ձեռքեր սկսեցին խեղդել նրան, գլուխը հետ գցեցին, և տաք, նուրբ շուրթերը մի պահ հպվեցին նրա նեղ ու չոր շուրթերին:

— Գրողը տանի,— բացականչեց Բրեոն, ձեռքից ցած գցեց միսը և, ոտքի ելնելով, օրորվեց զարկվածի նման:— Գրողը... ինձ... տանի:

Նա խլեց իր թիկնապայուսակը ու, առանց մի խոսք ասելու, առանց հետ նայելու, ծածկվեց դալար եղևնուտում: Նախաճաշն սպասեց, սպասեցին Նեյդան, Ուրախ Ռոջերն ու Պիտերը, բայց Ֆրանսուա Բրեոն այդպես էլ չվերադարձավ: Նա տարօրինակ, հանելուկային մարդ էր, դաժան ու անգութ մարդորս, որը չգիտեր ինչ բան է ահը: Բայց հիմա վախկոտի պես փախավ անտառ:

Ահա այսպես, կյանքում առաջին անգամ Բրեոն ոչ թե տխուր, այլ ուրախ լուր բերեց, և կեչու կատարին նստած փոքրիկ թռչնիկը, ասես զգալով, որ ցածում երջանկությունն է իշխում, սկսեց իր քաղցր դայլայլը: